

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Г. АВЕТИСЯН, А. ГНУНИ, А. БОБОХЯН, Г. САРГСЯН

САКРАЛЬНЫЙ ЛАНДШАФТ СЮНИКА ЭПОХИ БРОНЗЫ И ЖЕЛЕЗА

АРХЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
2015

YEREVAN STATE UNIVERSITY

H. AVETISYAN, A. GNUNI, A. BOBOKHYAN, G. SARGSYAN

SACRAL LANDSCAPE OF SYUNIK IN BRONZE AND IRON AGES

ARCHAEOLOGICAL INVESTIGATIONS

YEREVAN
PUBLISHING HOUSE OF YSU
2015

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ԳՆՈՒՆԻ, Ա. ԲՈԲՈԽՅԱՆ, Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԲՐՈՆԶ-ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՍՐԲԱԶԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 94(479.25):902/904
ԳՄԴ 63.3(5Հ)+63.4
Բ 914

Գիրքը երաշխավորված է
ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի կողմից

Պատասխանատու խմբագիր՝
Պատմական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Պավել Ավետիսյան**

Գրախոսներ՝ պ. գ. դ., պրոֆեսոր **Ա. Փիլիպոսյան**
պ. գ. թ., դոցենտ **Մ. Գաբրիելյան**

Բ 914 Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը. Հնագիտական
հետազոտություններ / Հ. Ավետիսյան, Ա. Գնունի, Ա. Բոբոխյան, Գ. Սարգս-
յան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2015.- 230 էջ:

Սրբավայրերն էական դեր են խաղացել մարդկային պատմության ընթացքում: Հաճախ դրանց շուրջ ձևավորվել և զարգացել է հասարակական կյանքը: Ներկայացվող աշխատանքը դիտարկում է պատմական Սյունիքի սրբավայրերը Հայկական լեռնաշխարհի սրբավայրերի համատեքստում, պարզում այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորել են այս տարածքի սակրալ պատմության առանձնահատկությունները: Ըստ այդմ, հեղինակները քննարկում են տեսական խնդիրներ, անդրադառնում բնապատմական միջավայրին և հետազոտության պատմությանը, փորձում դասակարգել սյունիքյան սրբավայրերը, անդրադառնում դրանց տեղագրության առանձնահատկություններին: Գիրքը նախատեսված է հնագետների, ազգագրագետների, մշակութաբանների, արվեստաբանների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների համար:

Կազմի վրա պատկերված են Ձանգեզուրի լեռները. ստորին գոգավորության վրա Ուլցյուրի հուշարձանախումբն է (նկարը՝ հեղինակներինը)

ՀՏԴ 94(479.25):902/904
ԳՄԴ 63.3(5Հ)+63.4

ISBN 978-5-8084-1988-9

© ԵՊՀ հրատարակչություն, 2015

© Հ. Ավետիսյան, Ա. Գնունի, Ա. Բոբոխյան, Գ. Սարգսյան, 2015

Ներածություն

Պատմական Սյունիքը Հայկական լեռնաշխարհի առանցքային տարածքներից է և շատ հարուստ է հնագիտական հուշարձաններով: Այդ հուշարձանները հետազոտվում են սկսած XIX-XX դդ. սահմանից (Ե. Լալայան, Ս. Լիսիցյան, Ս. Եսայան, Լ. Բարսեղյան, Օ. Խնկիկյան, Ա. Այվազյան, Հ. Սիմոնյան, Պ. Ավետիսյան, Բ. Գասպարյան, Վ. Հովհաննիսյան, Մ. Զարդարյան, Ա. Փիլիպոսյան և ուրիշներ) ու բացահայտում են այն էական ներուժը, որ ունի խնդրո առարկա տարածաշրջանը Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան իրողությունների ուսումնասիրության տեսանկյունից:

Սկսած 2013 թ. ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի իրականացրած գիտարշավների արդյունքում Սյունիքի հուշարձանների ուսումնասիրությանը նոր թափ է հաղորդվել: ՀՀ Գիտության պետական կոմիտեի «Պատմական Սյունիքը բրոնզի և երկաթի դարերում (ըստ նորագույն հնագիտական տվյալների)» գիտական թեմայի սահմաններում իրականացվող ծրագրի նպատակն է ներկայացնել պատմական Սյունիքի հնամշակութային զարգացումների գործընթացը բրոնզի և երկաթի դարերում (Ք.ա. մոտ 3500-500 թթ.), պարզել այդ տարածաշրջանի նշանակությունը տեղական (Արցախ, Ուտիք), տարածաշրջանային (Հայկական լեռնաշխարհ) և վերտարածաշրջանային (Կովկաս, Առաջավոր Ասիա) համատեքստում: Այդ հետազոտությունները հիմնվում են պեղումների, հետախուզական աշխատանքների և թանգարանային նյութի ուսումնասիրության վրա, որոնք իրականացվել են ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերում, ինչպես նաև՝ ԼՂՀ Քաջաթաղի շրջանում ու Շահումյանի շրջանի Քարվաճառի ենթաշրջանում:

Ընթերցողի դատին ներկայացվող այս հատորն ընդգրկում է արված աշխատանքի մի հատվածը՝ նվիրված բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտին: Աշխատանքը նպատակ ունի դիտարկել սյունիքյան սրբավայրերը Հայկական լեռնաշխարհի ընդհանուր սրբավայրերի համատեքստում, պարզել այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորել են այս գոտու սակրալ պատմության առանձնահատկությունները: Ըստ այդմ, տեսական հենք ստեղծելուց, բնապատմական միջավայրը և հետազոտության պատմությունը ներկայացնելուց հետո, հեղինակները փորձում են դասակարգել սյունիքյան սրբավայրերը, ապա անդրադառնալ դրանց տեղագրության առանձնահատկություններին: Աշխատանքին կցված են հետազոտություններ, որոնք լրացնում են քննարկվող խնդիրներն՝ առանձին հարցադրումների ձևով:

Սրբավայրերն էական դեր են խաղացել մարդկային պատմության ընթացքում: Հաճախ դրանց շուրջ է ձևավորվել և զարգացել հասարակական կյանքը: Մինչդեռ անհնար է ճիշտ հասկանալ սրբավայրի էությունը՝ առանց հաշվի առնելու այն լանդշաֆտի առանձնահատկությունները, որոնց միջավայրում զարգացել է տվյալ սրբավայրը: Չէ՞ որ շրջակա միջավայրին հարմարվելու ընթացքում են առաջանում մարդու արժեքային համակարգը, ինքնության գիտակցումը, վարքագծային առանձնահատկությունները: Ներկայացվող աշխատանքում փորձ է արվում պարզել սյունիքյան սրբազան լանդշաֆտի դերը՝ հաշվի առնելով վերոհիշյալ առանձնահատկությունները:

Հուսով ենք, որ այս աշխատանքը գոնե մասամբ կպատասխանի սրբազան լանդշաֆտի ընկալման բարդ հարցերին և հիմք կնախապատրաստի հետագայի ավելի հիմնարար հետազոտությունների համար:

Օգտվելով առիթից կցանկանայինք մեր խորին շնորհակալությունը հայտնել մի շարք կազմակերպություններին և անհատներին՝ այս աշխատանքը գրելու ընթացքում ցուցաբերած աջակցության համար, այդ թվում՝ ՀՀ Գիտության պետական կոմիտեին (նախագահ՝ Սամվել Հարությունյան), ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտին (տնօրեն՝ Արամ Սիմոնյան), ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտին (տնօրեն՝ Պավել Ավետիսյան), ՀՀ Մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնին (տնօրեն՝ Հակոբ Սիմոնյան), Եղեգնաձորի երկրագիտական թանգարանին (տնօրեն՝ Կամո Սահակյան), Էջմիածնի Պատմաազգագրական թանգարանին (տնօրեն՝ Հասմիկ Հակոբյան), Կապանի երկրագիտական թանգարանին (տնօրեն՝ Գրիգոր Սմբատյան), Քաջաթաղի Երկրագիտական թանգարանին (տնօրեն՝ Լիվերա Հովհաննիսյան): Շնորհակալություն ենք հայտնում նաև Հուսիկ Մելքոնյանին՝ Եղեգնաձորի շրջանի հուշարձանների, Բորիս Գասպարյանին՝ Աղավնաձորի ժայռափոր կառույցի և Գագիկ Խաչատրյանին՝ Հարժիսի դամբարանադաշտի մասին տեղեկություններ հայտնելու համար: Գծանկարներն իրականացնելու համար երախտապարտ ենք ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող Անժելա Դավթյանին, իսկ մի շարք լուսանկարների՝ նույն հաստատության կրտսեր գիտաշխատող Նատալյա Ավետիսյանին: ԼՂՀ Քաջաթաղի շրջանին վերաբերող որոշ լուսանկարների համար պարտական ենք տեղական «Մերան» թերթի խմբագիր Զորայր Լոքեյանին:

ԳԼՈՒԽ I.

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Բնապատմական միջավայրը և հետազոտության պատմությունը

Բնապատմական միջավայրը. Սյունիքը պատմական Հայաստանի նահանգներից մեկն էր, որ տարածվում էր Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածում և սահմանագծվում Այրարատ, Վասպուրական, Արցախ, Ուտիք և Գուգարք աշխարհներով¹: Ըստ միջնադարյան աղբյուրների՝ Սյունիքը բաղկացած էր տասներկու գավառներից (Արևիք, Կովսական, Ձորք, Բաղք, Ծղուկք, Հաբանդ, Երնջակ, Ճահուկ, Աղահեջք, Վայոց Ձոր, Գեղարքունիք, Սոթք. Սյունիքին է առնչվել երբեմն նաև Նախիջևան գավառը):

Քննվող աշխարհը հայտնի էր երկու անուններով՝ Սյունիք և Սիսական: Թեև այս անվանումների առնչությունն այդքան էլ պարզ չէ, սակայն ընդունված է կարծել, որ Սիսական տեղանունն ավելի ուշ է առաջացել (այն առկա է նաև պարսկա-արաբական աղբյուրներում, վերջինում՝ Սիսաջան ձևով), իսկ Սյունիքն ունի էթնիկական ծագում²:

Եթե փորձենք վերականգնել պատմական Սյունիքի փոփոխվող սահմանները միջնադարյան աղբյուրների հիման վրա, ապա կստացվի, որ հյուսիսարևմտյան մասում այն Այրարատյան աշխարհից բաժանված էր Գեղամա լեռներով: Հարավարևմտյան սահմանն անցնում էր Վայոց Ձորի լեռնաշղթայից հարավ ընկած լեռնաճյուղերի ծայրերով՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ, գրեթե ուղիղ գծով, մինչև Երնջակ գետի միջին հոսանքը, ապա այնտեղից թեքվում էր դեպի հյուսիս-արևելք՝ անցնելով Երնջակ և Գիլան գետերի ջրբաժանով, մինչև Սյունյաց և Բարկուշատ լեռների հատման կետը, որտեղից նրա սահմանն ուղղվում էր դեպի հարավ ու, անցնելով Սյունյաց լեռնաշղթայի ջրբաժան բարձրություններով, Գողթն ավանի մոտ հասնում էր Երասխ: Գողթնից սկսած դեպի արևելք՝ մինչև Երասխ ու Հագարի գետերի խառնուրդը Սյունիքն Ատրպատականից բաժանված էր Երասխ գետով: Արևելյան կողմում Սյունիքի սահմանն անցնում էր Հագարի գետով, որի ակունքների մոտ թեքվում էր դեպի արևմուտք և հասնում Սյունյաց լեռների հյուսիսային հատվածը³: Ապա այդ նույն լեռնաշղթայի ջրբաժան բարձրություններով ուղղվում էր դեպի հյուսիս և հասնում արևելյան Գեղամա լեռնաշղթային, իսկ այստեղից էլ վերջինիս կատարներով գնում էր դեպի

¹ Սյունիքի պատմական աշխարհագրության մասին հմմտ. **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893; **Թ. Խ. Հակոբյան**, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960; **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963; **Թ. Խ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966; **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001; **А. Карагезян**, К локализации гавара Кашатаг, БОИ 1, 1987, с. 41-44:

² Սյունիք տեղանվան մեկնաբանման փորձերի համար հմմտ. օր.՝ **A. Petrosyan**, “Eastern Hittites” in the South and East of the Armenian Highland? Aramazd IV/1, p. 63-72.

³ Ա. Հակոբյանը նշված հատվածում Սյունիք Արցախ սահմանը անց է կացնում Հոջանց գետի ձախ ափով (**Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտություններ, Վիեննա-Երևան, 2009, էջ 144; նույնի՝ Հակարիի վերնահովտի նորայայտ վիճագրերը, ՀԱ I-XII, 1998, էջ 269-279):

հյուսիս-արևմուտք, փակելով Գեղամա (Սևանա) լճի ավազանը հյուսիսարևելյան կողմից⁴: Ծայր հյուսիսարևմտյան մասում Սյունիքը շփվում էր Այրարատի Վարաժնունիք գավառին⁵:

Սյունիքը լեռնային երկիր է և տարածվում է Փոքր Կովկասի լեռնահամակարգի հարավ-արևելյան կողմում: Փոքր Կովկասն այս հատվածում արձակում էր բազմաթիվ լեռնաձյուղեր, որոնք հատվելով՝ տարածքը վեր էին ածել բազմաթիվ փակ շրջանների: Չնայած լեռնային լինելու, Սյունիքում կան այնպիսի շրջաններ, որոնք հողակլիմայական տեսակետից նպաստավոր են երկրագործության զարգացման համար (Ռոտտանի միջին և ստորին հոսանքի ավազանը, Ողջի և Արփա գետերի հովիտները): Սյունիքի բնական պայմանները հատկապես նպաստավոր են անասնապահության համար: Այստեղ լայնատարած են խոտհարքները և ալպյան մարգագետինները (հատկապես Գեղամա, Վարդենիսի և Սյունյաց լեռների բարձրադիր շրջաններում):

Սյունիքում կան բավականին անտառապատ տարածություններ, որոնցում աճում են ընկուզենի, տանձենի, խնձորենի, սալորենի և այլն: Այն հարուստ է նաև կենդանական աշխարհով (տարբեր տիպի հավքեր, ձկներ, գազաններ):

Տարածքն առատ է ջրերով. այստեղով անցնում են բազմաթիվ գետեր (Արաքս, Աղավնո, Տրտու, Հագարի, Հոչանց, Ռոտտան, Ողջի, Գավառագետ, Արգիճի), կան լճեր, որոնցից կարևորը Սևանն է:

Սյունիքը հատկապես հարուստ է բնական հարստություններով՝ շինաքարով, հանքային բազմաթիվ աղբյուրներով և պղնձի ու այլ գունավոր մետաղների ելքերով, որոնք արդեն վաղագույն ժամանակներում ենթարկվել են շահագործման:

Բազմազան են նաև Սյունիքի կլիմայական պայմանները, ուր մենք հանդիպում ենք մերձարևադարձային (Մեղրի գետի հովիտ, Կապան գետի միջին և ստորին հոսանք, Հագարիի ստորին հոսանք և Արաքսի հովիտ) և բարձր լեռնային ցուրտ (Ռոտտանի վերին հոսանք, Գեղամա լճի ավազանի մեծ մասը, Սյունյաց լեռների բարձրադիր շրջանները) կլիմայական գոտիներ: Սյունիքում լինում են խիստ ցրտեր, տեղում է առատ ձյուն, որի արդյունքում հնում ճանապարհների մեծ մասը ձմռանը դառնում էր անանցանելի: Սյունիքը ստանում է բավական քանակությամբ մթնոլորտային տեղումներ (միջին տարեկան տեղումների քանակը 300-700 մմ է):

Աշխարհագրական դիրքը նպաստում էր, որ տարածքով անցնեին կարևոր տարանցիկ ճանապարհներ: Միջնադարյան աղբյուրներից հայտնի են Սյունիքին առնչվող երկու կարևոր ուղիներ, որոնք պիտի գոյություն ունենային հնագույն ժամանակներից սկսած: Դրանցից մեկը Դվին-Նախիջևան-Վարդանակերտ-Փայտակարան-Կասպից Ծով ճանապարհն էր: Սյունյաց իշխանանիստ Շաղատ գյուղաքաղաքը միացած էր այդ ճանապարհին Նախիջևանի միջոցով: Շաղատ-Նախիջևան ճանապարհը Սյունիքի համար ուներ կարևոր տնտեսական նշանակություն, որի միջոցով այն կապվում էր Դվին-Փայտակարան և Դվին-Նախիջևան-Թավրիզ ճանապարհներին:

Հաջորդ ճանապարհը Դվին-Պարտավ տարանցիկ ճանապարհն էր, որն անցնում էր բուն Սյունիքով: Այս ճանապարհը Դվինից դուրս էր գալիս երկու ճյուղով: Մեկը գնում էր Հրազդա-

⁴ Ա. Հակոբյանը Սյունիքի տարածքում է ընդգրկում Տրտուի և Լևոնագետի ավազանները մինչև վերջինիս խառնվելը Տրտուին (**Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտություններ, էջ 236-238, 411):

⁵ Միևնույն ժամանակ պետք է նշել, որ միջնադարյան սահմանների մեխանիկական նույնացումը հնագույն սահմանների հետ այդքան էլ ճիշտ չէ: Եթե Ք.ա. IV հազ. կես-III հազ. ողջ տարածաշրջանն ընդգրկված էր կուրարաքսյան, իսկ ուշ բրոնզ-վաղ երկաթի դարաշրջաններում՝ լճաշեն-մեծամորյան մշակույթի տիրույթում, ապա Վանի թագավորության ներթափանցումը, իսկ հետագայում վերջինիս կործանումը, Իրանի քաղաքական և մշակութային ազդեցության ուժեղացումը, սկյութների ներթափանցումը տարածաշրջան, ստեղծում է միանգամայն նոր իրողություններ:

նի ավիով, ապա թեքվում դեպի արևելք՝ մինչև Բերդկունք (Սևանի ավին), որտեղից Սևանա լճի ավիով շարունակվում էր դեպի արևելք և հասնում Կոթ ավանը: Երկրորդ ճյուղը Դվինից դուրս գալով՝ հասնում էր Միսաջան կայանը (թերևս այժմյան Նորաշենի մոտ), ապա այստեղից ուղղվում էր դեպի հյուսիս՝ Արփա գետի հոսանքով և Սելիմի լեռնանցքով հասնում Կոթ, Սոթք ու այստեղից էլ՝ Հաթերքի և Կադանկատուի վրայով՝ Պարտավ⁶: Ամենայն հավանականությամբ Սևանա լճի հարավարևելյան ավերի մոտ էր անցնում նաև Artaxata-Sanora շրջանցիկ ճանապարհը⁷: Սյունիքի տարածաշրջանը ընկած էր Հյուսիս-Հարավ հիմնական ճանապարհի վրա: Ճանապարհն անցնում էր Անգեղակոթի հովտով, Միսիանի լեռնանցքով, այնուհետև մտնելով Նախիջևան, հատելով Արաքսը մտնում էր Իրան⁸: Ներկայումս շահագործվող բազմաթիվ միջհամայնքային ճանապարհներ հայտնի էին դեռևս հնում: Այս փաստի մասին է վկայում դրանց երկայնքով ամրոցների և դիտակետերի կենտրոնացումը⁹:

Սյունիքի բնական պայմանները թելադրել են մշակութային զարգացումների բնույթը և ուղղությունները: Ըստ այդմ, Սյունիքը, ինչպես բրոնզի և երկաթի դարում (տեքստ. աղ. 1), այնպես էլ հետագայում, դրսևորում է պատմամշակութային զարգացումների նույն օրինաչափությունները, ինչ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջանները, սակայն, լինելով արևելյան Կովկասին միացնող լեռնաշխարհի հիմնական «դուռը», կրել է նախ կովկասյան, ապա և իրանական որոշակի ազդեցություններ:

Հետազոտության պատմությունը. Պատմական Սյունիքի տարածաշրջանի հնագույն հուշարձանները բազմիցս հիշատակվում են հայ պատմիչների մոտ¹⁰ և ժողովրդական ավանդություններում¹¹: Սակայն դրանց գիտական ուսումնասիրությունը սկիզբ է առել XIX դ. երկրորդ կեսից: Այդ հուշարձանների (քարտեզ 1) հետազոտության պատմությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի, որոնք ընդգրկում են համապատասխանաբար նախախորհրդային, խորհրդային և հայկական նոր պետականության շրջանները:

Փուլ I. 1870-1920 թթ. դեռևս 1870 թ. Նախիջևանի աղի հանքերի տեսուչ Ֆ. Բայերնը նույն հանքերում հայտնաբերեց քարե գործիքներ, որոնց մասին առաջին տեղեկությունները հրատարակեց Նախիջևանի քաղաքային դպրոցների տեսուչ Կ. Նիկիտինը: Հետագա տարիներին այս տարածքից ի հայտ են եկել բազմաթիվ գտածոներ, որոնք լայնորեն քննարկվել են ժամանակի գիտական պարբերականներում¹²: 1896 թ. Լաչին լեռան մոտակայքում պատահականորեն հայտնաբերվել է և Ս. Պետերբուրգի հնագիտական հանձնաժողովին է հանձնվել «հունական տիպի բրոնզե լամպ, որի վերին հատվածն իրենից ներկայացնում է հունական թատերական դիմակ»¹³:

⁶ **Հ. Մանանդյան**, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Երևան, 1938, էջ 194-204:

⁷ **А. Я. Манандян**, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, с. 156-159.

⁸ **Մ. Զարդարյան**, Արդի հնագիտական հետազոտությունները ՀՀ Սյունիքի մարզում և պատմա-մշակութային ժառանգության պահպանության խնդիրները, Heritage Conservation Regional Network E-Journal 1, 2012 (cccd.icomos.org.ge); **М. Зардарян**, Коммуникационная ось «Юг-Север» в системе внешних связей Армянского нагорья, Армянский Гуманитарный Вестник 2/3-1, 2009, с. 53-54.

⁹ **Գ. Սարգսյան, Ա. Գնունի, Ա. Հակոբյան**, Սյունիքի արևելյան սահմանների պաշտպանական համակարգի ձևավորումը մ.թ.ա. II-I հազ., Վեմ 1, 2014, էջ 169-170:

¹⁰ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, 1968, էջ 92; **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 69-73; **Հովհաննես Դրասխանակերտցի**, Պատմություն Հայոց, Երևան, 1996, էջ 25-27:

¹¹ **Жизнь Артемия Апаратского**, Москва, 1981, с. 19.

¹² **О. А. Абибулаев**, Энеолит и бронза на территории Нахичеванской АССР, Баку, 1982, с. 9.

¹³ **В. М. Сысоев**, Краткий очерк истории Азербайджана (северного), Баку, 1925, с. 22.

Աղյուսակ 1. Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի հնագիտության պարբերացումը և ժամանակագրությունը՝ համընդհանուր հայաստանյան համատեքստում

Դարա- շրջան	Բաժա- նումներ	Ժամանակա- գրություն, Ք.ա.	Մշակութային խմբեր	Հիմնական հուշարձաններ Հայաստանի այլ շրջաններ Պատմական Սյունիք		Հիմնական իրադարձություններ
Բրոնզի	վաղ	3500-2900	կուր-արաքսյան I	Էլառ, Արագած, Գեղարոտ	Սոթք 2 (Գեղարքունիք), Օղլան կալա, Օվ- չուլար թեփե , Մախտա (Նախիջևան)	սև փայլեցված խեցեղենի մշակութային գոտու ձևավորում Բարեբեր Մահիկի շրջանում, վաղ բարդվածությամբ բնորոշ- վող հասարակությունների հաստատում, մկնդեղային բրոնզի կիրառում
		2900-2500	կուր-արաքսյան II	Շենգավիթ, Մոխրաբլուր, Կառնուտ	Տանձավեր (Ջանգեզուր), Ելփին, Արենի (Վայոց ձոր), Լճաշեն, Սոթք 2 (Գեղարքու- նիք), Դուզդաղ*, Որոտան* Եզնագումեր*, Սոնասար*, Միրիկ 2* (Քաշաթաղ), Ալի Բայրամլի (Քարվաճառ), Քյուլ-թեփե 1, Քյուլ-թեփե 2 (Նախիջևան)	
	միջին	2400-2100	կուրգանային	Մայիսյան, Ստեփանա- կերտ, Խաչենագետ	Լճաշեն (դ. 55) (Գեղարքունիք), Քյուլ-թեփե 2 (Նախիջևան)	մշակութային բազմազանություն, սև (վաղ փուլեր) և գունազարդ (զարգացած և ուշ փուլեր) խեցեղենի տարբեր խմբերի տա- րածում, կիսաքոչվորական կենսակերպի աշխուժացում, առնչություններ Փոքր Ասիայի և Էգեյան աշխարհի ուղղությամբ, անագային բրոնզի կիրառում
		2100-1850	թռեղք- վանաձորյան 1	Քարաշամբ, Օշական, Ուզերլիկթեփե I	Սիսիանի I դ-դաշտ (դ. 10, 13), Սիսիանի II դ-դաշտ, (դ. 1-3, 1ա, 2ա), Ադիտու, Ջորաց քարեր (Ջանգեզուր), Շատին, Մոզ (դ. 1, 2) (Վայոց ձոր), Լճաշեն (դ. 120, 123), Սոթք 10 (դ. 1) (Գեղարքունիք)	
		1850-1700	թռեղք- վանաձորյան 2, սևան-արցախյան 1	Վանաձոր, Այգեշատ, Լոռի Բերդ	Սիսիանի I դ-դաշտ (դ. 1-3, 5-7, 9) (Ջան- գեզուր), Նորատուս (դ. 1) (Գեղարքունիք), Միրիկ*, Աղվեսահաքի*, Եզնագումեր* (Քաշաթաղ)	
		1700-1500	թռեղք- վանաձորյան 3, սևան-արցախյան 2, կարմիր-բերդյան, կարմիր-վանքյան	Կարմիր Բերդ, Կարմիր Վանք, Ուզերլիկթեփե II-III	Ախլաթյան (Ջանգեզուր), Ելփին (Վայոց ձոր), Լճաշեն (դ. 6), Գավառ (դ. 1-3), Սևան ՀԷԿ, Ներքին Գետաշեն (դ. 21) (Գեղարքու- նիք), Քյուլ-թեփե, Կարմիր Վանք (Նախի- ջևան)	
		1500-1400	լճաշեն- մեծամորյան 1	Ապարան II, Հառիճ, Շիրակավան	Որոտան (Ջանգեզուր), Լճաշեն դ. 1955/1, 1956/2, 5, 191-193, 196, 197, 200-203, 207, 209, 211-213, 215, 228), Սոթք 2 (Գեղար- քունիք)	
	ուշ	1400-1200	լճաշեն- մեծամորյան 2-3	Արթիկ, Գեղարոտ, Շամիրամ	Անգեղակոթ, Խնձորեսկ* (Ջանգեզուր), Ներքին Գետաշեն Լճաշեն (Գեղարքունիք), Ղալաջիկ 2*, Եզնագումեր* (Քաշաթաղ)	միջազգային «սերտաճման» շրջան, տեղա- կան թագավորությունների առաջացում (Հայասա), ակտիվ առևտրամշակութային և քաղաքական կապեր խեթա-խուռիա-

						կան և միջագետքյան կենտրոնների հետ, անագային բրոնզի, կապարի և ծարիրի կիրառում
Երկաթի	վաղ	1200-900	լճաշեն-մեծամորյան 4	Մեծամոր, Դվին, Հոռոմ	Տանձավեր (դ. 2-5), Մաճ, Աղվանի, Նորաշենիկ, Լեռնաձոր, Խնածախ, Կապան-Շահումյան (Զանգեզուր), Ջոջ դար (Վայոց Ձոր), Նորաբակ դ. 1 (Գեղարքունիք), Արվական, Կերեն*, Կերեն (դ. 3, 54 A, 93), Դուզդաղ*, Գյաուր Դամեր* (Քաշաթաղ)	հասարակության ռազմականացում, «կիկլոսյան ամրոցներ»՝ արտաքին քաղաքով, Հայկական լեռնաշխարհի ցեղերի մշակութային և թերևս քաղաքական (Նաիրի, Էթիունի) միավորում, երկաթի կիրառում
	միջին	900-700	լճաշեն-մեծամորյան 5 և բիայնական	Մեծամոր, Էրեբունի, Արգիշտիխինիլի	Շիկահող (դ. I-III), Կապան-Շահումյան (բնակատեղի), Աղիտու, Խնձորեսկ*, Խնածախ, Հարժիս (Զանգեզուր), Մոզ (Վայոց Ձոր), Հերիկ*, Կերեն (դ. 62) (Քաշաթաղ)	հինարևելյան տիպի վարչակարգի ծնունդը Վանա լճի շրջակայքում (= Բիայնիլի-Ուրարտու) և նրա տարածումը ներկայիս Հայաստանի տարածքում (= Էթիունի), սեպագրի և հիերոգլիֆ գրի օգտագործում, երկաթի լայն կիրառում
	ուշ	700-600	լճաշեն-մեծամորյան 6 և ուրարտական	Կարմիր Բլուր, Օշական, Արամուս	Սըզնակ* (Զանգեզուր), Գետափ, Մալիշկա, Աղավնաձոր (Վայոց Ձոր), Սպիտակաջուր (ավերված դամբարան), Գեղիովիտ (Գեղարքունիք), Հերիկ*, Կերեն (դ. 1, 46, 106) (Քաշաթաղ)	տեղական (լճաշեն-մեծամորյան/Էթիունյան) և բիայնական մշակույթների սերտաձման (կոյնեի) շրջան, երկաթի լայն կիրառում
		600-400	«վաղ հայկական»/երվանդյան	Աստղիբլուր, Բերդ, Էրեբունի	Կապան-Շահումյան (բնակատեղի), Շիկահող (Զանգեզուր), Ուլցյուր (Վայոց Ձոր)*, Եզնագուեր, Հերիկ*, Կերեն (դամբ. հիմնական խումբ) (Քաշաթաղ)	ուրարտական ազդեցության նվազում, իրանական ավանդույթների լայն ներթափանցում, քաղաքային կյանքի նվազում

Փուլաբաժանումն ու ժամանակագրությունն ըստ՝ Պ. Ավետիսյան, Ռ. Բադալյան, Ս. Հմայակյան, Ա. Փիլիպոսյան, Հայաստանի բրոնզ երկաթեդարյան պարբերացման և ժամանակագրման հարցերի շուրջ, ԴՀԱՆ 1993-1995, 1996, էջ 8-12; Պ. Ավետիսյան, Հայաստանի միջին բրոնզի ժամանակագրությունը և փուլաբաժանումը, թեկն. ատեն. սեղմագիր, Երևան, 2003; հմտ. նաև A. T. Smith, R. S. Badalyan, P. Avetisyan, The Archaeology and Geography of Ancient Transcaucasian Societies, 1: The Foundations of Research and Regional Survey in the Tsaghkahovit Plain, Armenia, OIP 134, 2009, p. 33-36; P. Avetisyan, A. Bobokhyan, Archaeology of Armenia in Regional Context: Achievements and Perspectives, Archaeology of Armenia in Regional Context, Yerevan, 2012, p. 18, fig. 2:

* - ով նշված են այն հուշարձանները, որոնք հայտնի են միայն վերգետնյա նյութով:

Առավել կանոնակարգված հետազոտությունները կրում էին փաստահավաք բնույթ: Այսպես, Հովհաննես Եպիսկոպոս Շահխաթունյանը և Մեսրոպ Եպիսկոպոս Սմբատյանը նկարագրում են Գավառի Բերդի գլուխ ամրոցը: Վերջինս նշում է այլ կիկլոպյան ամրոցների մասին¹⁴: Ղ. Ալիշանը հիշատակում է Սուլթան քեդեսի ընդարձակ բնակատեղին, որը նա շփոթում է պատմական Մոզի հետ¹⁵:

Հետագա տարիներին տարածաշրջանում ուսումնասիրություններ է կատարում Ե. Լալայանը¹⁶: Ե. Լալայանը իրավացիորեն նշում է հնագույն ամրոցի առկայությունը Սուլթան քեդեսում¹⁷: Բացի այդ նա հիշատակում է Հերհերի, Շաղատի, Շաքիի դամբարանները, այդ թվում նաև՝ կարասային թաղումները, Հարժիսի ամրոցը և Ջորաց քարերի հուշարձանը¹⁸: Գեղարքունիքի տարածաշրջանի հնագիտական հուշարձանների առավել ամբողջական անդրադարձները պատկանում են Ա. Իվանովսկուն, ով տալիս է նաև տարածաշրջանի ընդարձակ երկրաբանական նկարագիրը¹⁹:

Տարածքի հուշարձանների պեղումները սկսվել են արդեն XIX դ. վերջերին: 1896 թ. Կարմիր վանքի վանականները վանքի տարածքում հայտնաբերում են անոթներ: 1896 թ. դամբանադաշտը հետազոտում է Ն. Ֆյոդորովը, որի պեղումների նյութերը հրապարակվեցին Ա. Սպիցինի կողմից²⁰: 1898 թ. Գորիսի տարածաշրջանի Տեղ գյուղից ոչ հեռու դամբարանաբլուրների պեղումներ է իրականացրել Ա. Ռոսելը²¹: 1904 թ. Ե. Լալայանը նախաձեռնում է Նախիջևանի հանգուցային հուշարձաններից մեկի՝ Քյուլ-թեփեի պեղումները²²: 1906-1908 թթ. Սևանի ավազանում Լալայանի կողմից ուսումնասիրվում են ավելի քան 500 դամբարաններ²³: Դիպվածային պեղումներ Սյունիքի արևելյան սահմաններում՝ Վանք-Չորման ճանապարհին (ներկայիս ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք գյուղը և ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Չորման գ.) իրականացնում է Ա. Իվանովսկին՝ պեղելով մեկ դամբարան²⁴:

Փուլ II. 1920-1990 թթ. 1920-1930 թթ. մի շարք հրատարակություններում փորձ արվեց կարգավորել սյունիքյան՝ հայաստանյան և անդրկովկասյան ընդհանուր տվյալները համատեքստում²⁵: Այս առնչությամբ հարկ է հիշատակել Ս. Տեր-Ավետիսյանի աշխատությունները, որոնցում հեղինակը փորձում է դիտարկել սյունիք-արցախյան տարածաշրջանի դամբարանաբլուրները (Տրտուի ավազան, Սևան և Խաչենի դաշտ, Աղավնոյի ավազան) մեկ մշակութային գոտու սահմաններում²⁶: 1926 թ. Ի. Մեշյանինովը նախաձեռնում է հնագիտական այցելություն Նախիջևան և Լեռնային Ղարաբաղ: Նույն տարում վերսկսվեցին

¹⁴ **Յ. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Սբ. Էջմիածին, 2014, էջ 364-368; **Մ. Սմբատեանց**, Տեղեկագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, Էջմիածին, 1895:

¹⁵ **Ղ. Ալիշան**, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 127: Մոզը Դվինի հետ է շփոթում Կովկասյան փոխարքայի դիվանատան աստիճանավոր Տոկարևը, ով 1850 թ. այցելում է այդ հուշարձանը (**Л. М. Меликсет-Бек**, Из истории археологических изысканий в Армении, Изв. АН Арм. ССР 6, 1947, с. 48-49):

Ուշագրավ է, որ դեռևս 1882 թ. Թիֆլիսի հնագիտական ընկերությունը հայր Ղևոնդ Ալիշանին հետևյալ կարգով ընտրել է Սյունիքի հնություններն ուսումնասիրող հանձնաժողովի անդամ (**Ս. Մարգարյան**, Ալիշան, Երևան, 1978, էջ 163):

¹⁶ **Ե. Լալայեան**, Սիսիան, նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, ԱՀ Գ, 1898, էջ 105-293; *նույնի*՝ Ջանգեզուր, ԱՀ Դ, 1899, էջ 7-116, *նույնի*՝ Շարուր Դարալագեազի գաւառ, ԱՀ XII, 1904, էջ 235-293:

¹⁷ **Ե. Լալայեան**, Շարուր Դարալագեազի գաւառ, էջ 268:

¹⁸ **Ե. Լալայեան**, Սիսիան, էջ 168-182, *նույնի*՝ Շարուր Դարալագեազի գաւառ, էջ 264:

¹⁹ **А. А. Ивановский**, По Закавказью, МАК VIII, 1911, с. 1-32.

²⁰ **О. А. Адибулаев**, նշվ. աշխ., էջ 11:

²¹ **Ե. Լալայեան**, Ջանգեզուր, ԱՀ Դ, 1899, էջ 40:

²² **Ե. Լալայեան**, Նախիջևանի ոստիկանական շրջան, ԱՀ XIII/I, 1908, էջ 205-210:

²³ **Ե. Լալայան**, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 67-117:

²⁴ **А. А. Ивановский**, նշվ. աշխ., էջ 147:

²⁵ **Ե. Լալայեան**, Դամբարանների պեղումներ; **Ս. Բարխուդարյան**, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1935; **Խ. Մամվելյան**, Հին Հայաստանի կուլտուրան, Խ. I, Երևան, 1931:

²⁶ **Ս. Տեր-Ավետիսյան**, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 2010, էջ 183-184, 189:

Կարմիր Վանքի պեղումները²⁷: Կարևոր նշանակություն ունեցան Ա. Ալեքսերովի աշխատանքները Նորաշենում (Օղլան կալա ամրոց), Շոռ-թեփեում²⁸: Ի. Ջաֆարզադեն քարանձավագիտական հետազոտություններ կատարեց պատմական Սյունիքի հարավ-արևելքում, ուսումնասիրվեցին ինչպես բնական, այնպես էլ արհեստական քարանձավները²⁹: Գորիսի տարածաշրջանի Տեղ գյուղի բնակելի քարայրներին ուշադրություն էր դարձրել դեռ Ս. Տեր-Ավետիսյանը, ով իրեն ժամանակակից բնակելի քարայրների հետ մեկտեղ հիշատակում է նաև «նախապատմական շրջանի բնակավայր ծառայող այրերը»³⁰: 1920-1950-ական թթ. Սիսիանի տարածաշրջանում կանոնավոր պեղումներ է իրականացնում Ս. Հասարթյանը՝ ուսումնասիրելով մի շարք հուշարձաններ (Ձորաց քարերը, Լորի և Ախլաթյանի դամբարանադաշտերը)³¹: Կարևորագույն նշանակություն ունեցան Թուրքս գյուղի դամբարանի պեղումները³²:

Սյունիքի հնագիտական ուսումնասիրության գործում մեծ նշանակություն ունեցան 1950-ական թթ. Օ. Աբիբուլանի կողմից վերսկսված Քյուլ-թեփեի պեղումները³³: 1950-1960-ական թթ. ակտիվացան հնագիտական աշխատանքները կապված Սևանա լճի մակարդակի իջեցման հետ: Նախ, պետք է հիշատակել այն աշխատանքները, որոնցում փորձ էր կատարվում դիտարկել տարածաշրջանի հնագիտական հուշարձանները Սևանա լճի մակարդակի տատանումների համատեքստում, այդ թվում հնագիտա-երկրաբանական հետազոտությունները Նորաշեն բնակատեղիում³⁴: Նույն շրջանում կարևոր նշանակություն ունեցավ Սևանա լճի ավազանի ամրոցների ուսումնասիրությունը³⁵: Սևանա լճի մակարդակի իջեցման ժամանակ բացահայտված թաղումային հուշարձանների պեղումները կարևորագույն դեր խաղացին Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան մշակույթների պարբերացման ու թվագրման գործում³⁶:

Սյունիքի երկաթեդարյան հուշարձանների ուսումնասիրության, տարածաշրջանային կապերի բացահայտման համար մեծ նշանակություն ունեցան Դավիթ Բեկի, Քաջարանի, Շինուհայրի, Հարժիսի հուշարձանների ուսումնասիրությունը³⁷: Նույն տարիներին պատմական Մոզի տարածքում երկու դամբարան ուսումնասիրեց Հ. Իսրայելյանը³⁸: Ուշագրավ են Կապան քաղաքի Թեղուտ թաղամասում հայտնաբերված և Կապանի երկրագիտական թանգարանում պահպանվող Ք.ա. VII-V դդ. բնորոշ նյութերը, որոնց մի մասը տեղում ուսումնասիրել է Ռ. Թո-

²⁷ **И. И. Мещанинов**, Краткие сведения о работе археологических экспедиций в Нагорный Карабах и Нахичеванский край, СГАИМК 1, Ленинград, 1926, с. 217-240; **А. Миллер**, Археологическое исследование в Нахичеванской республике летом 1926 г., СГАИМК 1, с. 326.

²⁸ **А. Алекперов**, Поездка в Зангезур и в Нахичеванский край, Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 248, *նույնի*՝ Крашенная керамика Нахичеванского края и Ванское царство, СА IV, 1937, с. 249-262; **И. М. Джафарзаде**, Древнейший период истории Азербайджана, в кн.: Очерки по древней истории Азербайджана Баку, 1956, с. 39.

²⁹ **И. М. Джафарзаде**, Следы древнейшей культуры на территории Азербайджана, Изв. Аз ФАН СССР, 1944, н. 4, с. 68-69.

³⁰ **Ս. Տեր-Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 80:

³¹ **Ս. Հասարթյան**, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985:

³² **А. О. Мнацаканян**, Находки предметов бронзового века в с. Толорс, КСИИМК 54, 1954, с. 99-104.

³³ **О. А. Абибулаев**, Энеолит и бронза на территории Нахичеванской АССР.

³⁴ **С. П. Бальян, П. С. Бошнякян**, Палеогеография и некоторые вопросы гидрогеологии оз. Севан. В кн.: Вопросы геологии Кавказа, Ереван, 1974, с. 37-48, **Ю. В. Саядян, Э. В. Алешкинская**, Первая радиоуглеродная датировка и условия захоронения лачинских археологических памятников, ДАН Арм ССР, т. XIV, н. 1, Ереван, 1977, с. 43-50; **Ю. В. Саядян, Э. В. Алешкинская, Э. В. Ханзадян**, Последлениковские отложения и археология побережья оз. Севан, в кн.: Геология четвертичного периода (плейстоцен), Ереван, 1977, с. 91-103.

³⁵ **Գ. Միքայելյան**, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, ՀՀՀ I, Երևան, 1968:

³⁶ **Հ. Մնացականյան**, Լճաշենի նյութական մշակույթի զարգացման հիմնական էտապները, ՊԲՀ 2, 1965, էջ 95-115:

³⁷ **Լ. Բարսեղյան**, Ուշ բրոնզի մի քանի նորահայտ պաշտամունքային հուշարձաններ, ՊԲՀ 3, 1962, 258-260; **С. Есаян, А. Шагинян**, Археологические раскопки в Зангезуре, СА 3, 1962, с. 187-200; **А. А. Мартirosян**, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 148.

³⁸ **О. S. Xnkikyan**, Syunik during the Bronze and Iron Ages, Barrington, 2002, p. 10.

րոպանը³⁹: 1972 թ. հրապարակվեց Սյունիքի վաղ հուշարձաններին նվիրված առաջին ամփոփ հոդվածը, որտեղ ի մի էին բերված այդ տարածաշրջանին առնչվող բոլոր հայտնի նյութերը⁴⁰:

Ջուգահեռաբար ընթանում էին նաև թանգարանային նյութի կանոնակարգումը և հրատարակումը: Հ. Մարտիրոսյանը հրատարակեց Գորիսի երկրագիտական թանգարանում պահպանվող Լծենի դամբարանի նյութերը⁴¹ և Սիսիանի, Գորիսի ու Կապանի երկրագիտական թանգարաններում պահպանվող հնագույն քանդակի նմուշները⁴²: Ս. Եսայանը և Ս. Պողոտեբովան հրատարակեցին Նախիջևանի երկրագիտական թանգարանում պահվող սկյութական տիպի նետասլաքները⁴³:

Պատմական Սյունիքի հուշարձանները հիշատակվում են նաև Լ. Ազարյանի, Ս. Բարխուդարյանի, Հ. Եղիազարյանի, Վ. Խաչատուրյանի, Ա. Շահինյանի, Հ. Պետրոսյանի, Պ. Մուրադյանի, Վ. Ավետյանի, Օ. Խնկիկյանի աշխատանքներում⁴⁴: Հատկապես պետք է շեշտել Օ. Խնկիկյանի անունը, ով սկսած 1980-ական թթ. տարածաշրջանում ուսումնասիրել է տասնյակ հուշարձաններ, իսկ նրա մենագրությունը՝ Սյունիքի հնագիտությանը նվիրված առաջօր ամենամփոփ աշխատությունն է: Նրա հետազոտությունները ներառում են Վայոց ձորի և Սյունիքի մարզերի գրեթե բոլոր շրջանները, այդ թվում այնպիսի հանգուցային հուշարձանների նյութեր, ինչպիսիք են Սիսիանի, Ջորաց Քարերի, Խնածախի, Շիկահողի, Շվանիձորի, Ջոջ դարի դամբարանադաշտերը⁴⁵: Հետազոտության առարկա են դարձել նաև տարածաշրջանի հնագույն բնակավայրերը (Ելփին, Տեղ, Հարժիս)⁴⁶: Հեղինակը հրատարակել և մանրամասն մեկնաբանել է Եղեգնաձորի ուրարտական հուշարձանները⁴⁷:

1970-1980-ական թթ. Սևանա լճի ավազանում շարունակվեցին դամբարանների պեղումները. մասնավորապես հետազոտվեցին Լճաշենի, Քանագեղի, Գեղիովտի, Սրթբի ձորի, Ներքին Գետաշենի, Քոռայի, Սառնաղբյուրի, Կարճաղբյուրի դամբարանադաշտերը⁴⁸: Նախիջևա-

³⁹ Ս. Եսայան, Ջանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները, ԼՀԳ 4, 1972, էջ 70-73:

⁴⁰ Ս. Եսայան, նշվ. աշխ., էջ 64-73:

⁴¹ А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 151-153:

⁴² Ս. Եսայան, նշվ. աշխ., էջ 64-73; С. Есаян, Скульптура Древней Армении, Ереван, 1981, с. 51-61.

⁴³ С. А. Есаян, М. Н. Погребова, Скифские памятники Закавказья, Москва, 1985, с. 23.

⁴⁴ Լ. Ազարյան, Հայկական խաչքարերը Սր. Էջմիածին, 1973; Ս. Գ. Բարխուդարյան, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, ԴՀԳ 3, Երևան, 1967; Հ. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955; Վ. Խաչատուրյան, Դիտողություններ հայ արվեստի հիմունքների մասին, ԼՀԳ 10, 1982, էջ 76-85; Օ. Ս. Խնկիկյան, Ցլազուխ կոթողներ Վարդենիսի լեռներից և վիշապաքարերի մեկնության հարցի շուրջ, ԼՀԳ 3, 1997, էջ 148-159; Ա. Շահինյան, Վայոց ձորի վիշապ-կոթողները, ՊԲՀ 1, 1976, էջ 286-289; Ա. Շահինյան, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, Երևան, 1984; Հ. Լ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, գործառնությունը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008; П. М. Мурадян, Обращенные в хачкары вышпаны-стелы из Ехегнадзора, Художественные памятники и проблемы культуры Востока, Ленинград, 1985, с. 20-26; Վ. Ավետյան, Հին հուշարձաններ Տաթև գյուղի տարածքում, ՊԲՀ 3, 2001, էջ 259-264; Գր. Գրիգորյան, Վահանավանք, Երևան, 2007, էջ 78, աղ. XXII; Լ. Կիրակոսյան, Քանագեղի դամբարանների ճարտարապետությունը, ՀՀՄ III, էջ 97-106; Ա. Փիլիպոսյան, Ռ. Մկրտչյան, Գեղիովտի Վանտոսայան (ուրարտական դամբարանը), Երևան, 2001:

⁴⁵ 1980 թ. Ջոջ դարում հետազոտություններ է կատարել նաև Վ. Հովհաննիսյանը. պեղումների հաշվետվությունը պահվում է ԵԵԹ-ում (հմմտ. Վ. Հովհաննիսյանի հոդվածն այս գրքի հավելվածում):

⁴⁶ Օ. Տ. Хнкикян, նշվ. աշխ.:

⁴⁷ С. Есаян, О. Хнкикян, Находки урартских предметов в Ехегнадзоре, ВЕУ 3, 1990, с. 34-44.

⁴⁸ Գ. Արեշյան, Պահպանական պեղումներ Քանագեղում, ԴՀԱԹ 1979-1980, Երևան, 1981, էջ 2-3; Լ. Պետրոսյան, Պեղումներ Լճաշենում (1989-1990), ԴՀԱԹ 1989-1990, Երևան, 1991, էջ 28-29; նույնի՝ Լճաշենի դամբարանադաշտերի պեղումները (2005-2006 թթ.), ՀՀՄ XIV, 2008, էջ 129-148; Է. Խանգաղյան, Լճաշենի վիշապը, ՀՀՄ XIII, 2005, էջ 86-90; Ա. Փիլիպոսյան, Պեղումներ Սևանի կղզեկտորի Նորատուսի հնավայրում, ԴՀԱԹ 1989-1990, էջ 29-31; նույնի՝ Հետախուզական պեղումներ «Սրթբի ձոր» դամբարանադաշտում, ԴՀԱԹ 1989-1990, էջ 31-33; Ա. Փիլիպոսյան, Վ. Հովհաննիսյան, Պեղումներ Ներքին Գետաշեն գյուղում, ԴՀԱԹ 1989-1990, էջ 33-35; Ն. Ենգիբարյան, Ուրարտական դամբարաններ Նորատուսից, ԴՀԱԹ 1989-1990, էջ 66-69; նույնի՝ Ուրարտական դամբարան Ներքին Գետաշենից, ԴՀԱԹ 1989-1990, էջ 69; Р. А. Мкртчян, Палеодемография могильника Неркин Геташен, ДКА 3, с. 46-49; N. Engibaryan, in: Biscione R., Hmayakyan S., Parmegiani, The North-Eastern Frontier: Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, I. The Southern Shores, Documenta Asiana VII, Roma, 2002., p. 417-454.

նի հնագիտական ուսումնասիրության համատեքստում հարկ է նշել Քյուլ-թեփե II-ի, Գյաուրկալայի, Օղլան կալայի, Չալխան կալայի, Ղազանչիի, Վայիտ Գյաուրկալայի բնակավայրերի⁴⁹, Ղալաջիկ դամբարանադաշտի պեղումները⁵⁰: Մի շարք հետաքրքիր հուշարձաններ ուսումնասիրվեցին Սյունիքի արևելյան հատվածներում: Հարկ է նշել Քարվաճառի շրջանում (ներկ. ԼՂՀ Շահումյանի շրջան) գտնվող Ալի Բայրամլի բնակատեղիի պեղումները⁵¹: Սյունիքի արևելյան շրջանում (ներկ. ԼՂՀ Քաջաթաղի շրջան) հետազոտություններ իրականացվեցին Արվականի դամբարանադաշտում, Մշենիի և Արվականի ամրոցներում⁵²: Հպանցիկ անդրադարձներ կատարվեցին տարածաշրջանի այլ հուշարձաններին⁵³:

Էական էր Սյունիքի հանքերի հետազոտությունը. երկրաբանական ուսումնասիրությունների ենթարկվեցին Կապանի և Քաջարանի պղնձահանքերը⁵⁴, Նախիջևանի աղի հանքերը⁵⁵:

Կարևոր նշանակություն ունեցավ Սյունիքի ուրարտական արձանագրությունների վերծանությունը և մեկնաբանությունը: Գեղարքունիքի առաջին հետազոտություններն այս ուղղությամբ կատարվել են դեռևս 1860-ական թթ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի կողմից: Այնուհետև սեպագիր արձանագրությունները հետազոտվել են Ա. Իվանովսկու և Մ. Նիկոլսկու կողմից⁵⁶: 1927 թ. Թ. Ավդաբեկյանը հայտնաբերեց Գավառի Բերդի Գլուխ ամրոցի ուրարտական արձանագրությունը⁵⁷: Այս և մեկ այլ արձանագրություն Սևանա լճի ավազանից ուսումնասիրել և հրատարակել է Ա. Քալանթարը⁵⁸: Հետագա տարիներին Սևանա լճի ավազանի սեպագիր արձանագրությունները ամրոջացվեցին⁵⁹: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ուրարտական արձանագրություններով բրոնզե իրերի գտածոները Գավառից⁶⁰: Եթե Սևանա լճի ավազանի սեպագիր արձանագրությունները հայտնի էին դեռևս XIX դ., ապա Միսիանի սեպագիր արձանագրությունների հայտնաբերումը 1970 թ. նորույթ էր⁶¹:

⁴⁹ **В. Алиев**, Археологические исследования 1975 г. в Кюль тепе II, АЭИА 1975 г., Баку, 1978 с. 21-23; **В. Г. Алиев, А. Г. Сеидов, С. Г. Ашуров**, Археологические исследования культурного слоя эпохи ранней бронзы Кюль тепе II (1985 г.), АЭИА 1985 г., Баку, 1986, с. 10-12; **В. Г. Алиев, А. Г. Сеидов**, Раскопки в Кюль тепе II. в 1979 г., АЭИА (1979), Баку, 1984, с. 15-18; **В. Г. Алиев**, Новые археологические исследования памятников энеолита и бронзы Нахичеванской АССР, АЭИА (1980-1981), Баку, 1986, с. 66-71; **В. Г. Алиев, В. Б. Бахшалиев**, Новые археологические данные по древней металлургии Нахичевани, АЭИА 1980-1981 гг., с. 11-14; **В. Г. Алиев**, Поселения раннегородского типа Нахичеванского края, ДСА, Баку, 1985, с. 51-53; **Н. Г. Алиев**, Керамика эпохи энеолита из поселения Овчулар тепе, ДСА, с. 54-55; **В. И. Керимов**, Исследования циклопических сооружений Нахичевани эпохи бронзы, ДСА, с. 174-175; **А. Г. Сеидов, С. Г. Ашуров**, Новые данные о куро-аракской культуре в поселении Кюль тепе II, ДСА, с. 318-320; **Д. Ахундов**, Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, 1986 с. 19-21.

⁵⁰ **М. М. Сеидов**, Результаты археологических исследований в сел. Карабаглар на территории Нахичеванской АССР, АЭИА (1979 г.), Баку, 1984, с. 25-26; *նույնի՝* Археологический комплекс Галаджиг эпохи поздней бронзы и раннего железа, ДСА, с. 320-321.

⁵¹ **Н. С. Ибрагимов**, К вопросу освоения высокогорных зон Азербайджана (на основе данных Кельбаджарского высокогорья), АЭИА (1985), с. 25-27.

⁵² **В. Алиев**, Археологические исследования в Лачинском районе, АО 1980 г., Москва, 1981, с. 414-415.

⁵³ **Б. Геошев**, Христианство в Кавказской Албании, Баку, 1984, с. 60; **Атлас Азербайджанской ССР**, Баку-Москва, 1963, с. 205; **Памятники Карабаха**, под ред. В. Гусейнова, Баку, 2009, с. 92, 107: Նշված գրքում, չնայած դրա ակնհայտ քաղաքական ուղղորդվածությանը, ալբոմային բնույթի և տեղեկատվության տեղադրման որևէ մեթոդի բացակայությանը, այնուամենայնիվ, որոշակի տվյալներ են պարունակվում վաղ շրջանի հուշարձանների մասին:

⁵⁴ **А. Ц. Геворкян**, Из истории древнейшей металлургии Армянского нагорья, Ереван, 1980, с. 30-32.

⁵⁵ **В. Алиев**, Древние соляные копи в Нахичевани, Изв. АН Аз. ССР, сер. истории, философии и права, 1984, н. 4, с. 79-87.

⁵⁶ **А. Ивановский**, նշվ. աշխ., էջ 16, 20-26:

⁵⁷ **Գ. Միքայելյան**, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, էջ 8-9:

⁵⁸ **Ա. Քալանթար**, Հայաստան. քարե դարից միջնադար, Երևան, 2007, էջ 229-246:

⁵⁹ **M. Salvini**, in: **Biscione R., Hmayakyan S., Parmegiani**, նշվ. աշխ., էջ 37-60:

⁶⁰ **Վ. Գալսերյան**, Ուրարտական արձանագիր բրոնզե իրերը Կամոյից, ԼՀԳ 2, 1984, էջ 101-102:

⁶¹ **Ն. Հարությունյան**, Արգիշտի II-ի սեպագիր արձանագրությունը, ՊԲՀ 3, 1979, 15, 93-104; **Վ. Գալսերյան**, Արգիշտի II-ի Միսիանի արձանագրությունը, ԼՀԳ 6, 1985, էջ 67-79; **Н. В. Арутюнян**, Топонимика Урарту, Ереван, 1985; **N. Harouthiounian**, La nouvelle inscription Ourartene decouverte en Armenie Sovetique, Gesellschaft und Kultur im alten Vorderasien, Berlin, 1982, 82-85; **Հ. Կարապետյան**, Նախիջևանի տարածքը ըստ սեպագիր աղբյուրների, Հուշարձան Դ-Ե, Երևան, 2008, էջ 55:

Փուլ III. 1990-2014 թթ. վերջին տարիներին Սյունիքում իրականացվում են ինչպես ուղեգծային արշավներ, այնպես էլ կանոնավոր պեղումներ: Կարևորագույն նշանակություն ունեցան հայ-իտալական արշավախմբի աշխատանքները Սևանա լճի ավազանում. ուսումնասիրվեցին, տիպաբանվեցին և թվագրվեցին առ այսօր հայտնի բոլոր ամրոցները, դիտարկվեցին բնակավայրերի առաջացման բնական պայմանները⁶²: Ուղեգծային արշավների թվում պետք է հիշատակել նաև Ս. Քրոլի⁶³, Պատմա-մշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի և ԵՊՀ-ի արշավախմբի հետազոտությունները⁶⁴: Ազատագրումից հետո ԼՂՀ Շահումյանի շրջանի Քարվաճառի տարածաշրջանում և Քաշաթաղի շրջանում իրականացվել են բազմաթիվ ուղեգծային արշավներ Պատմա-մշակութային ժառանգություն գ/հ կենտրոնի (ղեկ.՝ Հ. Սիմոնյան)⁶⁵ և ԼՂՀ Կառավարությանն առընթեր Զբոսաշրջության վարչության արշավախմբերի կողմից (ղեկ.՝ Գ. Սարգսյան)⁶⁶:

Կանոնավոր հնագիտական աշխատանքների շարքում պետք է նշել Գողեձորի բազմաշերտ հուշարձանի⁶⁷, Սիսիանի Փորձակայանի դամբարանադաշտի⁶⁸, Գետափի ուրարտական ամրոցի⁶⁹, Շաղատի միջին բրոնզեդարյան բնակատեղիի⁷⁰, Գեղաքարի միջինբրոնզեդարյան բնակավայրի⁷¹, Մոթքի և Նորաբակի բրոնզ-երկաթեդարյան բնակավայրերի և դամբարանադաշտերի⁷² պեղումները: Նախիջևանում շարունակվել են Քյուլ-թեփե II-ի, Օվչուլար թեփեսիի և Մախտայի պեղումները⁷³: Պեղումներ են իրականացվել նաև ԼՂՀ Քաշաթաղի շրջանում (Եզնագոմերի բազմաշերտ բնակատեղին, Արվականի դամբարանադաշտը և Կերենի

⁶² Biscione R., Hmayakyan S., Parmegiani, նշվ. աշխ.:

⁶³ St. Kroll, Southern Armenia Survey (Syunik) 2000-2003, Aramazd 1, 2006, p. 19-49.

⁶⁴ Ի. Ղարիբյան, Հ. Սիմոնյան, Ա. Գևորգյան, Է. Այվազյան, Է. Քամալյան, Գ. Խաչատրյան, Սյունիքյան նորահայտումներ, Հուշարձան, Է, Երևան, 2011, էջ 129-142:

⁶⁵ Հ. Սիմոնյան, Ա. Գևորգյան, Արցախի հնագույն, նախաքրիստոնեական և միջնադարյան հուշարձանների ուսումնասիրությունը 1993-1995 թթ., ԴՀԱԹ 1993-1995, էջ 70-71; Հ. Սիմոնյան, Քարվաճառի շրջանի հուշարձանների քարտեզ, Երևան, 1996; Հ. Սիմոնյան, Արցախի և ազատագրված շրջանների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները՝ Հ. Սիմոնյան, Հ. Սամաթյան, Ա. Գևորգյան, Արցախի և ազատագրված շրջանների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, գրքում, Երևան, 2007, էջ 3-21; Ա. Գևորգյան, Գ. Խաչատրյան, Գ. Վարդանյան, Ա. Թադևոսյան, Հնագիտական հետազոտություններ ԼՂՀ Քաշաթաղի շրջանում, Հնագիտական ուսումնասիրությունները Արցախում 2005-2010 թթ., Ստեփանակերտ, 2011, էջ 41-65:

⁶⁶ Գ. Սարգսյան, Ա. Գևորգյան, Ա. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 147-171:

⁶⁷ P. Avetisyan, R. Badalyan, A. Gevorgyan, O. Khnkikyan, The 1998 Excavations Campaign at the Middle Bronze Age Necropolis of Sisian, Armenia, SMEA 42/2, 2000, p. 161-173; P. Avetisyan, Ch. Chatainger, G. Palumbi., The Results of Excavations of Nerkin Godedzor (2005-2006), Preliminary Report, Aramazd 1, 2006, p. 6-18; J. Cherry, S. Manning, S. Alcock, A. Tonikyan, M. Zardaryan, Radiocarbon Dates for the Second and First Millennia BC from Southern Armenia, Preliminary Results from the Vorotan Project, 2005-2006, Aramazd 2, 2007, p. 52-71.

⁶⁸ Պ. Ավետիսյան, Հայաստանի միջին բրոնզի ժամանակագրությունը և փուլաբաժանումը, թեկն. ատեն. սեղմագիր, Երևան, 2003; Ա. Քալանթարյան, Հ. Մելքոնյան, Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ., Երևան, 2005, էջ 70-72:

⁶⁹ H. Melkonyan, I. Karapetyan, N. Yengibaryan, The Excavations of the Newly found Urartian Fortress in Getap, Aramazd 5/2, 2010, p. 90-98.

⁷⁰ Ս. Մելքոնյան, 2005-2006 թթ., Շաղատ I և III հուշարձանախմբի միջին բրոնզեդարյան բնակատեղիի պեղումների արդյունքներից, ՀՀՄ XIV, 2010, էջ, 149-154:

⁷¹ А. Арутюнян, Р. Бадалян, Гехакар - новый памятник среднего бронзового века в бассейне озера Севан, КДА XIV, с. 103-112.

⁷² R. Kunze, A. Bobokhyan, K. Meliksetian, E. Pernicka, D. Wolf, Archäologische Untersuchungen zur Umgebung der Goldgruben in Armenien mit Schwerpunkt Sotk, Provinz Gegharkunik, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen Anhalt Landesmuseum für Vorgeschichte 64, Halle, 2011, 17-49; R. Kunze, A. Bobokhyan, E. Pernicka, K. Meliksetian, Projekt Ushkiani. Untersuchungen der Kulturlandschaft um das prähistorische Goldrevier von Sotk, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen Anhalt - Landesmuseum für Vorgeschichte 67, Halle, 2013, 49-88.

⁷³ В. Бахшалиев, С. Ашулов, К. Марро, Археологические работы на поселении Овчулар тепеси (первые результаты и новые перспективы), Азербайджан - страна, связывающая Восток и Запад. Обмен знаниями и технологиями в период первой глобализации VII-IV тыс. до н. э. Баку 2009,), с. 55-62; В. Бахшалиев, Л. Риствет, С. Ашулов, К хронологии куро-аракских памятников (по раскопкам Кюль-тепе II и Махта I в 2006 г.), Азербайджан - страна, связывающая Восток и Запад, с. 82-87.

դամբանադաշտը՝ տարածաշրջանի հարավում Կապան-Կովսական ճանապարհին)⁷⁴:

Վերջին տարիներին ուսումնասիրության է ենթարկվել նաև թանգարանային նյութը: Մասնավորապես, հատվածաբար հրապարակվել են Քաշաթաղի շրջանի թանգարանում դեռևս 1980 թթ. պահպանված առարկաները⁷⁵: Առանձին հրապարակումներում արտացոլված են Ստեփանակերտի, Տիգրանակերտի, Կապանի, Եղեգնաձորի թանգարաններում պահպանվող նյութերը⁷⁶:

Սրբազան լանդշաֆտի ուսումնասիրության պատմությունը. Պատմական Սյունիքը հարուստ է սրբավայրերով և պատահական չէ, որ մի շարք հեղինակներ անդրադարձել են համապատասխան հուշարձանների դերին և նշանակությանը:

Սյունիքի ծիսա-պաշտամունքային հուշարձանները լանդշաֆտի համատեքստում դեռևս XIX դ. վերջում ուսումնասիրել է Ե. Լալայանը: Լանդշաֆտի և պատմական հուշարձանների կապի մասին ընդարձակ ակնարկ կա նաև Ն. Ադոնցի մոտ: Նա ոչ միայն հիշատակում է Միսիանի մեգալիթները (թերևս՝ խոսքը Ջորաց քարերի մասին է), այլև տվյալներ է բերում Շուշիի շրջանի Քաչալակ լեռան գագաթին գտնվող մեգալիթյան հուշարձանների մասին: Վերլուծելով մեգալիթյան հուշարձանները՝ հեղինակը հիշատակում է նաև լեռնային լանջերին գտնվող, բարձունքից իջնող և իրար ընդգրկող շրջանաձև պարիսպներ⁷⁷:

Սյունիքյան ծիսական հուշարձանների կարևոր հետազոտող է եղել Ս. Լիսիցյանը, ով պատմահնագիտական համատեքստում է դիտարկել Միսիանի պորտաքարը⁷⁸, Ջորաց քարերի հուշարձանը, որը հեղինակը մեկնաբանում է որպես դամբարանադաշտ⁷⁹: Վերջինիս անդրադարձած այլ հեղինակները, մասնավորապես Մ. Հասրաթյանը, կարևորել են այդ հուշարձանի դերը ողջ լեռնաշխարհի համատեքստում⁸⁰:

Սյունիքի տարածքում առկա են նաև այլ պաշտամունքային հուշարձաններ, ինչպես օր.՝ Քարվաճառի շրջանի (ներկ. ԼՂՀ Շահումյանի շրջան) Ալի Բայրամլի բնակատեղին և պաշտամունքային համալիրը⁸¹:

Պաշտամունքային հուշարձանների թվին են պատկանում նաև ժայռապատկերներ և համապատասխան համալիրներ, որոնք հայտնաբերվել են Սյունիքի⁸² և Գեղամա լեռներում⁸³, Քարվաճառում⁸⁴, Նախիջևանում⁸⁵:

⁷⁴ **Ա. Գևունի, Գ. Խաչատրյան**, Նորահայտ հուշարձաններ Աղավնո գետի վերնահոսանքում, Հուշարձան Զ, Երևան, 2010, էջ 53-67; նույնի՝ Կերենի դամբարանադաշտը, Հուշարձան Դ-Ե, Երևան, 2008, էջ 139-152; **Ա. Գևունի, Գ. Խաչատրյան, Գ. Վարդանյան, Ա. Թադևոսյան**, Հնագիտական հետազոտություններ ԼՂՀ Քաշաթաղի շրջանում, էջ 49-64; **Ա. Գևունի**, Հնագույն Կերենը, Շուշին՝ Հայոց քաղաքակրթության օրրան, Երևան, 2007, էջ 51-59:

⁷⁵ **Памятники Карабаха**, էջ 24-26: Այս հրապարակման մեջ պարունակվող տեղեկատվությունը պետք է օգտագործել զգուշությամբ, քանի որ լուսանկարները չեն համապատասխանում գիտական հրապարակմանը ներկայացվող պահանջներին:

⁷⁶ **Հ. Միմնյան, Հ. Սանամյան, Ա. Գևունի**, Ցուցադրվող նյութերի ցանկ, Կերենի դամբարանադաշտ, Արցախի և ազատագրված շրջանների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, (ցուցահանդեսի ցանկ) գրքում, էջ 22-43; **Ա. Գևունի**, Հարավային Սյունիքը՝ քաղաքակրթությունների խաչմերուկում, ՀՀ 2, Երևան, 2014; **Ավետիսյան Հ., Բոբոյան Ա., Գևունի Ա.**, Ուղեգծային հնագիտական այցելություն պատմական Սյունիքի Վայոց ձորի տարածաշրջան, Պատմություն և մշակույթ. հայագիտական հանդես 3, Երևան, 2014, էջ 424-437:

⁷⁷ **Ն. Ադոնց**, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 13-14:

⁷⁸ **Ս. Լիսիցյան**, Զանգեզուրի հայերը, Երևան, 1965:

⁷⁹ **Ե. Լալայան**, Միսիան, էջ 168-182; նույնի՝ Շարուր Դարալագեազի գաւառ, էջ 264:

⁸⁰ **Մ. Հասրաթյան**, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985:

⁸¹ **Н. С. Ибрагимов**, К вопросу освоения высокогорных зон Азербайджана (на основе данных Кельбаджарского высокогорья), АЭИА (1985), с. 25-27.

⁸² **Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան**, Սյունիքի ժայռապատկերները, ՀՀ IV/1, Երևան, 1970:

⁸³ **Հ. Մարտիրոսյան, Հ. Բարսեղյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները, ՀՀ 1/III, Երևան, 1971; **Հ. Մարտիրոսյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները, ՀՀ 6/II, Երևան, 1981:

⁸⁴ **Հ. Միմնյան**, Քարվաճառի շրջանի հուշարձանների քարտեզ, Երևան, 1996:

⁸⁵ **В. Г. Алиев**, Археологические исследования на территории Нахичеванской АССР в 1971 г., Материалы сессии, посвященной итогам археологических и этнографических исследований 1971 г. в СССР (тезисы докладов археологов и

Սյունիքի սրբազան լանդշաֆտի կարևոր բաղադրատարր են եղել վիշապաքարերը: Ավելին, պատմական Սյունիքը հանդիսանում է վիշապաքարերի տարածման էպիկենտրոններից մեկը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ սյունիքյան վիշապաքարերի ուսումնասիրության պատմությունը շարադրում ենք Հայկական լեռնաշխարհի այլ շրջանների համատեքստում: Այսպես, եթե չհաշվենք Ա. Երիցյանի 1879 թ. Սարիղամիշի անտառում, Մեծրանց լեռների կատարներին, Այրարատի և Տայքի միջև, սահմանաբաժան 2 մ բարձրությամբ, վեղարի նման սրածայր, քանդակներով զարդարված որձաքարե կոթողների, թերևս վիշապաքարերի, հայտնաբերման մասին տվյալը⁸⁶, կամ Ատրպետի տեղեկությունները Հայկական լեռնաշխարհի մի շարք շրջանների վիշապաքարերի (1885 թ. ու հետո), կամ էլ Վ. Տեպցովի⁸⁷, Ե. Լալայանի⁸⁸, Ի. Ռոստոմովի⁸⁹ և Բ. Թադաիշվիլի⁹⁰ տվյալները թռեղք-ջավախքյան որոշ վիշապաքարերի մասին, ապա վիշապաքարերի առաջին լուրջ ուսումնասիրությունը պետք է վերագրել Ն. Մառին և Յա. Սմիռնովին, որոնք 1909-1910 թթ. Գեղամա լեռներում փաստագրել են իրենց սկզբնական տեղում գտնվող 19 վիշապաքար⁹¹: 1912 թ. Գ. Ղափանցյանը՝ միայնակ⁹², 1924-1927 թթ. Ա. Քալանթարը և Թ. Թորամանյանը՝ Հնությունների պահպանության կոմիտեի արշավախմբի կազմում⁹³, իսկ 1936 թ. Բ. Պիտրովսկին՝ Անբերդի արշավախմբի կազմում⁹⁴ գրանցում են հինգ նոր վիշապաքար Արագածի լեռնագանգվածում, մեկը՝ Գեղամա լեռներում, ապա և հինգը Արտանիշի ծովածոցի մոտ՝ Սևանա լճի հյուսիսարևելյան ցածրադիր ափին: 1963 և 1967 թթ. Լ. Բարսեղյանը, Ժ. Խաչատրյանը և Ա. Քալանթարյանը Գեղամա լեռներում փաստագրում են ևս երեք նոր վիշապաքար և վերստին նկարագրում նախորդները⁹⁵, ինչը լինում է դաշտային պայմաններում վիշապաքարերի կանոնավոր հետազոտության վերջին փորձը: Ընդ որում, Գեղամա լեռների վիշապաքարերի Լ. Բարսեղյանի արված նկարագրությունը և դասակարգումը մինչ օրս մնում են որպես ամենաամբողջականը: Վիշապների մանրամասն նկարագրություն կա նաև Ս. Եսայանի «Հին Հայաստանի քանդակը» մենագրության մեջ, ուր վիշապաքարերը դիտարկվում են միջին բրոնզեդարյան քանդակի համատեքստում⁹⁶:

Հընթացս, երկու վիշապաքար է հայտնաբերվում հնագիտական պեղումների համատեքստում. մասնավորապես 1963 թ. Գառնիում՝ Ք.հ. III դ. պալատական համալիրի հիմքում⁹⁷, և 1980 թ. Լճաշենում՝ միջինբրոնզեդարյան դամբարանի համատեքստում⁹⁸:

1960-ական թթ. սկսած մինչ վերջերս ի հայտ են եկել մի շարք մասամբ անկոնստենտ և վերաօգտագործված վիշապաքարեր, որոնց մի մասը (Ուլգյուր 1-2, Քարեձի 1,

этнографов Азербайджанской ССР), Баку, 1972, с. 14-15; *նույնի*՝ Наскальные изображения Гемигаи, КСИА, вып. 146, Москва, 1976, с. 50-52.

⁸⁶ **Ատրպետ**, Վիշապազանց պաշտամունքը, Բազմավեպ 7/8, 1931, էջ 308-319, 313-314:

⁸⁷ **В. Тепцов**, Агбулахские легенды, СМОМПК IX, 1890, с. 131-136, 131.

⁸⁸ **Ե. Լալայան**, Ջալախքի բուրմունք, Թիֆլիս, 1892, էջ 53:

⁸⁹ **И. П. Ростомов**, Ахалкалакский уезд в археологическом отношении, СМОМПК XXV, 1898, с. 53, 93.

⁹⁰ **Е. Токайшвили**, Христианские памятники / Экскурсия Е. Токайшвили в 1902 г., МАК XII, 1909, с. 28, рис. 13.

⁹¹ **Н. Я. Марр, Я. И. Смирнов**, Вишапы, Ленинград, 1931.

⁹² **Գ. Ղափանցյան**, Հնության մի քանի հիշատակարաններ, Արարատ 1, 1914, էջ 91-96:

⁹³ **Ա. Քալանթար**, Քարե դարը Հայաստանում, Նորք 5/6, 1925, 207-232; **Թ. Թորամանյան**, Հայկական ճարտարապետություն 2, Երևան, 1948, էջ 229-230:

⁹⁴ **Б. Б. Пиотровский**, Вишапы: каменные статуи в горах Армении, Ленинград, 1939: Քննադատությունը տես՝ **Ս. Աբեղյան**, «Վիշապ» կոչված կոթողները՝ որպես Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941:

⁹⁵ **Լ. Ա. Բարսեղյան, Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Ա. Քալանթարյան**, Նորահայտ պաշտամունքային կոթողներ Գեղամա լեռներում, ՏՀԳ 8, 1964, 85-88; **Լ. Ա. Բարսեղյան**, Գեղամա լեռների «վիշապները», ՊԲՀ 4, 1967, էջ 181-188:

⁹⁶ **С. Есаян**, Скульптура, с. 19-21, 49-50, таб. 18-21.

⁹⁷ **Б. Н. Аракелян, Н. В. Арутюнян**, Урартская клинообразная надпись из Гарни, ИФЖ 2, 1966, էջ 290-297.

⁹⁸ **Է. Խանգաղյան**, Լճաշենի վիշապը, ՀՀՄ XIII, 2005, էջ 86-91:

Սելիմ 1, Փոքր Գիլանլար 1) հրապարակվել են⁹⁹, իսկ մյուս մասը (Դաշտադեմ 1, Դավթաշեն 1, Սառնադբյուր 1, Վերին Սասնաշեն 1, Ոսկեթաս 1, Գողթ 1)՝ ոչ, թեև վերջիններս տեղ են գտել հուշարձանների պետական ցուցակներում: 2003-2005 թթ. Ազատի վերնահովտի անտիկ և միջնադարյան պատմա-մշակութային հուշարձանները հետազոտող հայ-իտալական հնագիտական արշավախումբը (ղեկավարներ՝ Ժ. Խաչատրյան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ ու Ջ. Տրախնա, Լեչեի համալսարան) և մասնավորապես Հ. Պետրոսյանը, փաստագրել են ինչպես նախկինում հայտնի, այնպես էլ նորահայտ վիշապաքարեր¹⁰⁰: Թվով 16 վիշապաքարերի լուսանկարներ են բերված «Գինին հայոց ավանդական մշակութային» գրքում, ուր վերջիններս հղվում են որպես «վիշապաքարեր Արագածից, Գեղամա և Վարդենիսի լեռներից»՝ առանց կոնկրետ նշելու գտնվելու վայրը (բացի Ուլցյուր 1-2-ից): Հիշյալ վիշապաքարերից չորսը լուսանկարված են նախնական տեղում՝ Գեղամա լեռներում և Արագածի վրա 2000-ական թթ. սկզբին¹⁰¹:

Այստեղ հատուկ կցանկանալինք շեշտել 1967-1968 թթ. տեղի ունեցած ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի քարայրներն ու ժայռապատկերներն ուսումնասիրող միջմասնագիտական արշավախմբի աշխատանքների մասին, որի՝ ժայռապատկերները հետազոտող խումբը ներկայացնում էին Հ. Մարտիրոսյանը, Ռ. Թորոսյանը և Հ. Իսրայելյանը: Թեև այս արշավախումբը ուղղակիորեն չէր առնչվում վիշապաքարերի հետազոտությանը և նոր վիշապաքարեր չհայտնաբերեց, սակայն առաջին անգամ որոշ հայտնի վիշապաքարեր հարևանցիորեն դիտարկվեցին իրենց հնագիտական միջավայրի (դամբարաններ, բնակավայրեր, ժայռապատկերներ) համատեքստում¹⁰²:

Հայաստանի Հանրապետությունից դուրս, Հայկական լեռնաշխարհի այլ շրջաններում, տասնյոթ վիշապաքար (և վիշապանման մենաքար) հայտնի է Թոեղքում և Ջավախքում¹⁰³, երկուսը՝ Նախիջևանում,¹⁰⁴ հինգը՝ Արևմտյան Հայաստանում¹⁰⁵, չհաշված Ատրպետի տեղեկությունները Ճորոխի ավազանի «30-ից ավելի» վիշապաքարերի մասին¹⁰⁶:

⁹⁹ Ա. Շահինյան, Վայոց Ձորի վիշապ-կոթողները, էջ 286-289; Օ. Տ. Մուկիյան, նշվ. աշխ., էջ 114; Հ. Լ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 76-78:

¹⁰⁰ Հ. Պետրոսյան, անձնական հաղորդում:

¹⁰¹ Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան, Հ. Պետրոսյան, Գ. Սարգսյան, Հ. Մելքոնյան, Ս. Հոբոսյան, Պ. Ավետիսյան, Բ. Գասպարյան, Գինին հայոց ավանդական մշակութային, Երևան, 2005, էջ 20, 22, 31, 33-35, նկ. 1-2, աղ. 5-7:

¹⁰² Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, ՊԲՀ 3, 1969, էջ 191-208:

¹⁰³ Լ. Մ. Մելիքսեթ-Բեկով, Вишапы и вишапоиды Грузии, КСИИМК 15, 1947, 27-37; Ա. Ս. Մանուսյան, Ջավախքի «վիշապ» քարակոթողները, ԲԵՀ 2, 1989, էջ 97-102:

¹⁰⁴ Մեկը Բջնակ/Քարե տուն հնավայրից է, մյուսը՝ Խոշկաշենից (Վիշապասար (Աժդահակ) Իլանդաղի հյուսիսային ստորոտ) (Ա. Այվազյան, անձնական հաղորդում, 01.06.2013): Դրանցից հրատարակված է միայն Բջնակ/Քարե տան ձկնակերպը, որ գտնվել է Բաթաբաթ արոտավայրում. ընդ որում, թեև Ա. Այվազյանը խոսում է «հինգ ձկնակերպ կոթողների» մասին (Ա. Այվազյան, Նախնադարյան կայան Նախիջևանի ԻՍՍՀ հյուսիսում, ԲԵՀ 3, 1974, էջ 238-241; Ա. Այվազյան, Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Երևան, 1987, էջ 8), սակայն դրանցից միայն մեկն է, որ հանդիսանում է վիշապաքար (Ա. Այվազյան, անձնական հաղորդում, 01.06.2013): 1983 թ. հետո այն տեղահան է արվել (Ա. Այվազյան, Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները (համահավաք ցուցակ), Երևան, 1986, 159, նկ. 49): Այս վիշապաքարի մասին հիմն. նաև Օ. Belli, V. Sevin, Archaeological Survey in Nakhichevan 1998, Istanbul, 1999, p. 64 (վերջիններս հիշատակում են վիշապաքարը կուրգանի վրա): Հավանաբար հիշյալ վիշապաքարերից մեկն է (ձկնակերպ կոթող) դրված Նախիջևանի Պետական թանգարանի բակում (Օ. Belli, Kars - Çıldır Gölü yakınında bulunan anıtsal taş balık heykeli, Kars 2. Kent Kurultayı - Kafkasya'da Ortak Geleceğimiz, Kars Belediyesi Yayınları 21, İstanbul, 2007, s. 111-116, 113-115): Նախիջևանում առկա վիշապաքարերի մասին հիմն. նաև Է. Վ. Խանգադյան, Հայկական լեռնաշխարհի վիշապները, Հայագիտության արդի վիճակը և դրա զարգացման հեռանկարները, Հայագիտական միջազգային համաժողով, 2003 թ. սեպտեմբերի 15-20, Ջեկուցումների դրույթներ, Երևան, 2003, էջ 35:

¹⁰⁵ Ա. Բորոխյան, Ա. Ջիլիբերտ, Պ. Հնիկա, Վիշապաքարերի հնագիտություն, Վիշապ քարակոթողներ, Երևան, 2014 (մամուլում):

¹⁰⁶ Ատրպետ, Ճորոխի աւազանը, Վիեննա, 1929, էջ 55:

Աղյուսակ 2. 2013-2014 թթ. հետազոտված հիմնական հուշարձանների ցանկը

Անվանումը	Հուշարձանի տեսակը	Չափսը, սմ	Կոորդինատները
Քարեձի 1	վիշապաքար	200x65x46	Հ 40.02196°, Ա 045.17730°, բժմ 2245 մ
Քարեձի 2*	վիշապաքար	112x70x26	Հ 40.02319°, Ա 045.17626°, բժմ 2247 մ
Քարեձի 3*	վիշապաքար	80x48x14	Հ 40.02311°, Ա 045.17428°, բժմ 2247 մ
Քարեձի 4*	վիշապաքար	120x68x52	Հ 40.02794°, Ա 045.19450°, բժմ 2239 մ
Աղավնաձոր*	ժայռափոր խորշ		Հ 39.79377°, Ա 045.23003°, բժմ 1573 մ
Աղվեսահաքի*	ամրոց		Հ 39° 41' 52.6", Ա 046° 15' 59.9" բժմ 1560 մ
Արվական	ղամբարանադաշտ		Հ 39° 45' 33.1", Ա 046° 17' 33.7" բժմ 1993 մ
Արվական*	արձանիկ 1, 2 (ՔԵԹ)	60x45x20 / 66x40x30	Հ 39° 45' 33.1", Ա 046° 17' 33.7" բժմ 1993 մ
Բերդիկ*	ղամբարանադաշտ, համալիր		Հ 39° 41' 49.1", Ա 046° 16' 28.4" բժմ 1619 մ
Եզնագոմեր*	ղամբարանադաշտ		Հ 39° 44',39.7", Ա 046° 14' 44.7" բժմ 2002 մ
Ելփին*	ղամբարանադաշտ		Հ 39.80970°, Ա 045.06790°, բժմ 1742 մ
Միրիկ*	պաշտամունքային կառույց		Հ 39° 38' 48.8", Ա 046° 26' 36.9" բժմ 1613 մ
Իշակ Մեյդան*	հարթակ թասանման փոսիկներով		Հ 39.51725°, Ա 046.30919°, բժմ 1902 մ
Խնածախ 1	խաչքարացված կոթող	85x70x25	Հ 39.60250°, Ա 046.38989°, բժմ 1423 մ
Խնածախ 2	մենհիր (ցիցքար)	150x48x48	Հ 39.58617°, Ա 046.39437°, բժմ 1606 մ
Խնածախ 3*	մեզալիթյան շարք		Հ 39.59122°, Ա 046.40768°, բժմ 1595 մ
Խնածախ 4*	ամրոց		Հ 39.60102°, Ա 046.41285°, բժմ 1519 մ
Հակ 1*	ղամբարանադաշտ և ամրոց		Հ 39° 43',38.6", Ա 046° 15' 22.7" բժմ 1871 մ
Հարժիս 0	ամրոց		Հ 39.47163°, Ա 046.21827°, բժմ 1925 մ
Հարժիս 1	մենհիր, կրոնիկների մեջ	170x42x40, անցքը՝ 9	Հ 39.47020°, Ա 046.23504°, բժմ 1919 մ
Հարժիս 10*	մենհիր, կրոնիկների մեջ	280x88x40, անցքը՝ 7	Հ 39.46835°, Ա 046.18377°, բժմ 1872 մ
Հարժիս 11*	մենհիր, կրոնիկների մեջ	110x75x24	Հ 39.46835°, Ա 046.18377°, բժմ 1872 մ
Հարժիս 12*	մենհիր	330x60x25, անցքը՝ 12	Հ 39.46889°, Ա 046.21431°, բժմ 1862 մ
Հարժիս 13*	մենհիր, Մշակույթի տան բակում	263x47x43	Հ 39.43362°, Ա 046.22368°, բժմ 1691 մ
Հարժիս 14*	մենհիր, Մշակույթի տան բակում	77x45x37	Հ 39.43362°, Ա 046.22368°, բժմ 1691 մ
Հարժիս 15*	մենհիր, Մշակույթի տան բակում	238x38x42	Հ 39.43362°, Ա 046.22368°, բժմ 1691 մ
Հարժիս 16*	մենհիր, հին գյուղում (Ներքին Ցայջի)	263x47x43	Հ 39.42640°, Ա 046.22491°, բժմ 1437 մ
Հարժիս 2	մենհիր	180x55x36, անցքը՝ 10	Հ 39.46888°, Ա 046.21865°, բժմ 1866 մ
Հարժիս 3	մենհիր	175x40x36, անցքը՝ 10	Հ 39.46902°, Ա 046.21611°, բժմ 1855 մ
Հարժիս 4	մենհիր, կրոնիկների մեջ	185x65x25, անցքը՝ 10	Հ 39.470140°, Ա 046.20644°, բժմ 1861 մ
Հարժիս 5	մենհիր, կրոնիկների մեջ	220x64x28, անցքը՝ 5	Հ 39.47045°, Ա 046.20462°, բժմ 1864 մ
Հարժիս 6*	մենհիր, կրոնիկների մեջ	236x90x35	Հ 39.47054°, Ա 046.18244°, բժմ 1902 մ
Հարժիս 7*	մենհիր	250x50x20, անցքը՝ 3	Հ 39.47072°, Ա 046.18169°, բժմ 1901 մ
Հարժիս 8*	մենհիր, ավերված կրոնիկների մեջ	220x50x30	Հ 39.46892°, Ա 046.18116°, բժմ 1894 մ
Հարժիս 9*	մենհիր/վիշապաքար	88x67x33	Հ 39.46831°, Ա 046.17949°, բժմ 1892 մ
Հերիկ*	ղամբարանադաշտ		Հ 39° 41' 07.6", Ա 046° 16' 41.9" բժմ 1805 մ
Ղալաջիկ 2	արձանիկ	150x50x35	Հ 39° 39' 49.2", Ա 046° 21' 45.7" բժմ 1470 մ
Մշենի*	ղամբարանադաշտ		Հ 39° 41' 43.5", Ա 046° 22' 03.6" բժմ 1733 մ
Շրվական*	ղամբարանադաշտ		Հ 39° 46' 29.3", Ա 046° 14' 09. 7" բժմ 1944 մ
Ուլցուր 1	վիշապաքար, խաչքարացված	353x93x40	Հ 39.81246°, Ա 045.20632°, բժմ 1950 մ
Ուլցուր 2	վիշապաքար	250x80x49	Հ 39.81246°, Ա 045.20632°, բժմ 1950 մ
Ուլցուր Վերին	բնակավայր		Հ 39.81460°, Ա 045.19991°, բժմ 1920 մ
Պորտաքար	ժայռափոր հարթակ		Հ 39.53726°, Ա 046.13100°, բժմ 1923 մ
Ջոջ դար	ղամբարանադաշտ և բնակավայր		Հ 39.759110°, Ա 045.34100°, բժմ 1286 մ
Ռինդ 1*	վիշապաքար	187x101x39	Հ 39.81406°, Ա 045.19887°, բժմ 1941 մ
Ռինդ 2*	վիշապաքար	198x70x29	Հ 39.81406°, Ա 045.19887°, բժմ 1941 մ
Սելիմ 1	վիշապաքար	270x110x35	Հ 39.95614°, Ա 045.23444°, բժմ 2340 մ
Սելիմ 2*	մենհիր	217x50x40, անցքը՝ 10	Հ 39.95847°, Ա 045.23570°, բժմ 2349 մ
Սոթք 10	ղամբարանադաշտ		Հ 40°12',636°, Ա 045°56',190°, բժմ 2151 մ
Սոթք 15*	համալիր		Հ 40. 21829°, Ա 045.90390°, բժմ 2135 մ
Սոնասար 1*	ամրոց		Հ 39° 41' 47.1", Ա 046° 23' 01.7" բժմ 1856 մ
Սպիտակաջուր	ղամբարանադաշտ և ամրոց		Հ 39° 46' 58.1", Ա 046° 15' 31.7" բժմ 1865 մ

* - ով նշված են նորահայտ հուշարձանները, բժմ - բարձրությունը ծովի մակերևույթից

Ընդհանուր առմամբ պետք է խոստովանել, որ վիշապաքարերի նկատմամբ վերաբերմունքը հայ իրականության մեջ՝ և՛ գիտական, և՛ պետական հոգաձության մակարդակներում ընթացել է ետընթաց ուղով: Վիշապաքարերի իմաստավորման առաջին փուլում՝ 1920-1930-ական թթ. հայ հնագիտության ռաիվիրանները խիստ գիտական մոտեցում ցուցաբերեցին վիշապաքարերի նկատմամբ, ինչին նման էր նաև պետական մոտեցումը: Այսպես, Հնությունների պահպանության կոմիտեի ցուցակագրումները և հիմնարար հետազոտությունները 1920-ական թթ. հիմք հանդիսացան վիշապաքարերի մասին կոմիտեի հատուկ ծրագրի ստեղծման համար, որը կոչվում էր «Ջրի կույտը հին Հայաստանում և «վիշապների» պրոբլեմը»¹⁰⁷: Հայաստանի հնությունների ցուցակագրման համատեքստում նույնիսկ կազմվել էր հարցաշար, որի հիման վրա պետք է նկարագրվեին վիշապաքարերը: Դժբախտաբար ստալինյան բռնություններն արմատախիլ արեցին նաև «հայ հնագիտության ոսկեդարը» և հավաքած նյութերից շատերը կորան իրենց ստեղծող տաղանդավոր մարդկանց հետ միասին և այդպես էլ նորմալ չներկայացվեցին:

Վերջերս վիշապաքարերի հետազոտությանը նոր թափ է հաղորդվել. նոր ծրագրի սահմաններում հետազոտվում են նախկինում հայտնի վիշապաքարերը, հայտնաբերվել են նորերը, սկսվել վիշապաքարերի կանոնավոր պեղումներ¹⁰⁸:

Նորագույն հետազոտությունները. ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնը վերջին տարիներին պարբերական հետազոտություններ է իրականացնում Սյունիքի տարածքում: Հետախուզական արշավների ընթացքում հետազոտվել են մի շարք հուշարձաններ, որոնց թվում են հետևյալները (տեքստ. աղ. 2):

Ելփինի դամբարանադաշտը ձգվում է Երևան-Եղեգնաձոր ճանապարհի աջ և ձախ կողմերում: Ճանապարհաշինության ժամանակ ավերվել են մի շարք դամբարաններ, ինչն էլ հիմք հանդիսացավ դամբարանադաշտը հայտնաբերելու համար: Դատելով ավերված հատվածից՝ դամբարանային կառույցները ներկայացված են փոքր չափի քարերից կազմված զրահով դամբարանաբլուրներով: Մակերեսին երևում են կրոմլեիների հետքեր, ցրված են վանակատե արտեֆակտներ: Տարածքը յուրացված է եղել նաև միջնադարում, ինչի մասին վկայում է XII-XIII դդ. բնորոշ վերգետնյա խեցեղեն նյութը: Այս հուշարձանը նորահայտ է, բացակայում է Հուշարձանների պետական ցուցակում:

Արշավախումբը այցելեց Ջոջ դար դամբարանադաշտը և տեղայնացրեց Վ. Հովհաննիսյանի պեղած դամբարանները: Դրանք իրենցից ներկայացնում են հիմնականում փոքր հողաթմբով և մեծ քարերով շրջապատված քարարկղեր: Ծածկը հարթ է կամ կեղծ թաղի տեսքով: Այս տարածքում անշուշտ հին բնակավայր է եղել, ինչի մասին են վկայում առկա պատերի հետքերը: Վերգետնյա խեցեղեն նյութը բնորոշ է Ք.ա. II-I հազ., սակայն տարածքը բնակեցված է եղել նաև միջնադարում: Այս հնավայրի անունը բացակայում է Հուշարձանների պետական ցուցակում:

Հաջորդ նորահայտ հուշարձանը գտնվում է Աղավնաձոր գյուղում: Այն իրենից ներկայացնում է ժայռափոր մի խորշ (աղ. 5), տեղադրված բլրի զառիվայր ժայռային հատվածի վերնամասում, ինչը տիպիկ է ուրարտական դարաշրջանի համար: Խորշն ունի ոչ կանոնավոր քառակուսու տեսք՝ հյուսիսային կողմում կլորացված, բոլոր կողմերից լավ մշակված է, վերնամասում երևում են կրակի ներգործության հետքեր: Խորշը բացակայում է Հուշարձանների պետական ցուցակում (ցուցումը՝ Բ. Գասպարյանի):

¹⁰⁷ **Ս. Քալանթար**, Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե, Երևան, 1931, էջ 9, 13:

¹⁰⁸ **Ս. Բոբոխյան, Ս. Զիլիբեքյան, Պ. Հնիկյան**, նշվ. աշխ., **A. Gilibert, A. Bobokhyan, P. Hnita**, Dragon Stones in Context: The Discovery of High-Altitude Burial Grounds with Sculpted Stelae in the Armenian Mountains, MDOG 144, 2012, p. 93-132.

Հետազոտության հաջորդ թիրախը Աղավնաձորից վեր գտնվող Ուլցյուրի պատմական գոտին էր, ուր մենք այցելեցինք տեղի բրոնզ-երկաթեդարյան հնագիտական իրավիճակը պարզելու համար: Այստեղ ծովի մակերևույթից մոտ 2000 մ բարձրության վրա, միմյանցից մոտ 3 կմ հեռու գտնվում են Ներքին Ուլցյուրի (Աղավնաձոր գյուղի վարչական տարածք) և Վերին Ուլցյուրի (Ռինդ գյուղի վարչական տարածք) պատմական գոտիները, որոնք հայտնի միջնադարյան բնակավայրեր են եղել իրենց կրոնական և աշխարհիկ շինություններով, որոնց մի զգալի մասը պահպանվել է այստեղ: Այն, որ այս պատմական տարածքը կարող էր բնակեցված լինել նաև բրոնզի և երկաթի դարերում, վկայում են ոչ միայն որոշ կառույցների շարվածքի առանձնահատկությունները և Ք.ա. I հազ. կեսին բնորոշ խեցեղենը, հավաքված հատկապես Վերին Ուլցյուրի հատվածում, այլև վիշապաքարերը: Վիշապաքարերից երկուսը՝ Ուլցյուր 1 և 2 (աղ. 21, 22) նախկինում հայտնի են, մյուսները՝ Ռինդ 1 և 2 (աղ. 29, 30) որպես այդպիսին ներկայացվում են առաջին անգամ: Խոսքը գնում է միջնադարում խաչքարացված վիշապաքարերի և վիշապփղների մասին, որոնք մասամբ տեղափոխվել են իրենց նախնական վայրերից¹⁰⁹:

Այստեղ նշենք նաև, որ սրբազան լանդշաֆտի վերականգնման նպատակով, մենք հետազոտեցինք նաև Եղեգնաձորի Մոմիկի անվան այգու վիշապաքարը, պարզեցինք դրա տեղափոխման մանրամասները: Մանրամասն ուսումնասիրվեցին Խնածախի, Հարժիսի, Իշակ Մեյդանի, Մելիմի լեռնանցքի և Քարեձի արոտավայրի սրբավայրերը և համապատասխան մենհիրներն ու վիշապաքարերը:

Արշավախումբը աշխատանքներ ձեռնարկեց նաև Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում, որն ունի բավականին հարուստ հնագիտական և ազգագրական հավաքածու (մոտ 8000 ցուցանմուշ): Հնագիտական հավաքածուն բաղկացած է ինչպես պատահական գտածոներից, այնպես էլ կանոնավոր պեղումների հավաքածուներից, որոնք վերաբերում են հիմնականում Մոզ, Ելփին, Գետափ, Ջոջ դար, Ս. Սպիտակավոր, Շատին և այլ հնավայրերին: Թանգարանային նյութը ժամանակագրորեն ընդգրկում է ողջ բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանը:

Առավել վաղ՝ վաղ բրոնզի դարով են թվագրվում Մոխրոտ բնակավայրի իրերը¹¹⁰, և ներկայացված են սև փայլեցված գավերի բեկորներով (ԵԵԹ ի/հ 1294/3747, 3738, 3744, 3746)¹¹¹:

Տարածաշրջանի միջին բրոնզի դարաշրջանի հուշարձանները ներկայացված են Մոզի դամբարանների պեղումների և Ելփինից հայտնաբերված նյութերով: Մոզի 1 և 2 դամբարանների նյութը բնորոշ է Ք.ա. XXII-XIX դդ.¹¹²: Նույն ժամանակաշրջանին են բնորոշ Շատինից հայտնաբերված նյութերը¹¹³: Գյուղի տարածքից և շրջակայքից հայտնաբերված նյութերը ներկայացված են կոպիտ ձեռածեփ գավերով և թասերով, քարե գործիքներով (ԵԵԹ ի/հ 581/938, 1113/1670, 1668, 1674): Միջին բրոնզի հաջորդ փուլին՝ Ք.ա. XIX դ. են բնորոշ Ելփինից հայտնաբերված գունազարդ թասերը (ԵԵԹ ի/հ 1251/3372, 3373, 23/28): Առանձնապես հետաքրքիր է թռչնազարդ թասը (ԵԵԹ ի/հ 23/28):

Ք.ա. II-I հազ. սկզբին բնորոշ խեցեղեն հայտնի է Ելփինից, Շատինից, Ջոջ դարից և Մոզից: Հատկապես, պետք է նշել թանգարանում պահպանվող ծորակավոր անոթները, որոնք ներկայացված են կարճ գլանաձև (ԵԵԹ ի/հ 1324/5551՝ Մոզ և ի/հ 1321/5214՝ Ջոջ դարի N 23

¹⁰⁹ Ինչպես Ռինդի, այնպես էլ Աղավնաձորի վիշապ-խաչքարերը, ամենայն հավանականությամբ ներկայիս վայր մոտակայքից տեղափոխվել են համեմատաբար վերջերս, քանի որ դեռևս 1904 թ. Ուլցյուրի տարածքը հետազոտող և մատուցող նկարագրող Ե. Լավայանը չի հիշատակում դրանք (Ե. Լավայան, Շարուր-Պարավազեազ, էջ 184):

¹¹⁰ Օ. Xnkikyan, նշվ. աշխ., էջ 20, աղ. III:

¹¹¹ Այստեղ և ստորև՝ ԵԵԹ պահպանվող նյութերի ինվենտար համարները նշվում են տեքստում:

¹¹² Օ. Xnkikyan, նշվ. աշխ., էջ 23-24, աղ. III, IV; Պ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 19:

¹¹³ Օ. Xnkikyan, նշվ. աշխ., էջ 23-25:

դամբարան) և կտցաձև կիսախողովակաձև ծորակով (ԵԵԹ ի/հ 1324/5567՝ Մոզ¹¹⁴: Եղեգնաձորի երկաթեղարյան ժամանակաշրջանի հավաքածուում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում կենդանակերպ անոթները: Դրանք ներկայացված են խոյակերպ բռնակով շերտիով (ԵԵԹ ի/հ 1287/3679՝ Մոզ¹¹⁵): Ոչ միայն սյունիքյան, այլև հայաստանյան հնագիտական նյութերի թվում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Արենիից հայտնաբերված կենդանակերպ անոթը (աղ. 14): Արջի պատկերը խիստ բնապաշտական է, սակայն զարդամոտիվները բացակայում են: Անոթի փողը գտնվում է կենդանու գլխամասում: Բացի այդ, քթի և աչքերի հատվածում գայլիկոնված անցքեր են: Ք.ա. I հազ. ուսումնասիրվող տարածաշրջանը ներառվում է Վանի թագավորության մեջ: Այս մասին են վկայում ոչ միայն Գետափի ամրոցի պեղումները¹¹⁶, այլև Եղեգնաձորի ուրարտական դամբարանի հավաքածուն¹¹⁷ և Ջոջ դարի դամբարանների հավաքածուն (Վ. Հովհաննիսյանի պեղումները 1980-ական թթ.): Ուրարտական նյութ հայտնի է նաև Ելփինից (ԵԵԹ ի/հ 1386/6580,6581):

Այսպիսով, պատմական Սյունիքը Հայկական լեռնաշխարհի առանցքային տարածքներից է, որը խիստ հարուստ է հնագիտական հուշարձաններով, այդ թվում ծիսական բնույթի: Այդ հուշարձանները հետազոտվում են սկսած XIX դ. երկրորդ կեսից: Առկա տեղեկությունները հնարավորություն են տալիս վերականգնելու տարածքի հնագիտական պատմության հիմնական փուլերը: Ըստ այդմ, Սյունիքը բրոնզի և երկաթի դարերում սերտաձած է եղել Հայկական լեռնաշխարհի համապատասխան զարգացումներում (հմմտ. աղ. 1): Իսկ ո՞րն է եղել Սյունիքի հիմնական դերը:

Վերջին շրջանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխարհագրական և կլիմայական նույնատիպ պայմաններ կիսող Հայկական լեռնաշխարհի տարբեր ենթազոտիները բրոնզի և երկաթի դարերում սերտ առնչությունների մեջ էին գտնվում, կիսում էին նույն արժեքային համակարգը և կարող են սահմանվել որպես մի համապարփակ մշակութային ոլորտ: Այդ տարածքներում գործած տարբեր տեղային մշակութային խմբերը իրենց բնորոշ հատկանիշներով (խեցեղեն, կացարանների ձևեր, կենսակերպ, աշխարհայացք, ևն) հանդիսանում են այդ արժեքային համակարգի արտահայտության ձևերն՝ ըստ նյութական մշակույթի տվյալների: Լեռնաշխարհի ներսում կարելի է առանձնացնել երեք հիմնական պատմամշակութային ենթազոտի. 1. արևմտյան, որը ներ է առել Վերին Եփրատի ավազանը (պատմական Ծոփք և Փոքր Հայք նահանգները), որին բնորոշ են եղել աշխույժ առնչությունները դեպի կենտրոնական Փոքր Ասիա և հյուսիսային Սիրիա, 2. հարավային, որը ներ է առել Վանից հարավ ընկած շրջանները (Աղձնիք և Կորդուք նահանգները)՝ բնորոշ են եղել կապերը հյուսիսային Սիրիայի և Միջագետքի ուղղությամբ, և 3. կենտրոնական-հյուսիսարևելյան (Այրարատ, Բարձր Հայք, Վասպուրական, Մոկք, Տուրուբերան, Տայք, Ուտիք, Գուգարք, Արցախ, Փայտակարան, Պարսկահայք նահանգները), բնորոշ են եղել կապերը կովկասյան ուղղությամբ: Սյունիքյան իրողությունները դիտարկելի են վերջին ենթաշրջանի սահմաններում. ընդ որում, մշակութային զարգացումների օրինաչափություններով քննվող տարածքին հատկապես հարագատ են Ուտիքի և Փայտակարանի (առաջնային), ինչպես նաև Վասպուրականի ու Պարսկահայքի (երկրորդական) տարածքները¹¹⁸: Սյունիքը հանդիսացել է Հայաստանի դուռը դեպի կովկասյան մշակութային աշխարհ, որի նշանակությունը լեռնաշխարհի զարգացումներում դժվար է թերագնահատել:

¹¹⁴ **O. Xnkikyan**, նշվ. աշխ., աղ. LXII/30, LIX/18:

¹¹⁵ Հրատարակված է՝ **O. Xnkikyan**, նշվ. աշխ., աղ. LXIII/1:

¹¹⁶ **H. Melkonyan, I. Karapetyan, N. Yengibaryan**, նշվ. աշխ., էջ 92:

¹¹⁷ **O. Xnkikyan**, նշվ. աշխ., աղ. XCIV-XCVI:

¹¹⁸ Մանրամասն տե՛ս **A. Bobokhyan**, Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500-1500 v. Chr., BAR 1858, Oxford.

2. «Սրբազան լանդշաֆտ» հասկացությունը և դրա կառուցվածքը

Վերջին տասնամյակներում մասնագիտական գրականության էջերում մեծ տեղ է հատկացվում «ծիսական/սրբազան տարածք/լանդշաֆտ» և համանման հասկացություններին¹¹⁹: Խնդրի վերաբերյալ զարգացում են ապրում միջմասնագիտական մոտեցումներ և սա պատահական չէ, քանի որ ծիսական աշխարհագրությունը գտնվում է տարբեր գիտակարգերի՝ փիլիսոփայության, կրոնագիտության, աշխարհագրության, մշակութաբանության, հնագիտության ուսումնասիրության տիրույթում և առնչվում է մարդկային վարքագծային կանոններին և ինքնության ձևավորմանը վերաբերող խնդիրներին¹²⁰:

Սրբազան տարածքի արժեքման տարրեր գոյություն ունեն դեռևս նախնադարյան հասարակության ընդերքում և հինարևելյան մարդու աշխարհայացքում¹²¹, սակայն առաջին սահմանումներն այս ոլորտում արել են անտիկ հեղինակները, որոնք առանձնացնում են սրբազան՝ հասարակական և մասնավոր տարածքները, խոսում վերջիններիս նշանակության ու տեղադրության խնդիրների մասին¹²²: Անտիկ շրջանում ձևավորված տեսակետները մասամբ շարունակեցին իրենց գոյությունը միջնադարում, սակայն այն տարբերությամբ, որ սրբազան տարածքը և դրա բաղադրատարրերը ձեռք բերեցին առավելապես տրանսցենդենտալ որակումներ¹²³: Սրբազան տարածքների մասին պատկերացումներն արտացոլված են նաև հայ պատմա-ազգագրական նյութերում¹²⁴:

Սրբազան լանդշաֆտի մակարդակները. սրբազան տեղագրության հետ կապված տերմինաբանությունը բավականին քննարկվել է մասնագիտական գրականության մեջ, սակայն համապատասխան սահմանումները տատանվում են հեղինակից հեղինակ¹²⁵: Առկա քննարկումների համատեքստում առաջարկում ենք առանձնացնել սրբազան տարածքների երեք մակարդակ.

1. Սրբազան տեղանք=լանդշաֆտ. ընդհանուր առմամբ սրբազան տեղանք/լանդշաֆտ հասկացությունն ընդգրկում է պատմաաշխարհագրական որոշակի միջավայրում հանդես եկող և կրոնա-պաշտամունքային ոլորտին վերաբերող բոլոր տարրերը՝ բնական միջավայ-

¹¹⁹ «Սակրալ տարածք» արտահայտության հայերեն թարգմանությունը, որպես «սրբազան տարածք», այդքան էլ կոռեկտ չէ, հաշվի առնելով sanctus բառի բուն իմաստը, ինչը նշանակում է «ցանկապատված» (**В. Н. Воловик**, Категории сакрального ландшафта, Географический Вестник 4, 2013, с. 27): Թերևս ավելի նպատակահարմար կլիներ օգտագործել «սրբազործված» բառը:

¹²⁰ **В. В. Емельянов**, Ритуал в древней Месопотамии, Санкт-Петербург., 2003, с. 27; **П. А. Куценков**, Рассеивание и конвергенция, в кн.: Храм земной и небесный, Москва, 2004, с. 43, 52-53.

¹²¹ **Л. Леви-Брюль**, Первобытное мышление, Москва, 1930; **Г. Франкфорт**, **Г. А. Франкфорт**, **Дж. Уилсон**, **Т. Якобсен**, В преддверии философии, Москва, 1984.

¹²² Այսպես օր.՝ Հիպոդամուս Միլեթացին գտնում էր, որ պետության տարածքը պետք է բաժանվի երեք մասի՝ սրբազան, հասարակական և մասնավոր (հմտ. **Аристотель**, Политика 2, V, 2, 35): Արիստոտելը պաշտամունքի մասին հոգածությունը համարում էր պետության կարևորագույն խնդիրներից մեկը (**Аристотель**, Политика 7, VII, 4, 5): Ընդ որում, ըստ նրա, քաղաքում պաշտամունքային կառույցները պետք է տեղադրված լինեն պետական պաշտոնյաների տների մոտ՝ պատշաճ և ամրացված վայրում, եթե օրենքը չի նախատեսում ծիսական կառույցի մեկուսացված տեղադրություն. այս հատվածից ներքև պետք է լինի հրապարակը (**Аристотель**, Политика 7, XI, 1, 25-30): Վիտրուվիոսը տաճարաշինությունը դիտարկում է որպես շինարարության կարևորագույն խնդիր, գրում է սրբազան օբյեկտների տեղադրության մասին՝ նշելով, որ Յուպիտերի, Յունոնայի և Միներվայի տաճարները պետք է տեղադրված լինեն ամենաբարձր վայրում, Մերկուրիոսինը՝ ֆորումում, Մարսինը և Վեներայինը՝ քաղաքից դուրս (**Витрувий**, Об архитектуре 1, III, 1; 1, VII, 3):

¹²³ **А. Я. Гуревич**, Категории средневековой культуры, Москва, 1972.

¹²⁴ Հմտ. **Ս. Հարությունյան**, **Ա. Քալանթարյան** (խմբ.), Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001; **Վ. Բարխուդարյան** (խմբ.), Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005; **R. Büttner, J. Peltz** (ed.), Mythical Landscapes Then and Now, Yerevan, 2006; **Ստ. Մելիք-Բախչյան**, Հայոց պաշտամունքային վայրեր, Երևան, 2009:

¹²⁵ Հմտ. համապատասխան քննարկումները Տաճարային տեղադրությունները Վերականգնվող հուշարձաններում և արտադրության մեջ: Материалы круглого стола, проведенного во время летней школы в Райволе 7. 06. 2008 г. http://www.hist.msu.ru/Labs/UkrBel/hierotopy_round.ht.

րով հանդերձ¹²⁶: Այս առումով, ներկայումս շրջանառվում է «հիերոտոպիա» եզրույթը (հունարեն «հիերոս»՝ սրբազան և «տոպոս»՝ տեղանք), որն, արտացոլում է սրբազան տարածքների ստեղծման ընթացքը և կառուցվածքային առանձնահատկությունները¹²⁷: Այս իմաստով հաճախ սրբազան լանդշաֆտ հասկացությունը կիրառվում է լայն և նեղ իմաստներով¹²⁸: Լայն իմաստով մարդկային կենսագործունեության հետ կապված ցանկացած տարածք կարող է ունենալ հիերոտոպիկ նշանակություն¹²⁹: Նեղ իմաստով՝ սրբազան տեղանքն ընդգրկում է համանման աշխարհագրական պայմաններով բնորոշվող ավելի փոքր տարածքներ (օր.՝ սարեր, ձորեր, լեռնագագաթներ)¹³⁰:

2. Սրբազան վայր. այս հասկացությունն ընկալվում է որպես սրբազան լանդշաֆտի մի ենթամաս, որտեղ կենտրոնացած են ծիսական հուշարձանները¹³¹: Սրբազան վայրը մարդու և վերին ուժերի հաղորդակցման էպիկենտրոնն է¹³²:

3. Սրբազան օբյեկտ. այն սրբազան վայրի ատրիբուտն է և կարող է լինել «մեծածավալ» (օր. տաճարը, դամբարանը)¹³³ կամ «փոքրածավալ»: Վերջիններս կարող են հանդես գալ ինչպես ինքնուրույն (օր.՝ մենհիրը, խաչքարը)¹³⁴, այնպես էլ այլ սրբազան կամ պրոֆան օբյեկտների համատեքստում (օր.՝ եկեղեցու պատի մեջ ագուցված խաչքարը կամ բնակելի կացարա-

¹²⁶ **В. Н. Воловик**, նշվ. աշխ., էջ 28:

¹²⁷ **А. М. Лидов**, Иеротопия - создание сакральных пространств как вид творчества и предмет исторического исследования, Иеротопия: создание сакральных пространств в Византии и Древней Руси, Москва, 2006, с. 10; **А. М. Лидов**, Иеротопия - создание сакральных пространств как вид творчества и предмет исследования, Вступительная статья сборника, Иеротопия: сравнительные исследования сакральных пространств, Москва, 2008, с. 5-11.

Օջախի պաշտամունքային նշանակության մասին հմմտ. **Ա. Գևորգյան**, Շենգավիթյան մշակույթի օջախները և դրանց համալիրները, ՊԲՀ 1, 2004, էջ 218-220; **Դ. Վարդումյան**, Հայոց ժողովրդական բնակարանը (զխատուն) սրբարան, Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2002, էջ 359):

¹²⁸ **В. Н. Воловик**, նշվ. աշխ., էջ 30-31; **С. П. Романчук**, Сакральні ландшафти, Ландшафт як інтегруюча концепція ХХІ сторіччя, Збірка наукових праць, Київ 1998, с. 144-146.

¹²⁹ **М. Элиаде**, Священное и мирское, Москва, 1994, с. 12; **А. М. Лидов**, Иеротопия - создание сакральных пространств как вид творчества и предмет исторического исследования, с. 18. Այս տրամաբանությամբ հրեաների համար սրբազան տարածք էր Ավետյաց Երկիրը, իսկ հույների՝ Հելլադան (**G. A. Smith**, The Historical Geography of the Holy Land, Jerusalem, 1974, p. 80-88): Նույն համատեքստում հմմտ. Թալես Միլեթացու միտքը, թե «բոլոր իրերը լի են աստվածներով» (**F. Schimpf**, Man-Nature-Religion: Thoughts Concerning Development, Form and Perception of Sacred. Sacred Landscapes: Creation, Manipulation and Transformation, 2014 Abstracts of Conference, <http://viasacra.org.uk/abstracts/>):

¹³⁰ **К. Bannikov**, Some Ideas on the Principles of Sacral Shape Areas on the Mohe: Towards the Reconstruction of Cosmography in Ethnological Methodology, Senry Ethnological Studies 72, 2009, p. 154.

¹³¹ **В. Н. Воловик**, նշվ. աշխ., էջ 31-32: Սրբազան վայր կարող են հանդիսանալ ինչպես բնական, այնպես էլ մարդածին տեղանքի տարրերը: Հռոմեական իրականության մեջ templum բառով կարելի էր բնորոշել ոչ միայն տաճարը, այլև՝ քաղաքը, ռազմական ճամբարը, նույնիսկ խաչմերուկը (**А. Наговицын**, Мифология и религия этрусков, Москва, 2000, с. 67-68), որով ֆետիշացվում էր ինչպես քաղաքի գաղափարը, այնպես էլ դրա առանձին բաղադրատարրերը (հմմտ. նաև **J. Rykwert**, The Idea of a Town, Princeton, 1988, p. 50-51; սոցիո-մշակութային երևույթին հատուկ ֆետիշացման մասին, հմմտ. **П. Сорокин** Общая социология, в кн.: **П. Сорокин**, Человек, цивилизация, общество, Москва, 1992, с. 214-218): Բնական է, որ սրբազան վայր էր հանդիսանում նաև դամբարանադաշտը (**В. С. Ольховский**, Погребально-поминальная обрядность в системе взаимосвязанных понятий, СА 1, 1986, с. 71, таб. 1):

¹³² Օջախի պաշտամունքային նշանակության մասին հմմտ. **Ա. Գևորգյան**, նշվ. աշխ., էջ 218-220; **Դ. Վարդումյան**, նշվ. աշխ., էջ 359):

¹³³ Դամբարանային կառույցի առանձնահատկությունն է այն, որ այստեղ փաստորեն առկա են սրբազան տարածքին առնչվող բոլոր բաղադրատարրերը. ճանապարհ-դրոմոս, կենտրոն-խուց (**Е. А. Савостина**, Сакральное пространство и погребальный обряд боспорских гробниц, <http://www.kladina.narod.ru/savostina2/savostina2.htm>; **В. С. Ольховский**, նշվ. աշխ., էջ 65-76; **Н. Б. Леонова**, **Ю. А. Смирнов**, Погребение как объект формального анализа, КСИА 148, 1976, с. 23):

¹³⁴ **A. Turalija**, **A. Vrsaliko**, **G. Juric**, **I. Kelava**, **M. Drenjancevic**, **A. Stanisavljevic**, **V. Lukic**, Small Sacral Objects as a Landscape Determination in Croatia, Bulletin of the University of Agriculture Sciences and Veterinary Medicine of Culj-Napoka 68/1, p. 437.

նում գտնվող ծիսական օջախը)¹³⁵: Սրբազան օբյեկտների բնորոշման համար Մ. Էլիադեն օգտագործում է «հիերոֆանիա» եզրը, որը նշանակում է «պարզապես ինչ-որ սրբազան բան, սկսած սրբազանի արտացոլումից քարում կամ ծառում»¹³⁶, ինչը պաշտվում է ոչ թե ինքնին, այլ, քանի որ արտացոլում է ինչ-որ սրբազան երևույթ¹³⁷: Բնական օբյեկտները կարող են լինել սրբազան. դրանք կազմում են սրբազան վայրի ամենավաղ շերտը՝ նրա հիմնասյունը, որի շուրջ ձևավորվում են ծիսա-պաշտամունքային օբյեկտները¹³⁸:

Որպես վերոհիշյալ երեք մակարդակների պայմանական օրինակներ կարող ենք բերել՝ 1. Հայաստանը (սրբազան լանդշաֆտ՝ լայն իմաստով) և Սյունիքի լեռները (սրբազան լանդշաֆտ՝ նեղ իմաստով), 2. Զորաց քարերը (սրբազան վայր), 3. մենհիրները (սրբազան օբյեկտ):

Սրբազան լանդշաֆտը ձևավորող գործոնները. Որո՞նք են այն չափանիշները, որոնց շնորհիվ այս կամ այն վայրը համարվում է սրբագործված: Այսպես՝

1. Սրբագործված տարածքը պետք է նշանակալի տեղ զբաղեցնի տեղանքում. այդպիսին կարող են լինել օր.՝ բնական բարձունքները, ժայռերը, քարանձավները:
2. Սրբագործված վայրը պետք է հասարակ տարածքից որոշակիորեն առանձնացված լինի¹³⁹:
3. Սրբագործված վայրը պետք է կապված լինի ճանապարհային ցանցի հետ, այսինքն՝ հասանելի լինի այցելուի համար կամ հանդես գա պահապանի դերում (այս համատեքստում պետք է դիտարկել նաև լեռնանցքներում կամ դրանց հարևանությամբ գտնվող սրբավայրերը¹⁴⁰):
4. Պաշտամունքագոյացնող հզորագույն գործոն է խոշոր բնակավայրի առկայությունը. այս իմաստով սրբավայրը կարող է լինել քաղաքագոյացնող գործոն¹⁴¹, ինչպես նաև հանդես գալ տվյալ բնակավայրի պահապանի դերում:
5. Որոշակի նշանակություն կարող է ունենալ պաշտամունքային օբյեկտի կապը որսորդության կամ անասնապահության հետ¹⁴²:
6. Պաշտամունքային օբյեկտը կարող է առնչվել նաև երկրագործության հետ՝ մարմնավորվելով գետի (կամ նրա ակունքի), տեղումները կանոնավորող լճի կամ լեռան, ցորենի շտեմարանի մեջ¹⁴³:
7. Պաշտամունքագոյացնող գործոնների թվին են պատկանում բնական պաշարների

¹³⁵ Օջախի պաշտամունքային նշանակության մասին հմտ. **Ս. Գևորգի**, Շենգավիթյան մշակույթի օջախները և դրանց համալիրները, ՊԲՀ 1, 2004, էջ 218-220; **Դ. Վարդումյան**, նշվ. աշխ., էջ 359):

¹³⁶ **Մ. Էլիադե**, Мифы, сновидения, мистерии, Москва-Киев, 1996, с. 141.

¹³⁷ **Մ. Էլիադե**, նշվ. աշխ., էջ 141: Ավելի կոնկրետ է Պ. Սորոկինը, ով դիտարկելով պաշտամունքի կամ ծեսի հետ կապված առարկաները սոցիալական երևույթների համատեքստում, նշում է, որ տվյալ դեպքում քարը կամ գերանը, որով կառուցվում է տաճարը հանդիսանում է կրոնական ապրումների արտացոլում (**Պ. Сорокин**, նշվ. աշխ., էջ 45):

¹³⁸ Տե՛ս օր.՝ **J. Baleriaux**, Were Rivers Dive? Meaning to Subterranean Rivers in Ancient Greek Thought, Sacred Landscapes:

¹³⁹ **D. Soszynski**, The Role of Natural Factors in Shaping the Sacral Landscape of the Ropa and Wislok Rivers Interfluvium (Se Poland), OLPAN 8, 2011, p. 170; **L. Alberty**, Over the Rainbow: Places with and without Memory in the Funerary Landscape of Knossos during the II Millennium BC, Sacred Landscapes.

¹⁴⁰ **С. Токарев**, Ранние формы религии, Москва, 1990, с. 603 (թեպետ Ս. Տոկարևը մի շարք գործոններ կապում է միայն լեռների պաշտամունքի հետ, սակայն նույն գործոնները կարելի է վերագրել նաև այլ ռելիեֆային և տեղագրական գոտիներին): Հայկական օրինակների համար հմտ. **С. Д. Лисициан**, Святые у перевалов, СЭ 4-5, 1936, с. 200-212:

¹⁴¹ **А. Оппенхейм**, նշվ. աշխ., էջ 89:

¹⁴² **С. Токарев**, նշվ. աշխ., էջ 604:

¹⁴³ **С. Токарев**, նշվ. աշխ., էջ 605; **A. G. Sagona**, The Caucasus Region in the Early Bronze Age, BAR 2014, Oxford, 1982, vol. I, p. 82:

առկայությունը, տեղանքի արհեստագործական կենտրոն հանդիսանալը¹⁴⁴:

Պաշտամունքային վայրի կառուցվածքը. Վերլուծելով պաշտամունքային վայրի ներքին կառուցվածքը դժվար չէ նկատել, որ այն ենթարկվում է նույն տրամաբանությանը, ինչ հասարակ տարածքը. սահման, ճանապարհ, կենտրոն: Միաժամանակ, հարկ է նշել, որ նույնիսկ հասարակ տարածքում այս բաղադրատարրերը հաճախ սրբագործվում են¹⁴⁵:

Կարևորագույն գործոն է հանդիսանում սրբատեղիի սահմանազատումը այլ տարածքներից, ինչը խորհրդանշում է սրբագործվածի և աշխարհիկի, «ներսի և դրսի» տարանջատման գաղափարը: Բացի այդ, ինչպես բնակավայրի պարագայում, սրբավայրի դեպքում ևս տարածքային զատումը կարող է խորհրդանշել տվյալ համայնքի (այս պարագայում՝ հոգևոր համայնքի) միասնությունը¹⁴⁶: Այս նպատակին կարելի էր հասնել, օգտագործելով ինչպես տեղանքի հնարավորությունները (օր.՝ առանձին հրվանդաններ կամ բլուրներ, որոնք կարող են բնակատեղիից = հասարակ տարածքից, առանձնացված լինել ձորակներով կամ գետով), այնպես էլ՝ արհեստական ճանապարհով (պարսպի կառուցում¹⁴⁷, կոթողի տեղադրում): Մյուս կողմից՝ պաշտամունքային կառույցը, վայրը կամ միավորը ինքնին կարող է հանդիսանալ սահման դրանով իսկ զատելով «սեփականը» «օտարից»¹⁴⁸:

Տարածքի սրբագործման գործոններից է ճանապարհը. հատելով սահմանը՝ մահկանացուն պետք է մաքրագործվի՝ կենտրոնական, առավել սրբագործված ոլորտ մտնելու համար: Այդ իսկ պատճառով ճանապարհների երկայնքով հաճախ տեղադրվում էին զոհարաններ և պաշտամունքային հարթակներ¹⁴⁹: Ճանապարհի մաքրագործող գործառույթն ակներև է դամբանային համալիրների պարագայում, երբ վերջիններս հանդես են գալիս որպես հանդերձյալ աշխարհի տանող խորհրդանշական ուղիներ¹⁵⁰:

Սրբավայրի առանցքը կենտրոնն է, ինչը վերացարկվում է որպես «աշխարհի խորհրդանշական» առանցք¹⁵¹: Սրբարանը, զոհասեղանը կամ տաճարը գտնվում էին սրբավայրի կենտրոնական հատվածում և հաճախ ցանկապատվում, քանի որ սովորական մարդու մուտքը սրբագործված տարածք համարվում էր անթույլատրելի¹⁵²: Բնակավայրի պարագայում նույն գործառույթը կատարում էր կենտրոնական հրապարակը¹⁵³, որտեղ սովորաբար տեղադրվում էր սրբատեղին: Հարկ է նշել, որ կենտրոնական հրապարակը ևս որոշակիորեն զատվում էր բնակատեղիի ընդհանուր զանգվածից¹⁵⁴:

Այսպիսով, սրբազան լանդշաֆտ հասկացությունը խիստ էական է յուրաքանչյուր հասա-

¹⁴⁴ С. Токарев, նշվ. աշխ., էջ 604; К. Х. Кушнарева, Древнейшие памятники Двина, Ереван, 1977, с. 98-105.

¹⁴⁵ Հ. Հակոբյան, Ա. Գևորգի, Դիտարկումներ ճանապարհի և փողոցի գործառնական և խորհրդանշական գործառույթների միասնականության վերաբերյալ, Էջմիածին Թ, 2007, էջ 89-97:

¹⁴⁶ Հմմտ.՝ բնակավայրերի պարագայում՝ Օ. Шпенглер, Закат Европы, Москва, 1999, с. 118; Х. Ортега-и-Гасет, Восстание масс, Москва, 2002, с. 101:

¹⁴⁷ Պարսպի խորհրդի հետ է կապված մուտքի/դարպասի հաճախ սրբագործվող գաղափարը (հմմտ. Ս. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 67-68; Дж. Маккуин, Хетты и их современники в Малой Азии, Москва, 1983, с. 107). դարպասն ընկալվում է որպես մուտք դեպի սրբագործված վայր (Павсаний, Описание Эллады, Москва, 2002, I, II (1, 4):

¹⁴⁸ В. О. Ключевский, Курс русской истории, Сочинения в девяти томах, т. I, Москва, 1987, с. 134; Մ. Գաբրիելյան, Ա. Գալոյան, Ա. Գևորգի, Պարիսպն ու հրապարակը. գործառնականի և սիմվոլիկի միասնություն, Երևան. գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2006, էջ 50:

¹⁴⁹ Հ. Հակոբյան, Ա. Գևորգի, նշվ. աշխ., էջ 89-92; հմմտ.՝ Павсаний, Описание Эллады, I, II, (2), XXXVI (3):

¹⁵⁰ Г. Наримановили, Новые открытия в Триалети и некоторые вопросы функции, происхождения и распространения ритуальных дорог, АЭФК, Св. Эчмиадзин, 2003, с. 65-67; հմմտ.՝ С. Крамер, Мифология Шумера и Аккада, в кн.: Мифология древнего мира, Москва, 1977, с. 134-135.

¹⁵¹ И. О. Трифонова, Город как сакральное пространство, <http://medievalrus.narod.ru/trifonova.htm>.

¹⁵² И. Л. Павлов, Алтарь-ступа-храм, Москва, 2001, с. 19-21.

¹⁵³ Х. Ортега-и-Гасет, նշվ. աշխ., էջ 101:

¹⁵⁴ Ֆ. դը Պոլինյակի ենթադրությամբ, ակրոպոլիսն ընդհանրապես պետք չէ դիտարկել բնակավայրի համատեքստում (F. de Polignac, Cult, Territory and Origins of the Greek City-State, Chicago, 1996, p. 20-22):

րակության ներքին կառուցվածքը հասկանալու համար: Ընդ որում, ինչքան արխայիկ է էությանը հասարակությունը, այնքան մեծ է սրբազան լանդշաֆտի դերը: Կան հասարակություններ, որոնց ձևավորումը ուղղակիորեն կապված է եղել վերջինիս ձևափոխումների հետ, երբ քաղաքական կառույցները ի հայտ են եկել և աճել են սրբազան կենտրոնների շուրջ: Նման ձևով են ընթացել զարգացումներն ինչպես Հայկական լեռնաշխարհում, այնպես էլ դրան մշակութապես հարազատ Կովկասում և Փոքր Ասիայում¹⁵⁵: Սա է պատճառը, որ սրբազան լանդշաֆտի հետազոտությանը մեր իրականության մեջ պետք է ավելի մեծ ուշադրություն հատկացնել:

¹⁵⁵ Մանրամասն տե՛ս **А. Г. Периханян**, Храмовые объединения Малой Азии и Армении, Москва, 1959:

ԳԼՈՒԽ II.

ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Առկա տվյալների համաձայն Ք.ա. III-I հազ. Սյունիքի տարածքի պաշտամունքային հուշարձանները, ըստ կերտման առանձնահատկությունների, պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի՝ հարթակներ և կոթողային հուշարձաններ, որոնք ունեն համապատասխան ենթախմբեր (տեքստ. աղ. 3, քարտեզ 2):

1. Հարթակները

Ըստ գործառնության գոհասեղան հանդիսացող հարթակները բաժանում ենք երկու ենթախմբի՝ հիմք ընդունելով նրանց տեղադրության և ձևաբանության առանձնահատկությունները. հարթակ-կառույցներ ու ժայռային ելուստի և ժայռաբեկորի վրա տեղադրված հարթակներ¹⁵⁶:

Հարթակ-կառույցներ. Պաշտամունքային հարթակները կարող են ի հայտ գալ ինչպես բնակավայրերի, այնպես էլ դամբարանադաշտերի համատեքստում: Բնակավայրերում նրանք հանդես են գալիս «հասարակական կառույցների» միջավայրում, իսկ դամբարանադաշտերում կարող են տեղադրված լինել ինչպես անմիջականորեն դամբարանի վրա կամ նրան կից, այնպես էլ ամփոփված լինել դամբարանային լիցքի ներքո: Պարզագույն հարթակ կարող են հանդիսանալ դամբարանի ծածկասալերը, կառուցվածքով ավելի բարդ են կառույց-հարթակները: Առանձնանում են նաև հարթակներ և կառույցներ, որոնք անմիջականորեն կապված չեն կոնկրետ պաշտամունքային օբյեկտի (օր.՝ դամբարանի կամ բնակավայրի) հետ:

Կարելի է առանձնացնել համապատասխան ծիսական *բնակավայրային կառույցներ*: Այս համատեքստում հիշատակելի է Ալի Բայրամլիի (ԼՂՀ Շահումյանի շրջան, Քարվաճառի տարածաշրջան) «հասարակական կառույցը»¹⁵⁷: Իր ճարտարապետական հորինվածքով այն նման է Բջնիի մոնումենտալ կառույցին (հրապարակումներում պայմանականորեն նշված է որպես N 2 դամբարան), որը գտնվում է ժայռափոր համալիրներով բնորոշվող տարածքում¹⁵⁸:

¹⁵⁶ Հնագիտորեն գոհասեղանի բնորոշիչ գիծ կարող են համարվել համապատասխան նյութի առկայությունը ուսումնասիրվող հատվածում (հմտ. ստորև՝ Կապանի IV տեղամասի հ. 1, V տեղամասի հ. 1, 3 դամբարանները, Կերենի հ. 105 դամբարանը) կամ որոշակի ծիսական գործողությունների հետքերի առկայությունը (տես ստորև՝ Կերենի հ. 1 դամբարանը): Այս առնչությամբ, հարկ է նշել, որ Հ. Մարտիրոսյանը, քննելով ժայռապատկերների հարևանությամբ գտնված հնագիտական նյութը, իրավացիորեն նշում է, որ դա վկայում է տվյալ տեղանքի՝ զոհաբերության վայր հանդիսանալը (Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 47): Ճարտարապետական տեսանկյունից՝ գոհասեղանի բնորոշիչ հատկանիշներ կարող են համարվել հեղման հետ կապված կերտվածքներ՝ բաժակատիպ փոսեր, ավազաններ, ժայռափոր առվակներ և այլն (տես ստորև՝ Խնածախ, Իշակ Մեյդան, հմտ. Բջնի, Կարմիր Բերդ):

¹⁵⁷ **Н. С. Ибрагимов**, նշվ. աշխ., էջ 25-27: Հարկ է նշել, որ ժայռապատկերների և «հասարակական կառույցի» համաժամանակյա լինելու փաստը հստակ չէ:

¹⁵⁸ **Ի. Ղարիբյան, Հ. Հակոբյան, Ա. Գևուհի, Գ. Խաչատրյան, Տ. Վարթանեսովա**, Բջնիի հուշարձանները (պեղումների արդյունքները), Հուշարձան Զ, 2010, էջ 71:

Աղյուսակ 3. Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան օբյեկտների դասակարգումն ըստ ձևի

Դասը	Տիպը	Ենթատիպը	Տեղադրությունը	Հուշարձանները
I. Հարթակներ	1. հարթակ-կառույցներ	ա. հարթակ-համալիրներ բնակեցված տարածքում	բնակավայր	Ալի Բայրամլի (Քարվաճառ), Սոնասար (?) (Քաշաթաղ)
			դամբարանադաշտ	
			մեկուսի	
			անհայտ	
		բ. դամբարանի վրա/կից, լիցքի ներքո՝ քարե, կավածեփի և հողե կերտվածքներ, սալեր	բնակավայր	
			դամբարանադաշտ	<u>Քարե կառույց</u> ՝ Կապան-Շահումյան (IV տեղամասի N 5 դ., V տեղամասի N 3 դ.) (Զանգեզուր), Սառնաղբյուր (?) , Բերդիկ (համալիր), Վարդուտ, Միրիկ (Քաշաթաղ)
				<u>Կավածեփ, հողե կերտվածք</u> ՝ Լճաշեն (N 120 դ.) (Գեղարքունիք), Կերեն (N 1, 106 դ.) (Քաշաթաղ)
				<u>Սալային</u> ՝ Կապան-Շահումյան (V տեղամաս N 1 դ.) (Զանգեզուր), Ներքին Գետաշեն (Գեղարքունիք), Կերեն (N 1, 105 դ.) (Քաշաթաղ)
			մեկուսի	
			անհայտ	
		գ. քարակերտ հարթակներ և համալիրներ՝ բնակավայրից և դամբարանադաշտից դուրս	բնակավայր	
			դամբարանադաշտ	
			մեկուսի	Խաչաղբյուր (?) (Գեղարքունիք), Սոթք 15 (Գեղարքունիք)
			անհայտ	
	2. ժայռային ելուստների, ժայռաբեկորների և քարաբեկորների վրա տեղադրված հարթակներ	ա. բնական ժայռ՝ մշակված ֆալաձև ելուստով = պորտաքար	բնակավայր	
			դամբարանադաշտ	
			մեկուսի	
			անհայտ	Նորավան-Պորտաքար (Զանգեզուր)
		բ. բնական ժայռ՝ թասաձև փորվածքով	բնակավայր	Իշակ Մեյդան (Զանգեզուր), Սոթք 2 (Գեղարքունիք)
			դամբարանադաշտ	Ծիծեռնավանք (Քաշաթաղ)
			մեկուսի	Խնածախ/Վանքի ձոր (Զանգեզուր)
			անհայտ	Թանահատ, Շրվական, Ուղեձոր, «Հազարափրկիչ» (Վայոց Ձոր), Սելիմ (Գեղարքունիք)
		գ. պատկերազիր հարթակ՝ ժայռապատկերով	բնակավայր	
			դամբարանադաշտ	
			մեկուսի	Գեղամա, Վարդենիսի, Սյունիքի լեռներ (Զանգեզուր)
			անհայտ	
II. Կոթողներ	1. քանդակներ և քանդակազարդ քարեր	ա. մարդակերպ	բնակավայր	
			դամբարանադաշտ	Բազարխանա (Զանգեզուր), Ղալաջիկ 2 (Քաշաթաղ)
			մեկուսի	Ժայռապատկերներ (Գեղամա լեռներ՝ Գեղարքունիք, Ուղտասար՝ Զանգեզուր, Ալլիճ՝ Քարվաճառ)
			անհայտ	Հարժիս (ԳԵԹ), Հարժիս (պատահական գտածո (ԷՊԱԹ լուսանկար), Շաղատ, Կոռնիձոր (Զանգեզուր), Ծովագյուղ (Գեղարքունիք)
		բ. կենդանակերպ	բնակավայր	
			դամբարանադաշտ	Արվական (?) (Քաշաթաղ)

			մեկուսի	Ժայռապատկերներ (Գեղամա լեռներ՝ Գեղարքունիք, Ուղտասար՝ Զանգեզուր, Ալլիճ՝ Քարվաճառ)
			անհայտ	Խնածախ/Խաչքարի Խուրթ (Զանգեզուր)
		գ. ֆալակերպ	բնակավայր	
			դամբարանադաշտ	Լճաշեն (ՀՊՊԹ), Պատաշար, Ծովինար (Ե. Լալայանի պեղումներ) (Գեղարքունիք)
			մեկուսի	Կարճևան (Ժայռին փորագրած քանդակներ՝ ըստ Ե. Լալայանի) (Զանգեզուր)
			անհայտ	Շինուհայր (խաչքար) (?) (Զանգեզուր)
	2. վիշապա- քարեր	ա. ցլակերպ	բնակավայր	Գառնի 1 (Կոտայք)
			դամբարանադաշտ	Լճաշեն 1 (Գեղարքունիք)
			մեկուսի	Աժդահա Յուրտ 3, 6, Արշալույս 1, Գյուլի Յուրտ 2, 3, Գողթ 1, Ցիցքար 1, Իմիրգեկ 1, 3, Թոխմա- խան Գյուլ 2, 3 (Գեղամա լեռներ՝ Գեղարքունիք), Քարեձի 1, Սելիմ 1 (Վարդենիսի լեռներ՝ Գեղարքունիք)
			անհայտ	Լճաշեն 2 (Գեղարքունիք), Ուլցյուր 1, 2 (Վայոց Ձոր)
		բ. ձկնակերպ	բնակավայր	
			դամբարանադաշտ	
			մեկուսի	Աժդահա Յուրտ 1, 4, Արշալույս 4, Գյուլի Յուրտ 1, Ցիցքար 2, 3, Թոխմախան Գյուլ 5, Իմիրգեկ 2, 4, 5 (Գեղամա լեռներ՝ Գեղարքունիք)
			անհայտ	
		գ. հիբրիդ	բնակավայր	
			դամբարանադաշտ	
			մեկուսի	Աժդահա Յուրտ 2, 5, Թոխմախան Գյուլ 3 (Գեղամա լեռներ՝ Գեղարքունիք)
			անհայտ	
	3. մենհիրներ	ա. նվազագույն միջամտությամբ	բնակավայր	Մոլար Կուզե (Քաշաթաղ)
			դամբարանադաշտ	Զորաց քարեր, Հարժիս N 6-8, 10, Տանձավեր (Զանգեզուր), Որոտան, Գյաուր Դամեր, Բերդիկ, Ղալաջիկ (Քաշաթաղ)
			մեկուսի	Ալլիճ (Քարվաճառ)
			անհայտ	Խնածախ/Բհավեր (Զանգեզուր)
		բ. միջին մակարդակի միջամտությամբ	բնակավայր	
			դամբարանադաշտ	Հարժիս N 1-5, 9, 11, 12, 14 (Զանգեզուր)
			մեկուսի	Սելիմ N 2, Քարեձի N 2, 3 (Գեղարքունիք)
			անհայտ	Միրիկ (Քաշաթաղ)
		գ. առավելագույն միջամտությամբ	բնակավայր	
			դամբարանադաշտ	
			մեկուսի	Գյաուր Դամեր (Քաշաթաղ)
			անհայտ	Հարժիս N 15 (Զանգեզուր), Արենի (Վայոց Ձոր)

Նման բնակավայրի պատկերներ երևան են գալիս նաև կոբուստանյան ժայռապատկերներում¹⁵⁹: Ընդ որում, Մ. Ֆարաջևան այս պատկերները մեկնաբանում է որպես լաբիրինթոս¹⁶⁰: Նմանատիպ պատկերներ հայտնի են նաև Գեղամա լեռների ժայռապատկերներում, որոնք Հ. Մարտիրոսյանը մեկնաբանում է որպես արևային պատկեր՝ որոշ նշաններում տեսնելով վաղ բրոնզի զարդանախշեր, թեև ողջ կոմպոզիցիան մեկնաբանում է ուշ բրոնզի զարդարվեստի համատեքստում¹⁶¹: Ոչ հայաստանյան զուգահեռներից հարկ է նշել Հոլանդի բարձունքում տեղադրված Ռուխիմ էլ Խիրկի մեգալիթյան կառույցը, որը թեպետ իր չափերով և համակենտրոն շրջանների քանակությամբ զգալիորեն գերազանցում է թվարկվածները, սակայն կառուցված է նույն սկզբունքներով¹⁶²: Նմանատիպ հորինվածք ունի նաև Խաչաղբյուրի համակենտրոն շրջաններով կառույցը¹⁶³:

Ուշագրավ է, որ այսօրինակ հորինվածքը հանդես է գալիս նաև տեղանքում: Դեռևս Ն. Ադոնցը, հիմք ընդունելով Ա. Քալանթարի հետազոտությունները և դրանց մասին Հ. Բերբերյանի հաշվետվությունը, հիշատակում է պարիսպների համակենտրոն շրջաններով օղակված համալիրի գոյության մասին: Ընդամենը նշվում է, որ այդօրինակ համալիրների թիվը հասնում է տասներկուսի, սակայն ամենալավ պահպանվածը գտնվում է Աղավնատուն (ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջան) և Կոշ (ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջան) գյուղերի միջև¹⁶⁴: Նույն տվյալները ներկայացնում է նաև Ս. Սարգսյանը, հավելելով, սակայն գազաթից շողաձև տարածվող պարիսպների մասին տեղեկությունը: Հիմնվելով Ա. Քալանթարի, Թ. Թորամանյանի, Խ. Սամուելյանի հաղորդած տեղեկությունների և սեփական դիտարկումների վրա, Ս. Սարգսյանն այս տիպի համալիրների թվին է դասում Օշականի Արդար Դավիթ բլրի¹⁶⁵, Ծիծեռնակաբերդի¹⁶⁶, Լեռնակերտի (ՀՀ Շիրակի մարզ), Դաշտադեմի (ՀՀ Արագածոտնի մարզ), ինչպես նաև Կարսի մարզի մի շարք համալիրներ¹⁶⁷:

Բնակավայրի սահմաններում բլրի գազաթին է տեղադրված Ակունքի (Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջան) պաշտամունքային կառույցը¹⁶⁸: Բնակավայրի կենտրոնական հատվածում է գտնվում Թեթրիծղարո սրբատեղին (պարուրաձև դասավորված քարերից շարված հարթակ, որտեղ, ըստ Թ. Չուբինիշվիլու իրականացվում էին Արեգակի և Լուսնի պաշտամունքի հետ կապված արարողություններ)¹⁶⁹: Թերևս այս համատեքստում պետք է դիտարկել Գավառից հայտնաբերված ծիսական հարթակի մանրակերտը: Հարթակն ունի կլոր հատակագիծ ոչ բարձր պատերով: Շրջանի մի կողմից ուղղահայաց դուռն է սրացված ճակտոնային հատվածով և դեպի դուռն ուղղված պորտալային պատերով¹⁷⁰: Այս մանրա-

¹⁵⁹ Д. Ахундов, Архитектура, с. 80; М. Фараджева, Наскальное искусство Азербайджана, Баку, 2009, էջ 341, նկ. 67 b; Հ. Մարտիրոսյան, Հ. Բարայեյան, նշվ. աշխ., էջ 39, 49, նկ. 290:

¹⁶⁰ Фараджева М., նշվ. աշխ., էջ 228:

¹⁶¹ Հ. Մարտիրոսյան, Հ. Բարայեյան, նշվ. աշխ., էջ 39, 49, նկ. 290:

¹⁶² M. Freikman, A Near Eastern Megalithic Monument in Context, eTepoi, Journal for Ancient Studies 3, 2012, p. 143-144.

¹⁶³ Biscione R., Hmayakyan S., Parmegiani, նշվ. աշխ., էջ 97:

¹⁶⁴ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 11-12:

¹⁶⁵ Արդար Դավիթ բլուրը բազմիցս հիշատակվում է ժողովրդական բանահյուսության մեջ, կապված սովի տարիներին մարդակերության հետ (Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 34): Ի դեպ, պետք է նշել, որ Արտեմի Արարատսկին, մեջբերելով այս առասպելը, նկարագրում է Արդար Դավթի քարայրը՝ կարծես քարարկղ նկարագրելով. «քարերից կառուցված քարայր մեկ հոգու համար բավականաչափ ընդարձակ, որի կողային հատվածում փորված էր մի փոս՝ մեծ քանակությամբ մարդկային ոսկորներով» (Жизнь Артемия Араратского, с. 49):

¹⁶⁶ Ծիծեռնակաբերդի հնագիտական հետազոտությունների ընթացքում ի հայտ են եկել դեպի Հրազդան գետն ուղղված բազմաթիվ զոհասեղան-ժայռային ելուստներ (Հ. Հակոբյանի անձնական հաղորդում, 11.10. 2014):

¹⁶⁷ Ս. Սարգսյան, Հայաստանը քաղաքակրթության օրրան, Երևան, 2004, էջ 443-446:

¹⁶⁸ Ե. Ասատրյան, Թալինի շրջանի հուշարձանները, Երևան, 2004, էջ 54:

¹⁶⁹ Т. Н. Чубинишвили, К древней истории Южного Кавказа, Тбилиси, 1971, с. 50.

¹⁷⁰ С. А. Есаян, Скульптура древней Армении, 1980, с. 59, таб. 58/3: Հարկ է նշել, որ սրացված ճակտոնով մուտքն իր զուգահեռներն ունի Գյաուր Դամերի դամբարանադաշտերի դռմեններում:

կերտն իր գուգահեռներն ունի Կայծոն Բերդի, Մովսեսի նյութերում¹⁷¹: Այս առնչությամբ պետք է հիշատակել նաև Թալինի հարթակը: Այն իրենից արտաքնապես ներկայացնում էր դամբարանաբլուր 23 մ տրամագծով և 1,5 մ բարձրությամբ: Քարահողային լիցքի տակ հայտնաբերվեցին 2 գրեթե հավասար հարթակներ (4,8x10 և 5,9x9,5 մ): Համեմատաբար լավ պահպանված առաջին հարթակի պատերը շարված են միջին չափերի տուֆի քարերից, որոնք կազմում են յուրատեսակ «քիվով» ուղիղ պատ: Հարթակի հյուսիսարևմտյան և հարավարևմտյան պատերի տակ՝ մեկական երկաստիճան ստիլոբատ է բացվել: Հենապատերն, ամենայն հավանականությամբ, շարվել են շինությունը ծածկելու ժամանակ: Հարթակի հարավարևմտյան պատի դիմաց հաստատագրված է պատ, որը ստիլոբատի հետ կազմում է միջանցք: Երկրորդ հարթակը գտնվում էր 1 մ, ավելի բարձր՝ հետևաբար կառուցված էր ավելի ուշ¹⁷²:

Նույն կերպ կարելի է դիտարկել համապատասխան *դամբարանային հուշարձանները*: Դրանք կարող են տեղադրված լինել ինչպես անմիջականորեն դամբարանի լիցքի վրա, կամ նրա անմիջական հարևանությամբ, այնպես էլ ամփոփված լինել դամբարանաբլուրի ներքո: Առաջին ենթախմբում հարկ է հիշատակել Կապանի Շահումյանի դամբարանադաշտի V տեղամասի N 3 դամբարանը: Համալիրն իրենից ներկայացնում է արևելք-արևմուտք կողմնորոշմամբ քարարկղ, որի հյուսիսարևելյան հատվածում կառուցված էր մոտ 1 մ տրամագծով կլորավուն հատակագծով քարաշեն կերտվածքը: Շրջանը չէր փակվում, քանի որ հարավային պատի քարերից մեկը բացակայում էր: Շրջանի քարաշարի և դամբարանի սալերի միջև առկա էր 30-40 սմ հզորությամբ հողաշերտ: Հարթակի շրջանակը լցված էր քարերով և կոտրած խեցանոթների բեկորներով, որոնց մեջ առանձնանում էր տեղում կոտրված փոքրիկ սափոր: Այս առնչությամբ պետք է հիշատակել Շաղատ I հնավայրում Ք.ա. VII-V դդ. բնակավայրի ավերումից հետո նույն վայրում մ.թ.ա II-մ.թ. II դդ. կառուցված 2,5 մ տրամագծով աշտարակը, որի ստորին հատվածում տեղադրված էին երկու շների կմախքներ: Այս կոթողը Մ. Զարդարյանը կապում է արալեզների պաշտամունքի հետ¹⁷³:

Այս համատեքստում պետք է նաև դիտարկել Կապանի Շահումյանի դամբարանադաշտի IV տեղամասի N 5 դամբարանին կից կառույցը (նկ. 1): Այն տեղադրված էր տեղամասի հարավարևմտյան հատվածում N 5 դամբարանից մոտ 1 մ արևելք և վերջինիս մակարդակից մոտ 20 սմ բարձր՝ իրենից ներկայացնելով քարային լիցք, որի տակ ամփոփված էր արևելք-արևմուտք ուղղվածությամբ ձվաձիթ կերտվածք, կենտրոնում դրված էր մեծ քար: Հարավային հատվածը առաջացել էր հետագայում լցոնման ժամանակ, իսկ հյուսիսայինը շարված էր երկու շարք քարով և աղեղնաձև թեքվում էր դեպի արևելք: Ամենայն հավանականությամբ հենց սա է հարթակի նախնական տեսքը, քանի որ ժամանակակից շրջանում կառույցի ավերումը բացառվում է: Հենց հյուսիսային պատի տակ հայտնաբերվեց նյութը (երկու անոթ): Մի փոքր հարավ բացվեց նաև մետաղը՝ բրոնզե լարից ապարանջան և երեք տարբեր չափերի կոճակներ:


Այս առնչությամբ հարկ է նշել Սիսիանի N 4 դամբարանը, որը շրջափակված էր երեք կեղծ թաղումներով, որոնցից յուրաքանչյուրում կար ընդամենը մեկ անոթ¹⁷⁴:

¹⁷¹ С. А. Есаян, Скульптура, с. 58, таб. 58/1-2.

¹⁷² Գ. Սարգսյան, Թալինի մ.թ.ա. III հազ. հուշարձանի պեղումները, ԴՀԱՆ, 1987-1988, էջ 9-10; Avetisyan P., Muradyan F., Sargsyan G., Early Bronze Age Burial Mounds at Talin, Von Maikop bis Trialeti: Gewinnung und Verbreitung von Metallen und Obsidian in Kaukasien im 4.-2. Jt. v. Chr., Bonn, 2010, p. 161-165.

¹⁷³ Մ. Զարդարյան, Արդի հնագիտական հետազոտությունները; հմմտ. Ս. Հարությունյան, Հին Հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 15-16; Ն. Տաղավարյան, Հայոց հին կրոնները, Կ. Պոլիս, 1909, էջ 34-35; Դ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնը Հայոց, Վենետիկ, 1910, էջ 444-445:

¹⁷⁴ Օ. Խնկիկյան, Մ.թ.ա. II-I հազ. դամբարանների պեղումները Սիսիանում, ՀԱՀՆ I, 1993, էջ 37:



Նկ. 1 Կապան, Դամբարան N 4.05, թաղումը և կից հարթակ-կառույցը

Դամբարանաբլուրի վրա է կանգնեցված կառույց/գոհարանը նաև Վերին Նավերի առաջին դամբարանադաշտի N 34 և Ներքին Նավերի N 2 դամբարաններում: Այն իրենից ներկայացնում է արևելք-արևմուտք առանցքով կողմնորոշված ուղղանկյուն հատակագծով մի կառույց, որի պեղումների ժամանակ ի հայտ եկավ Ք.ա. XIX-XVIII դդ. բնորոշ խեցեղեն, կենդանաբանական և մարդաբանական նյութ¹⁷⁵: Նույն պատկերն է Շամիրամի Ավագահանքի դամբարանաբլուրներից մեկում, որտեղ հայտնաբերված է քարե շինություն¹⁷⁶: Դամբարանախցի վրա կառուցված աստիճանաձև բլուր հաստատագրված է Զուրտակետի N 6 դամբարանաբլուրում¹⁷⁷: Դամբարանի անմիջական հարևանությամբ է տեղադրված նաև Ղալաջիկ 2 դամբարանադաշտում հայտնաբերված համալիրը: Այն կցված է դամբարանաբլուրի կրոմլեխին և իրենից ներկայացնում է մարդակերպ կուռք, որն ամփոփված է կիկլոպյան քառանկյուն շինության մեջ¹⁷⁸: Ամենայն հավանականությամբ նմանատիպ երևույթ դիտարկվում է նաև Արուճի N 5 դամբարանում, որտեղ դամբարանաբլուրի վրա ցից քարերից կառուցված էր ուղղանկյուն կառույց: Դամբարանաբլուրին մոտենալու համար պետք էր հատել ուղղանկյուն շինությունը¹⁷⁹: Կրոմլեխին կից քարերով շարված հարթակ հայտնաբերվել է նաև Ներքին Գետաշենի N 1 դամբարանում¹⁸⁰: Արտաքին կողմից կրոմլեխին կից քարե արկղ է կառուցված Քանագեղի N 3 դամբարանում¹⁸¹:

Հաջորդ ենթախմբում ներկայացված են դամբարանաբլուրների տակ ամփոփված կառույց գոհասեղանները: Այս խմբատված հետաքրքիր կառույց է հայտնաբերված ԼՂՀ Քաշաթաղի շրջ. Վարդուտ գյուղում: Դամբարանային կառույցը քարահողային լիցքով բլուր էր 13,5 մ տրամագծով: Զրահի քարերը տեղադրված էին երեք շերտով, 0,4 մ ընդհանուր հզորությամբ: Հատկանշական էր, որ կենտրոնական հատվածում լիցքը բաղկացած էր առավել մանր քարերից: Բացառված չէ, որ թմբի այս հատվածը լցված էր ավելի ուշ, երբ խուցն արդեն կառուցված էր և կատարված էին թաղման հետ կապված ծիսակատարությունները: Խուցը տեղադրված էր բլրի կենտրոնական հատվածում դեպի հարավ-արևելք մի փոքր շեղումով: Այն կողմնորոշված էր հյուսիս-հարավ առանցքով՝ 30 աստիճան շեղվելով դեպի արևելք: Կառույցը ծածկված էր մեծ հարթ գետաքարերով, որոնց տակ հայտնաբերվեցին գիշատիչ կենդանու ատամներ: Խցից 0,8 մ արևելք երևան եկավ երկու շարք քարերից շարված շրջանաձև կառույց՝ 1,5 մ տրամագծով: Կառույցը սալահատակված է գետաքարերով: Կենտրոնում ևս մեկ գետաքարի վրա տեղադրված էր զուգահեռանիստի տեսք ունեցող կլորացված անկյուններով բազալտե քար (15x7,5x7,5x6 սմ), որի երկայնական կողմին փորված են երկու՝ 2 և 1,3 սմ տրամագծով և 1 սմ խորությամբ անցքեր: Քարերի կողային հատվածները կրում են մշակման հետքեր (ՔԵԹ ի/հ 74/3)¹⁸²:

Անդրդամբարանային կառույցները տարածված էին Հայաստանի ուշ բրոնզ-երկաթեդարյան համալիրներում: Մասնավորապես ներկրոմլեխային հարթակներ հայտնի են Շամիրամի II դամբարանադաշտի N 5 դամբարանաբլուրից¹⁸³: Լոռի Բերդում, Թափա բարձունքին գտնվող

¹⁷⁵ Հ. Միսնյան, Վերին Նավեր, Երևան, 2006, էջ 36:

¹⁷⁶ Գ. Արեշյան, Ե. Ասատրյան, Հայագիտական կենտրոնի 1979-1983 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքները, ԲԵՀ 3, 1985, էջ 203-204:

¹⁷⁷ Г. Нариманишвили, Триаleti во II тыс. до н. э. Тбилиси, 2006, с. 74.

¹⁷⁸ Գ. Մարգարյան, Ա. Գևորգյան, Ա. Հակոբյան, Սյունիքի արևելյան սահմանների պաշտպանական համակարգի ձևավորումը, էջ 153:

¹⁷⁹ Գ. Արեշյան, Գ. Թումանյան, Արուճի դամբարանադաշտի հ. 5 դամբարանը, ԴՀԱԹ 1989-1990, Երևան, 1991, էջ 24-25:

¹⁸⁰ О. Xnkikyan, նշվ. աշխ., էջ 43:

¹⁸¹ Գ. Արեշյան, Ե. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 205; Գ. Արեշյան, Պահպանական պեղումներ Քանագեղի դամբարանադաշտում, էջ 3; Լ. Կիրակոսյան, Քանագեղի դամբարանների ճարտարապետությունը, էջ 97-98:

¹⁸² Ա. Գևորգյան, Գ. Խաչատրյան, Դաշտային հետազոտություններ Շալուա գետի առաջանում և Հոջանցի ձախ ափին, ՀԱ 1-12, 2003, էջ 253-254:

¹⁸³ Գ. Թումանյան, Հայաստանի ուշ բրոնզեդարյան դամբարանների կառուցվածքը, ՊԲՀ 1, 2003, էջ 175:

դամբարանում անդրդամբարանային տարածքում քարերը շարված էին ցլի և եղջերվի գլուխների տեսքով, իսկ N 79 դամբարանում զրահի տակ կառուցված էր քարե բրգանման կերտվածք¹⁸⁴: Վերին Նավերի N 19 դամբարանի արևելյան պատին կից կառուցված էր զոհարան¹⁸⁵: Այգեշատի դամբարանադաշտում հարթակները կրոմեխին կցված էին արևելյան կողմից¹⁸⁶:

Ծիսա-պաշտամունքային կառույցների համատեքստում հարկ է նշել *դոլմենային կառույցները*: Հայաստանում դոլմենային կառույցները համեմատաբար քիչ են հայտնի և ունեն իրենց որոշակի առանձնահատկությունները¹⁸⁷, իսկ դրանցից վաղագույնը թվագրվում է Ք.ա. III հազ. (Հառիճ)¹⁸⁸: Սյունիքում դոլմենանման կառույցներ հաստատագրված են Ախլաթյանում՝ Ջաղաչի խաչ և Դոլայի տեղամասերում, Անգեղակոթում¹⁸⁹, Սևանի ավազանում՝ Մոնթի ձոր տեղամասում¹⁹⁰ Ջորաց քարերում¹⁹¹, Գյաուր Դամերում: Վերգետնյա դոլմենատիպ են նաև Ջոջ դարի դամբարանները: Դրանք ունեն քառանկյուն, կլոր, պայտաձև հատակագիծ և ծածկված են հսկայական քարերով¹⁹²: Ի դեպ պետք է նշել, որ և՛ Ջորաց քարերում, և՛ Գյաուր Դամերում (աղ. 3) հայտնի են հարակից պատերով դոլմեններ¹⁹³: Ե. Լալայանը հիշատակում է Գարահող տեղամասում գտնվող դոլմենը, որը տեղի բնակիչները համարում էին հսկայի (վիշապի) տուն¹⁹⁴: Ըստ Հ. Մարտիրոսյանի՝ դոլմենանման կառույցներ հայտնաբերված են նաև Տավուշում՝ Դրդիում և Չորաթանում¹⁹⁵:

Հաջորդ տիպը ներկայացված է «կեղծ թաղով» կառույցներով, որոնք կարող են լինել ինչպես վերգետնյա, այնպես էլ ստորգետնյա: Վերգետնյա դամբարանային կառույցների թվին է պատկանում Ղալաջիկ ամրոցի մոտակայքում տեղադրված խոշոր դամբարանադաշտը: Դամբարանները ներկայացված են քարահողային դամբարանաբլուրներով, որոնք փակում էին հսկայական, մինչև 10 քառ. մ տարածքով դամբարանասրահները՝ ծածկված կեղծ թաղով: Դամբարանների մեծ մասն ավերված և թալանված են: Թալանված խցերից հավաքված խեցեղեն նյութը բնորոշում է դրանք որպես Ք.ա. VIII-VI դդ. թաղումներ¹⁹⁶: Հավանաբար վերգետնյա կառույց էր հանդիսանում նաև ուշ բրոնզեդարյան Սառնաղբյուրի մեծ դամբարանը¹⁹⁷: Կեղծ թաղ ունի նաև Լճաշենի N 2 դամբարանաբլուրը¹⁹⁸: Միննույն ժամանակ, պետք է նշել, որ, թեև կեղծ թաղի հնարքի կիրառումը մեծապես դյուրացնում էր վերգետնյա խոշոր դամբարանասրահների կառուցումը, այն կիրառվում էր նաև համեմատաբար փոքր ստորգետնյա կառույցներում: Այսպես, կեղծ թաղ ունենին Կապանի Շահումյանի դամբարանադաշտի և Կերենի բազմաթիվ թաղումները: Կապանի Շահումյանի դամբարանադաշտի N 8 դամբարանում, թաղի սալերը հեռացնելուց հետո, բացվեցին պատի քարերի վրա հենված սալեր: Այսպիսով, դամբարանն ուներ կեղծ թաղ, ինչի մասին վկայում է նաև երկայնական պատերի դեպի ներս թեքվածությունը: Կեղծ թաղի մասին վկայող տվյալներ

¹⁸⁴ Մ. Դեջան, Լոռի Բերդ 2, Երևան, 2006, էջ 62:

¹⁸⁵ А. Симонян, Раскопки могильника Верин Навер, АО 1980, Москва, 1981, с. 426.

¹⁸⁶ Հ. Ավետիսյան, Այգեշատի դամբարանադաշտի պեղումները, ԲԵՀ 2, 1996, էջ 157:

¹⁸⁷ Գ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 179:

¹⁸⁸ Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1974, с. 35.

¹⁸⁹ Մ. Հասրաթյան, Պատմա-հնագիտական աշխատություններ, էջ 168-170; Մ. Եսայան, Զանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները, ԼՀԳ 4, 1972, էջ 65; Օ. Մնկկյան, նշվ. աշխ., էջ 67:

¹⁹⁰ Գ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 179; Մ. Բարխուդարյան, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, էջ 32-33:

¹⁹¹ Օ. Մնկկյան, նշվ. աշխ., էջ 26, 50:

¹⁹² Օ. Մնկկյան, նշվ. աշխ., էջ 26:

¹⁹³ Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 33:

¹⁹⁴ Ե. Լալայան, Զանգեզուր, էջ 16:

¹⁹⁵ Հ. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր ու դամբարանադաշտեր, ՀՀՀ 2/III, էջ 23:

¹⁹⁶ Գ. Մարգարյան, Ա. Գևորգյան, Ա. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 164-165:

¹⁹⁷ Սառնաղբյուրի դամբարանադաշտն ուսումնասիրվել է 2014 թ. ԼՂՀ ԿԱ Զբոսաշրջության վարչության արշավախմբի կողմից (Գ. Մարգարյան, Ա. Գևորգյան, Լ. Հովհաննիսյան, Զ. Ընդեյան):

¹⁹⁸ Գ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 169:

(խոսքը պատերի դեպի ներս թեքված լինելուն է վերաբերում), դիտարկվում են նաև Կապանի այլ դամբարաններում: Կեղծ թաղի գաղափարը կիրառվում էր նաև Կերենի դամբարանադաշտում: Այսպես, կեղծ թաղ ուներ N 105 դամբարանը: Այստեղ, հողաձածակույթի հեռացումից հետո, ի հայտ եկավ կեղծ թաղի վերին հատվածը: Քարային լիցքն ընդհանուր առմամբ ուներ 354 սմ երկարություն և 150 սմ լայնություն: Քարերի առաջին շերտը հեռացնելուց հետո՝ բացվեցին երկրորդ շերտի քարերը, ընդ որում հատկանշական է, որ հյուսիսային հատվածում տեղադրված երկու սալերն ունեին դեպի ներս թեքվածություն, ինչը կարող էր առաջանալ կեղծ թաղի կողային ծածկի քարերը հեռացնելու հետևանքով: Կապանի և Կերենի նշված դամբարանները թվագրվում են Ք.ա. XI-IX դդ., իսկ N 2 դամբարանի իջեցուկ թաղումը՝ Ք.ա. VII-VI դդ.: Կերենում կեղծ թաղով կառույցները շարունակում են գոյատևել նաև հետագա դարաշրջանում: N 95 դամբարանն իր կառուցվածքով չէր տարբերվում նախորդներից: Այն ուղղանկյուն հատակագծով կառույց էր, որի երկայնական պատերը քարաշեն էին, իսկ լայնականները՝ հիմնահողային: Պատերն ունեին դեպի ներս թեքվածություն, ինչը վկայում է կեղծ թաղի առկայության մասին: Կեղծ թաղը ծածկված էր կարմիր և սև գույնի խոշոր սալերով: Նույն պատկերն է N 97 դամբարանում, որը արևելք-արևմուտք առանցքով 20 աստիճան շեղմամբ հյուսիս-հարավ ուղղվածությամբ ուղղանկյուն հատակագծով քարակղ է, շարված համեմատաբար մանր քարերից: Քարակղի պատերն ունեին որոշակի թեքվածություն դեպի ներս, ինչը հուշում է կեղծ թաղի առկայության մասին: Ծածկը համեմատաբար անխաթար էր դամբարանի կենտրոնական հատվածում, մինչդեռ հյուսիսային և հարավարևելյան հատվածներում այն բացակայում էր: Դամբարանի հարավային պատն ամրացված էր համեմատաբար մանր քարերի շարքով, ինչը նպատակ ուներ ամրացնելու ծածկի հատվածը: Միննույն ժամանակ, Ք.ա. VII-VI դդ. Կերենում գոյություն ունեին նաև հարթ ծածկով դամբարաններ (օր.՝ N 64-ը): Կամարակապ ծածկ կարող էին ունենալ նաև հիմնահողային խցերը (Լճաշեն)¹⁹⁹: Դամբարանային կառույցներում հանդիպում են նաև երկթեք տանիքով դամբարաններ²⁰⁰:

Դամբարանային կառույցի առանձին հատվածը ևս կարող է հանդիսանալ պարզ գոհասեղան, օր.՝ *դամբարանի ծածկասալը*, ինչի մասին կարելի է եզրակացնել միայն սալի վրա կատարած գործողությունների հետքերից: Նմանատիպ երևույթ կարելի է դիտարկել Սյունիքի մի շարք դամբարաններում, մասնավորապես՝ Կերենի N 105 դամբարանում: Դամբարանը ծածկված էր բավական մեծ չափերի սալերով, որոնցից մի քանիսը երևում էին տարածքի արտաքին զննման ժամանակ: Ծածկի քարերը բազալտից են: Հողաձածակույթի հեռացումից հետո՝ ի հայտ եկավ կեղծ թաղի վերին հատվածը: Հատկանշական է, որ ծածկի հյուսիսային հատվածում տեղադրված էր ուղղահայաց դիրքով քար: Քարային լիցքն ընդհանուր առմամբ ուներ 354 սմ երկարություն և 150 սմ լայնություն: Քարերի առաջին շերտը հեռացնելուց հետո բացվեցին երկրորդ շերտի քարերը, ընդ որում հատկանշական է, որ հյուսիսային հատվածում տեղադրված երկու սալերն ունեին դեպի ներս թեքվածություն, ինչը կարող էր առաջանալ կեղծ թաղի կողային ծածկի քարերը հեռացնելու հետևանքով: Դամբարանի կենտրոնական հատվածում հարավային ուղղահայաց դրված քարից 120 սմ հյուսիս բացվեց ուղղահայաց կանգնեցված կարմիր գույնի դիրիս, որը երկու կողմից սեպված էր ավելի փոքր չափերի տուֆոբրեկչիաներով: Ծածկի քարերի տակից հայտնաբերվեցին սև փայլեցված թաղարի բեկորներ, ինչպես նաև խոշոր եղջերավոր անասունի ատամ: Էլ ավելի ցայտուն է արտահայտվում ծածկասալի վրա ծիսական գործողություններ կատարելը Կապանի Շահումյանի դամբարանադաշտում. այսպես, V տեղամասի N 1 դամբարանի խուցն իրենից ներկայացնում էր արևելք-արևմուտք ուղղվածությամբ քարակղ, շարված միջին չափերի քարերից: Արևմտյան պատը հիմնահողային էր:

¹⁹⁹ Լ. Պետրոսյան, Լճաշենի դամբարանադաշտի պեղումները (2005-2006 թթ), էջ 129:

²⁰⁰ Գ. Արեշյան, Կ. Ղաֆադարյան, Կ. Հովհաննիսյան (խմբ.), Հայկական ճարտարապետության պատմություն, հ. I, Երևան, 1996, էջ 70:

Ինչպես և նախորդ դեպքերում դամբարանը ծածկված էր երկայնական պատերի վրա դրված սալերով, որոնք արանքում սեպված էին ավելի մանր քարերով: Վերջիններս հատկապես շատ են դամբարանի կենտրոնական և արևելյան հատվածներում: Հատկանշական է մեկ փաստ. հարավարևելյան հատվածում տեղադրված սալը հարթ է: Այս սալը բացելիս հողաշերտից հայտնաբերվեցին մեծ քանակությամբ կոտրատված խեցեղեն անոթների բեկորներ, ինչպես նաև պայտաձև բրոնզե կախիկ: Նույն տեսարանը դիտարկվում է IV տեղամասի N 1 դամբարանում: Այս խմբի մեջ պետք է դիտել նաև Խաչենագետի հովտում տեղադրված Դամօղլուի N 79 դամբարանը: Այստեղ դամբարանը ծածկող սալերի արանքում տեղադրված են մանր գետաքարեր, որոնց մեջ լցված են խեցեղենի բեկորներ²⁰¹: Նմանատիպ հարթակները կարող էին տեղադրված լինել ինչպես ծածկասալերի վրա, այնպես էլ ամփոփված լինել դամբարանաբլուրի տակ: Այսպես, Կերենի N 1 դամբարանաբլուրում, քարային լիցքը հեռացնելուց հետո, բացվեց հողային շերտ, որի հզորությունը պեղահրապարակի տարբեր հատվածներում կազմում էր 20-50 սմ և որը հագեցած էր մոխրով և այրված կավի գնդերով (նկ. 2): Ընդ որում, մոխրով առավել հագեցած էին դամբարանի կենտրոնական, արևելյան և հարավային հատվածները, այն ժամանակ, երբ հյուսիսային հատվածում, որտեղ տեղադրված էր դիակիզման մոխրով կարասը, այն գրեթե բացակայում էր: Այս հանգամանքը հուշում է, որ դիակիզումն իրականացվել էր հետագայում դամբարանաբլուրի տակ ամփոփված տարածքում²⁰²: Նույն պատկերը դիտարկելի է դամբարանադաշտի կենտրոնական հատվածում՝ ջրբաժանի գագաթին գտնվող N 106 դամբարանում²⁰³: Հետևաբար հողի մակերեսը կատարում էր յուրատեսակ զոհասեղանի դեր: Մոտավորապես նույն պատկերն է Խոջալուի N 18 դամբարանաբլուրում, որտեղ թաղումը կատարված էր հարավային, իսկ դիակիզման խարույկը՝ հյուսիսային հատվածում²⁰⁴: Կերենի N 1 դամբարանի հարավային հատվածում առկա էր քարաշեն հարթակ 130x110 սմ չափերով, որի վրա տեղադրված էր խիստ այրված գետաքար: Հարթակը ծածկող և շրջապատող հողաշերտը հագեցած էր մոխրով և լավ տոփանված: Հայտնաբերված խեցեղենը բացառապես բեկորային էր և այրված²⁰⁵: Հարթակներ են հաստատագրված նաև Ներքին Գետաշենի դամբարանաբլուրի տակ²⁰⁶:

Վերոհիշյալից ելնելով՝ հարթակների այս խմբում պետք է միավորվեն նաև այն դամբարանները, որտեղ թաղումն իրականացվել է անմիջականորեն հարթակի վրա: Այսօրինակ դամբարանների թվին են պատկանում Լճաշենի N 120 և Ստեփանակերտի N 119 դամբարանները²⁰⁷: Նույն համատեքստում կարելի է դիտարկել նաև Խոջալուի N 14 և 16 դամբարանները, որտեղ թաղումն իրականացվել էր ավազի շերտի մեջ²⁰⁸:

Հաջորդ ենթախմբում պետք է դիտարկել այն հարթակները և կառույցները, որոնք անմիջականորեն *կապված չեն կոնկրետ պաշտամունքային այլ օբյեկտի հետ (օր. դամբարանի)*²⁰⁹:

²⁰¹ А. Ивановский, По Закавказью, с. 145.

²⁰² Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Գ. Միքայելյան, Կերենի դամբարանադաշտի հյուսիսային բլուրի պեղումները, ՀՀՄ XIV, էջ 182:

²⁰³ Կերենի N 106 դամբարանը հետազոտվել է Մշակութային ժառանգություն հ/կ արշավախմբի կողմից, 2013 թ. (Ա. Գնունի, Ա. Թադևոսյան, Հ. Օհանյան):

²⁰⁴ К. Х. Кушнарева, Ходжалинский могильник, ИФЖ 3, 1970, էջ 111:


²⁰⁵ Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 182-183:

²⁰⁶ О. Xnkikyan, նշվ. աշխ., էջ 43:

²⁰⁷ Հ. Մնացականյան, Լճաշենի նյութական մշակույթի զարգացման հիմնական էտապները, ՊԲՀ 2, 1965, էջ 96; К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры Южного Кавказа, Ленинград, 1971, с. 63.

²⁰⁸ К. Х. Кушнарева, Ходжалинский могильник, с. 110.

²⁰⁹ Այս համատեքստում հարկ է ակնարկել Սպիտակաշուր 1 դամբարանադաշտում դամբարանների հարևանությամբ գտնվող ուղղանկյուն հատակագծով կառույցների հետքերը կենտրոնական ցից քարով: Դամբարանների և կառույցների ավերված օրինակներից հավաքված խեցեղենը ապացուցում է դրանց համաժամանակյա բնույթը (Ք.ա. II հազ. երրորդ քառորդ): Մի կողմից, նշված կառույցները կարող էին ունենալ ծիսա-պաշտամունքային գործառույթ, ինչի մասին վկայում է ավերված օրինակներում աննշան մշակութային շերտը և կառույցների



Այս խմբին, ամենայն հավանականությամբ, վերաբերում է Կապանի Շահումյանի դամբարանադաշտի IV տեղամասի N 4 համալիրը: Կառույցի վերին շերտը լիովին ոչնչացված էր, սակայն ստորին շերտը անխաթար էր: Դժվար է ասել, արդյոք այս կերտվածքը քարաշեն է եղել, քանի որ պահպանվել են միայն առանձին քարեր հյուսիսային և հարավային կողմերում: Հարթակի տարածքից դուրս եկան խեցեղենի բեկորներ, տասնյակ բրոնզե կոճակներ, սարդիկներ ուլունքներ: Ստորին շերտը տեղաշարժված չէր: Հատկանշական է, որ մարդաբանական նյութ այստեղ չի հայտնաբերվել, այնինչ այն սովորաբար

կենտրոնանում է դամբարանների ստորին շերտերում: Այս հանգամանքը կասկածի է ենթարկում սույն կառույցի գործառույթը՝ որպես դամբարան: Ստորին շերտի պատկերը հետևալն էր: Հարթակի հյուսիսարևելյան հատվածում բացվեց կավանոթների կույտ: Եվս մեկ կույտ բացվեց դրանցից արևմուտք՝ ուղիղ հյուսիսային առանցքին: Մետաղը, որը կազմում է հարթակի հիմնական նյութը, տեղադրված է խեցանոթներից հարավ-արևելք: Մետաղը ներկայացված էր բրոնզե գոտու հատվածով, որից հարավ դրված էր զրահի կոճակ: Այս՝ N 1 կոճակից հարավ դրված էին զանգվածեղ ապարանջաններ և օղեր: Հայտնաբերվեցին մեծ քանակությամբ բրոնզե կոճակներ, ուլունքներ և զսպանակաձև զարդեր: Առաջին գոտուց հարավ-արևելք օղակաձև դրված էր երկրորդ գոտին, որին արևմտյան կողմից կից էր երկրորդ զրահի կոճակը:

Նմանատիպ հարթակների մեջ կարող են ընդգրկվել նաև կոթողային հուշարձաններով (վիշապաքարերով և մենհիրներով) լրացված հարթակները, որոնք դամբարան չեն հանդիսանում (տես ստորև):

Այս կարգի զոհարանները հիշատակվում են նաև ազգագրական նյութերում: Այսպես, Վայոց Ձորի Տանձիկ գյուղից ոչ հեռու Օստեր դաշտում հիշատակվում է մի ուխտատեղի՝ կրակից սևացած մի քարով, որն, ըստ Ե. Լալայանի, պաշտում են և՛ հայերը, և՛ մահմեդականները²¹⁰: Միսիանի տարածաշրջանի Շադատ գյուղում՝ Քեչաբերդ սարի գագաթին հիշատակվում է պրիզմայաձև ժայռ՝ կլոր անցքով, որը պաշտվում էր որպես սրբատեղի և որի շուրջը հայտնաբերվել է առատ խեցեղեն²¹¹:


Ժայռային ելուստների, ժայռաբեկորների և քարաբեկորների վրա տեղադրված հարթակներ.

Ժայռափոր կերտվածքները Հայկական լեռնաշխարհի ամենակայուն մշակութային տարրերից են և բնորոշ են ինչպես բրոնզ-երկաթեդարյան, այնպես էլ ուրարտական և ավելի ուշ շրջանի Սյունիքին (հմմտ. աղ. 4, 5): Դրանք ի հայտ են գալիս նաև որպես հարթակներ, որոնց հարդարանքի հիմնական բաղադրատարրերից են ֆալատիպ ելուստները և թասաձև փորվածքները:

միանման հատակագիծը: Մակայն բացառված չէ, որ դրանք հանդիսանում են յայլայական տնտեսություն վարող տեղաբնիկների ժամանակավոր կացարաններ:

²¹⁰ Ե. Լալայան, Շարուր Դարալագեազի գաւառ, էջ 261:

²¹¹ Ե. Լալայան, Զանգեզուր, էջ 186:



Նկ. 3. Ծիծեռնավանք, Մելիքին դուռ, Ջանգեր, Սելիմ, Խնածախի Վանքի ձոր, Ճանկաթաղ, թասաձև փորվածքներ «գոհասեղանների վրա»

րով ևս մեկ գոհասեղան հայտնաբերվել է Ծիծեռնավանքում (նկ. 3): Այն կերտված է ամրոցի արևմտյան պարսպից դուրս՝ դամբարանադաշտ տանող ճանապարհին մշակված բնական ժայռաբեկորի վրա: Ժայռաբեկորի վրա է տեղադրված Մելիքին դուռ հնավայրի գոհասեղանը: Դաշուշեն գյուղի Մելիքին դուռ տեղամասում է գտնվում համանուն ամրոցը (Ստեփանակերտի քաղաքաշինության նախարարության մասնաշենքի դիմաց, Կարկառի աջ ափին): Ամրո-

Նման գոհասեղանների դասական օրինակ է Սիսիանի տարածաշրջանի Նորավան գյուղից ոչ հեռու, դամբարանադաշտի տարածքում գտնվող կերտվածքը, որը բնական ժայռ է՝ մշակված ֆալաձև ելուստով (աղ. 1): Այս և նմանատիպ կերտվածքներն ազգագրական գրականության մեջ ընդունված է անվանել *պորտաքար*²¹²: Հարկ է նշել, որ այս անվանումը խիստ պայմանական է, քանի որ նմանատիպ ելուստներ ի հայտ են գալիս նաև այլ տիպի բացօթյա սրբավայրերում (օր.՝ Գյուլիբուլաղում)²¹³:

Այս ենթախմբում պետք է հիշատակել Բագարխանայի դամբարանադաշտում գտնվող գոհասեղանը (Գորիսի տարածաշրջանի Խոզնավար գ.): Այն միջանկյալ տեղ է զբաղեցնում ժայռային ելուստներին տեղադրված և ձեռակերտ գոհասեղանների միջև: Բագարխանայի գոհասեղանը տեղադրված է դամբարանադաշտում, թեպետ հուշարձանախմբի պեղված չլինելը թույլ չի տալիս որոշել արդյոք համալիրը կապված է կոնկրետ դամբարանի հետ, թե՞ ոչ: Ջոհասեղանն իրենից ներկայացնում է 5 մ տրամագծով, կլոր հատակագծով մի հարթակ, որի մի հատվածը բաղկացած է կիսակլոր սալաքարից, իսկ մյուս մասը շարված է քարերով²¹⁴: Այս առումով հարկ է հիշատակել Հարժիսից հայտնաբերված և լավ մշակված շրջանաձև քարը: Ցավոք, այս հուշարձանի տեղաշարժված լինելը թույլ չի տալիս ճշտել նրա գործառույթը:

Եվս մեկ նման գոհասեղան է տեղադրված Գորիս քաղաքից ոչ հեռու գտնվող Իշակ Մեյդան բնակավայրի կենտրոնական հատվածում (աղ. 2): Կերտվածքն իրենից ներկայացնում է հարթ, տձև, սակայն կլորացված կողային հատվածներով ժայռային ելուստ: Մինչև 10 սմ տրամագծով բաժակաձև փորվածքներն ունեն դեպի դուրս տանող առվակներ: Բաժակատիպ փորվածքներ-

²¹² Ս. Լիսիցյան, Ջանգեզուրի հայերը, էջ 200, 285, աղ. CXVIII:

²¹³ Ֆալատիպ կերտվածքների ծխական գործառույթները մանրամասն կդիտարկվեն ստորև՝ ֆալատիպ կոթողային հուշարձանների համատեքստում:

²¹⁴ Ի. Ղարիբյան, Հ. Միմոնյան, Ա. Գևորգյան, Է. Քամալյան, Է. Այվազյան, Գ. Խաչատրյան, նշվ. աշխ.:

ցանխատ բլրի հարավահայաց լանջին դուրս ցցվող մեծ ժայռաբեկորը մշակված է որպես զոհասեղան, կամ, հնարավոր է, «գրադաշտական» կրակարան: Մեղանատիպ հարթակին փորված են երկու մեծ փոսորակներ՝ առվակներով, իսկ ժայռաբեկորը մշակված է իբրև երկաստիճան պատվանդան (ամրոցի վերգետնյա նյութը՝ աքեմենյան, անտիկ, վաղ միջնադարյան)²¹⁵: Ժայռաբեկորի վրա է տեղադրված Խնածախի Վանքի ձոր տեղամասում, բնական ամֆիթատրոնի կենտրոնական հատվածում գտնվող զոհասեղանը: Այն իրենից ներկայացնում է եռանկյուն հատակագծով, 2 մ բարձրությամբ ժայռաբեկոր, որի գագաթի կենտրոնական հատվածում առկա է բաժակատիպ փորվածք²¹⁶:

Այս տիպի զոհասեղաններն ունեն իրենց ազգագրական զուգահեռները. մասնավորապես, Խ. Սամուելյանը հիշատակում է Վայոց Ձորի տարածաշրջանի Խաչիկ գյուղից ոչ հեռու գտնվող «Հագարափրկի» կոչված սալ քարը, որի մոտ դեռևս XX դ. սկզբին կատարվում էին զոհաբերություններ²¹⁷:

Հիշյալ հարթակների ծիսական հարդարանքի կարևորագույն բաղադրատարրերից են *թասաձն փորվածքներով քարերը*, որոնց մասին առանձին անդրադարձներ են կատարվել հնագիտական և ազգագրական գրականության էջերում²¹⁸: Այս տիպի բազմաթիվ կերտվածքների հետազոտությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում (դրանք հանդիպում են ժայռապատկերներին կից, վիշապաքարերի, մենհիրների, դոլմենների վրա, դամբարանների պատերին կամ շրջապատող ժայռերին՝ հիմնականում Արևմտյան Եվրոպայում և Միջերկրականում, բայց նաև Արևելյան Եվրոպայում²¹⁹, Ուրալում²²⁰ և Կովկասում²²¹՝ հայտնի են

²¹⁵ Հուշարձանը ուսումնասիրվել է 2014 թ. ԼՂՀ Զբոսաշրջության գործակալության արշավախմբի կողմից (Գ. Սարգսյան):

²¹⁶ Ի. Ղարիբյան, Հ. Միմոնյան, Ա. Գևուկյան, Է. Քամալյան, Է. Այվազյան, Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 132: Պաշտամունքային հարթակ է հանդիսանում արևալին զարդանախշով զարդարված Գորուստանի N 93 քարը, որի հարևանությամբ կա նաև օջախ: Այս վայրից հայտնաբերված վերգետնյա նյութը բնորոշ է պղնձի դարին և վաղ բրոնզին (Մ. Փարաձեյա, նշվ. աշխ., էջ 223):

²¹⁷ Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, էջ 314-315:

²¹⁸ Այսպես, պաշտման հատուկ վայրերի մասին խոսելիս, Ս. Լիսիցյանը և Ե. Բայբուրթյանը գրում են. «Պատահում են և «թասավոր» կամ զոհաբերության քարեր, որոնց վրա՝ երբեմն անկարգ ու անսխտեմ, երբեմն էլ երկրաչափական ֆիգուրների նման դասավորված են լինում փոսիկներ, կանոնավոր կլոր՝ հինգ և պակաս սանտիմետր տրամագիծ ունեցող փոսիկներ: Կան գյուղեր, որտեղ բնակիչները թասավոր քարերը մինչև այսօր էլ պաշտում են՝ փորագրելով նրանց վրա խաչեր» (Ս. Լիսիցյան, Ե. Բայբուրթյան, Հնությունների ցուցակագրությունն ու նկարագրությունը, Երևան, 1928, էջ 36-37; ազգագրական տեսանկյունից հմմտ. նաև Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 290-298): Թ. Թորամանյանը գրում է, որ բոլորակ փոսիկներ ի հայտ են գալիս ժայռերի կամ առանձին քարերի վրա (Մեծամոր, Մարմաշեն, Աղց), «որոնք մի նվիրական ձև էին նախաքրիստոնեական մարդկանց համար՝ ըստ իրենց պաշտամունքի» (Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն 1, Երևան, 1942, էջ 38-39, 40): Թորամանյանն այս համատեքստում է հիշատակում նաև Թիքմաթաշ (= Հայսերի Օբա 1) վիշապաքարի բոլորակ փոսիկները (Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն 2, Երևան, 1948, էջ 229): Վիշապաքարերի «թասանման խորությունները» նկատել է նաև Է. Խանգադյանը, որոնք նրա կողմից համեմատվում են կուր-արաքսյան մշակույթի խեցեղենի զարդարվեստին բնորոշ շրջանաձև/ձվաձև փոսիկների հետ (Է. Խանգադյան, Գառնի IV, ՀՊՀ 12, Երևան, 1969, էջ 157; կուր-արաքսյան համատեքստի, մասնավորապես օջախների և անոթների փոսիկների համար հմմտ. նաև Է. Ա. Байбуртян, Последовательность развития древнейших культур Армении на основе археологического материала, Ереван, 2011, с. 54; Գ. Исмаилов, Раннебронзовая культура Азербайджана (автореферат диссертации докт. ист. наук), Тбилиси, 1983, с. 15; Ա. Գևուկյան, Շենգավիթյան մշակույթի օջախները էջ 219): Թասանման փոսիկների առկայությունը ժայռափոր սրբատեղիներում (հատկապես Արագածի հարավային լանջերի) անդրադարձել է Մ. Հովհաննիսյանը, որն այս համատեքստում հիշատակում է նաև վիշապաքարերը (Մ. Փ. Հովհաննիսյան, Ոսկեհատի սրբատեղին, ԼՀԳ 2, 2001, էջ 147; Ագարակի համար մանրամասն տես Ք. Avetisyan, Recently Found Archaeological Sites of Armenia (Agarak), Aramazd III/2, 2008, p. 39-50): Բոլորակ փոսիկները պետք է դիտարկել որպես «մեզալիթյան մշակույթի» մի մաս և պատահական չէ, որ դրանք ի հայտ են գալիս նաև կիկլոպյան ամրոցներին (Օրդարլու, Զագալու, Սառնաղբյուր, Հոռու) առնչվող սալքարերի միջավայրում (Բ. Բ. Пиотровский, Л. Т. Гюзальян, Крепости Армении доурартского и урартского времени, Проблемы истории материальной культуры 5-6, 1933, с. 55-56):

²¹⁹ Ռուսաստանում նմանատիպ քարերի, ինչպես նաև սմբակներ, ոսնահետքեր հիշեցնող փորվածքների մասին հիշատակում է Ն. Կարամզինը (Н. М. Карамзин, История государства Российского, кн. 1, т. 1, Москва, 1988, с. 38-39):

որպես *cup mark* կամ *cup and ring mark* և հիմնականում թվագրվում են նեոլիթ-վաղ երկաթ դարաշրջաններով, սակայն կարող են հանդիպել նաև ավելի վաղ²²² և ուշ²²³ թույլ են տալիս կատարել որոշ ընդհանրացումներ ինչպես փորվածքների տիպաբանության, այնպես էլ դրանց ծիսա-պաշտամունքային նշանակության առումով:

Ընդհանուր առմամբ նմանատիպ փորվածքները լինում են թասանման (համեմատաբար մեծ տրամագծով և նեղացող պատերով), բաժականման (զլանաձև հորինվածքով) և փոքր տրամագծով (ավելի շատ խուլ անցքերի նմանվող): Այսպիսի թասատիպ փորվածքներ, ավազաններով և առվակներով ձևավորված ժայռեր հայտնի են ծիսական համալիրների, դամբարանադաշտերի տարածքում կամ առանձին: Առանձին են օր.՝ Ծիծեռնավանքի, Մելիքին դուզի, Զանգերի, Սելիմի, Խնածախի Վանքի ձորի, Ճանկաթաղի (նկ. 3), Էջմիածնի Սբ. Գայանե եկեղեցու տարածքի, Բջնիի քարաբեկորները²²⁴: Ե. Լալայանը վկայում է նման քարի մասին Սիսիանի Կարմիր Վանքի (Թանահատի) մոտ գտնվող գերեզմանոցի տապանաքարերից մեկի վրա: Եվս մեկ նմանատիպ քար հայտնաբերվել է ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Շրվական գյուղում²²⁵: Նշված քարաբեկորների տեղաշարժված բնույթը թույլ չի տալիս ճշգրտորեն որոշել, արդյոք դրանք տեղադրված են եղել հորիզոնական թե՛ ուղղահայաց²²⁶: Համալիրների տարածքում են օր.՝ Բաշարաջրի (նկ. 4), Շամիրամի, Ագարակի, Գյուլիբուլաղի, Կաքավաձորի, Ներքին Բազմաբերդի, Շիրակավանի փորվածքները²²⁷, որոնք զբաղեցնում են մեծ տարածքներ և մերձենում հարթ մակերեսի մշակման միանման սկզբունքով²²⁸: Դամբարանային կառույցների հետ են առնչվում Բերդիկի պաշտամունքային կառույց-դամբարանադաշտը, Գյաուր Դամերի դոլմենային դամբարանադաշտի փորվածքով քարերը:

Հիշյալ քարերի գործառության մեկնաբանությունները խիստ տարբեր են, քանի որ փորվածքների ձևերը շատ բազմազան են: Դրանք հիմնականում կապվում են կնոջ և ջրի²²⁹,

²²⁰ **Т. М. Потемкина**, Мегалитические сооружения Урала: Структура сакрального пространства, Вестник археологии, антропологии и этнографии 2, 2011, с. 13.

²²¹ **И. Бгажонов**, Сакральный смысл чашевидных знаков, Вестник Института гуманитарных исследований Кабардино-Балкарского центра РАН 1, Нальчик, 2013, с. 7; **И. Марков, Д. Марков**, Эпоха мегалита на территории Сочинского национального парка, Самарская Лука: проблемы региональной и глобальной экологии 22/4, Москва, 2013, с. 167.

²²² **А. Р. Демирханян, Б. А. Фролов**, Первобытная символика вертикали, ИФЖ 3, 1985, с. 70.

²²³ **Б. Б. Пиотровский**, Археология Закавказья, Ленинград, 1949, с. 27.

²²⁴ **Ռ. Թորոսյան**, Էջմիածնի հնագիտական հուշարձանները, զեկուցում՝ կարդացված 1980 թ. Զվարթնոցի պեղումների 80-ամյակին նվիրված սեմինարին, էջ 8 (Զեկուցման ձեռագիրը և մեքենագիր տարբերակը, ըստ որի կատարված է մեջբերումը, պահվում են ԷՊԱԹ-ում); **Ի. Ղարիբյան, Հ. Հակոբյան, Ա. Գևորգի, Գ. Խաչատրյան, Տ. Վարթանեսյան**, Բջնի (պեղումների արդյունքներ), էջ 71-72; **Ի. Ղարիբյան, Հ. Միմոնյան, Ա. Գևորգի, Է. Քամայան, Է. Այվազյան, Գ. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 132:

²²⁵ Ելնելով Շրվականում հնագիտական համատեքստի բացակայությունից՝ դժվար է հստակ եզրակացություն կատարել այս քարի նշանակության մասին:

²²⁶ Վիշապաքարերի և եվրոպական կոթողների օրինակը վկայում է, որ դրանք կարող էին տեղադրված լինել նաև ուղղահայաց (օր. բաժական փորվածքներով են զարդարված Անապայի Պյատիխատկիի, Աբխազիայի Սոլոխ առվի, Եվպատորիայի N 2 դամբարանաբլուրից հայտնաբերված կոթողները (**А. Новичихин**, Плиты с чашевидными углублениями из района Анапы, Историко-археологический альманах Армавирского краеведческого музея, вып. 1, Москва-Армавир, 1995, с. 26):

²²⁷ **Գ. Սրեջյան, Ե. Ասատրյան**, նշվ. աշխ., էջ 206: Ե. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 28, 31-32; **Ռ. Թորոսյան, Օ. Խնկիկյան, Լ. Պետրոսյան**, Հին Շիրակավան, Երևան, 2002, էջ 71-73:

²²⁸ **П. Аветисян**, Предварительные результаты раскопок памятника Агарак, АЭФК, Св. Эчмиадзин, 2003, с. 54-55; **Հ. Հակոբյան, Ա. Գևորգի**, Դիտարկումներ, էջ 90:

²²⁹ **Ա. Գևորգի**, Շենգավթյան մշակույթի օջախները, էջ 219:

աստեղային երկնքի (Արեգակի և լուսատուների)²³⁰, ծիսական հեղումների (նախնիների պաշտամունքի համատեքստում)²³¹ հետ: Վերջին տեսակետին մոտ է այն վարկածը, ըստ որի անցքերով զարդարված քարերը արտացոլում են քարի ոգին²³²: Վերին Ավստրիայում նմանատիպ փորվածքներով քարերից մեկի մոտ գտնվել են զոհասեղանի, մարդկային կմախքի և զոհաբերված ցլի մնացորդներ²³³: Ակնհայտ է, որ ծիսապաշտամունքային գործողություններ իրականացնելու համար են ծառայել Պետերբուրգից հյուսիս՝ Սուխոդոլսկոյե լճի ափին հայտնաբերված բաժակատիպ փորվածքներով քարերը, ուր դրանք օղակված էին քարե պատնեշներով, ինչպես նաև՝ օրթոստատ դրված քարերով²³⁴: Ն. Շանշաշվիլին, վերլուծելով շենգավիթյան մշակույթի օջախների վրայի փոսիկները, գտնում է, որ դրանք կարող էին ծառայել կենաց ծառի մանրակերտի ամրացման համար²³⁵: Վերջապես այս փորվածքները կարող էին օգտագործվել ջրի կուտակման համար²³⁶, ինչն իր հաստատումն է գտնում տարբեր ազգագրական նյութերում. այսպես, ռուսական Հյուսիսում և Բելոռուսիայում նման փորվածքներում կուտակվող անձրևաջուրը համարվում էր «սրբազան»²³⁷: Մեկնաբանելով Թանահատի վանքի մոտ գտնված քարի մեջ փորված թասաձև փորվածքը՝ Ե. Լալայանը ենթադրում է, որ այն արված էր, որպեսզի թոչունները կարողանան ջուր խմել²³⁸: Մ. Ֆարաջևան, մեկնաբանելով Գոբուստանում՝ Քեշիկթաշի Ֆիրուզ II տեղամասի N 20 քարը, ինչպես նաև՝ Բույուկդաշ և Ջինգիրդաշ տեղամասերում գտնված բաժակատիպ փորվածք-



Նկ. 4. Բաշարաջուր, ժայռային հարթակ

²³⁰ Գ. Исмаилов, նշվ. աշխ., էջ 15; А. Новичихин, նշվ. աշխ., էջ 27-28; И. Бгажноков, նշվ. աշխ., էջ 9; Ե. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 31-32: Այս տեսակետը դեռևս XIX դարում հայտնել է հնագետ Պ. Պուտյատինը, վերլուծելով Տվերի մարզից գտնված փոսիկավոր քարը (Н. Кривцов, Н. Непомнящий, Доисторическая Европа, Москва, 2004, с. 231-232): Հմմտ. В. А. Гурко-Кряжин, Циклопические сооружения Закавказья, Новый Восток 15, 1926, с. 218՝ վիշապաքարերի համատեքստում:

²³¹ Е. В. Антонова, Первые святилища Армянского нагорья, Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей, Ереван, 1990, с. 55; А. Новичихин, նշվ. աշխ., էջ 26:

²³² И. Бгажноков, նշվ. աշխ., էջ 14:

²³³ Н. Широкова, նշվ. աշխ., էջ 104:

²³⁴ Н. Непомнящий, Н. Кривцов, նշվ. աշխ., էջ 234:

²³⁵ Н. Шаншавили, Происхождение и функции очажных подставок куро-араксской культуры, АЭФК, Св. Эчмиадзин, 2003, с. 59.

²³⁶ И. Бгажноков, նշվ. աշխ., էջ 9:

²³⁷ В. В. Седов, Восточные славяне в VII-XIII вв., Археология СССР, Москва, 1982, с. 264; Н. Непомнящий, Н. Кривцов, նշվ. աշխ., էջ 228:

²³⁸ Ե. Լալայան, Միսիան, էջ 130:

ները, ենթադրում է, որ դրանք կարող էին ընկալվել որպես կնոջ խորհրդանիշ, ծառայել զոհաբերությունների, ջուր հավաքելու կամ էլ ծիսական նպատակներով ներկեր պատրաստելու համար²³⁹: Եվրոպայում մինչև վերջին տասնամյակները այդ քարերը համարում էին «զոհաբերության քարեր» և փորվածքների մեջ ցորեն էին լցնում՝ այսպիսով վերջիններիս առնչելով պտղաբերության պաշտամունքի հետ²⁴⁰: Ռ. Թորոսյանը էջմիածնի Սբ. Գայանեի վանքի տարածքից հայտնաբերված բաժակատիպ քարերը համադրում է սրբազան ըմպելիք խառմայի պատրաստման համար նախատեսված սանդերի հետ²⁴¹:

Ելնելով վերոհիշյալից՝ կարելի է եզրակացնել, որ փոսիկավոր քարերի որևէ համընդհանուր մեկնաբանություն հնարավոր չէ. այն կախված է համապատասխան հուշարձանների տեղադրությունից, հնագիտական համատեքստից, փոսիկների ձևից և այլ բաղադրատարրերի հետ դրանց համատեղումից²⁴²:

Այս համատեքստում կարելի է դիտարկել նաև ժայռապատկերները և նրանց անմիջական միջավայրը, որոնք հանդիսանում են սրբազան լանդշաֆտի կարևոր բաղադրատարր և կարող են սահմանվել որպես *պատկերազգի հարթակներ*: Հիմնականում բարձր լեռնային հրաբխային ելուստներին գծագրված և կենցաղային ու առասպելական պատկերներով օժտված այս հուշարձանները խմբերով տեղադրված են լինում որոշակի հարթակների շուրջ, որոնք շատ հաճախ բնորոշվում են բաժակատիպ փորվածքներով ու շրջապատված լինում մեզալիթյան հուշարձաններով (կրովեխներ, մենհիրներ)՝ դրանով իսկ լրացնելով վերոհիշյալ սրբավայրերի ցանկը: Բացի այդ ժայռապատկերները կարող էին փորագրվել կրովեխներին և դամբարանների ծածկասալերին²⁴³: Պատմական Սյունիքը (և հատկապես Գեղամա, Սյունիքի և Վարդենիսի լեռները) հանդիսանում է Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերային արվեստի էպիկենտրոնը (նկ. 5-9, աղ. 6-12)²⁴⁴:

²³⁹ **М. Фараджева**, նշվ. աշխ., էջ 222-223; հմմտ. **С. Rüstamov, F. Muradova**, Qobustan, Baki, 2008, s. 51, 217.

²⁴⁰ **Н. Широкова**, նշվ. աշխ., էջ 104-105:

²⁴¹ **Ռ. Թորոսյան**, Գայանե (Իրան, Պաղեստին), օրագրային գրառումներ, ԷՊԱԹ՝ Ռ. Թորոսյանի ֆոնդ, հմմտ.՝ **М. А. Дандамаев**, Новые данные о религии Персии на рубеже VI-V вв. до н. э., ВДИ 2, 1974, с. 20.

²⁴² Այսպես, Մեծամորի համապատասխան համալիրները կապում են և՛ աստեղային երկնքի պատկերների (Փոքր բլրի կերտվածքները), և՛ ջրի պաշտամունքի (Մեծ Բլուր), և՛ կրակարանների (Մեծ բլրի կերտվածքների երկրորդ խումբ) հետ (**Է. Խանգադյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան**, Մեծամոր, Երևան, 1973, էջ 142-165): Փորվածքներով քարերը որպես կրակարան էին օգտագործվում նաև Պասարգադայում (**М. Бойс**, Зороастрийцы, Вера и обычаи, Москва, 1988, с. 64):

²⁴³ Այս առնչությամբ ուշագրավ են Ապարանի դամբարանադաշտում, դամբարանի կրովեխներին և ծածկասալին փորագրված նշանագրերը (**Ֆ. Մուրադյան**, Նորահայտ նշանագրեր Ապարանի շրջանից, ՀԱՀՆ էջ 103-105):

²⁴⁴ **Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Մաֆյան**, Սյունիքի ժայռապատկերները; **Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Բարայեյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները; **Հ. Ա. Մարտիրոսյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները: Նոր հետազոտությունների համար հմմտ. **А. Khechoyan**, The Rock Art of the Mt. Aragats System, Rock Art in the Frame of the Cultural Heritage of Humankind, XXII Valcamonica Symposium, Capo di Ponte, 2007, 247-252; **F. Knoll, H. Meller, B. Figur, G. Knoche, T. Schunke, V. Dresely, P. Avetisyan, T. Koiki, J. Lipták, A. Poppe**, Die Felsbilder im Hochland von Syunik, Archäologie in Armenien II, Halle, 2013, 209-234: Արևմտյան Հայաստանի համար հմմտ. **М. Uyanik**, Petroglyphs of South-Eastern Anatolia, Graz, 1974:

Ռ. Թորոսյանի լուսանկարներում Պայտասար/Նալթափայի ժայռապատկերներն են Գեղամա լեռներում (Ռ. Թորոսյանի լուսանկարների արխիվ, ԷՊԱԹ, Ռ. Թորոսյանի ֆոնդ)՝ Հայաստանում հայտնաբերված առաջին ժայռապատկերների խմբերից մեկը, որ ուսումնասիրել է 1913 թ. Լ. Լիսիցյանը, ապա 1940-ական թթ. երկրաբան Ս. Դեմյոխինը, իսկ 1964-1965 թթ. այդ նույն օրինակները պատճենել է Ս. Մարդարյանը: Մեծ Պայտասարը Հայաստանում թերևս ամենահին խումբն է, որտեղ Ռ. Թորոսյանը հայտնաբերել է վանակատե մեծ ու փոքր շեղերից պատրաստած դանականման և այլ գործիքներ, որոնք զուգահեռներ ունեն նորքարեդարյան և պղնձեքարեդարյան համալիրներում, օգտագործվել են որպես զոհաբերության գործիքներ և թողնվել տեղում: Մեծ և Փոքր Պայտասարում կան նաև վաղ, միջին և ուշ բրոնզի, ինչպես նաև երկաթի դարի ժայռապատկերներ: Այստեղ արվել են բազմաթիվ հորատումներ, որոնք որևէ թվագրվող նյութ չեն տվել (հայտնաբերվել են միայն քարե մուրճիկներ, որոնցով պատկերներն են փորագրվել) (**Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Բարայեյան**, նշվ. աշխ., էջ 7, 22-23; **Հ. Ա. Մարտիրոսյան**, նշվ. աշխ., էջ 17-18, աղ. V): Փոքր Պայտասարի մոտ հիշվում են դամբարաններ (**Հ. Ա. Մարտիրոսյան**, Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, ՊԲՀ 3, 1969, էջ 193):



Նկ. 5. Պայտասար, ժայռապատկերներ, ԷՊԱԹ՝ Ռ. Թորոսյանի ֆոնդ




Նկ. 6. Պայտասար, ժայռապատկերներ, ԷՊԱԹ՝ Ռ. Թորոսյանի ֆոնդ



Նկ. 7. Պայտասար, ժայռապատկերներ, ԷՊԱԹ՝ Ռ. Թորոսյանի ֆոնդ



Նկ. 8. Պայտասար, ժայռապատկերներ, ԷՊԱԹ՝ Ռ. Թորոսյանի ֆոնդ



*Նկ. 9. Պայտասար, Հարություն Մարտիրոսյանը ժայռապատկերների հետազոտության ընթացքում,
ԷՊԱԹ՝ Ռ. Թորոսյանի ֆոնդ*

2. Կոթողային հուշարձաններ

Սյունիքի կոթողային հուշարձանները պայմանականորեն կարելի է բաժանել երեք ենթախմբի, որոնք ունեն ձևաբանական և պատկերազրական տարբերություններ. քանդակներ և քանդակազարդ քարեր (սեղանաձև, ուղղանկյուն, գլանաձև, գմբեթաձև, խաչաձև՝ մարդակերպությամբ և ֆալիկ հատկանիշներով, ավելի քիչ՝ կենդանակերպությամբ բնորոշվող կոթողներ), վիշապաքարեր (քառակող՝ դիմային հատվածում ցլի գլխի և վար ընկած ոտքերի պատկերով կամ ձկան տեսքով քանդակված, կամ նախորդ երկուսի հատկանիշները կրող կոթողներ, որոնք հանդես են գալիս յուրահատուկ միջավայրում) և մենհիրներ (մարդու կողմից բնական քարաբեկորի նվազագույն մշակմամբ տարբեր մակարդակներով կերտված կանգուն մենաքարեր): Տեխնիկական ներգործման և մշակման տեսանկյունից դրանք ենթարկվել են տարբեր ձևերի հարդարման, կրել որոշակի փորվածքներ (տեքստ. աղ. 4):

Աղյուսակ 4. Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի արբազան օբյեկտների դասակարգումն՝ ըստ տեխնիկական ներգործման ձևերի

	Տեխնիկական ներգործման ձևը	Հուշարձանները
Հարդարում	1. փորագրություն	Ժայռապատկերներ (Ուտասար՝ Ջանգեզուր, Գեղամա լեռներ՝ Գեղարքունիք, Ալլիճ՝ Քարվաճառ), Կարճևան (Ֆալուսի փորագրությամբ ժայռ) (Ջանգեզուր), Սելիմ N 2 (փորագիր ակոս կոթողի վերնամասում), Լճաշեն (Ֆալուս՝ ՀՊՊԹ)
	2. բարձրաքանդակ և հարթաքանդակ	Շաղատ (քանդակ), Բագարխանա (կուռք, հարթաքանդակ կենտրոնական հատվածում), Խնածախ (խաչքարի խութ, օձազարդ (?) քար), Հարժիս (պատահական գտածո, մարդակերպ քանդակ, ԷՊԱԹ լուսանկար), Հարժիս N 14 (համակենտրոն շրջաններ մենհիրի վրա)
	3. ծավալային քանդակ	Արվական (կուռքեր N 1 դամբարանից, ունեն փորագիր, հարթաքանդակ և բարձրաքանդակ տարրեր), Ղալաջիկ 2 (կուռք), Կոռնիձոր (քանդակ), Բագարխանա (քանդակ), Հարժիս (քանդակ) (ՀՊՊԹ), Հարժիս (քանդակ) (ԳԵԹ), (Ջանգեզուր), Ծովագյուղ (քանդակ), Լճաշեն (Ֆալուս), Պատաշար (Ֆալուս), Ծովինար (Ֆալուս) (Գեղարքունիք)
Փորվածքներ	1. բաժականման և թասանման փորվածքներ	Թանահատ (գերեզմանաքարի վերածված փորվածքով քար, Խնածախ/Վանքի ձոր (փորվածքներով քար ժայռաբեկորի մոտ) (Ջանգեզուր), Սելիմ (քար ժայռային ելուստի մոտ լուսանկարը՝ ԵՊՀ հնագիտ. լաբորատորիա) (Գեղարքունիք-Վայոց Ձոր), Շրվական (փորվածքով քար), Ղալաջիկ 2 (կուռք) (Քաշաթաղ)
	2. խուլ անցքեր	Բերդիկ (պաշտամունքային համալիր-դամբարանադաշտ, Վարդուտ (հարթակի վրա գտնված իր), Գյաուր Դամեր (դոլմենների սալեր) (Քաշաթաղ)
	3. միջանցիկ անցքեր	Ջորաց քարեր (մենհիրներ) (Ջանգեզուր), Ուղեձոր (քարաբեկոր), Սոյլան (խաչքարացած մենհիր), Ռինդ 2 (Վայոց Ձոր), Որոտան (մենհիրներ) (Քաշաթաղ)

Քանդակներ և քանդակազարդ քարեր. կոթողային հուշարձանների այս ենթատիպը բաժանվում է երեք տեսակի.

Մարդակերպ. մարդակերպ քանդակները կարելի է բաժանել մի քանի խմբի: Առաջին խմբում միավորվում են գլխաքանդակները: Հայաստանյան հուշարձաններում բազմաթիվ գլխաքանդակների գտածոները թույլ են տվել Հ. Մարտիրոսյանին առանձնացնել երկու

խումբ. սեղանաձև գլուխներ և այլ տիպի գլուխներ՝ նշմարվող վզով²⁴⁵: Խորացնելով Հ. Մարտիրոսյանի տիպաբանությունը՝ Բ. Առաքելյանը առանձնացնում է հինգ խումբ. կոնաձև՝ վերին և հարթ ստորին հատվածներով, հարթ՝ վերին և ստորին հատվածներով, նշմարվող վզով գլխաքանդակներ, փոքրածավալ գլուխներ և դեմքի վերին և ստորին հատվածների բացակայությամբ գլուխներ: Առաջին չորս խմբերը, ըստ Բ. Առաքելյանի, բնորոշ են երկաթի դարին, իսկ հինգերորդը՝ անտիկ շրջանին²⁴⁶:

Սյունիքի համալիրներում ևս պահպանվել են մարդակերպ կոթողներ: Թեպետ հայտնաբերված օրինակներն այդքան էլ շատ չեն, սակայն կերտման առանձնահատկությունները թույլ են տալիս գատել մի քանի խումբ: Բ. Առաքելյանի և Հ. Մարտիրոսյանի առաջարկած տիպաբանության համաձայն կոթողների առաջին խմբին կարելի է դասել Հարժիսի կոթողը (ՀՊՊԹ), ինչպես նաև ԿԵԹ-ում պահպանվող գլխաքանդակը: Աչքերը նշմարվում են փոսիկներով, իսկ քիթը՝ ռելիեֆ է²⁴⁷: Այս խմբին է մոտենում Կարմիր Բլուրից հայտնաբերված գլխաքանդակը, այն բացառությամբ, որ այստեղ ռելիեֆ եղանակով նշվում է նաև ճակատը²⁴⁸: Դժվար չէ նկատել, որ և Հարժիսի (ՀՊՊԹ), և Կապանում պահպանվող օրինակները որոշ չափով (իրանից գլխիկ անցում) նման են ֆալիկ կոթողներին: Թերևս կարելի է ենթադրել, որ այս քանդակները հանդիսանում են ֆալի պաշտամունքի զարգացման ուղղություններից մեկը, կապված ֆալոսի անտրոպամորֆիզացիայի հետ, ինչն իր հետագա զարգացմամբ հանգեցնում է մարդակերպ քանդակում ֆալիկ տարրերի պահպանմանը և խորհրդանշում է իր մեջ ֆալիկ պաշտամունքի տարրերը միավորող մարդակերպ աստվածության հանդես գալը: Դա կապվում էր առաջնորդի դերի բարձրացման հետ, ով աստվածացվելով արդեն ընկալվում էր որպես ժողովրդի հայր և երկրի բարգավաճման գլխավոր գրավական²⁴⁹: Պետք է համաձայնվել Մ. Ստեբլին-Կամենսկու այն տեսակետին, թե աստվածացումը ենթադրում է տվյալ էակի սեռական գերգործությունը²⁵⁰:

ՀՊՊԹ-ում պահպանվող Հարժիսյան ևս մեկ կուռք (225x37x35 սմ) տարբերվում է իր կերտվածքով: Մարդկային դեմքը պատկերված է գլանաձև ելուստի վրա, որը կերտված է գլանաձև նեղացող կոթողի վերին հատվածում (նկ. 10): Այս կուռքը իր դիմային առանձնահատկություններով (հարթ, մասամբ գլանաձևությամբ բնորոշվող դեմք) նմանվում է Այգեշատից հայտնաբերված կուռքերին (N 17 դամբարան)²⁵¹:

Գլխաքանդակների թվին են պատկանում նաև մի շարք այլ կոթողներ: Մարդակերպ կուռք է հայտնաբերվել Հարժիս-Դարաբաս



Նկ. 10. Հարժիս, այժմ ՀՊՊԹ-ում, մարդակերպ արձան

²⁴⁵ **Ա. Ա. Мартиросян**, Город Тейшебаини, Ереван, 1961, с. 82-84.

²⁴⁶ **Բ. Առաքելյան**, Քանդակագործությունը հին Հայաստանում, ՊԲՀ 1, 1969, էջ 43:

²⁴⁷ **С. Есаян**, Скульптура, с. 30-31, таб. 41/3, 6.

²⁴⁸ **С. Есаян**, Скульптура, с. 30-31, таб. 41/1.

²⁴⁹ **Ս. Գնունի**, Հայկական լեռնաշխարհի ֆալիկ հուշարձանների տիպերն ու ծիսական գործառույթները, ԲԵՀ 2, 2004, էջ 129-130:

²⁵⁰ **М. И. Стеблин-Каменский**, Миф, Москва, 1977, с. 79-80: Այդպիսի սեռական գերգործությունը բնորոշ է Ջևսին (**М. И. Стеблин-Каменский**, նշվ. աշխ.), Օդինին (Старшая Эдда, Песнь о Харбарде, 18, 20, 30), Ինդրային (**Э. Н. Темкин**, **В. Г. Эрман**, Мифы древней Индии, Москва, 1989, էջ 80):

²⁵¹ **Ռ. Թորոսյան**, Օրագիր N 1. Էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղի դամբարանադաշտ (1971 թ.): **Ռ. Թորոսյան**, 1976-1983 թթ. օրագիր, 28.04.1983 թ. գրառում, ԷՊԱԹ, Ռ. Թորոսյանի ֆոնդ, նյութերը պահվում են ԷՊԱԹ-ում:

հատվածից²⁵²: Այն իրենից ներկայացնում է խիստ ոճավորված պատկերով ուղղանկյուն քարաբեկոր՝ զարդարված ռելիեֆ ժապավեններով: Լիովին այլ տեսք ունի Շաղատից հայտնաբերված մարդու արձանը. այստեղ պատկերը կատարված է խիստ բնապաշտական ոճով՝ հստակ պատկերված են նշաձև աչքերը և ուղիղ դեպի ներքև լայնացող քիթը²⁵³: Գլխի վերին հատվածը և ստորին ծնոտը բացակայում են: Արձանի ետևի կողմը զոգավոր է, ինչը խոսում է այն մասին, որ կուռքը ագուցված է եղել: Շաղատի կուռքը որոշ զուգահեռներ ունի Կարմիր Բլուրի դիմաքանդակի հետ՝ տարբերվելով նրանից միայն ճակատի և աչքերի կերտմամբ, ինչը և հուշում է նրա թվագրության մասին Ք.ա. I հազ. կեսով²⁵⁴:

Գլխաքանդակների շարքում առանձնակի տեղ է զբաղեցնում Հարժիսի մարդակերպ կուռքերից մեկը, որը հնգադեմ է: Գլխի վերևի մասը հարթ է, վերհոնքային թմբիկը և քիթը կերտված են ուռուցիկ գծով: Աչքերը կատարված են փորագիր անցքերով, իսկ բերանը՝ ակոսով: Ի տարբերություն վերոնշյալ հուշարձանների՝ այս կոթողը պատկանում է ուշ բրոնզի դարաշրջանին: Ձևաբանական տարբերություններից հարկ է նշել հետևյալ առանձնահատկությունները. կուռքերի դեմքերը փաստորեն ներկայացնում են գլաններ, դեմքը պատկերելիս համադրվում է փորագրման և հարթաքանդակի տեխնիկան՝ ընդգծելով վերհոնքային թմբիկը և ճակատը: Դա-



Նկ. 11. Ղալաջիկ,
մարդակերպությամբ բնորոշվող արձան

տելով կուռքի բարձրությունից, պետք է ենթադրել, որ այն տեղադրված է եղել ինչ-որ կառույցի կենտրոնում: Հարժիսի հնգադեմ արձանն իրեն մոտ զուգահեռներ ունի Նավուրում²⁵⁵:

Մարդակերպ քանդակների հաջորդ խումբը ներկայացնում են ամբողջական մարմնով ծավալային պատկերված արձանները: Այս խմբում նախ և առաջ պետք է հիշատակել ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Ղալաջիկ 2 դամբարանադաշտից հայտնաբերված կուռքը (նկ. 11), որի գլուխը նշված է ռելիեֆ մի փոքր թեք շրջանակով, աչքերը և բերանը փորագիր են, իսկ քիթը՝ ռելիեֆ: Իրանն իջնում է ոչ թե ուղիղ, այլ որոշակի թեքությամբ, ինչը, հավանաբար, պետք է խորհրդանշի նստած դիրքը: Արձանի ստորին հատվածում փոսիկ է, ինչը պետք է նշանակի սեռական (իգական) պատկանելությունը: Արձանն իր որոշ առանձնահատկություններով (նստած դիրք, դեմքի թեքություն) նմանվում է Մեծամորից հայտնաբերված արձանիկին²⁵⁶: Դիմագծային առանձնահատկություններով այս արձանն իր զուգահեռներն ունի Հայաստանի ուշ

²⁵² Լուսանկարը հանձնվել է ԷՊԱԹ:

²⁵³ С. А. Есаян, Скульптура, с. 55, таб. 43/2.

²⁵⁴ Բ. Առաքելյան, Քանդակագործություն, էջ 49:

²⁵⁵ С. А. Есаян, Скульптура, таб. 21/1, 2.

²⁵⁶ Հմմտ. С. А. Есаян, Скульптура, с. 51, 69, таб. 23; Է. Խանգադյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1979, էջ 138-139, նկ. 142, 143:

բրոնզեդարյան քանդակում (Նավուր)²⁵⁷: Հաշվի առնելով դիմագծային և կերտման առանձնահատկությունները՝ նշված արձանը կարելի է դասել Բ. Առաքելյանի տիպաբանության ավանդական-պայմանական ոճի հուշարձանների առաջին խմբին²⁵⁸: Կուռքի շուրջը վկայագրված են կիկլոպյան եղանակով շարված, հնարավոր է՝ ծիսական կառույցի հետքեր:

Հաջորդ կոթողը գտնվում է Գորիսի տարածաշրջանի Կոռնիձոր գյուղում Թովլարի խութ տեղամասում: Այն ունի գլանաձև իրան, որի վերին հատվածում գտնվում են երկու կողմերը պարզած ձեռքերը: Վիզը հատուկ չի նշված, սակայն նշմարվում է՝ ձեռքերի և գլխի ուրվագծերը համադրելիս: Գլխամասը կոպտատաշ է, հնգանկյուն, իսկ երեսը նշված է գլանով: Այս կոթողի ուղղակի զուգահեռները բացակայում են, սակայն ձեռքերի դիրքը, գլանաձև իրանը, հարթ դեմքը մոտեցնում են այս գտնված կոթողը Կապանից և Կերենի N 64 դամբարանից (աղ. 13) հայտնի օրինակներին²⁵⁹: Արձանի ձեռքին, ճակատին և վզին կետային եղանակով կատարված զարդանախշ կա: Ճակատը նշված է ռելիեֆ, դեմքը հարթ է, աչքերը և բերանն արված են խոր անցքերով ու ձեղքով: Կրծքին ունի մանյակ, ուսին՝ լանջագոտի, կոնքի հատվածում՝ գոտի: Թեթևակի կամիթով նշված է ֆալը, քիչ վերև՝ եղնաձև զարդանախշ: Արձանիկի աջ ձեռքին գավաթ է: Իր ոճական առանձնահատկություններով նկարագրված արձանիկը դասվում է Բ. Առաքելյանի ավանդական-պայմանական ստեղծագործությունների թվին²⁶⁰: Նրա ամենամոտ նմուշը հայտնաբերվել է Կապան քաղաքից ոչ հեռու՝ Թեղուտ հնավայրում, և պահպանվում է Կապանի երկրագիտական թանգարանում (ԿԵԹ ի/հ 94, 1017): Նմանատիպ արձանիկ կա նաև Էրզրումի թանգարանում, սակայն այն, ի տարբերություն կերենյան օրինակի, պատկերված է ոչ թե մերկ, այլ հագուստով:

Երկրորդ կուռքը կոպտատաշ ուղղանկյուն քարաբեկոր է՝ խաչաձև պարզած ռուդիմենտար ելուստներով, որոնք նշում են կուռքի ձեռքերը: Գլխամասը փաստորեն բացակայում է և նշված է աննշան լայնացումով²⁶¹:

Կենդանակերպ. Կենդանակերպ կուռքերը համեմատաբար քիչ են հայտնաբերված ոչ միայն Սյունիքում, այլև Հայաստանում ընդհանրապես: Մյուս կողմից կենդանական թեման բավականաչափ լավ արտացոլված է մանր պլաստիկայի (ինչպես կավի, այնպես էլ բրոնզի) նմուշներում. մասնավորապես խոսքը գնում է երկու խմբի մասին. ա) մետաղական քանդակ, այդ թվում ծավալային քանդակ՝ հիմնականում շտանդարտներ և գավազանների գլխամասեր (Լճաշեն, Տոլորս, Լծեն, Անգեղակոթ, Սըզնակ)²⁶², կենդանակերպ կախիկներ և զարդեր (Լճաշեն, Խնածախ, Կապան-Շահումյան N 2 դամբարանի իջեցուկ թաղում)²⁶³, զենքի և սպառազինության կենդանակերպ տարրեր (Շիկահող, Լճաշեն, Գավառ)²⁶⁴, բ) կավակերտ, այդ թվում կենդանակերպ անոթներ (Արենի՝ ԵԵԹ հավաքածու (աղ. 14), Խնածախ, Շիկահող²⁶⁵, Կերեն

²⁵⁷ С. А. Есаян, Скульптура, таб. 22/1, 42/1.

²⁵⁸ Բ. Առաքելյան, Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, էջ 14:

²⁵⁹ Ա. Գևորգի, Կերենի «քրմական» դամբարանը, ԲԵՀ 3, 2006, էջ 215-216, նկ. 1:

²⁶⁰ Բ. Առաքելյան, Ակնարկներ, էջ 14-16:

²⁶¹ Իր կերտման առանձնահատկություններով աչքի է ընկնում Ծովագյուղից քիչ արևելք Շորժայի ճանապարհից հայտնաբերված կուռքը: Գտնվել են գլուխը, ոտքի սրունքը և մի թևը: Այստեղ, ի տարբերություն այլ օրինակների, դիմային հատվածը հարթ չէ, այլ կորացող: Գլխի վերին հատվածը գլխարկ է հիշեցնում, զարդարված եռանկյունաձև նախշով: Ռելիեֆ նշվում է ակնաշար: Կզակը մասիվ է: Հատկանշական է, որ մշակված է միայն կուռքի ձախ կողմը: Ոտքը պահպանված է ձկնից մինչև ոտնաթաթի հատվածը, իսկ ձեռքը հանդիսանում է ուսի շարունակությունը: Այն փաստը, որ կուռքը մշակված է միայն մեկ կողմից, հուշում է, որ այն ագուցված էր պատի մեջ կամ հենված էր դրան (Բ. Առաքելյան, Քանդակագործությունը, էջ 49-52; С. Есаян, Скульптура, с. 55, таб. 43/5:

²⁶² С. Есаян, Скульптура, с. 51-54, таб. 28-34; О. Хнкикян, Syuniq, ill. 9.

²⁶³ С. Есаян, Скульптура, с. 54, таб. 34; О. Хнкикян, Syuniq, таб. XC.


²⁶⁴ С. Есаян, Скульптура, с. 54; О. Хнкикян, Syuniq, таб. LXXXIX/8.

²⁶⁵ О. Хнкикян, Syuniq, ill. 14, таб. LXXXIII, LXXXVI/38.

դամբարան N 64)²⁶⁶, անոթների կենդանակերպ տարրեր (Կերեն՝ ՔԵԹ 162, 178, 180/21), Շիկահող, Սիսիան, Մոզ (ԵԵԹ 1287/3679)²⁶⁷:

Ինչ վերաբերում է քարե ծավալուն քանդակներին, ապա դրանց քանակը խիստ սակավ է, իսկ մեր կողմից առաջարկվող մեկնաբանությունները՝ հետագա քննարկման արժանի:

Այս առումով նախ և առաջ պետք է նշել կոթողային հուշարձանների ընդհանուր համատեքստում առանձնահատուկ տեղ զբաղեցնող Խնածախ գյուղի Խաչքարի խութ տեղամասում գտնվող հուշարձանը (աղ. 34): Խաչքարի ետևի հատվածում առկա է գոռելիեֆ պատկեր, որը նեղանում է դեպի քարի գագաթը²⁶⁸: Ե. Լալայանը նկարագրելով այս խաչքարը՝ գոռելիեֆը դիտարկում է ազգագրական տեսանկյունից²⁶⁹: Այն, որ միջնադարյան քանդակում զուգահեռները բացակայում են, ենթադրել է տալիս, որ խաչքարն ավելի վաղ կոթողի երկրորդական օգտագործման արդյունք է²⁷⁰:



Նկ. 12. Արվական, կենդանակերպությամբ (?) բնորոշվող արձանիկներ

²⁶⁶ Ա. Գևորգյան, Կերենի «քրմական» դամբարանը, էջ 215-216:

²⁶⁷ Օ. Xnkikyan, Syuniq, ill. 14, tab.. XLV/18, LXXV/19.

²⁶⁸ Ի. Ղարիբջան, Հ. Սիմոնյան, Ա. Գևորգյան, Է. Քամայան, Է. Այվազյան, Գ. Խաչատրյան, Սյունիքյան նորահայտումներ, էջ 129-140: Հուշարձանը հետազոտվել է 2005 թ. Պատմա-մշակութային ժառանգության գ/հ կենտրոնի և ԵՊՀ համատեղ արշավախմբի կողմից (ղեկավար՝ Ի. Ղարիբջան, Հ. Սիմոնյան): Հուշարձանը հաստատագրվել է Է. Քամայանի, Է. Այվազյանի և Գ. Խաչատրյանի կողմից:

²⁶⁹ Ե. Լալայան, Զանգեզուր, էջ 37:

²⁷⁰ Դժվար է ասել այս կոթքի նախասկզբնական տեղադրության մասին: Մի կողմից երկրորդական օգտագործմամբ այն վերածվել է խաչքարի և գտնվում է միջնադարյան գերեզմանոցի տարածքում: Սակայն նույն վայրում գտնվում էր նաև Ք.ա. VII-VI դդ. դամբարանադաշտ. բացի այդ, հաշվի առնելով օձի պաշտամունքային գործառնությունները կապված անդրաշխարհի պաշտամունքի և թաղման ծեսի հետ, այս քարակոթողի տեղում գտնվելը կարելի է տրամաբանական համարել: Օձն անդրաշխարհի հետ էր կապվում հին հունական (*Անթոլոդոր*, *Μυθολογическая библиотека*, Москва, 2004, I, III, 2, I, IX, 11; *Эсхил*, *Жертва у гроба*, Москва, 1958, 520-540), Էտրուսկյան (Ա. *Наговицин*, նշվ. աշխ., էջ 108-109) դիցաբանությունում ռուսական ժողովրդական հեքիաթներում (Ա. *Н. Афанасьев*, *Народные русские сказки*, Москва, 1984-1985, 128): Գերմանական դիցաբանությունում օձը մահվերածնունդ միասնության խորհրդանիշներից է (*Saga o Вельсунгах*, XVIII):

Իրենց կերտվածքով առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Արվակների կուռքերը (նկ. 12): Վերջիններս օգտագործվել էին որպես շինաքար՝ դրվելով Ք.ա. XI-IX դդ. դամբարանի պատի մեջ: Առաջին քարե կուռքը պատրաստված է մոխրագույն բազալտից: Իրանը ներկայացնում է անկանոն պրիզմաձև մարմին՝ կլորացված անկյուններով: Արձանի ետևի մասն անմշակ է: Իրանի կենտրոնական հատվածում պատկերված է սեզմենտաձև զարդանախշ, իսկ ստորին հատվածում երեք ուղղահայաց ռելիեֆ գծեր: Իրանը զատվում է գլխիկից խորը ակոսով: Գլխիկը՝ վեցանիստ է: Հատկանշական է, որ նիստերից մեկի անկյունն ավելի փոփոխված է քան մյուսները: Քանդակի որոշ հատկանիշներ (գլխիկն ու իրանը բաժանող ակոսը, գլխիկի կառուցվածքը) մոտեցնում են այն ֆալիկ քանդակի օրինակներին: Այս կուռքը որոշակի նմանություններ ունի Քուչակ IV-ի N 11 դամբարանից հայտնաբերված կուռքի հետ: Վերջինս ինչպես և նկարագրված նմուշը մշակված էր միայն մեկ կողմից, ընդ որում մշակված կողմը զարդարված էր հորիզոնական ռելիեֆ գծերով: Երկու արձանների ընդհանուր գծերից է իրանն ու գլխիկը բաժանող ակոսը, սակայն ապարանյան արձանում գլխիկը գմբեթաձև է: Ինչպես և քաշաթաղյան օրինակը, Ապարանի կուռքը ևս օգտագործվել էր որպես շինաքար վաղ երկաթեդարյան դամբարանում²⁷¹: Որոշ հատկանիշներ չեն բացառում, որ արձանը պատկերում է որևէ գիշատիչ թռչունի ձագ: Մասնավորապես, վայրի թռչունի ձագերը հենվում են ճանկերի վրա, ունեն կարճ վիզ, իսկ կտուցի անկյունն ավելի փոփոխված է²⁷²: Գլխիկի ելուստների կառուցվածքը, միակողմանի մշակումը հուշում է, որ կուռքը ագուցված է եղել պատի մեջ: Հաջորդ կուռքը պատրաստված է վարդագույն կոնգլոմերատից: Այն ունի անկանոն եռանիստ պրիզմայի տեսք: Քանդակը կոպիտ մշակված է, իրանն ու գլխիկը զատվում են իրարից ոչ խորը ակոսով: Նշված արձանի գլխի հատվածի ձևը, ինչպես նաև վզի հատվածի գրեթե բացակայությունը, հիշեցնում են արջի քոթոթ²⁷³:

Ֆալիկ. ֆալիկ կոթողները բավականաչափ տարածված են բրոնզ-երկաթեդարյան հուշարձաններում: Դրանք կարելի է բաժանել երեք հիմնական բաղադրատարրի. գլխիկ, իրան և դրոց: Ըստ գլխիկի կառուցվածքի ֆալիկ կոթողները լինում են կիսակլոր և գմբեթաձև: Սակայն գմբեթաձև գլխիկով ֆալոսներում դիտարկվում է տարբեր թեքվածություն դեպի գլխամաս²⁷⁴: Այս առումով, առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Լճաշենի ֆալոսը, որի գլխիկի գագաթը հատած է²⁷⁵: Գլխիկների հաջորդ տիպը ներկայացված է կիսագնդաձև գլխիկով ֆալոսներով: Նմանատիպ կոթող Ե. Լալայանի կողմից հաստատագրված է Սրթբի ձորում²⁷⁶: Այն ունի իր գուգահեռները Աղդամում (աղ. 15), ԼՂՀ Մարտակերտի շրջանի Հայկաջուր վայրում, Տիգրանակերտ-Մարտակերտ ճանապարհին²⁷⁷: Կապանի Շահումյանի դամբարանադաշտի N 8 դամբարանի պատի մեջ որպես շինաքար ներդրված արձանում, Գյունեշ թեփեում՝ Բշխանագետի և Վարանդայի միջագետքում²⁷⁸, ինչպես նաև՝ Դվինի, Օշականի, Արթիկի կոթողներում²⁷⁹: Գլխիկը կարող էր զատվել իրանից վերջինիս հղկման ճանապարհով (Հայկաջուր): Ընդ որում, եթե Լճաշենի կոթողում անցումը իրականանում է կտրուկ, ապա Սրթբի ձորում՝

²⁷¹ **Ֆ. Սուրադյան**, Քուչակ IV հուշարձանախմբի պեղումները, Հուշարձան է, Երևան, 2011, էջ 97, աղ. 19 (13):

²⁷² Բնորոշումները՝ ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտի աշխատակից, կ.գ.դ. Մ. Ադամյանի:

²⁷³ Բնորոշումները՝ ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտի աշխատակից Ն. Մանասերյանի:

²⁷⁴ **Ա. Գևորգյան**, Հայկական լեռնաշխարհի ֆալիկ հուշարձանների տիպերն ու ծիսական գործառնությունները, էջ 123-124:

²⁷⁵ **С. Есаян**, Скульптура, с. 59, таб. 54/1.

²⁷⁶ **Ե. Լալայան**, Դամբարանների պեղումներ, նկ. 93:

²⁷⁷ Հուշարձանը հետազոտվել է 2010 թ. Գ. Սարգսյանի կողմից:

²⁷⁸ **Г. С. Исмаилов**, Древние поселения между речья Гуручая и Кенеделенчая, Баку, 1981, рис. 13.

²⁷⁹ **С. Есаян**, Скульптура, таб. 54; **Т. С. Хачатрян**, նշվ. աշխ., նկ. 81; **Կ. Գ. Ղաֆադարյան**, Դվին քաղաքը և դրա պեղումները, հ. 2, Երևան, 1982, էջ 115, նկ. 88:

սահուն²⁸⁰: Կապանում, Գյունեշ թեփեում գլխիկը իրանից գատվում է խոր ակոսով²⁸¹:

Իրանը կարող է լինել գլանաձև (Լճաշեն, Հայկաջուր), դեպի վերև և ներքև լայնացող (Մրթբի ձոր), ինչպես նաև պրիզմաձև (Քեթի), դեպի ներքև լայնացող (Կապան, Օշական, Կարմիր Բլուր) և անմշակ (Գյումրի)²⁸²: Հետաքրքիր է Գյունեշ թեփեի ֆալոսը, որը լայնանալով դեպի ներքև, հետո կտրուկ նեղանում է:

Ֆալիկ հուշարձանների հաջորդ բաղադրատարրը՝ դրոցն է: Լճաշենի, Պատաշարի և Ծովինարի դրոցներն ունեն ուղղանկյուն զուգահեռանիստի տեսք, իսկ Մրթբի ձորինը՝ գլանաձև են: Ամենայն հավանականությամբ դրոցի վրա էր ամրացված Գյունեշ թեփեի կուռքը²⁸³:

Ֆալիկ կոթողների զարդանախշումը խիստ բազմազան է: Մեծ տոկոս է կազմում արև զարդանախշը. պտտվող պարույր (Լճաշեն), եռանկյունիներ (Լճաշեն, Մրթբի ձոր). հետաքրքիր է, որ Լճաշենի ֆալոսի գլխիկի կողային հատվածում առկա են խոր ակոսներ, որոնք պետք է խորհրդանշեին արևի տարածվող շողերը²⁸⁴: Լճաշենի ֆալոսի իրանի կենտրոնական հատվածը զարդարված է խաչաձև նախշով՝ օղակված փորագիր շրջանակով: Իրանի կենտրոնական հատվածը, Կարմիր Բլուրի և Արևշատի ֆալոսները զարդարված են բարձրաքանդակ գոտիով²⁸⁵: Դատելով այն հանգամանքից, որ և՛ Լճաշենում, և՛ Կարմիր Բլուրում շրջանակների մեջ «արևը զարդանախշ է», կարելի է ենթադրել, որ այս շրջանակները կապված են արևի պաշտամունքի հետ, թեպետ հնարավոր է նաև դրանց պահպանիչ բնույթը²⁸⁶: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Գյունեշ թեփեի օրինակի ստորին հատվածում առկա թասաձև փորվածքը²⁸⁷: Այն որոշակիորեն համադրելի է ֆալիկ տեսք ունեցող Մեծամորի կուռքի հետ, որի ստորին մասում առկա անցքը Ս. Եսայանի կարծիքով կտեխի պատկեր է²⁸⁸: Այս առնչությամբ պետք է հիշատակել պատմական Խրամ քաղաքի տարածքից գտնված կավե ֆալոսի անցքով մանրակերտը²⁸⁹:

Դամբարանային համալիրներում ֆալոսները կարող են տեղադրված լինել տարբեր վայրերում: Հայաստանյան հուշարձաններում դրանք հաստատագրված են դամբարանաբլուրների վրա (Օշական), կրոնիկի մեջ (Օշական), ծածկասալերի վրա (Ծովինար) կամ թաղման խցում (Կարմիր Բլուր, Օշական, Արթիկ): Շամիրամի դամբարաններում ֆալոսը կանգնած էր թաղման խցի հատակին, իսկ նրա գլխիկը դուրս էր ցցվում խցից՝ ծածկասալերի կցակետում հատուկ բացված անցքով²⁹⁰:

Առանձին կանգնած ֆալիկ պատկերների հետ մեկտեղ Սյունիքում առկա են նաև ֆալոսների պատկերներ կոթողների վրա: Վերջիններիս թվին է պատկանում Կարճևանի «հարս ու փեսի» քարախումբը, որտեղ քարերից մեկի վրա պատկերված է ֆալոս: Ըստ Ե. Լալայանի՝ ֆալոսի պատկերման այս նմանակն իր զուգահեռներն ունի Ախալքալաքում և Վանում²⁹¹:

²⁸⁰ С. Есаян, Скульптура, с. 59, таб. 54/1; Ե. Լալայան, Դամբանների պեղումներ, նկ. 93:

²⁸¹ Г. С. Исмаилов, նշվ. աշխ., նկ. 13:

²⁸² Ա. Գևունի, նշվ. աշխ., էջ 124:

²⁸³ Ա. Գևունի, նույն տեղում; Ե. Լալայան, Նոր Բայազետ կամ Գեղարքունիք, նախապատմական շրջան, ԱՀ XIV, 1906, էջ 11; Ե. Լալայան, Նոր Բայազետ կամ Գեղարքունիք, նախապատմական շրջան, ԱՀ XV, 1907, էջ 175:

²⁸⁴ С. Есаян, Скульптура, с. 59, таб. 54/1; Ե. Լալայան, Դամբանների պեղումներ, նկ. 93; Ա. Գևունի, նույն տեղում:

²⁸⁵ С. Есаян, Скульптура, с. 59, таб. 54/5,6.

²⁸⁶ Ա. Գևունի, նշվ. աշխ., էջ 124:

²⁸⁷ Г. С. Исмаилов, նշվ. աշխ., նկ. 13:

²⁸⁸ С. Есаян, Скульптура, с. 51.

²⁸⁹ Ե. Լալայան, Դամբանների պեղումներ, էջ 201:

²⁹⁰ Ա. Գևունի, նշվ. աշխ., էջ 123:

²⁹¹ Ե. Լալայան, Դամբանների պեղումներ, էջ 202:

Բացառված չէ, որ ի սկզբանե ֆալիկ կոթող էր հանդիսացել նաև Շինուհայրի XIII դ. խաչ-
քարը: Այն իրենից ներկայացնում է դեպի գագաթ նեղացող գլանաձև իրանով, գմբեթաձև
գլխիկով քարակոթող: Հետագայում խաչքարացման ընթացքում գլանի երեսներից մեկը հար-
թեցվել է խաչքարային քանդակներ կատարելու համար, իսկ գլխիկը վերածվել է թազի²⁹²:

Անդրադառնալով ֆալիկ կոթողների պաշտամունքային իմաստին պետք է նշել, որ ֆա-
լուսը կարող էր կապվել պտղաբերության²⁹³, արևի²⁹⁴, հանդերձյալ աշխարհի և նախնիների²⁹⁵
պաշտամունքի, զոհաբերության ակտի հետ²⁹⁶, ինչպես նաև կատարել պահպանական գործա-
ռույթ²⁹⁷:

Մենհիրներ. Սյունիքը բավականին հարուստ է մենհիրներով: Ինչպես տարբեր՝
մենհիրներով բնորոշվող գոտիներում, այնպես էլ Սյունիքում դրանք ի հայտ են գալիս
մեկուսի դամբարանների և հարթակների վրա (օր.՝ Սելիմ, Հարժիս), հավասար շարքով (= alignment) (օր.՝ Բերդիկ, Գյաուր Դամեր, Զորաց քարեր, Խնածախ/Բհավեր, Կուռի Խարաբա) և
ներփակված շարքով (= enclosed) (օր.՝ Կուռի Խարաբա):

Մենհիրներով բնորոշվող սյունիքյան ամենահայտնի հուշարձանը Զորաց քարերն է, որ-
տեղ մենհիրները տեղադրված են դամբարանադաշտի տարածքում՝ որոշ հատվածներում
եզերելով այն (ադ. 49)²⁹⁸: Մենհիրներ հայտնի են նաև Խնածախից (Բհավեր վանքից ոչ հեռու)
(ադ. 50) և հատկապես Հարժիս գյուղի շրջակայքում (նկ. 13-18, ադ. 36-48)²⁹⁹: Բացառված չէ, որ
դրանց մի մասը (օր.՝ N 1-6, 12 կոթողները), միջնադարում կամ ավելի վաղ շրջանում օգտա-
գործված լինեն որպես ճանապարհի ուղեցույց³⁰⁰: Միևնույն ժամանակ, վերջիններս որոշ նմա-
նություններ ունեն Զորաց քարերի կոթողների հետ, հետևաբար կարելի է ենթադրել կրկնակի
օգտագործման հնարավորությունը: Բացի այդ, N 1 կոթողը, ինչպես նաև Հարժիս-Դարաբաս
հատվածում գտնվող կոթողները (N 6-11) տեղադրված են անմիջականորեն դամբարանների
վրա: Հարժիսի մենհիրների շարքում պետք է նշել նաև տեղաշարժված (Հարժիս գյուղի
մշակույթի տան բակում) և երկրորդական օգտագործման հետքերով կոթողները (N 13-15):

²⁹² Կոթողն ուսումնասիրվել է 2005 թ. Պատմամշակութային ժառանգության գ/հ կենտրոնի և ԵՊՀ համատեղ
արշավախմբի աշխատանքների ընթացքում՝ Է. Այվազյանի, Է. Քամալյանի և Գ. Խաչատրյանի կողմից: Խմբի
մասնակիցների անձնական հաղորդումը 11.07. 2005 թ.:

²⁹³ **А. Мартиросян**, Город Тейшебаини, Ереван, 1961, с. 86: Հ. Մարտիրոսյանը և Ս. Եսայանը նշում են, որ թա-
ղումային հուշարձաններում պտղաբերության պաշտամունքը կարող էր ընկալվել վերածննդի և տոհմի շա-
րունակելիության համատեքստում (**А. А. Мартиросян**, նշվ. աշխ., էջ 85; **С. А. Есаян**, Скульптура, с. 37):

²⁹⁴ **Ա. Գևունի**, նշվ. աշխ., էջ 127:

²⁹⁵ Հնդկական առասպելաբանության համաձայն, Ագնին բուժում է նախնիների անեծքի հետևանքով կրտված
Ինդրային, փոխարինելով առնանդամը՝ խոյինով (**Э. Н. Темкин, В. Г. Эрман**, նշվ. աշխ., էջ 80): Էտրուսկյան
պատկերացումների համաձայն՝ անդրաշխարհ տեղափոխումը անբակտելիորեն կապված էր սրբազան սեռական
ակտի հետ (**А. Наговицин**, նշվ. աշխ., էջ 113-114): Ֆալատիպ հուշարձանները նախնիների ոգիների հետ է
ստացացնում նաև Կ. Ղաֆադարյանը (**Կ. Ղաֆադարյան**, Հեթանոսական շրջանի դամբարանները Դվինում, ՊԲՀ 4,
1974, էջ 41):


²⁹⁶ Ինքնին ֆալաձև խնկարկման անոթի առկայությունն արդեն մատնանշում է ֆալուս-զոհաբերություն կապը:
Հատկանշական է, որ երբ ըստ Պաղմա-Պուրանայի բրահմանների անեծքի հետևանքով Շիվան կրտվեց, երկրում
դադարեցին զոհաբերությունները (**Э. Н. Темкин, В. Г. Эрман**, նշվ. աշխ., էջ 49): Աթարվալդեդայում ֆալուսը
հաճախ նույնացվում էր Սոմայի հետ (**Атхарваведа**, Избранные гимны, Москва, 1974, IV, 4, 6):

²⁹⁷ **Ե. Լալայան**, Դամբանների պեղումներ, էջ 202; **Т. Н. Хачатрян**, նշվ. աշխ., էջ 150:



²⁹⁸ **Օ. Хnkikyan**, նշվ. աշխ., էջ 27: Ս. Լիսիցյանը, Կ. Քուշնարյովան, Օ. Խնկիկյանը մեկնաբանում են այս
հուշարձանը, որպես դամբարանն օղակող կրովի, թեպետ Կ. Քուշնարյովան չի բացառում, որ համալիրը
հետագայում կարող էր հանդիսանալ տաճար (**С. Д. Лисициан**, Кошун-Дашское мегалитическое городище в Сисиане
(Зангезуре), Сборник памяти академика Н. Я. Марра, Москва-Ленинград, 1938; **К. Х. Кушнарева**, Древнейшие
памятники Двина, Ереван, 1977, с. 48; **Օ. Хnkikyan**, նշվ. աշխ., էջ 27):

²⁹⁹ **Ի. Ղարիբջան, Հ. Միմոնյան, Ա. Գևունի, Է. Քամալյան, Է. Այվազյան, Գ. Խաչատրյան**, նշվ. աշխ., 2011, 133:



³⁰⁰ Հմմտ. **Ե. Լալայան**, Սիսիան, էջ 167; **Ս. Բարխուդարյան**, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, ԴՀՎ II,
Երևան, 1960, էջ 81:





Նկ. 13. Հարժիս 1, 2, մենսիրներ





Նկ. 14. Հարժիս 3, 4, սենհիրներ




Նկ. 15. Հարժիս 5, 6, մենսիրներ



Նկ. 16. Հարժիս 7, 9, մենհիրներ



Նկ. 17. Հարժիս 10, 11, մենհիրներ



Նկ. 18. Հարժիս 12, 13, 15, սենհիրներ

Ե. Լալայանը մենհիրներ հիշատակում է նաև Սուլթան Քեդեսի հնավայրում³⁰¹: Մենհիր կա նաև Քարի դար ուրարտական բազմախուց դամբարանում³⁰²: Հավանաբար քարե կամ փայտյա կոթող էր տեղադրված նաև Քանագեղի դամբարանաբլուրի գագաթին (հայտնաբերվել է միայն կոթողի բունը)³⁰³: Կոթողի պատվանդան կա նաև Լճաշենի դամբարաններից մեկում (Վ. Ավետյանի պեղումները)³⁰⁴: Թերևս այս նույն համատեքստում պետք է քննության առնել նաև դամբարանաբլուրի կենտրոնական հատվածում տեղադրված ցից քարերը: Նմանատիպ երևույթ դիտարկելի է Տանձավերի Արխաչի գլուխ դամբարանադաշտի N 5 դամբարանում³⁰⁵: Նմանատիպ քարեր առկա են նաև Ղալաջիկի, Մուլար Կուգեի, Բերդիկի և այլ դամբարանադաշտերում: Այս առումով հետաքրքիր է Կերենի N 105 դամբարանը: Այստեղ ծածկի հյուսիսային հատվածում տեղադրված էր ուղղահայաց դրված քար: Ծածկի քարերի առաջին շերտը հեռացնելուց հետո բացվեցին երկրորդ շերտի քարերը, ընդ որում դամբարանի կենտրոնական հատվածում հարավային ուղղահայաց դրված քարից 120 սմ հյուսիս բացվեց ուղղահայաց կանգնեցված կարմիր գույնի դիորիտ, որը երկու կողմից սեպված էր ավելի փոքր չափերի տուֆոքրեկչիաներով:

Ամենայն հավանականությամբ իրենց սկզբնական գործառույթներով որպես մենհիր են ընկալվել Խնածախի Ցիցքար (աղ. 35), Հարժիսի N 14, Միրիկի (ԼՂՀ Քաշաթաղի շրջ.), Սոյլանի (Վայք 1) (աղ. 31) և Դադիվանքի (նկ. 19)³⁰⁶ խաչքարերը³⁰⁷:

Թեպետ փաստացի նյութը խիստ անբավարար է, այնուամենայնիվ հնարավոր է փորձել մենհիրների ընդհանուր համատեքստում դիտարկել մի քանի տիպ, հիմք ընդունելով գլխամասի ձևավորումը, ընդհանուր մշակվածությունը և իրանի ձևավորումը: Գլխամասի ձևավորմամբ պայմանականորեն կարելի է դիտարկել երկու մեծ խումբ: Առաջին խմբում միավորվում են անկյունաձև կամ դրան մոտեցող գլխամաս ունեցող մենհիրները. դրանք մշակման աստիճանով կարելի է դիտարկել մի քանի ենթատիպով. ա) մարդու մինիմալ միջամտությամբ կերտված կոթողներ: Այս խմբում կարելի է դիտարկել Ձորաց քարերի, Խնածախի (Բհավերի տեղամաս), Հարժիսի N 6, 8, 10 (Հարժիս-Դարաբաս տեղամասի խումբ), Ալլճի (նկ. 20) կոթողները³⁰⁸, բ) որոշակիորեն ձևավորված իրանով կոթողներ. այս ենթատիպին են պատկանում Հարժիսի N 1 (մենհիրների քարավանատան խումբ), 14 կոթողները (մշակույթի տան մոտ տեղադրված մենհիրների խումբ), ընդ որում, եթե N 1 կոթողի իրանը հատույթում ավելի շուտ կլոր է, ապա N 14 կոթողի իրանը՝ հատույթում մոտենում է ուղղանկյունու: Նմանատիպ կոթող էր հանդիսանում հետագայում խաչքարացված Թալինի օրինակը (խաչքարացումը՝ VIII դ.)³⁰⁹, գ) սրբատաշ կոթողներ. այս տիպին է պատկանում Հարժիսի N 15 կոթողը (մշակույթի տան մոտ տեղադրված մենհիրների խումբ): Այն ունի գրեթե քառակուսի հատույթ, սրբատաշ իրան (իրանի հատվածում նեղանում է՝ առաջացնելով կոպտատաշ կոնաձև գլխամաս): Իրանի ստորին մասում հարթաքանդակի եղանակով պատկերված են ներգծված շրջանակներ:

³⁰¹ Ե. Լալայան, Շարուր-Դարալագեագ, էջ 269:

³⁰² R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, նշվ. աշխ., էջ 120:

³⁰³ Գ. Արեշյան, Ե. Ասատրյան, Հայագիտական կենտրոնի 1979-1983 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներ, էջ 205; Գ. Արեշյան, Պահպանական պեղումներ Քանագեղում, էջ 3:

³⁰⁴ Վ. Ավետյան, Լճաշենի 1984-1985 թթ. պեղումները, ԼՀԳ 10, 1986, էջ 90:



³⁰⁵ O. Xnkikyan, նշվ. աշխ., էջ 49:

³⁰⁶ Կոթողն ուսումնասիրվել է 2008 թ. Գ. Սարգսյանի կողմից:

³⁰⁷ Ե. Լալայան, Շարուր Դարալագեագ, 256:

³⁰⁸ Ալլճերի հուշարձանախումբն ուսումնասիրվել է 2013 թ. ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության վարչության կողմից (Գ. Սարգսյան):

³⁰⁹ Լ. Ազարյան, Հայկական խաչքարեր, նկ. 8:



Նկ. 19. Դադիվանք, խաչքարացված մենհիր



Նկ. 20. Ալլիճ, մենհիրատիպ քար

Մենհիրների երկրորդ խումբն ունի հարթ ուղիղ կամ թեք գլխամաս: Մշակմամբ այստեղ ևս դիտարկելի են վերոնշյալ երեք ենթախմբերը. ա) մինիմալ միջամտությամբ քարաբեկորների օգտագործում արձանագրված է Գյաուր Դամերի դոլմենային դամբարանադաշտում (ադ. 50) և Հարժիսի N 7 կոթողի վրա (Հարժիս-Դարաբաս տեղամասի խումբ), բ) ուղիղին են մոտենում Հարժիս N 2, 3 և 12 (մենհիրների քարավանատան խումբ), Սելիմ N 2 (ադ. 24) կոթողների գլխամասերը, իսկ N 4, 5, 9, 11 կոթողների, ինչպես նաև Քարեձի N 2 և 3, Դադիվանքի օրինակների գլխամասերն արդեն կարելի է կոթողներ համարել, ինչպիսիք հետագայում Արենիի եկեղեցու մոտ տեղադրված օրինակներն են³¹⁰: Առանձնահատուկ պետք է նշել անցքով խորանարդաձև քարը Գյաուր Դամերից: Նշված տիպի կոտորների իրանը հատույթում հիմնականում ուղղանկյուն է: Հարժիսի N 9 կոթողի դիմային մասն ունի ողորկություն: Հարժիսի N 5 և

³¹⁰ Լ. Ագաբյան, նշվ. աշխ., նկ. 7:

Սելիմի N 2 կոթողներում գլխամասն առանձնանում է իրանից: Հարժիսում այն ավելի մեծ լայնություն ունի, իսկ Սելիմում զատվում է ոչ խորը ակոսով:

Սյունիքի մենհիրների առանձնահատկությունը հաճախ հանդիպող անցքերն են՝ հիմնականում կոթողի վերնամասում, հազվադեպ նաև միջնամասում (հմմտ. Հարժիս-Դարաբաս հատված N 10, Հարժիսի քարավանատան խումբ N 5) կամ գագաթնամասում (օր.՝ Սոյլանի խաչքարացված մենհիրը): Կարծիք կա, որ այդ անցքերը քարը քարշ տալու համար են նախատեսվել³¹¹: Սակայն չի բացառվում, որ վերջիններս արվել են, երբ քարերն արդեն տեղում են եղել և ունեցել են նաև այլ նշանակություն³¹², քանի որ կան բազմաթիվ կոթողներ (վիշապներ և մենհիրներ), որոնց վրա այդ անցքերը բացակայում են (օր.՝ Խնածախ-Բհավեր հատվածում): Բացի այդ նույն Ձորաց քարերում առկա են մի քանի անցքերով մենհիրներ³¹³: Երկու անցք է առկա նաև Սյունիքի Զանգեր լեռնանցքից ոչ հեռու գտնվող սրբատաշ քարի վրա: Անցքով քար է առկա նաև Լոռի Բերդի Թափա տեղամասի դամբարաններից մեկում³¹⁴: Անդրադառնալով այս խնդրին՝ Ե. Լալայանը քննության է առնում նաև անցքերով բնական հուշարձանները. Շուշիի Սարիբեկ ուխտավայրը, Գանձակի Մուրտո գյուղի Մբ. Սարգսի վանքը և Շուլավերը³¹⁵: Հիմնվելով ազգագրական նյութի վրա և մեկնաբանելով ժայռերի բնական անցքերի նկատմամբ (ծակ քարեր) պաշտամունքը՝ Ե. Լալայանը դրանք առնչում է այնպիսի մոզական արարողությունների հետ, որոնք կապված են կնոջ, ջրի և պտղաբերության պաշտամունքի, ֆիզիկական ուժի ավելացման հետ³¹⁶: Ս. Եսայանը Մեծամորի կուռքի ստորին հատվածի անցքը մեկնաբանում է որպես սեռական պատկանելիության նշան և այն կապում կնոջ պաշտամունքի հետ³¹⁷: Անցքով քար հիշատակում է նաև Հ. Սիմոնյանը՝ Վերին Նավերի N 40 դամբարանաբլրի գագաթին՝ գտնելով, որ այն նախատեսված կարող էր լինել գոհաբերվող անասուններին կապելու համար³¹⁸: Սկզբունքորեն այս տեսակետը կարող է իրական լինել կողային միջանցիկ անցքեր ունեցող Սյունիքի զանգերի մոտ գտնվող սրբատաշ քարի և Գյաուր Դամերի խորանարդաձև կոթողի վրա:

Առանձին կանգնած քարերի և մենհիրների պաշտամունքն իր արտացոլումն ունի բազմաթիվ ժողովուրդների դիցաբանական համակարգերում³¹⁹:

³¹¹ **С. Д. Лисициан**, Кошун-Дашское мегалитическое городище в Сисиане, с. 709-721.

³¹² Հմմտ. **Օ. Քնիկյան**, նշվ. աշխ., էջ 26-27:

³¹³ **Ե. Լալայան**, Սիսիան, էջ 174:

³¹⁴ **Ս. Դևեջյան**, Լոռի Բերդ II, էջ 62:

³¹⁵ **Ե. Լալայան**, Դամբանների պեղումներ, էջ 204-205:

³¹⁶ **Ե. Լալայան**, Ջալալք, ԱՀ Ա, 1896, էջ 372; **Ե. Լալայան**, Վարանդա, ԱՀ Բ, 1897, էջ 188-191; **Ե. Լալայան**, Գանձակի գաւառ, ԱՀ Զ, 1900, էջ 330; **Ե. Լալայան**, Բորչալուի գաւառ, ԱՀ X, 1903, էջ 181; **Ե. Լալայան**, Նոր Բայազետի գաւառ, ԱՀ XVII, 1908, էջ 88:

³¹⁷ **С. А. Есаян**, Скульптура, с. 21, таб. 26.

³¹⁸ **Հ. Սիմոնյան**, Վերին Նավեր, էջ 27: Ռ. Ֆրիտչեն «Ասիական ժողովուրդների՝ մեռելների թաղման սովորությունները» (1887 թ.) աշխատանքում նշում է, որ արաբների, հույների, հռոմեացիների գերեզմանների վերին ծայրում անցք է եղել, որ մեռածի բարեկամների աղոթքները տեղ հասնեն մեռածին: Բացի այդ, արաբական գերեզմանի արձանի չորս ծայրերին փոսեր են փորված, որպեսզի անձրևից և ցողից այնտեղ ջուր հավաքվի, թռչունները գան խմեն և գերեզմանի վրա երգեն: Հիշյալ աշխատանքի հայերեն թարգմանության մեջ Ս. Տեր-Մովսիսյանը նշում է, որ նման սովորություն կա նաև թուրք մահմեդականների մոտ մեր կողմերում. հայերը մեկնաբանում են անցքը գերեզմանաքարի վրա նրանով, որ մեռածի ազգականները մեռելի շուն դարձած հոգուն կերակուր մատակարարեն: Վերջինս նման պատկերացումները ճշտիվ վերագրում է հնագույն ժամանակներին (**Ս. Տեր-Մովսիսյան**, Յոդուաձների ժողովածու. «Արարատ»-ի ժառանգությունը Է, Ս. Էջմիածին, 2010, էջ 611):

³¹⁹ Քարային կուռքը կարող էր կապված լինել մահվան և անդրաշխարհի խորհուրդի հետ: Իռլանդական Էպոսի հերոս Կուլիուինը քարին հենվելով խորը քուն է մտնում (**Ирландские саги**, Москва, 1961, с. 101): Քարը կարող էր ընկալվել որպես յուրատեսակ պորտալ-անցուղի «այս» և «այն» աշխարհների միջև (**Мировое дерево Ильдрасиль**, Сага о Вельсунгах XIV, Москва, 2002): Քարն անդրաշխարհի հետ էր կապվում նաև ռուսական ժողովրդական հեքիաթներում, հանդիսանալով նաև մահվան աստվածուհիի համարվող Բաբա Յագայի բնակատեղի (**А. Н. Афанасьев**, Народные русские сказки, 128, 141): Միաժամանակ, այսին ինքնին նույնացվում էր հերոսի հետ: Իռլան-

Վիշապաքարեր. Պատմական Սյունիքը հանդիսանում է վիշապաքարերի տարածման կարևորագույն կենտրոն, որտեղ վերջիններս ի հայտ են գալիս ամենամեծ քանակով և բազմազանությամբ՝ համեմատած Հայկական լեռնաշխարհի այլ շրջանների հետ³²⁰: Հաշվի առնելով այս հանգամանքը ստորև ներկայացնում ենք վիշապաքարերի սահմանման և բնույթին վերաբերող խնդիրներն ընդհանուր ֆոնի վրա³²¹:

Վիշապաքարերը կենդանական պատկերներով օժտված մենաքարեր են, որոնք ունեն մոտ 150-550 սմ բարձրություն, պատրաստված են տեղական նյութից՝ գլխավորապես բազալտից, որի հանքերը պետք է փնտրել հուշարձանի անմիջական միջավայրում: Վիշապաքարերի մեծ մասը գտնվում է իր սկզբնական տեղում՝ հորիզոնական դիրքով ընկած: Սակայն վիշապաքարերը, որպես կանոն, մշակված և քանդակված են բոլոր կողմերից, բացի «պոչից», ինչն ակնհայտորեն վկայում է այն մասին, որ վերջիններս նախապես եղել են կանգնած վիճակում: Ուղղահայաց դիրքի մասին է վկայում նաև պատկերագրության ուղղվածությունը³²²: Այնուամենայնիվ որոշ ձկնակերպեր պետք է լինեին պատկած³²³. խոսքը վերաբերում է նախ փորի մասում խիստ հարթեցված օրինակներին և կորածներին, որոնց հավասարակշռության խնդիրը պարզ չէ կանգնած լինելու դեպքում:

Տիպաբանության խնդիրը. Վիշապաքարերը պայմանականորեն բաժանում ենք երեք տիպի՝ 1. ցլակերպ (քառակող, հաստ սալաքարի տեսքով, վերից վար նեղացող, դիմային մասում հիմնականում ցլի գլխի և վար ընկած վերջույթների պատկերով, հանդիպում են ամենուրեք) (աղ. 16, 19-23, 25), 2. ձկնակերպ (կտրվածքում կլորավուն, քանդակված ձկան տեսքով՝ կրելով ձկան անատոմիական մանրամասներ, հանդիպում են գրեթե ամենուրեք) (աղ. 17), 3. ձկնացլակերպ (կրում է նախորդ երկուսի հատկանիշները՝ ձևով նմանվելով ձկան, բայց պատկերագրության մեջ կրելով նաև ցլային հատկանիշներ, առայժմ հանդիպում են միայն Գեղամա լեռներում) (աղ. 18):

Գրականության մեջ շրջանառվում է նաև այն կարծիքը, թե որոշ վիշապաքարեր կարող էին լինել խոյակերպ³²⁴, ինչը, կարծում ենք, որ հնարավոր է և պետք է հաշվի առնել վերջնական տիպաբանության մեջ³²⁵:

Բացի տարատեսակ ցլա- և ձկնապատկերներից, հինգ անգամ ցլակերպ վիշապաքարերի վրա ի հայտ են գալիս երկու թռչուններ (Իմիրգեկ 1, Աժդահա Յուրտ 5, Թոխմախան Գյոլ 1, Գանձա 1, Մուրջախեթի 1), մեկ դեպքում՝ թերևս «եռաժանի» (Պրոսպեկտ 1), այլ դեպքում՝ հավանաբար «կենաց ծառ» (Աժդահա Յուրտ 2 և թերևս Աժդահա Յուրտ 5)³²⁶:

դական սազաններում այսպիսի հետ էր համեմատվում Կուլխուլինը (*Ирландские саги*, с. 131): Հնդկական դիցաբանության մեջ քարի հետ էր համեմատվում կրակի աստված Ագնին (*Ригведа*, Москва, 1989, 1, 59, 1):

³²⁰ Ներկայիս Հայաստանի Հանրապետության սյունիքյան տարածքներում վիշապաքարեր հատկապես տարածված են Վայոց Ձորի գոտում և բնորոշվում են երկրորդական օգտագործման (գլխավորապես խաչքարացման) բարձր աստիճանով (Ա. Շահինյան, Վայոց Ձորի վիշապ-կոթողները, էջ 286-289; Օ. Մ. Խնկիկյան, Յլագլուխ կոթողներ Վարդենիսի լեռներից և «վիշապաքարերի» մեկնության հարցի շուրջ, *ԼՀԳ* 3, 1997, 148-159; Օ. Xnkikyan, Syunig during Bronze and Iron Ages, Barrington, 2002):

³²¹ Վիշապաքարերի մանրամասն կատալոգի և այս հատվածում օգտագործված տերմինաբանության վերաբերյալ հմտ. **A. Gilibert, A. Bobokhyan, P. Hnila**, Dragon Stones in Context, p. 93-132; **Ա. Բոբոխյան, Ա. Զիլիբերտ, Պ. Հնիկյան**, Վիշապաքարերի հնագիտություն:

³²² **И. Мещанинов**, Каменные статуи рыб-вишапы на Кавказе и в северной Монголии, *ЗКВ* 1, 1925, с. 402.

³²³ **Н. Я. Марр, Я.И. Смирнов**, նշվ. աշխ., էջ 61:

³²⁴ Հմտ. **Н. Я. Марр, Я. И. Смирнов**, նշվ. աշխ., էջ 63:

³²⁵ Խոյ-ցուլ երկակի հակադրության մասին, որոնք կարող էին լինել տարբեր խմբերի տոտեմներ, հմտ. **С. А. Арутюнов**, О баранах и быках в жертвоприношениях, *ИФЖ* 1, 2010, с. 197-213.

³²⁶ Թռչունների և կենաց ծառի պատկերագրության համար հմտ. **Ա. Շ. Մնացականյան**, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 65, 122, 215, 169; ձկան համար որպես լոբոյի՝ **Լ. Միսոնյան**, Հավքն իր թևով օձն իր պորտով, Երևան, 2011, էջ 81-83:

Ըստ մեր նախնական հաշվարկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում բուն վիշապաքարերի մեջ հանդիպում են մոտ 48 ցլակերպ, 25 ձկնակերպ և 6 ձկնացլակերպ օրինակներ. մնացածն անհայտ են (դրանցից 5-ը հիշվում է միայն գրականության մեջ, մնացածը ոչ ամբողջական լինելու կամ պատկերագրության ավելի ուշ ջնջված լինելու պատճառով ոչինչ չեն ասում, թեև ձևաբանությունը հուշում է, որ պետք է որ ցլակերպ լինեն:

Բացի վերոհիշյալ հատկանիշներով բնորոշվող բուն/դասական վիշապաքարերից կա մենաքարերի մի խումբ (թվով 17), որը միայն մասնակիորեն է կրում վիշապաքարային տարրեր. այդ խումբը պայմանականորեն անվանում ենք «վիշապանման» (վիշապոիդ):

«Վիշապոիդ» կատեգորիայի մասին առաջինը խոսել է Ի. Մեշչանինովը, ով բնորոշում է վերջիններիս որպես «վերապրուկային վիշապներ», որոնք, սակայն, ընդհանուր հատկանիշներով մտնում են վիշապաքարերի խմբի մեջ. դրանց թվում նա հիշատակում է Հայկական լեռնաշխարհից դուրս հայտնաբերված օրինակները³²⁷: Այսպիսով «վիշապոիդներ» է հիշատակում Լ. Մելիքսեթ-Բեկը Փարվանայի նյութի հիման վրա՝ 1927 թ.³²⁸: Ն. Մառի ու Վ. Սմիռնովի 23 օրինակների համատեքստում «վիշապոիդների» մասին խոսում է Վ. Միխանկովան³²⁹: Հետագա հետազոտությունների ընթացքում վիշապանմանների թիվն անշուշտ ավելանալու է (որպես այդպիսին է սահմանվում նաև նախիջևանյան Բջնակ 1-ը):

Ըստ մեր կողմից հետազոտված նյութի, վիշապանմանները կամ վիշապաքարի նմանակում են (Ղուրթ Թափա 1-2, Գեղաշեն 1, Եղնաջուր 1, Լիճք 1, Վիշապասար 1, Վայք 1 (աղ. 32), կամ պատրաստուկ/«նախավիշապ» (Քյուրաքանդ 1, Դարիկ 1, Հարժիս 1, Վայք 1 (աղ. 36), հմմտ. Ահմադի Օբա 1-ի մոտ գտնվող մշակված քառակող կոթողը, որը պայմանականորեն կոչում ենք Ահմադի Օբա 2), կամ էլ քրիստոնեացված կոթող, որի պատկերագրական և ձևաբանական մանրամասները փոխված են, դժվարությամբ ընթերցելի կամ անընթերցելի են (Ավանիկ 1, Գառնի 2, Կարմրաշեն 1, Ռինդ 1 (աղ. 29), Վայք 1 (աղ. 31), Անգեղակոթ 1 (աղ. 33), Ավան 1): Այս համատեքստում, ամենայն հավանականությամբ, պետք է դիտարկել նաև Վարդուտի դամբարանադաշտի ավերված դամբարանում հայտնաբերված կոթողը, որն ունի ձկնակերպ հատկանիշներ³³⁰:

Վիշապանմանները դասական օրինակներից տարբերվում են մասամբ չափով (հմմտ. Ավան 1-ի, Ղուրթ Թափա 1-2-ի, Գեղաշեն 1-ի փոքր չափերը), ձևով (հմմտ. վերին/ստորին մասում ներս ընկած հատվածի օրինաչափությունը՝ Քյուրաքանդ 1-ի, Դարիկ 1-ի և Ղուրթ Թափա 2-ի դեպքում, որ զուգահեռներ ունի մասամբ դասական վիշապաքարերի վրա (հմմտ. Պրոսպեկտ 1-ը և Պրոսպեկտ 3-ը), Ղուրթ Թափա 1-ի կտրվածքի ձկնային ձևը (հմմտ. Արշալույս 3) կամ Լիճք 1-ի անորոշ ձևը) կամ պատկերագրությամբ (օր. յուրահատուկ ցլագլուխը՝ Գեղաշեն 1-ի դեպքում, հմմտ. Գեղարդալճի մի օրինակը)³³¹: Պատկերագրական տարբերություններից մեկն էլ այն է, որ որոշ վիշապանմաններ (հմմտ. օր. Հարժիս 1-ը կամ Եղնաջուր 1-ը) պատկերագրությունից զուրկ են, ինչը խոսում է երևի այն մասին, որ սրանք մոտ են մենհիրներին և, հավանաբար, ամենավաղն են թվագրվում³³²: Այս իմաստով մենհիրի և

³²⁷ И. Мещанинов, նշվ. աշխ., էջ 405:

³²⁸ Н. Я. Марр, Я. И. Смирнов, նշվ. աշխ., էջ 10:

³²⁹ В. А. Миханкова, Вишапы, ЕЖГАИМК 9/10, 1931, с. 48.

³³⁰ Կոթողը հաստատագրվել է 1997 թ. Պատմամշակութային ժառանգության գ/հ կենտրոնի արշավախմբի կողմից (Հ. Միմոնյան, Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Գ. Վարդանյան), հրատարակված է՝ Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Հնագիտական հետազոտություններ, էջ 269-270, նկ. 5:

³³¹ Մ. Վ. Գրիգորյան, Ոլորագարդով խոյակները հայ ճարտարապետության մեջ, ՊԲՀ 2-3, 1959, 261-263, նկ. 10/, ոճավորված «խոիկը»՝ Դարիկ 1-ի դեպքում:

³³² Հմմտ. Ա. Քալանթար, Քարե դարը Հայաստանում, Նորք 5/6, 1925, էջ 219; Մ. Գ. Բարխուդարյան, Հայաստանի կոթողային հուշարձանները, ՏՀԳ 7/8, 1960, էջ 53-54:

վիշապաքարի սահմանը հաճախ ոչ թե ձևն է, այլ՝ պատկերագրությունը³³³։ Ասվածի օրինակը Թիքքար 1 ցլապատկերով վիշապաքարն է, որն, ըստ Ա. Սանոսյանի, նմանություն ունի Շամիրամի մենհիրներին։ Լ. Մելիքսեթ-Բեկն այն անվանում է մենհիր, քանի որ չի նկատել ցլապատկերը, ինչը նկատել է Ա. Սանոսյանը և սահմանում է՝ վիշապաքար³³⁴։ Նույնն է Սառնաղբյուր 1-ի դեպքը, երբ Հուշարձանների պետական ցանկում այն բերված է որպես մենհիր, քանի որ չի նկատվել վերջինիս ցլապատկերը, իսկ այդ պատկերի ի հայտ գալով՝ վերջինս դառնում է վիշապաքար։ Համենայն դեպս և վիշապաքարը, և մենհիրը կարող են հանդես գալ միևնույն միջավայրում և առնչվել կրոմլեիների հետ³³⁵։

Երբեմն վիշապանմանները կարող են ունենալ ուշ թվագրվող հատկանիշներ, ինչպես օրինակ Ավան 1-ի վրայի ձկան աչքն է, որը պատկերված է վարդակով։ Թեև վարդակը հայտնի է բրոնզի դարից, սակայն այս զարդաձևը հատկապես տարածված է միջնադարում³³⁶։ այս կոթողի վարդակը հավանաբար ավելացվել է միջնադարում³³⁷։

Վիշապանմանների քննարկումը դասական վիշապաքարերի համատեքստում հատկապես արդարացվում է նրանով, որ երկուսն էլ հաճախ հանդես են գալիս համանման պատմա-աշխարհագրական միջավայրերում (հմտ. հատկապես՝ Քյուրաքանդ 1-ը և Դարիկ 1-ը, որ ի հայտ են գալիս գոգավոր մարգագետիններում, իսկ վերջինս Արփի լճից ոչ հեռու)։

Համատեքստը և տեղանքը. հետախուզության ընթացքում պարզվեց, որ Բարձրադիր վիշապաքարերը գրեթե միշտ առնչվում են միջին չափսի (4-10 մ տրամագծով) կրոմլեիների և դրանց անմիջական միջավայրի հետ, որը կարող է բաղկացած լինել՝ այլ կրոմլեիներից, ժայռապատկերներից, «օղուզի/հսկայի տուն/քյալաֆա» (աշտարակաձև կառույց/դամբարան) հիշեցնող շինություններից (լավային կուտակումների՝ այսպես կոչված «չինգիլների» մեջ), արհեստական քարակույտներից, ջրանցքներից։ Վիշապաքարերի մեծ մասը ընկած են իրենց տեղում՝ կրոմլեիի, թերևս դամբարանի կամ քարաշար պատվանդանի, կենտրոնում, ինչպես Աժդահա Յուրտ 1, 3, 4, 6-ի, Կարմիր Սար 1, 7-ի և Մաղալներ 1-ի դեպքում է³³⁸։ Սակայն երեք դեպքում (Ցիցքար 1-ը՝ Գեղամա լեռներում, Ահմադի Օբա 1-ը և թերևս Սառնաղբյուր 1-ը՝ Արագածի լեռնագանգվածում) վիշապաքարը դեռևս կանգուն է իր նախնական դիրքով³³⁹։

³³³ Մենհիրների «առանց որևէ զարդի» լինելը շեշտում է Ս. Բարխուդարյանը, որոնցից նա տարբերում է վիշապաքարերին, որոնք իրենց վրա կրում են քանդակներ՝ **Ս. Գ. Բարխուդարյան**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, Երևան, 1963, էջ 122։

³³⁴ **Ա. Ս. Սանոսյան**, նշվ. աշխ., էջ 102։

³³⁵ Հմտ. Եղնաջուր 1-ի և Շամիրամի մենհիրներից մեկի նմանությունը՝ երկուսն էլ կանգնած կրոմլեիի=հարթակի կամ դամբարանի մեջ. Շամիրամի համար հմտ. **Ա. Խաչատրյան**, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, 71, նկ. 11։

³³⁶ **Յ. Ք. Գարսյան**, Символы симметрии орнамента в армянском прикладном искусстве, Ереван, 1989, с. 30-31.

³³⁷ Հմտ. նաև Կարմրաշեն 1-ը, որի վրա ևս միջնադարում վարդակ է ավելացվել, ըստ՝ **Ա. Շահինյան**, Վայոց ձորի վիշապ-կոթողները, էջ 289։

³³⁸ Վիշապաքարերը թերևս պարբերականորեն գցվել են գետնին։ Այսպես, մի շարք դեպքերում վիշապաքարերի մակերեսին տեսանելի է սպիտակավուն քարաքոս։ Այն վիշապաքարերի վրա, որոնք շուտ էին տրվել Մառի և Սմիռնովի կողմից 1909 թ. «նոր» քարաքոս չկար։ Մյուս կողմից, քարաքոս տեսանելի էր Աժդահա Յուրտ 1-ի ուշ արված խաչի վրա, երբ քարը դեռ կանգուն էր։ Խաչը քանդակվել էր XIV դ. թվագրվող արձանագրության հետ, ինչը մեզ տալիս է terminus post quem այս վիշապաքարի «ընկնելու» ժամանակաշրջանը ճշտելու համար։

³³⁹ Թիք(մա)թաշ վիշապաքարերին բնորոշող անունը ծագում է թուրք. dikilitaş-ից, որ նշանակում է «Կանգուն քար», հայ ավանդության մեջ՝ «Ցիցքար» (**Ս. Հարությունյան**, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 252-253; ցիցքար = մենհիր՝ Ա. Քալանթար, նշվ. աշխ., էջ 210), հմտ. Դիք-քարեր՝ Ղոշունդաշի հայկական անունը (**Ս. Հասրաթյան**, նշվ. աշխ., էջ 167, 175)։ Հայտնի Օբա 1-ն ու Փարվանայի մոտի երկու վիշապաքարեր (Թիքմաթաշ 1, Թիքքար 1) ևս հայտնի են համանման՝ «Թիքմաթաշ» անվամբ, որ վկայում է դրանց կանգուն լինելու մասին։ Մեկ այլ հնարավորություն կարող է լինել այս անվան հայկական դիք- արմատի հետ առնչվելը, ինչի վրա ուշադրություն է դարձրել Աստրախտը, ով հիշատակում է վիշապական կոթողներով հարուստ Դիքնիսի շրջանը, Ակջակալա բերդի մոտերքում, Փոքրիկ Դիքնիս առվակի մոտերքում, ինչպես նաև Դիքմա-վերինը (**Աստրախտ**, Վիշապագանց

Ինչպես ցույց է տալիս իրենց նախնական տեղում գտնվող վիշապաքարերի տեղայնացման ուսումնասիրությունը, վերջիններս սկզբնապես գտնվել են հիմնականում ոչ թե կրոմլեխի կամ պատվանդանի կենտրոնում, այլ նրա անմիջական սահմանին՝ կրոմլեխի եզրագծին, որոշ դեպքերում, չի բացառվում, նաև՝ մասամբ կրոմլեխից դուրս³⁴⁰:

Կրոմլեխի/դամբարանի այն ձևը, որ տեսանելի է վիշապաքարերի միջավայրում, հայտնի է բրոնզի և երկաթի դարերի Հայկական լեռնաշխարհում: Վերջիններս տարածումը ծովի մակերևույթից 2000-3000 մ բարձրության վրա տիպական պիտի լիներ թերևս այն ժամանակահատվածների համար, երբ բարձր լեռնային շրջանները ձեռք են բերել որոշակի իմաստային և կիրառական բովանդակություն: Վիշապաքարերին առնչվող կրոմլեխներում մենք փաստագրեցինք վերջերս կամ ավելի վաղ իրականացված ոչ գիտական պեղումների ութ դեպք: Դրանցից հինգը իրականացվել էին տեխնիկայի միջոցով՝ լիովին խաթարելով հնագիտական համատեքստը³⁴¹: Սակայն Աժդահա Յուրտ 3-ի և Ցիցքար 1-ի կրոմլեխները Գեղամա լեռներում և Քյուրաքանդ 1-ը Արագածի վրա բացվել էին փորող գործիքների միջոցով: Եվ սա պարզ է, քանի որ Ցիցքար 1-ն այն հազվագյուտ վիշապաքարերից մեկն է, որ կանգնած է իր սկզբնական դիրքում: Այստեղ ևս, ինչպես Լճաշեն 1-ի դեպքում, «դամբարանախուցը» ուղղված էր հյուսիս-հարավ, իսկ վիշապաքարը կանգնած կրոմլեխի հյուսիսային եզրին՝ դեմքը դեպի հյուսիս:

պաշտամունքը, Բազմավեպ 7/8, 1931, էջ 316-317): Հմմտ. նաև Տիք լեռները նույն Վանանդի կողմերում (Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 78, 81):

Ռուս գրողներ Ն. Տիխոնովը և Վ. Էիրիկիը 1929 թ. օգոստոսի 22-ին ճանապարհորդում են Նոր Բայազետ (Գավառ) - Դելի Կարդաշ (Սարուխան) - Գեղամա լեռներ - Թագաքենդ (Թագազյուղ/Գողթի մոտ՝ Գառնիչայ/Ազատ գետի վրա) - Գեղարդավանք ուղղությամբ: Գեղամա լեռներում, մասնավորապես այնտեղ, որտեղից երևում էին Ալ դաղ (Սպիտակասար) և Կըզըլ դաղ (Աժդահակ) սարերը, մոտ 2800 մ բարձրության վրա, փոքր լճակի մոտ նրանք տեսնում են մի «բարձր վիշապ», որը «կամ ճանապարհային նշան էր կամ պաշտամունքի առարկա», ուներ «հսկա ձկնային կամ վիշապային իրան» և «կանգնած էր»՝ «խրված քարերի մեջ» (Н. Тихонов, Дни открытий. Книга об Армении, Ереван, 1970, 57-138, с. 77-79):

Եթե փորձենք նույնականացնել հիշյալ վիշապաքարը, ապա կարելի է բերել մի քանի տարբերակներ.

1. Գյուլի Յուրտ - միջավայրը և ճանապարհի ուղղությունը համապատասխանում են, սակայն Տիխոնովը հիշատակում է, որ վիշապաքարը բարձր է եղել, որպիսին բացակայում է Գյուլի Յուրտում:

Ցիցքար 1 - միակ կանգուն վիշապաքարն է այսօր Գեղամա լեռներում և այն կանգնած է քարերի մեջ խրված, ճիշտ այնպես, ինչպես նկարագրում է Տիխոնովը: Սակայն նկարագրությանը չի համապատասխանում միջավայրը (լճակ չկա), բացի այդ նշված ճանապարհից հեռու է:

Գողթ 1-ը, որի գտնվելու նախնական վայրը մենք չգիտենք, սակայն այն կարող էր սկզբնապես կանգուն լինել մի ինչ-որ լճակի ափին:

Թոխմախան Գյուլ - տեղանքի (ճանապարհի ուղղությունը, նշված բարձրությունը, լճակի ափին գտնվելը) և վիշապաքարի (թերևս = Թոխմախան Գյուլ 1) նկարագրությունը էապես համապատասխանում է Թոխմախան Գյուլի միջավայրին: Խնդիր է առաջացնում վիշապաքարի կանգնած լինելու հանգամանքը. Մառի ու Սմիռնովի ժամանակ Թոխմախան Գյուլ 1-ը կանգնած չէր (այն կանգնած է եղել XIX դ. վերջերին և ծառայել որպես ջրի չափման միավոր՝ Н. Я. Марр, Я. И. Смирнов, նշվ. աշխ., էջ 83): Հնարավոր է, որ այդ վիշապաքարը վերստին կանգնեցրել են Մառի ու Սմիռնովի այցելությունից հետո՝ նախքան փոքր լճակը նորից կլցվեր ջրով: Թոխմախան Գյուլը չորացած էր Մառի ու Սմիռնովի ժամանակ (Н. Я. Марр, Я. И. Смирнов, նշվ. աշխ., էջ 82): Չի բացառվում, որ 1929 թ., Տիխոնովի այցելության ժամանակ, այստեղ նորից լճակ եղած լինի. համենայն դեպս 1950-ական թթ. քարտեզների վրա այդ տեղում լճակ կա: Երբ լճակը մեծացվեց 1960-ական թթ. վերջերին, վիշապներից երկուսը (Թոխմախան Գյուլ 1, 4) տեղահան արվեցին դեպի մոտակա լեռնակատարը, իսկ ավելի ուշ՝ կանգնեցվեցին այսօրվա տեղում:

³⁴⁰ Ուշագրավ է, որ Շամիրամի դամբարանադաշտում ևս մենհիր/մենաքարերը գտնվել են կրոմլեխի շրջագծի շարքին կամ անմիջապես դրա մոտ, իսկ մի մասը՝ կենտրոնում (Թ. Թորամանյան, նշվ. աշխ., 1942, էջ 9, 40): Վիշապաքարերի մոտ գտնվող դամբարանների մասին հմմտ. նաև Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, ՊԲՀ 3, 1969, էջ 192-193: Թեղքի վիշապաքարերի դեպքում ևս նման դիրք է նկատվում, հատկապես Մոսունին Գյուլ 1-ի դեպքում:

³⁴¹ Արագածի լեռնագանգված՝ Հայսերի Օբա 1, Կարմիր Սար 4, Պրոսպեկտ 1: Գեղամա լեռներ՝ Աժդահա Յուրտ 5, Ցիցքար 2:

Ասվածի համատեքստում, հատկապես կարևոր է վիշապաքարերի և դրանց առնչվող կրոնիկների տարածման առանձնահատկությունների հետազոտությունը: Հայաստանի տարածքը լի է բրոնզ-երկաթեդարյան կրոնիկներով/դամբարաններով, որոնք հաճախ կազմում են բավականին հստակ սահմանված միջավայրեր: Մինչդեռ ծովի մակերևույթից էապես բարձր գտնվող կրոնիկները/դամբարանները ձգտում են տարածվել լեռների լանջերով ավելի ցրիվ և միմյանց համընկնող խմբերով ու հաճախ դժվար է սահմանել, թե որտեղ է ավարտվում մեկը և որտեղ սկսվում մյուսը: Վիշապաքարերին առնչվող կրոնիկների տարածման առանձնահատկությունների նախնական հետազոտությունը ցույց է տալիս, որ դրանք էապես տարբերվում են մնացածից: Վերջիններս, գտնվելով ծովի մակերևույթից 2000-3000 մ բարձրության վրա, ցուցաբերում են տարածման երկու առանձնահատկություն: Դրանց մեծ մասը հանդես է գալիս խմբերով՝ հստակորեն սահմանված գոգավոր մարգագետինների միջավայրում: Այս մարգագետինները, տիպիկ հնագույն հրաբխային արբանյակ խառնարաններ են, հարուստ ջրով, երբեմն՝ ճահճոտ: Վիշապաքարերը, որպես կանոն, լինում են այդ գոգավորությունների ամենահարթ հատվածներում, այնքան հարթ, որ ժամանակավոր բնակչությունը այն օգտագործում է որպես խաղահրապարակ և կոչում «ֆուտբոլի դաշտ» (հմմտ օր. Կարմիր Սարը և Քյուրաքանդը՝ Արագածում, Գյոլի Յուրտը՝ Գեղամա լեռներում)³⁴²: Դրանք ի հայտ են գալիս կրոնիկների մեջ՝ շրջապատված այլ կրոնիկներով. ուշագրավ է, որ եզակի կրոնիկներ/դամբարաններ օրինաչափորեն լինում են նաև գոգավորությունը եզերող բլուրների բարձրակետերի վրա (հմմտ. օր. Կարմիր Սարը, Քյուրաքանդը, Թոխմախան Գյոլը, Մաղալները):

Վիշապաքարերի գոգահովիտներում գտնվելը էապես քչացնում է դրանց տեսանելիության աստիճանը³⁴³: Մինչ այժմ մենք նույնականացրել ենք չորս «վիշապային գոգավորություններ», որոնք բաղկացած են առնվազն հինգ, ամենաշատը՝ ինը վիշապաքարերով կրոնիկներից. դրանք են՝ Թոխմախան Գյոլը³⁴⁴ և Աժդահա Յուրտը՝ Գեղամա լեռներում, ինչպես նաև Պրոսպեկտը և Կարմիր Սարը՝ Արագածի լեռնազանգվածում: Գեղամա լեռների Գյոլի Յուրտ և Արշալույս կոչված ամառային արոտավայրերում նույնականացրել ենք ավելի քիչ՝ երեք վիշապաքարերով կրոնիկներ, որոնք տեղադրված էին նմանապես լավ սահմանված, հարթ և ջրով հարուստ, բայց ոչ գոգավոր մարգագետիններում:

Ի տարբերություն այս՝ խմբված և հստակ սահմանված միջավայրերում տեղադրված վիշապաքարերի, արշավախումբը փաստագրեց փոքր քանակության (թվով 12) վիշապաքարեր նաև մեկուսացված կրոնիկների համատեքստում: Այս «մենակյաց» վիշապաքարերը կարող

³⁴² Թեղքյան Մանգլիսի վիշապաքարի «հարթ հրապարակի» վրա գտնվելը ժամանակին նկատել է Վ. Գուրկո-Կրյաժինը (**В. А. Гурко-Кряжин**, նշվ. աշխ., էջ 218):

³⁴³ Բացի տեսանելիության հանգամանքից, բարձրադիր գոգավորությունների կիրառական նշանակությունը թերևս կայանում էր նրանում, որ այսպիսի ներփակ միջավայրերում մարդիկ պաշտպանված էին բնական տարրերից՝ նախ և առաջ լեռնային քամուց: Նախնադարյան մարդը «լեռնային քամիների դեմ հովանավորություն էր որոնում լեռնանցքների ստորոտում թաղված գերեզմանների և հրաշագործ վայրերի մոտ» (**Ս. Լիսիցյան**, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 282): Ազգագրական տվյալները Լեռնահայաստանից ցույց են տալիս (տե՛ս ստորև), որ նման բարձրադիր լեռնային տափարակ հրապարակները մշտապես օգտագործվել են համայնական ծիսակատարությունների, հատկապես զոհաբերությունների ժամանակ (**Ս. Լիսիցյան**, նշվ. աշխ., էջ 280):

Ի լրումն Ս. Լիսիցյանի «լեռնանցքների տեսության» (**С. Д. Лисициан**, Святые у перевалов, с. 200-212), հմմտ. Սելիմ 1 և Փարվանայի Թիքթար 1 (**Ս. Ս. Մանույան**, նշվ. աշխ., էջ 101-102) վիշապաքարերը, որոնք գտնվում են լեռնանցքներին կից և դրանց այդպիսի տեղադրությունը, թերևս, պատահական չէր:

³⁴⁴ Վիշապաքարերի միջավայրում գտնվող Թոխմախան Գյոլի դամբարանադաշտը վկայված է Հուշարձանների պետական ցուցակում (Կոտայք, Գեղարդ, Վանքի լիճ, 6.24.9), Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արխիվում (Գեղարդ 1, 2 վիշապաքարերը) և Հ. Մարտիրոսյանի մի աշխատանքում (**Հ. Ա. Մարտիրոսյան**, նշվ. աշխ., էջ 193): Ուշագրավ է, որ այն բլուրը, որտեղ իրենց նախնական դիրքից, ներկայիս լճի շրջանում, տեղափոխվել են Թոխմախան Գյոլ 1 և 4 վիշապաքարերը, ևս դամբարանադաշտի տարածք է՝ թալանված և չթալանված մի շարք կրոնիկ-դամբարաններով: Երևում են նաև ինչ-որ կացարանների հետքեր:

են տեղադրված լինել համեմատաբար գոգավոր մարգագետիններում³⁴⁵, ինչպես նաև ավելի տեսանելի վայրերում³⁴⁶: Դրանց ամենակարևոր առանձնահատկությունը և տարբերությունը վերոհիշյալ խմբավորվածներից այն է, որ տեղադրված են այնպես, որ համապատասխան կետից ոչ մի այլ վիշապաքար չի երևում: Գեղամա լեռներում գտնվող Իմիրգեկի խմբի դեպքում կրոմլեիները³⁴⁷ հետևում են լեռնաշղթայի վերնամասերին և խուսափում տեսանելի լինելուց: Հատկապես յուրահատուկ է Մաղալներ կոչված գոգահովտի մշակութային միջավայրը (Ժայռապատկերներ, պարույրաձև քարաշարով միացող կրոմլեիներ/դամբարաններ, «օղուզի/հսկայի տուն» հիշեցնող կառույց), որում առկա միակ վիշապաքարը յուրահատուկ դեր ունի բազմազան ծիսական ոլորտում: Վերջինիս նմանություն են ցուցաբերում արագածյան Քյուրաքանդ 1-ի և հատկապես թեղքյան Մոսունին Գյոլ 1-ի միջավայրերը:

Այսպիսով, վիշապաքարերով կրոմլեիների մեծ մասը ձգտում է խմբավորվել մեկուսացված գոգահովտային միջավայրերում, մինչդեռ որոշ «մենակյացներ» տպավորում են այցելուին որպես եզակի արժեք: Երկու դեպքում էլ վիշապաքար ստեղծողները խուսափել են լեռնային միջավայրի երկայնքով «տեսանելիության ցանցի» ստեղծումից: Ինչպես խմբավորված վիշապաքարերը, այնպես էլ «մենակյացները» մեծապես ինքնաբավ են և՛ որպես խումբ, և՛ որպես մենաքար: Ստեղծվում է տպավորություն, թե վիշապաքարերը ձգտում են լինել անտեսանելի շրջապատի համար, սակայն իրենց համար տեսանելի է «ամեն ինչ», որովհետև վիշապաքարային գոգավորություններից (հմմտ. հատկապես Աժդահա Յուրտը, Կարմիր Սարը, Ցիցքար 1-ը) անսահման տեսարան է բացվում Հայկական լեռնաշխարհի տարբեր ուղղություններով:

Մեր նախնական դիտարկումները հիմք են հանդիսանում ենթադրելու, որ վիշապաքարերի տեղադրությունը արտացոլում է մի որոշակի համակարգ, որը դրսևորում է դասավորվածության և բարձրության օրինաչափություններ: Այսպես, Արագածի հրվանդանները կարծես հանդիսանում են վիշապաքարային էպիկենտրոններ, ուր վիշապաքարերը տեղակայված են նույնատիպ հարթությունների վրա (հմմտ. օր. Կարմիր Սարը և Քյուրաքանդը, որոնք իրար զուգահեռ են, նմանատիպ գոգավորությունների ու գրեթե նույն բարձրության վրա և ընդհանուր առմամբ այդ միջավայրերը, բայց ոչ վիշապաքարերը, տեսանելի են մեկը մյուսի համար):

Գործառույթի և նշանակության խնդիրը. առավել քան մեկ դար վիշապաքարերն ընկալվում էին զուտ որպես նախապատմական ոռոգովի համակարգերի հանգուցակետերին տեղադրված հուշարձաններ: Նոր հետազոտությունները, որոնք կենտրոնացան վիշապաքար երևույթի վրա հնագիտական տեսանկյունից, ցույց են տալիս, որ վիշապաքարը շատ ավելի բարդ երևույթ է: Պարզվում է, որ վիշապաքարերը հիմնականում տեղակայված են լեռնային հրապարակներում՝ կրոմլեիներով կառույցների (դամբարանների կամ հարթակով սրբավայրերի) մեջ և դրանց միջավայրում: Այս առանձնահատկությունը հիմք է տալիս ենթադրելու, որ վերջիններս առավելապես հասարակական հիշողության կազմակերպմանն առնչվող և բարձրադիր ծիսական միջավայրերում տեղակայված կոթողներ են, որոնք կարող են լինել բնույթով սինկրետիկ և ունենալ բազմագործառութային բովանդակություն: Այս իմաստով ճիշտ է վիշապաքարը «հուշարձան/ հուշակոթող» կոչելը: Հուշարձանը նախ և առաջ ուղղված է պահպանելու նախնիների և դրանց առնչվող առանցքային իրադարձությունների հետ կապված համայնական հիշողությունը: Ընդ որում, նախնիները վերարտադրվում են ոչ միայն ար-

³⁴⁵ Ինչպես Հայսերի Օրա 1-ի դեպքում՝ Արագածի լեռնագանգվածում և Մաղալներ 1-ի՝ Գեղամա լեռներում:

³⁴⁶ Արագածի լեռնագանգված՝ Ահմադի Օրա 1: Գեղամա լեռներ՝ Աժդահա Յուրտ 6, Ցիցքար 1-3, Իմիրգեկ 1-5:

³⁴⁷ Իմիրգեկի վիշապաքարերի մոտ առկա դամբարանները նկատելի են նաև Հ. Մարտիրոսյանը (Հ. Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 193):

ձանի, այլև աշխարհագրական միջավայրի (լեռան, ժայռի, գետի, լճի) տեսքով: Այս իմաստով, նմանատիպ բնական միջավայրերն իրենք իսկ հանդիսանում են որոշակի մեմորիալ համալիրներ³⁴⁸: Սա է պատճառը, որ վիշապաքարը հասկանալու համար, նախ և առաջ պետք է հասկանալ նրա միջավայրը:

Վիշապաքարերի՝ ծիսական կառույցների, մասնավորապես կրոնիկա-դամբարանների, թաղման ծեսի և նախնիների հետ առնչվելու վարկածը ոչ թե հակադրվում է «ջրանցքների» տեսությանը, այլ լրացնում է դրան³⁴⁹: Ի դեպ, մեր դասականները, ովքեր առաջ են քաշել ջրանցքների վարկածը, ժամանակին արդեն արտահայտել են նման գաղափարներ:

Այսպես, թեև Ն. Մառը լռում է Գեղամա լեռների կրոնիկա-դամբարանների մասին³⁵⁰, սակայն խոսելով խաչքարերի, վաղ քրիստոնեական և ուրարտական կոթողների ու վիշապաքարերի ժառանգական կապի մասին, դրանց բնորոշում է որպես «նախնիների հուշարձաններ»³⁵¹: Յ. Սմիռնովը մի առիթով գրում է, որ ցլակերպ վիշապաքարերը կարող էին լինել դամբանային, տաճարային, սահմանաքարային կոթողներ, մինչդեռ ձկնակերպերի գործառույթն անհասկանալի է³⁵²: Ա. Քալանթարը մենհիրների մասին ընդհանրապես գրում է. «Նոքա ըստ երևույթին կանգնած են գերեզմանների վրա, թեև թաղման հետքեր չեն գտնված դեռևս: Գիտնականներից ոմանք կարծում են, որ մենհիրները շինվում էին սրբազան տեղերի վրա. այս բացատրությունը էապես հանգում է առաջինին, քանի որ թաղման տեղերն էին, որ մեռածների հոգու պաշտամունքի հետևանքով, բնականաբար, դառնում էին սրբազան: Համենայն դեպս, հիմք կա կարծելու, որ մենհիրները ստեղծվել են իբրև գերեզմանարձաններ»³⁵³: Նմանապես Ս. Լիսիցյանը և Ե. Բայբուրթյանը գրում են, թե մենհիրները «կանգնեցված են ի պատիվ որևէ աչքի ընկնող հանգուցյալի, կամ նրա սպանված թշնամու, կամ որպես կապած դաշնագրի հուշարձան, կամ նույնիսկ որպես գոհաբերության տեղի նշան... Սովորաբար մեզալիտիկ հուշարձանների բոլոր երեք տիպերը (մենհիր, կրոնիկա, դոլմեն - *հեղինակներ*) հանդիպում են միատեղ և դասավորված են լինում իրարից ոչ հեռու»³⁵⁴:

Մենհիրների և դրանց տարատեսակ վիշապաքարերի՝ կրոնիկա-դամբարանների հետ ունեցած կապի մասին գրվել է նաև այլ առիթներով՝ պատմա-հնագիտական³⁵⁵ և առասպելա-

³⁴⁸ L. Abrahamian, Armenian Identity in a Changing World, Costa Mesa, 2006, p. 273.

³⁴⁹ Վիշապաքարերը նախնիների պաշտամունքի հետ են առնչում նաև վրաց հնագետների վերջին հետազոտությունները (Դ. Нариманишвили., Н. Шаншавили, Мегалиты и культ предков на Южном Кавказе, АЭФК, Махачкала, 2007, с. 164-165):

³⁵⁰ Հմմտ. սակայն նրա դիտողությունը Արագածի բոլոր լանջերին առկա դամբարանների վերաբերյալ (Արիսիվային նյութեր, ըստ՝ Գ. С. Хачатрян, Из истории изучения древнейших памятников склонов горы Арагац, Арменоведческие исследования I, Ереван, 1974, с. 91):

³⁵¹ Н. Я. Марр, Кавказ и памятники его духовной культуры, Известия императорской академии наук, 1912, с. 68.

³⁵² Н. Я. Марр, Я. И. Смирнов, նշվ. աշխ., էջ 64:

³⁵³ Ա. Քալանթար, Հնագիտություն Ա. նախապատմական հնագիտություն, Երևան, 1923, էջ 65:

³⁵⁴ Ս. Լիսիցյան, Ե. Բայբուրթյան, նշվ. աշխ., էջ 20-21:

³⁵⁵ Այսպես, արդեն Վ. Տեպցովը Թեթրիծղարո 1 վիշապաքարը ենթադրում էր դամբարանի համատեքստում (В. Тепцов, Агбулахские легенды, СМОПІК IX, 1890, с. 131): Ա. Քալանթարը և, նրան հետևելով, Հ. Բերբերյանը գրում են, թե արագածյան Թիքմաթաշի (= Հայտերի Օրա 1) շրջակայքում եղել են կրոնիկաներ (Ա. Քալանթար, նշվ. աշխ., էջ 214, 224; Н. Berbérian, Découvertes archéologiques en Arménie de 1924 à 1927, RĖA 7, 1927, p. 287): Քալանթարը խոսում է նաև կրոնիկաների մոտ ընկած այլ մենհիրների մասին (Ա. Քալանթար, նշվ. աշխ., էջ 213, 225): Մենաքարեր/կոթողներ կրոնիկաների/դամբարանների միջավայրում հիշում է Թ. Թորամանյանը Շամիրամում, Կափըլիում, Խզնավուզում, Դարբանդում: Ընդ որում, նա տեսնում է Շամիրամի և այլ մենաքարեր նույն համատեքստում, այն տարբերությամբ, որ Շամիրամի մենաքարակ օրինակները կենտրոնացված են միևնույն միջավայրում (Թ. Թորամանյան, նշվ. աշխ., 1942, էջ 9, 26, 33, 40; Շամիրամ գյուղը վիշապաքարերի և Արագածից եկող հնագույն ջրանցքային համակարգի համատեքստում է դիտարկում է նաև Ղափանցյանը (Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 101, 105, 140, 170-171)՝ առանց նշելու Շամիրամի մենաքարերի մասին: հմմտ նաև Մ. Աբեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկեստ դիցուհու արձաններ, Երևան, 1941, էջ 78):

Հնագույն Հայաստանում դամբարանների վրա մենհիրներ կամ հսկա «վիշապներ» կանգնեցնելու մասին խոսում է Բ. Առաքելյանը՝ բերելով բազմաթիվ գուգահեռներ Կովկասից և դրանից դուրս (Բ. Առաքելյան, Հայկական պատկերաբանականները IV-VII դարերում, Երևան, 1949, էջ 35-36): Ս. Բարխուդարյանը գրում է. «Հավանական է համարվում, որ մենհիրները վերաբերում են նոր-քարե դարի ժամանակաշրջանին և կանգնեցված են նշանավոր մարդկանց տոհմերի առաջնորդների գերեզմանների վրա» (Ս. Գ. Բարխուդարյան, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, էջ 53), «շուրջանակի մանր քարերով և հողով ամրացված» (Ս. Գ. Բարխուդարյան, նշվ. աշխ., 1963, էջ 122): Մենհիրները (որոնց թվում նաև վիշապաքարերը) դամբարանի/կրոնիկի միջավայրում է քննարկում Օ. Խալիպայանը (Օ. X. Халпачьян, Древнейшие сооружения на территории Армении, Всеобщая история Архитектуры 1 - Архитектура древнего мира, Москва, 1970, с. 253-255): Վիշապաքարերը, «օղուզի/հսկայի տները», Զորաց քարերի մեգալիթյան համալիրը, Շամիրամի մենհիրները դամբարանների և թաղման ծեսի համատեքստում է ներկայացնում Ս. Մնացականյանը (Ս. Մնացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982, 9, էջ 47-54, նկ. 1ա, բ, 2ա): Է. Խանգադյանի կարծիքով, եզան գոհաբերության պատկերով վիշապաքարերը (որոնք, ըստ հեղինակի, վերաբերում են այդ կոթողների զարգացման ուշ փուլին) «ծառայել են որպես դամբարանաքար» (Է. Վ. Խանգադյան, Հայկական լեռնաշխարհի վիշապները, Հայագիտության արդի վիճակը և դրա զարգացման հեռանկարները. Հայագիտական միջազգային համաժողով, 2003 թ. սեպտեմբերի 15-20, Զեկուցումների դրույթներ, Երևան, 2003, էջ 36): Վիշապաքարերի դամբարանների և թաղման ծեսի հետ ունեցած կապին անդրադարձել է նաև Հ. Սիմոնյանը (H. Simonyan (ed.), Archaeological Heritage of Armenia, Yerevan, 2012, 30):

Վիշապաքարի դամբարանի/կուրգանի հետ առնչվելու մասին խոսում են նաև Հ. Քոշայը և Հ. Թանյուն՝ Օնվակն Հյուսիսային Թեփեջիկ 1 (H. Tanyu, Türklerde taşla ilgili inançlar, Ankara, 1987, s. 197), ինչպես նաև Բ. Ավշարովյան նախիջևանյան Բջնակ 1 (H. Авшарова, Вишapotипные памятники Азербайджана, АЭФК, Тбилиси, 2010, с. 328-329) վիշապաքարերի օրինակով. վերջինս շեշտում է ձկան իմաստաբանական առնչությունը թաղման ծեսին:

Քննարկվող համատեքստում ամենամանրամասն և հիմնավոր դիտողությունը պատկանում է Հ. Մարտիրոսյանին: Ժայռապատկերների 1967-1968 թթ. հետազոտությունների ընթացքում նա մատնանշում է դամբարանային մեծ ու փոքր խմբեր, որոնց մի զգալի մասը ուղղակիորեն կապված են ժայռապատկերների ստեղծողների մշակույթի հետ: Վաղբրոնզեդարյան-վաղերկաթեդարյան հուշարձանների նման խմբեր է նա հիշատակում Գեղամա լեռների համակարգում, Արագածի հարավային գագաթի լճակի մոտ, Արագածի արևելյան և արևմտյան փեշերին. «Մերձալպյան գոտուց վերև ծովի մակերևույթից 2000-3000 մ բարձրության վրա խիստ փոփոխությունների են ենթարկվում հուշարձանների մասշտաբները, բնույթը, արտաքին տեսքը: Արագածի և Գեղամա սարերի ալպյան ու վերալպյան գոտիներում հազվադեպ հանդիպում են փոքրիկ բնակատեղիներ և ավելի հաճախ՝ կրոնիկների ու դամբարանաքարերի 5-10 թաղումներից բաղկացած հանգստարաններ, որոնք տեղադրված են հնում սրբազան համարվող գագաթների, ժայռապատկերների կամ վիշապ-ձկների հսկա քարակոթողների հարևանությամբ: Գեղամա լեռներում դամբարանային նման հուշարձաններ հայտնաբերվեցին Փոքր Պայտասարի (Նալթափա), Երեք գագաթների (Ուչ թափա), ինչպես նաև Թոխմախան Գյուլի և Իմիրգեկի վիշապաքարերի մոտ: Հուշարձանների տեղագրության նման պատկեր կրկնվեց նաև Արագածի վիշապների շրջանում: Հոգևոր մշակույթի հուշարձանների տեղադրման այս օրինաչափությունը ակամայից հիշեցնում է հայկական կամ ընդհանուր արևելյան առասպելներն ու հեքիաթները, որոնք վերաբերում են վիշապներին մատուցվող մարդկային գոհերին կամ դրանց պաշտամունքին ծառայող հավատարիմ քրմերին, որ սպանվում և թաղվում էին այդ կոթողների մոտ: Մի կողմ թողնելով հեքիաթների, առասպելների և հնագիտական նյութերի գուգահեռ մեկնաբանման գայթակղիչ փորձերը՝ մենք կարող ենք, այդուհանդերձ, արձանագրել պաշտամունքային հուշարձանների առատությունը բարձր լեռնային գոտիներում և նրանց տարբեր խմբերի փոխադարձ առնչակցությանը» (Հ. Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 191-193):

³⁵⁶ Ս. Աբելյանը քննվող քարակոթողները հնարավոր համարելով առնչել աժդահանների և ոչ վիշապների հետ, որպես փաստարկ է բերում այն, որ Արագածի վրա դրանք կոչվել են «օղուզի/հսկայի/ազնավուրի գերեզմաններ» (Ս. Աբելյան, նշվ. աշխ., էջ 70): Նույն համատեքստում նա հիշում է նաև գերեզմանների և գոհաբերության ծեսի հետ կապված մի գերապրուկ, երբ գերեզմանից մի գանգ հանելով՝ ձգում էին այն գետը, որ անձրև գա (Ս. Աբելյան, նշվ. աշխ., էջ 89): Գ. Ղափանցյանը վիշապաքարերի մեջ մարմնավորված է տեսնում մահվան և հարության աստվածության, իսկ Մասիսը որպես վիշապների խորհրդանշիչ համեմատում է Արալու անդրաշխարհային սարի հետ, որ կապվում էր նաև կյանքի ջրերի հետ (Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 16): Վիշապի կապը ամպրոպի աստվածության և անդրաշխարհի հետ, օձ-վիշապի մահվան աշխարհի և մեռած հոգիների տիրակալ հանդիսանալը, հնդեվրոպական առասպելաբանության մեջ մահվան աշխարհի որպես արտապատկերացումը շեշտվել է Ա. Պետրոսյանի կողմից (A. E. Петросян, Отражение индоевропейского корня *wel- в армянской мифологии, ВОН 1, 1987, с. 57, 64): Նա ևս ընդգծում է, որ որոշ վիշապաքարեր (մասնավորապես Իմիրգեկում) կարող էին գտնվել կրոնիկներով շրջագծված դամբարանների վրա՝ հղելով «Արևի տաճար» ֆիլմը («Հայք» կինոստուդիա, 2009, սցենարի հեղինակ Վահան Տեր-Ղազարյան, ռեժիսոր՝ Շավարշ Վարդանյան): Այս համատեքստում խիստ հավանական է թվում Լ. Աբրահամյանի տեսակետը: Ըստ նրա, ուղղահայաց հուշարձանը նույն համաշխարհային ծառի կամ axis mundi-ի մի տարբերակն է. «Այս տիպի արխայիկ հուշարձանները հիմնված են մահվան և վերածննդի (ուղղահայաց կանգնեցնելը) գաղափարի վրա և պատահական չէ, որ հնագետները հայտնաբերում են քարե ֆա-

հաստատվում է ոչ միայն մեր արշավախմբի հայտնաբերած նոր վիշապաքարերի, այլ նաև նախկինում հայտնի Լճաշեն ¹³⁵⁷, Քարեձի ¹³⁵⁸, Սառնաղբյուր ¹³⁵⁹ Ոսկեթաա ¹, Դարիկ ^{1,360} Բջնակ ¹³⁶¹, Թեփեջիք ¹³⁶², Թիքմաթաշ ¹³⁶³, Մոսունին Գյոլ ¹³⁶⁴, Չիկիանի ¹³⁶⁵ վիշապաքարերի համատեքստում, որոնք գտնվել են դամբարանների վրա կամ դամբարանների միջավայրում: Ուշագրավ է, որ վիշապաքարակերպ մենաքար է եղել նաև Թոեղքի V դամբարանաթմբի վրա, որտեղից ի հայտ է եկել հայտնի արծաթե պատկերագիր գավաթը³⁶⁶:

Ավելին, այս տեսակետը համապատասխանում է ժողովրդի մեջ տարածված պատկերացմանը վիշապաքարերի գործառույթի մասին. այսպես «տեղացիներն այդ հուշարձանները կոչում են «օղուգների (հսկաների) գերեզմաններ»՝ ընդունելով դրանք որպես մեծ քարարկղերի տեսքով դամբարանների վերին սալեր»³⁶⁷: Ուշագրավ է, որ Արագածի և Ղազախի կրոնիկաների՝ «պարույրաձև քարե շրջանների» համատեքստում (որոնց կենտրոնում նաև երկար քարեր են լինում), խոսք է գնում, այն մասին, որ դեռևս XIX դ. տեղացի բնակչությունը գնում էր վերջիններիս մոտ աղոթքի՝ ընկալելով դրանք որպես «սրբերի գերեզմաններ»³⁶⁸: Վիշապաքա-

լոսները դամբարանային հուշարձաններում որպես այս գաղափարի բնական մարմնավորում»: Այսպիսի հուշարձանները մշտապես կապված են բուն կամ վերացական (մասունքներ) զոհաբերության գաղափարի հետ: «Այսպիսով հուշարձանը փաստորեն դամբարան է: Համենայն դեպս, սա թերևս հանդիսանում է հուշարձանի ամենակարևոր առանձնահատկություններից մեկը»: Այդպիսին է խաչքարը, որն ուղղահայաց կանգնող դամբարանաքար է, և որը հեշտորեն վերածվում է հուշակոթողի՝ նշելու համար այլ բնույթի իրադարձություն, քան մահն է: Լինելով խմբի հիմնական իրադարձությունների մարմնավորումը՝ հուշարձանը դառնում է այն առանցքը, որի շուրջ նշվում են այդ նույն իրադարձությունները: Երբեմն հուշարձանը կրում է ծեսի ուղղակի նշաններ, ինչպես վիշապաքարերի դեպքում է (**L. Abrahamian**, նշվ. աշխ., էջ 273-276):

³⁵⁷ Է. Խանգադյան, Լճաշենի վիշապը, էջ 86-91:

³⁵⁸ Օ. Ս. Խնկկյան, Յլագլուխ կոթողներ Վարդենիսի լեռներից և «վիշապաքարերի» մեկնության հարցի շուրջ, էջ 148-159:

³⁵⁹ Ստրպետ, նշվ. աշխ., էջ 310: Սառնաղբյուր 1-ը դամբարանադաշտի տարածքում է հիշատակվում նաև Հուշարձանների պետական ցանկում:

³⁶⁰ Ոսկեթաա 1-ը դամբարանի վրա և դամբարանադաշտի տարածքում է հիշատակվում Պատմաշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արխիվում, Դարիկ 1-ը՝ Հուշարձանների պետական ցանկում, ինչը լիովին հնարավոր է ըստ մեր դիտարկումների:

³⁶¹ Ա. Այվազյան, Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Երևան, 1987, էջ 8:

³⁶² Խոսքը գնում է վերոհիշյալ Թեփեջիկ գյուղում (Օռվակն Հիւսիսոյի մոտ) գտնված և ութ կանգուն քարերով շրջապատված կրոնիկայի մեջտեղում գտնվող ձկնակերպ վիշապաքարի մասին (**K. Kökten**, 1952 Yılında yapılmış tarihöncesi araştırmaları hakkında, Ankara Üniversitesi dil ve tarih-çöğrafiya fakültesi dergisi 11, 1953, s. 205-206):

³⁶³ Թիքմաթաշ 1-ը (= Թեքելիդաշ) գտնվում է Ծալկայի ջրամբարի տարածքում, Սանտմեր և Շիպյակ գյուղերի միջև: 1936 թ. Բ. Կուֆտինը պեղումներ է իրականացնում այս վիշապաքարի շուրջ՝ նպատակ ունենալով այն տեղափոխել ջրամբարի տարածքից, սակայն պեղումները մշակութային շերտ չեն բացահայտում: Նույն թվականին այդ վիշապաքարի պեղումները շարունակում է Լ. Մելիքսեթ-Բեկը և պարզվում է, որ այն ձկնակերպ կոթող է. մշակութային շերտի մասին վերստին խոսք չի գնում: 1999-2000 թթ., երբ ջրամբարի մակարդակն իջավ, նորից ի հայտ եկավ Թիքմաթաշը, և պարզվեց, որ այն գտնվում է N 6 դամբարանի հարավային մասում, իսկ շրջակայքում կան քարե լիցքով այլ դամբարաններ (**Б. Куфтин**, Дневник 1936 г., по **Г. Нариманишвили**, Новые открытия в Тriaлетской культуре, Тбилиси, 2009, с. 37-38 (на груз. яз.): Գ. Մանսֆելդը, չիմանալով այս մասին, քննարկվող վիշապաքարը համեմատում է արևմտաեվրոպական մենհիրներին և անվանում «սահմանաքար» (**G. Mansfeld**, Der Tqisbolo-gora: Eine Siedlungsgrabung als georgisch-deutsches Gemeinschaftsprojekt in der Republik Georgien, AW 27/5, 1996, S. 379):

³⁶⁴ Այս պարուրազարդ վիշապաքարը ևս գտնվում է Ծալկայի ջրամբարի տարածքում, որտեղ մինչև ջրամբարի կառուցումը Մոսունին Գյոլ լճակն էր: Այն եղել է կրոնիկայի մեջտեղում, իսկ շրջակայքում եղել են հինգ կուրգաններ, երկու կրոնիկաներ, քարարկղեր և բազմաթիվ փոքր քարե կլոր լիցքեր (**Г. Нариманишвили**, նշվ. աշխ., էջ 39-40):

³⁶⁵ Գտնվում է Չիկիանիի վանակատի հանքի կենտրոնում, որի շրջակայքում կան մոտ 10 կուրգաններ՝ քարե կամ վանակատե լիցքով: Բ. Կուֆտինը պեղել է դրանցից մի քանիսը, ըստ որի դրանք թվագրվում են Ք.ա. III հազ. (Գ. Նարիմանիշվիլի, անձնական հաղորդում):

³⁶⁶ Ըստ Բ. Կուֆտինի 1936 թ. օրագրի (**Куфтин 1936**, Дневник; **Г. Нариманишвили**, նշվ. աշխ., էջ 37; **Գ. Նարիմանիշվիլի**, անձնական հաղորդում, 11.10.2012, Էրզրում):

³⁶⁷ **Б. Б. Пиотровский**, Вишاپы: каменные статуи в горах Армении, Ленинград, 1939, с. 13.

³⁶⁸ **В. А. Гурко-Кряжин**, նշվ. աշխ., էջ 220, նաև վիշապաքարերի համատեքստում:

րերի՝ նախնիների հետ կապված այս գործառույթը մասնակի գուգահեռներ է գտնում ինչպես նախապատմական մեգալիթյան մշակույթներում³⁶⁹, այնպես էլ անտիկ³⁷⁰ կամ միջնադարյան³⁷¹ իրականության մեջ:

Թ. Թորամանյանը, Հայաստանի նախաքրիստոնեական սրբավայրերի մասին խոսելիս հնարավոր էր համարում, որ մեր նախնիները որպես բնապաշտներ պաշտամունքային հիմնական արարողությունները կատարել են բացօթյա՝ սրբազան համարված վայրերի վրա, որպիսիք են նախ և առաջ լեռնային բարձունքները³⁷²: Այս իմաստով, վիշապաքարային միջավայրերը կարող էին լինել համանման պաշտամունքային տարածքներ: Վիշապաքարերի շուրջ ձևավորված մշակութայնացված ու խորհրդավոր կենտրոններում՝ հարուստ ջրի, մաքուր օդի, կրակային ամպրոպի ներքո և արևին մոտ, ամենայն հավանականությամբ, տեղի էին ունենում զոհաբերություններով ուղեկցվող ծիսական արարողություններ, որոնք առաջին հերթին ուղղված էին հողին՝ նախնիների հիշողության պահպանմանը, որի մեջ կայանում է յուրաքանչյուր հասարակության գոյության տևականությունը, ինչպես նաև՝ համայնքի ու նրա անդամների բարօրության ապահովմանը: Այդ հիշողությունը գոյատևում էր կրկնվող տոների միջոցով, որոնց իրականացնողների համար վիշապաքարային միջավայրերը հանդիսանում էին յուրահատուկ բեմահարթակներ:

Այսպիսով, լինելով էությամբ սինկրետիկ մի երևույթ, և արտահայտելով մահվան ու կյանքի հակադրամիասնությունը, վիշապաքարը միահյուսում էր իր մեջ այն ամենն, ինչ ակնկալում էր մարդը՝ նախնիների հարգանքի միջոցով դեպի բարեկեցություն՝ հարություն, պտղաբերություն, ջուր³⁷³: Առկա տվյալները խոսում են այն մասին, որ վիշապաքարային միջավայրերը, ամենայն հավանականությամբ, վերարտադրում են զարնանային մի տոնակատարություն³⁷⁴: Այդ տոնը պիտի որ նման լիներ նախասկզբնական սինկրետիկ այն տոնին, որը

³⁶⁹ **Թ. Թորամանյան**, նշվ. աշխ., էջ 1942, 10:

³⁷⁰ Հմմտ. նախնիների պաշտամունքը, նրան առնչվող միջավայրերը և արձանները, որոնց արմատները գնում են հնագույն շրջան, ըստ **Գ. Կիրակոսյան**, Вопросы преемственности официального культа в античной Армении, ВОН 10, 1985, с. 60.

³⁷¹ Հմմտ. հայկական վաղմիջնադարյան «մեմորիալ» հուշարձանը, որն ի հայտ է գալիս վկայարանի՝ յուրահատուկ մարդու/սրբի դամբարանի, իշխանի կամ անհայտ զինվորականի դամբարանի, և ի վերջո, այս համատեքստում՝ կենտոսֆի վրա, հմմտ. **Ա. Մնացականյան**, նշվ. աշխ., 1982, էջ 58:

³⁷² **Թ. Թորամանյան**, նշվ. աշխ., 1942, էջ 86: Բարձր լեռների գագաթները/կատարները բազմաթիվ, այդ թվում նաև հայկական, ավանդություններում ընկալվում են որպես աշխարհի կենտրոն, ուր կատարվում են զոհաբերման ծիսական արարողություններ՝ ուղղված մարդկային գոյության հավասարակշռության պահպանմանը (**Ս. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 36, 200):

³⁷³ Հմմտ. **Գ. Ղափանցյան**, նշվ. աշխ., էջ 137:

³⁷⁴ Վիշապաքարերի սինկրետիկ կենտրոնները մասամբ բացահայտվում է լեռնաբնակ հայկական համայնքների (հատկապես զանգեզուր-արցախյան) ազգագրական նյութերում, ուր լեռնային մեկուսացման պայմաններում, նախաքրիստոնեական տարրերը հատկապես անխառն են պահպանվել: Այս գոտում սրբավայրերը բաժանվում էին մի քանի խմբի, որոնց մեջ կարևոր էին լեռնագագաթներին և դրանց լանջերին գտնվող սրբերը, որոնք հիմնականում տեղադրված էին դժվարամատչելի վայրերում, գոգավորություններում՝ քամուց պաշտպանվելու համար և որտեղից անսահման տեսարաններ էին բացվում: Դրանց մեջ կային սրբեր՝ ժայռաբեկորի, քարե սյան, դոլմենի տեսքով: Նմանապես Ջավախքի հայերը լեռնագագաթներին երկրպագում էին երկար քարեր (**Ս. Լիսիցյան**, նշվ. աշխ., էջ 279): Սրբավայրի մյուս տեսակը լեռնագագաթներին և լանջերին գտնվող գերեզմաններն էին, որոնց վերագրվում էր հմայական ուժ (հմմտ. **Ս. Լիսիցյան**, նշվ. աշխ., էջ 216, 297): Իսկ երբ գերեզմանը պատկանում էր հատուկ մարդու (սուրբ, նահատակ, ճգնավոր, զոհված, կայծակից խոցված, ևն), ապա այն ստանում էր փրկարար գործություն: Այդպիսի գերեզմաններում թաղվածների անունները որպես կանոն անհայտ էին: Դրանք ուխտատեղիներ էին, որոնց այցելում էին վախից ու ամլությունից ազատվելու, անձրև բերելու («երկնային ջրերը բացելու») կամ դադարեցնելու համար: Գերեզմանի վրա հիվանդին ջուր էին խմեցնում, վրան ջուր ցանում և լվանում վախը, կամ լվանում էին գերեզմանը, զոհ մատուցում: Ընդ որում, այդ բարձր լեռնային գերեզմանները կարող էին լինել ոչ միայն իրական գերեզմաններ, այլ նաև ֆիկտիվ քարակույտեր, բայց կարևորը նրանց՝ ժողովրդի կողմից գերեզմանի և սրբության հետ նույնակալմանն էր (**Ս. Լիսիցյան**, նշվ. աշխ., էջ 275): Սրբավայրի մյուս տեսակը բարձրադիր աղբյուրներն էին՝ գերեզմանների և այլ սրբավայրերի հարևանությամբ: Տոների ժամանակ, դաշտավայրային կամ նախալեռնային բնակչությունը հանդիսավոր ուխտագնացություն էր իրականացնում դեպի բարձրադիր սրբավայրերը: Ամենանշանավոր տոնը Վարդավառն էր. «Ժողովրդական տոներից մեկը, որն առանձնապես խոշոր չափերով պահպանել էր իր մեջ

արտահայտվում էր միևնույն ժամանակ նվիրագործման, փոխանակման, օրգիաստիկ և թաղման ծեսերի միջոցով³⁷⁵:

նախնական մտածողության բնորոշ սովորույթները՝ Վարդավառի տոնը, նվիրված էր լեռների գագաթների պաշտամունքին... Վարդավառի օրը հավատացյալները մեծ բազմությամբ դիմում էին սրբազան լեռների գագաթներին գտնված արոտավայրերի այցելության: Այնտեղ գտնվում էին հրաշագործ գերեզմաններ...» (Ս. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 275): Ժողովուրդն այցելում էր նախ լեռան գագաթին գտնվող անհայտ գերեզմանը, աղոթում, ապա իջնում սարից ու լճից ոչ հեռու մի տափարակ հրապարակի վրա, բերված մատաղացուն մորթում (Ս. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 280): Հազարավոր գոհաբերությունները մատուցվում էին տոնախմբության՝ հացկերույթի և խնջույթի ներքո, որ ուղեկցվում էր երգով, պարով, նվագով, մրցույթներով (Ս. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 278-282; Լ. Վարդանյան, Հ. Սարգսյան, Հայոց սրբավայրերի դասակարգման փորձ (ըստ Ստ. Լիսիցյանի Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի դաշտային ազգագրական նյութերի), Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, էջ 368-376): Լեռնագագաթների, լեռնային սրբավայրերի պաշտամունքը և դրանց հետ կապվող տոները հիմնականում սինկրետիկ բնույթ և մի կողմից առնչվում էին արևի (ըստ՝ Ս. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 282), մյուս կողմից ջրի և հողի (գերեզման, նախնի) պաշտամունքին: Հիշյալ սրբազան միջավայրերի համատեքստում ուշագրավ է Ղ. Ալիշանի մի տեղեկությունը. մասնավորապես, Կաղզվանի մոտ, «լեռնադաշտակի» մեջ Վարդիհեր կոչված տեղ է եղել, որ հայտնի է որպես սրբատեղի, ճգնավայր, ուր կային քարանձավներ, աղբյուրներ, սրբերի գերեզմաններ, կար նաև մի քարակույտ, որ անվանում էին «Արջու գերեզման»: Ոչ պատահականորեն այս միջավայրում է եղել Վիշապաձորը, «վիշապաց բնակավայրը» (Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 49-51; հմմտ. նաև Ստեփանոս Տարոնեցի Աստղիկ, Պատմություն տիեզերական (թարգմ. Վ. Հ. Վարդանյանի), Երևան, 2000, Բ. Բ): Վարդիհերի «Վիշապազանց ձորը»՝ Անահիտի (նույնն է ինչ վիշապաքարերի) պաշտամունքի համատեքստում հիշում է նաև Ատրպետը (Ատրպետ, Ճորոխի ավազանը. աշխարհագրական եւ պատմական հետազոտություններ, ՀԱ, 1926, էջ 605):

Բյուրակնյան, Վանանդի և Արագածյան բարձրադիր սրբավայրերի (Զիարեթների) միջավայրում իրականացված հիշյալ տոնակատարությունների մասին նորից գրում է Ատրպետը քննարկելով վիշապաքարերի խնդիրը: Ամեն տարի, հատկապես վարդավառի տոնին, տարբեր համայնքներ հազարավոր մարդկանցով ուխտի էին գնում այդ սրբավայրերը: Տոները մի քանի օր էին տևում և ուղեկցվում էին գոհաբերություններով, երգ ու պարով, հեքիաթասացների ցուցադրություններով, «անսահտական խրախճանքներով» (Ատրպետ, նշվ. աշխ., 1931, էջ 310-319): Այս գործընթացը Ատրպետը ճշմարտանման ձևով նկարագրել/վերականգնել է իր «Վիշապամայր» պատմվածքում, որն ունի այսպիսի բովանդակություն. երաշտ է Արարատյան դաշտում: Դվինի իշխանը շքախմբով և ժողովրդի հետ պատրաստվում է ուխտագնացության Գեղամա լեռներ՝ Վարդեհերի/Վարդավառի տոնը նշելու: Քարավանը հասնելով Գեղարդի մեխյանի մոտ գոհաբերություններ է կատարում և Գառնիի ձորով բարձրանում լեռներ: Թափորը հասնում է «Վիշապազանց սարահարթները», լճակների մոտ, որտեղ գտնվում են ձկնանման ուղղաձիգ կանգնած արձանները՝ նվիրված Վիշապամորը, որ դրական սկիզբ է (vs. Վիշապաքաղը): Խփվում են վրաններ, քրմերը ցյան, գառների և ուլերի գոհաբերություններ են կատարում և սկսվում է յոթ օր շարունակվող տոնախմբությունը, որ ուղեկցվում է նվագով, պարով, խաղով՝ նվիրված Վիշապամոր դստեր՝ Աստղիկին (Վարդավառի խորհրդանիշը) և Անահիտին: Քրմի կոչով և պապերի օրինակով որոշում է կայացվում ջրանցքներ կառուցել լուծելու համար երաշտի խնդիրը, որից հետո Վիշապամայրն ուղարկում է անձրև (Ատրպետ, Վիշապամայր. պատմվածք, Ալեքսանդրոպոլ, 1912):

Լեռնագագաթներին և լեռնադաշտերում տեղի ունեցած համայնական ծիսակատարությունները, որոնք ուղեկցվում էին ցլի գոհաբերություններով և կատարվում էին պահպանիչ/անձրևաբեր ցասման խաչերի միջավայրում, նկարագրում է նաև Մ. Աբեղյանը վիշապաքարերի համատեքստում՝ շեշտելով այդ ծիսակատարությունների կապը վարդավառի տոնին, ջրի պաշտամունքին (Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 75-78, 82, 87): Ուշագրավ է, որ Աբեղյանը վիշապաքարերը համարում է ցասման խաչերի նախատիպը և կոչում «ցասման արձաններ» (այդ համատեքստում է բացատրում նաև Աժդահա Յուրտ 1-ի խաչապատկերը). «Քարը կայծակի սիմբոլն էր, իսկ կայծակն ամպրոպային աստծո զենքը» (Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 88-89, 93):

Վարդավառի տոնը վիշապաքարերի համատեքստում քննարկում է նաև Գ. Ղափանցյանը: Ներկայացնելով այն մեռնող-հարություն առնող աստվածության պաշտամունքի համատեքստում՝ հեղինակը հիշատակում է նաև վերջինիս առնչվող բարձրադիր գերեզման սրբավայրերը: Ուշագրավ է, որ Արտաշես արքայի որդին՝ «վիշապազուն» մարերի դեմ Արարատի ստորոտում կռված Մաժանը, թաղվում է Բագավանում, որի գերեզմանին կառուցվում է բազիլ: Այստեղ Վաղարշ թագավորը հետագայում սահմանում է աշխարհախումբ տոն, որն առնչվում էր նավասարդին կամ վարդավառին (Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 99, 120-126):

Վարդավառի տոնախմբությունները, որոնք ուղեկցվում էին աշուղների մրցություններով, ըմբշամարտով, պար ու երգով, կերուխումով, փահլևաններով, տոնավաճառով քննարկում է Ս. Հարությունյանը՝ վիշապամարտի առասպելաբանության համատեքստում (Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 158-167):

Հմմտ. նաև Ս. Մնացականյանի դատողությունները վիշապաքարերի շուրջ տեղի ունեցած տոնակատարությունների մասին (Ս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 557):

Լեռների գագաթներին և մենաքարերի շուրջ տեղի ունեցած նույնական տոնակատարությունների մասին՝ ըստ վրաց ազգագրական նյութերի, հմմտ. Վ. Ա. Гурко-Кряжин, նշվ. աշխ., էջ 215-216:

³⁷⁵ Л. А. Абрамян, Первобытный праздник и мифология, Ереван, 1983.

Հիշյալ սինկրետիկ միջավայրերը դիպուկ կերպով նկարագրում է Ն. Ադոնցը. «Տոտեմական շրջանում բեղմնավորության սկզբունքը հավանորեն հանդես է գալիս կենդանական կերպարանքով, այս կամ այն կենդանու, գազանի, սողունի և կամ թռչունի նմանություն ստանալով: Հետո է, որ այր և կնոջ պատկերով է ներկայանում, հաստամարմին և բազմաստիկ կին՝ և երիտասարդ գեղանի այր: Առաջինը պատկերացնում է նաև մայր-երկիրը, իսկ երկրորդը՝ կայծակնահար երկինքը: Նրանց հանդիպումի և միավորության վայրերն են ամպերի մեջ թաղված բարձր լեռների գագաթները, ուր կարծես երկինքը իրոք իջնում է, մոտենում երկրին և նրան բեղմնավորում է խոնավությամբ, հորդ անձրևներով և կյանքի կոչում կանաչագեղ բնությունը ձմռան մահացությունից»³⁷⁶:

Ասվածի համատեքստում, վիշապաքարը ոչ թե մի անկախ գուգահեռ աշխարհի կամ ինչ-որ մեկ գործառույթ ունեցող երևույթի արտացոլումն է, այլ տվյալ հասարակության ներքին համակարգի հոգևոր ներուժի խտացումը՝ որպես կանոն հիմնական բնակավայրերից հեռու, բայց վերջիններիս անմիջական տեսադաշտում: Մա է պատճառը, որ տարբեր գիտնականներ տարբեր խորհրդանշական հատկանիշներ են նկատել վիշապաքարի մեջ՝ կապելով այն ջրի, պտղաբերության, մահվան ու հարության, և այլնի հետ: Մինչդեռ պետք չէ տարանջատել նույն երևույթի տարբեր դրսևորումները, պետք է կարողանալ սահմանել վիշապաքարի կերպարանափոխության բազմապիսի մակարդակները:

Հնագույն Հայաստանի բնակչության համար, սակայն, բարձր լեռները կարող էին ունենալ ոչ միայն խորհրդանշական ծանրաբեռնվածություն. դրանք կարող էին լինել նաև ամառային արոտավայրեր և կենսական ջրի աղբյուր³⁷⁷: Հետևապես, առաջարկելով վերանայել «ջրանցքների վարկածը», մենք լիովին հնարավոր ենք համարում վիշապաքարերի՝ կոնկրետ և վերացական առնչությունը ջրի հետ. մասնավորապես, այն նույն հասարակական խմբերը, որոնք արարում էին վիշապաքարերը, կարող էին ներառված լինել ջրակուտակման աշխատանքներում՝ վիշապաքարերի տեղադրությունը կապելով այն վայրերի հետ, որտեղ հավաքվում էր հալվող ձյունը: Չէ՞ որ վիշապաքարերի մեծագույն մասը գտնվում է ջրով հարուստ միջավայրերում, իսկ նրա հիմնական տիպերից մեկը ձուկ է մարմնավորում: Այս իմաստով, այո, վիշապաքարերը նաև «ջրերի պահապաններն էին»³⁷⁸:

Ահա սրբազան/սակրալ (հիմնական) և կիրառական/ուտիլիտար (երկրորդական) այս երկիմաստության մեջ մեկ անգամ ևս բացահայտվում է վիշապաքարի սինկրետիզմը՝ նախնադարյան մարդու աշխարհայացքի ամենաբնորոշ գիծը, որում սակայն կան առաջնային և երկրորդական մակարդակներ, որոնք կարող են ունենալ ինչպես իմաստային, այնպես էլ ժամանակագրական ենթաշերտեր: Այս տեսանկյունից, վիշապաքարը կարող էր ունենալ հիմնական, բայց նաև այլ՝ գործառույթներ (ճիշտ այնպես, ինչպես խաչքարը միջնադարում):

Վիշապաքարերի բացարձակ թվագրության մասին խոսելն առայժմ վաղ է: Այս իմաստով, չի կարելի չհամաձայնել Հ. Մարտիրոսյանի հետ, ով շեշտում էր բարձրադիր ալպյան մարգագետինների յուրացման հետևողական բնույթը, այս վայրերում հնագիտական հուշարձանների տարածման վաղ ժամանակը ու դրանց զարգացման հազարամյակներ հարատևող ընթացքը. «Այս բոլոր հանգամանքները պարտավորեցնում են վերանայել մեր հնագիտության մեջ առաջադրված այն հիպոթեզը, ըստ որի լեռնային շրջանների իրացումը և անասնապահության կիսաքոչվորական ձևի զարգացումն Անդրկովկասում և Հայաստանում տեղի են ունեցել պատմական շատ ուշ ժամանակներում՝ միջին բրոնզի և ուշ բրոնզի դարաշրջա-

³⁷⁶ Ն. Ադոնց, Հին հայոց աշխարհայացքը, Երկեր Ա, Երևան, 2006, էջ 15:

³⁷⁷ Մի առիթով Ատրպետը, վիշապաքարերի համատեքստում, բարձր լեռնային սրբավայրերի օգտագործումը կապում է նույնիսկ հանքավորների հետ (Ատրպետ, նշվ. աշխ., 1931, էջ 310, 314):

³⁷⁸ Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., 1949, էջ 76:

նում»³⁷⁹: Այս համատեքստում վիշապաքարերի նախապատմությունը կամ վաղ պատմությունը կարող է նախաբրոնզեդարյան կամ վաղբրոնզեդարյան լինել: Մակայն վերջիններիս գոյության առանցքային ժամանակահատվածը այնուամենայնիվ առայժմ թվում է միջին բրոնզի դարաշրջանը (Ք.ա. մոտ 2300/2200-1600/1500 թթ.), երբ բարձրադիր արոտավայրերը սկսեցին ակտիվորեն օգտագործվել շարժունակ խմբերի կողմից (այս տեսակետի օգտին են խոսում նաև պատկերագրական զուգահեռները համաժամանակյա խեցեղենի զարդաձևերի հետ, ինչպես նաև թաղման ծեսի որոշ առանձնահատկություններ՝ ցլի զոհաբերության համատեքստում): Այս դարաշրջանը բնորոշվում է մեգալիթյան մտածելակերպի առանձնահատուկ աշխուժությամբ (ի դեպ՝ ոչ միայն Հայկական լեռնաշխարհում), ինչի մեկ այլ վկայությունն է Ջորաջ Քարերի համաչափ մենաքարերով բնորոշվող համալիրը: Թվագրության համատեքստում, վերադառնալով «ջրանցքների վարկածին» պետք է նշել, որ վերջինս կարող է ակտուալ թվալ հատկապես Ք.ա. II հազ. կեսերից սկսած: Ինչու՞ն հնագիտական հետազոտությունները Հայկական լեռնաշխարհում ցույց են տալիս, որ եթե միջին բրոնզի մշակույթների կրողները գլխավորապես (կիսա)քոչվոր հասարակություններ են, որոնց մշակութային ժառանգությունը հիմնականում ներկայացված է դամբարաններով, ապա միջին բրոնզի վերջում կամ միջին բրոնզ-ուշ բրոնզ անցումային փուլում ու հատկապես ուշ բրոնզում ի հայտ են գալիս («կիկլոպյան») ամրաշինական համակարգերը³⁸⁰: Ինչպե՞ս հանկարծ ի հայտ եկան այդ ամրոցները և դրանց պատկանող բնակավայրերը: Կենսակերպի այս փոփոխության հիմքում, ի թիվս այլոց, կարող էր ընկած լինել ջրամատակարարման համակարգերի հիմնադրման և վերահսկման պահանջը մի այնպիսի հասարակության կողմից, որն արդեն կոմպլեքս էր և պետականության կրող էր հանդիսանում: Պատահական չէ, որ այն ենթատարածքները, որոնց բարձրակետերին գտնվում են վիշապաքարերը, և հատկապես Արագածի ու Գեղամա լեռների շուրջ, բնորոշվում են կիկլոպյան ամրոցների խիտ ցանցով, որոնք պետք է հիմնադրվեին Ք.ա. XVII-XV դդ. և զարգացման գագաթնակետին հասնեին Ք.ա. II հազ. վերջերին:

Վիշապաքարերի երևույթը անհրաժեշտ է դիտարկել մշակութային զարգացումների ընդհանուր համակարգում՝ նստակյաց-երկրագործ-դաշտավայրաբնակ և կիսաքոչվոր-անասնապահ-լեռնաբնակ համայնքների փոխազդեցության դինամիկայի մեջ: Այս իմաստով առաջնային կարևորություն ունի վիշապաքարային կենտրոնների բարձրությունների դասակարգումը³⁸¹: Հաշվի առնելով նախնական տեղում գտնվող, հավանաբար նախնական տեղում գտնվող (մասամբ տեղաշարժված) և նախնական տեղը վերականգնված վիշապաքարերի բարձրությունները՝ կարելի է հստակորեն առանձնացնել վերջիններիս հայտնության երկու մակարդակ.

1. Բարձր լեռնային՝ մոտ 2400-3200 մ, ուր չկան մշտական բնակավայրեր, բայց առկա են ամառանոցներ, կրոնլեխներ/դամբարաններ ու սրբավայրեր: Այս ոլորտին են վերաբերում հետևյալ վիշապաքարերը/վիշապաքարերի խմբերը՝ Յիցքար 1-3 (3174-2936), Մաղալներ 1 (3013), Գյոլի Յուրտ 1-3 (2968-2963), Կարմիր Սար 1-9 (2852-2846), Քյուրաքանդ 1 (2818), Պրոսպեկտ 1-5 (2770), Ահմադի Օբա 1 (2765), Արշալույս 1-3 (2714-2639), Թոխմախան Գյոլ 1-5 (2700), Աժդահա Յուրտ 1-6 (2510-2472):

³⁷⁹ **Հ. Ա. Մարտիրոսյան**, նշվ. աշխ., էջ 194:

³⁸⁰ Արարատի լանջերի համար հմմտ. **A. Özırat**, Archaeological Investigations in the Mt. Ağrı Region: Bronze and Iron Ages, Proceedings of the 6th International Congress on the Archaeology of the Ancient Near East May, 5th-10th 2008, "Sapienza" - Università di Roma, v. 2, Roma, 2010, p. 529-530.

³⁸¹ Նախկին հետազոտողները, ինչ-որ տեղ հասկանալի պատճառներով, ուշադրություն չեն դարձրել վիշապաքարերի բարձրությունների վրա: Բ. Պիոտրովսկին խոսում է Իմիրզեկի ծովի մակերևույթից 1000 մ բարձրության վրա գտնվելու մասին (**Пютровский**, նշվ. աշխ., 1939, էջ 9), որ սխալ է, Ն. Տիխոնովը բերում է 2800 մ (թերևս Թոխմախան Գյոլի համար) (**Н. Тихонов**, նշվ. աշխ., էջ 77), որ հավանական է:

2. Նախալեռնային՝ մոտ 1700-2300 մ, ուր առկա են ինչպես մշտական/ժամանակավոր բնակավայրեր, այնպես էլ ամառանոցներ, կրոմեխներ/դամբարաններ ու սրբավայրեր: Այս ոլորտին են վերաբերում հետևյալ վիշապաքարերը/վիշապաքարերի խմբերը՝ Սելիմ 1 (2340), Իմիրգեկ 1-5 (2338-2100), Դավթաշեն 1 (2313), Հայսերի Օբա 1 (2299), Քարեձի 1 (2285), Դարիկ 1 (2147), Եղնաջուր 1 (2110), Ոսկեթաս 1 (2072), Լիճք 1 (2025), Սարուխան 1 (2012), Սոթք 1 (2009), Սառնադբյուր 1 (1867), Լճաշեն 1-2 (2057-1975), Ղուրթ Թափա 1-2 (1954), Բուժական 1 (1820), Գառնի 1-2 (1390-1387)³⁸²:

Դասական են առաջին մակարդակի վիշապաքարերը, որոնց տարածականության սկզբունքների մասին արդեն խոսեցինք: Սակայն, այն հանգամանքը, որ 2-րդ մակարդակի վիշապաքարերն ի հայտ են գալիս օրինաչափորեն գրեթե նույն բարձրության վրա (միջինում մոտ 2000 մ)³⁸³, ուրեմն, ամենայն հավանականությամբ, տեղափոխված չեն բարձր լեռներից,

³⁸² 1700-2300 մ գոտիները կազմում են Հայկական լեռնաշխարհի մոտ 35%-ը, ավելի բարձր լեռները՝ 14%-ը (հմմտ. **Л. М. Варданян, Г. Г. Саркисян, А. Е. Тер-Саркисянц** (ред.), *Армяне, Народы и культуры*, Москва, 2012, с. 97-99): Ընդ որում, մեր ընդգծած 2300-2400 մ սահմանը կարող է մասամբ տատանվել: Այսպես, բարձրադիր լեռնային շրջաններում առկա բազմապիսի մշակութային միջավայրերի մասին հաղորդում են նաև այլ հետազոտողներ: Այսպես, Տայքի լեռնագագաթների ամրոցների, կուրգանների և դոլմենների մասին, մասամբ վիշապաքարերի քննարկման համատեքստում, հիշում է Ատրպետը (Ատրպետ, նշվ. աշխ., 1926, էջ 86, 88, 185, 411-412): Դամբարաններ, փարախներ, մեկուսացված ճարտարապետություն, ջրանցք-ջրամբարներ, կոթողներ են հիշատակվում Արագածի հյուսիսային փեշերին՝ մինչև մոտ 2600 մ բարձրության վրա (**A. T. Smith, R. S. Badalyan, P. Avetisyan**, *The Archaeology and Geography of Ancient Transcaucasian Societies*, 1: The Foundations of Research and Regional Survey in the Tsaghkahovit Plain, Armenia, OIP 134, Chicago, 2009): Ուղտասարում, 2900-3300 մ բարձրության վրա, ժայռապատկերների միջավայրում, հիշատակվում են գերազանցապես կրոմեխներ, այլ տիպի թաղումներ, ինչպես նաև ավերակ կացարաններ, կիկլոպյան պատերի հետքեր, արհեստական քարակույտեր (**Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Մաֆյան**, նշվ. աշխ., 10, 38): Զանգեզուրի և Վայքի լեռնաշղթաների փեշերին, 2000-3000 մ բարձրության վրա, նույն համատեքստում կան բնակատեղիներ, դամբարանադաշտեր, ժայռապատկերներ. նաև նախիջևանյան Բջնակի ձկնակերպ կոթողը 2300 մ վրա հանդես է գալիս դամբարանադաշտի և բնակատեղիի համակարգում (**Ա. Այվազյան**, նշվ. աշխ. 8, 28-29): Բարձրադիր դամբարանադաշտեր են առկա նաև Հայկական Տավրոսի շրջանում՝ ժայռապատկերների հետ նույն միջավայրում (**M. Uyanik**, նշվ. աշխ., էջ 24), ինչպես նաև Մասիսի լանջերին (**Ա. Օգֆիրատ**, բանավոր հաղորդում, Վենետիկ, 10.01.2012): Նմանապես, Թոխմախան Գյոլի շրջակայքում, այսինքն վիշապաքարերի համատեքստում, հիշատակվում են ժայռապատկերներ (**Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան**, նշվ. աշխ., էջ 7): Ինչ վերաբերում է այս հուշարձանների թվագրությանը, Հ. Մարտիրոսյանը ճշտիվ նշում է, որ դրանց հանդես գալը կապված էր լեռնային արոտավայրերի յուրացման, կիսաքոչվորական անասնապահության զարգացման հետ, որը սկսվում է նոր քարեդարյան ժամանակներում և լիովին ձևավորվում էնեոլիթ-վաղբրոնզեդարյան փուլերում: Լեռնային այս գոտիները, սակայն, այնքան էլ հարմար չէին մշտական բնակության համար: Արագածի, Գեղամա լեռների ստորոտների նեոլիթ-բրոնզեդարյան խոշոր բնակավայրերն ու դամբարանադաշտերն, իբրև կանոն, տարածվում են ենթալպյան գոտիներում, առավելագույնը՝ ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա (**Հ. Ա. Մարտիրոսյան**, նշվ. աշխ., էջ 193): 1967-1968 թթ. ժայռապատկերներ հետազոտող արշավախումբը փորձել է թվագրության իմաստով կոնկրետ քայլեր ձեռնարկել: Նույն Թոխմախան Գյոլի ափին, վիշապաքարերի մոտ, ժայռապատկերների կուտակումներից ոչ հեռու, արշավախումբը հիշատակում է նաև մի բնակատեղի, որը չունի կիկլոպյան պարիսպներ, բաղկացած էր ուղղանկյուն հատակագիծ ունեցող մի քանի տնակներից, որոնց պատերը կառուցված էին մանր գետաքարերով: Սրանցից արևմուտք տարածվում էին կրոմեխով մի քանի դամբարաններ, որոնց թաղումները կատարված են կենտրոնական մասի քարակղզիների մեջ (**Ռ. Թորոսյանի** պեղումները): Պեղված երեք դամբարաններում հայտնաբերվեց երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի խեցեղեն և Բ.ա. V-IV դդ. հունա-պարսկական տիպի ապակե փորագիր գեման (**Հ. Ա. Մարտիրոսյան**, նշվ. աշխ., էջ 193-194): Այս բնակավայրի թվագրության մասին հեղինակը ուղղակի չի խոսում, բայց մեկ այլ մտքից կարելի է ենթադրել, որ նա նկատի ունի նույն դարաշրջանն, ինչ դամբարանները («Ըստ երևույթին, վաղ հայկական ժամանակաշրջանում Հայաստանի լեռներում սկսում են կառուցել յայլաղային տիպի ժամանակավոր փոքրիկ բնակատեղիներ, որոնք նույնքան տարբեր են վերը հիշատակած հին բնակավայրերից, որքան ժամանակակից գյուղերը՝ իրենց ամառանոցներից») (**Հ. Ա. Մարտիրոսյան**, նշվ. աշխ., էջ 193):

³⁸³ Այս երկրորդ մակարդակի համատեքստում պետք է դիտարկել մի շարք տեղափոխված և քրիստոնեացված օրինակներ, որոնց թվում Ուլցյուր 1-2-ը, Անգեղակոթ 1-ը, Կարմրաշեն 1-ը, Ռինդ 1-2-ը և Վայք 1-ը: Բացի վերջինից (1205 մ), մնացած բոլորն այժմ գտնվում են մոտ 1800-2000 մ բարձրության վրա ու թեև ակնհայտորեն տեղափոխված են (տեղափոխման մանրամասներն արձանագրված են Կարմրաշեն 1-ի և Ուլցյուր 2-ի համապատասխան արձանագրություններում), սակայն, ամենայն հավանականությամբ, ոչ շատ հեռուից: Դրանց մի մասը (և հատկապես Կարմրաշեն 1-ի) անմիջական միջավայրը տիպիկ է բուն վիշապաքարային միջավայրերի համար: Չի

գտնվում են իրենց նախնական տեղում կամ նրանից ոչ այնքան հեռու³⁸⁴։ Այս տեսանկյունից պարզ է, որ վերջիններս կապվում են ոչ թե («ամառային») բարձրադիր արտավայրերի, այլ («ձմեռային») նախալեռնային բնակավայրերի և բավականին մշակութայնացված միջավայրերի հետ (դասական օրինակներն են Իմիրզեկի, Լճաշենի, Սառնաղբյուր-Ոսկեթասի գոտիները)։

Կարևոր է, որ վիշապաքարերի այս երկու խմբերը դրսևորում են՝ միջավայրային մակարդակի ընդհանրություններ։ Ինչպես հայտնի է, բարձրադիր վիշապաքարերի մեծագույն մասը գտնվում է լճակների շրջակայքում։ Ճիշտ այդպես էլ նախալեռնային վիշապաքարերը գտնվում են (ավելի խոշոր) լճերի միջավայրերում (Սևան, Վան, Սառնաղբյուր, Ծովակն Հյուսիս, Փարվանա, Արփի)³⁸⁵։ Նախալեռնային վիշապաքարերի մեծ մասը (Լճաշեն 1-2, Ոսկեթաս 1, Սառնաղբյուր 1, Քարեձի 1, Սելիմ 1, Սարուխան 1, Դարիկ 1, Լիճք 1. հմմտ. նաև Թեղուտ 1-ը՝ Հարքում, մոտ 2000 մ բարձրության վրա) ի հայտ է գալիս ճիշտ այնպիսի զոգավոր հրապարակներում, որոնք բնորոշ են նաև բարձրադիր վիշապաքարերին. այս զոգավորությունները, կարծես կրկնում են Հայկական լեռնաշխարհի աշխարհագրության ամենակարևոր առանձնահատկությունը՝ սարահարթը³⁸⁶։ Երկուսն էլ կրում լեխների/դամբարանների համա-

բացառվում, որ Ուլցյուրի ու Ռինդի օրինակները ընդհանուր խումբ կազմեին Քարեձիի ու Սելիմի վիշապաքարերի հետ, քանի որ միմյանցից հեռու չեն գտնվում։ Ուշագրավ է, որ հիշյալ բոլոր կոթողները գտնվում են բարձրադիր բնակավայրերով հայտնի Վայոց Ձոր-Սյունիք գոտում, որոնց բնակիչները հեռու չեն ապրել վիշապաքարերի տարածման նախնական ոլորտից։ Բացի այդ, նշված շրջաններով է (Սելիմ, Ուլցյուր, ևն) անցել Դվին-Պարտավ հայտնի ճանապարհը (Հ. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, 75-78), որը կարող էր այս տարածքների մատչելիության հաջորդ պատճառը լինել։

Նույն երկրորդ մակարդակի մեջ պետք է տեղավորել նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող Թեղք-Ջավախք-Ծովակն Հյուսիս գոտու, Նախիջևանի և Ադրբեյի (Յուբյու) վիշապաքարերը։ Այս գոտում ևս վիշապաքարերի և մենհիրների միջավայրում առկա են դամբարաններ, «կիկլոպյան» ամրոցներ (Կ. Kōroğlu, Çildir kurganları, Arkeoloji ve Sanat 96, 2000, s. 2-11)։ Թեղքյան համատեքստում այս խնդիրը ժամանակին լուսաբանել է Վ. Գուրկո-Կրյաժնիը. մասնավորապես, Մանգլիսիի (Թեթրիծղարոյի մոտ) Դեղին սարի գագաթին «հարթ հրապարակի» վրա է գտնվում «Քարե հարս» վիշապաքարը, որից ցած կա «կիկլոպյան» ամրոց, ուր ևս գտնվել է մի մեծ պրիզմայաձև մենաքար։ Ըստ հեղինակի վիշապաքարերն ու ամրոցը պետք է դիտարկել նույն համատեքստում (В. А. Гурко-Кряжин, նշվ. աշխ., էջ 215-216)։

³⁸⁴ Եթե որոշ մասնագետներ նախալեռնային վիշապաքարերը համարում են բերված ավելի բարձր վայրերից (Սառնաղբյուրի համար հմմտ. Ա. Սանոսյան, ...Նաև սպիտակ եղեռն. հողվածների ժողովածու, Երևան 2001, 181, իսկ Սարուխանի համար՝ Ս. Հմայակյան, բանավոր հաղորդում), ապա մյուսները կարծում են, որ դրանք եղել են իրենց նախնական տեղում։ Վերջին տեսակետը Գառնի 1-ի համար զարգացնում է Բ. Առաքելյանը (Б. Н. Аракелян, Н. В. Арутюнян, Урартская клинообразная надпись из Гарни, ИФЖ 2, 1966, с. 291), ինչը լիովին հնարավոր է, մանավանդ, որ Գառնի և նրա շրջակայքը լավ բնակեցված են եղել վաղ, միջին և ուշ բրոնզի դարերում։ Ի դեպ, այս վարկածի օգտին կարող է խոսել նաև ոչ հեռու գտնվող խաչքարացված Գառնի 2-ի առկայության հանգամանքը։ Սակայն պետք է նաև նշել, որ Գառնիի վիշապաքարերը մեզ հայտնի ամենացածրադիր վիշապաքարերն են, որոնք գտնվում են մոտ 1390 մ վրա, և, այս իմաստով, չունեն ոչ մի զուգահեռ (եթե հաշվի չառնենք թեղքյան Թեթրիծղարո 1-ը, որի բարձրությունը 1135 մ է՝ Է. Talakhadze, Big Catalogue of Georgia Petroglyphs, Tbilisi, 2000 (in Georgian and English), p. 147-148)։ Այս հանգամանքը հիմք է հանդիսանում ենթադրելու, որ դրանք կարող էին բերված լինել Գեղամա լեռներից։ Հարց կարող է առաջանալ, թե արդյոք երկաթի դարում կամ ուրարտական դարաշրջանում կարո՞ղ էին տեղի ունենալ վիշապաքարերի տեղափոխություններ, ինչպես միջնադարում կամ նորագույն ժամանակներում։ Իսկ եթե Գառնիի վիշապաքարերը իսկապես տեղափոխված չեն, ապա այս տարածքը վիշապաքարերի դարաշրջանում ունեցել է բացառիկ ծիսա-պաշտամունքային նշանակություն, եղել է սրբավայր, ճիշտ այնպես, ինչպես անտիկ դարաշրջանում (այս մասին՝ Н. Я. Март, Я. И. Смирнов, նշվ. աշխ., էջ 95-96)։

³⁸⁵ Ճիշտ է Արփիի ներկայիս լիճը/ջրամբարը ձևավորվել է 1946-1950 թթ. (Գ. Շիրմազան, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1962, էջ 128-129), սակայն կասկած չկա, որ այդ տարածքը պիտի լիներ ավելի հին լճերի գոտի, շատ նման ջավախքյան միջավայրին։

³⁸⁶ Ուշագրավ է նաև վիշապաքարային միջավայրերի անվանումների (Իմիրզեկ, Կալայի, Արխաշան, Կազնեֆեր/Կազանյի/Կազան Բաշի) կրկնությունները ստորին և վերին աշխարհներում, ինչպես նաև տարբեր գոտիներում (հատկապես Արագածի, Գեղամա լեռների և Ճորոխի ավազանի), ինչն առաջինը նկատել է Ատրպետը և որոնց մասին նա գրում է, թե «երևի բոլորն էլ վիշապազանց շրջանի շենքեր են» (Ատրպետ, նշվ. աշխ., 1926, էջ 408, 604; 1929, 57-58; Արխաշա/են-ի համար տես նաև Н. Я. Март, Я. И. Смирнов, նշվ. աշխ., էջ 84)։ Հմմտ. նաև Ուղտի ակունք - Գեղամա լեռներ, Ուղտասար-Սյունիք, Ուղտի գավառ/Օլթի-Տայք կրկնությունները։

տեքստում են, սակայն, ի տարբերություն բարձր վիշապաքարերի, նախալեռնայինները գործում են նաև ամրոց-բնակավայրերի համատեքստում: Վերջիններս հիմնականում մենակյացներ են, հանդես չեն գալիս խմբերով (լավագույն դեպքում՝ երկու միավորով), սակայն մի շարք դեպքերում գտնվում են միմյանցից ոչ հեռու: Այսպես, Գեղամա լեռների նախալեռնային գոտում ուշագրավ է լճաշենյան վիշապաքարերի օրինակը. Լճաշեն 1-ը և Լճաշեն 2-ը բաժանվում են մեծ բլուրով և հանդիսանում երկու ընդարձակ գոգավոր մարգագետինների «խառիսիները». երկու կետերից էլ երևում է Լճաշենի ամրոցը և Սևանա լիճը, թեև վիշապաքարերն իրար չեն տեսնում (նույն կերպ է նայում Վանա լճին Թեղուտ 1-ը): Նմանապես ամրոցների, դամբարանադաշտերի և Սևանա լճի միջավայրում է հանդես գալիս Սարուխան 1-ը, որն, ի դեպ, իր առանձնահատկություններով և հատկապես պատկերագրությամբ խիստ նմանվում է Լճաշեն 2-ին: Տեղադրված լինելով գոգավորության եզրին՝ Սևանին է նայում նաև Լիճք 1-ը (այն թերևս տեղափոխված է նույն գոգավորության կենտրոնական մասերից): Ուշագրավ է նաև իրար կից գտնվող Քարեձի 1-ի և Մելիմ 1-ի համատեքստը. վերջիններս գտնվում են նույն աշխարհագրական միջավայրում, գրեթե նույն բարձրության վրա, բայց միմյանց համար տեսանելի չեն: Սակայն, եթե Քարեձի 1-ը որոշակի մշակութայնացված ոլորտում է հանդես գալիս և նրա շրջակայքում բացի դամբարանադաշտերից կան նաև ամրոցներ³⁸⁷, ապա Մելիմ 1-ը գտնվում է համանուն լեռնանցքի ամենաբարձր կետի շրջանում, ինչն, ամենայն հավանականությամբ, պատահական չէ: Արագածյան նախալեռնային գոտում նման հարաբերության մեջ են գտնվում Ոսկեթաս 1-ը և Սառնաղբյուր 1-ը. երկուսն էլ տիպիկ հրապարակների կենտրոնում են և իրենց մեջ ներփակում են յուրահատուկ մշակութայնացված ոլորտներ, իսկ վիշապաքարերը կարծես այդ աշխարհի առանցքն են հանդիսանում. երկու կետերից էլ երևում են Ծաղկասարի և շրջակա ամրոցները, թեև այդ վիշապաքարերն իրար չեն տեսնում³⁸⁸:

Երկու մակարդակների աշխարհագրական պատկերի հարադասությունը ստեղծում է տպավորություն, թե նախալեռնային վիշապաքարային միջավայրերը արտացոլում են բարձրադիր վիշապաքարային միջավայրերը. ուրեմն, վիշապաքարեր ստեղծող հասարակությունը հավանաբար կարող էր ունենալ «աշխարհի իր մանրակերտը», որն ուղղակիորեն արտահայտված է միջավայրի/լանդշաֆտի կազմակերպման ոլորտում³⁸⁹: Վերն ասվածը փաստում է վիշապաքարերի համատեղ առկայությունը միևնույն մշակութային համակարգի երկու մա-

³⁸⁷ Քարեձի 1-ը գտնվում է համանուն ամրոցի մոտակայքում, վերջինիցս դեպի Նաղարախան ամրոցը տանող ճանապարհի վրա: Պատահական չէ, որ Քարեձի ամրոցը մեկնաբանվում է որպես Արգիճի գետի հովիտը վերահսկող մի դիտակետ և հնագույն ամառային կայան՝ հեռագնա անասնապահների համար, որի շրջակայքում, բացի Նաղարախանից, կային ևս երկու ամրոցներ՝ Բելի Կլյուչը և Տաթևը (**R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani**, նշվ. աշխ., էջ 377-378):

³⁸⁸ Որոշակի միևնույն աշխարհի է ներկայացնում Սառնաղբյուր գյուղի տարածքը, ուր գտնվում են մի շարք բրոնզերկաթեդարյան ամրոց-բնակատեղիներ, որ այլ հուշարձանների հետ մի համալիր են կազմում: Ըստ Գ. Արեշյանի և Կ. Ղաֆադարյանի նկարագրության՝ Վերի Բերդ (Ղալախչի) ամրոցը գտնվում է գյուղի արևմտյան կողմում, սարահարթի հրվանդանաձև ելուստի վրա: Հրվանդանի արևելյան ծայրին կանգնեցված է մենհիրը: Հրվանդանի լանջերին, պարսպին զուգահեռ, այլ պարիսպներ են: Պարսպից դուրս ամրոցն ունեցել է բնակելի կառուցապատում: Ամրոցը հիմնադրվել է Ք.ա. III հազ. կեսերին, բնակեցված է եղել ուշ բրոնզում: Վերի Բերդից կես կմ հյուսիս և արևմուտք գտնվում են ևս երկու ամրոցներ (Թովի Քար և Անանուն), որ Վերի Բերդի պահակակետերն են: Բացի այդ, Սառնաղբյուրի մոտ են գտնվում Շիշբլուր, Փոքր Բերդ և Մեծ Բերդ ամրոցները (**Գ. Ե. Արեշյան, Կ. Կ. Ղաֆադարյան, Կ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 73-78):

³⁸⁹ Ուշագրավ է, որ նաև առասպելաբանության մեջ փորձ է կատարվում վիշապաքարերը դիտել մոդելավորման համատեքստում: Ըստ համատարած առասպելաբանական պատերազումների՝ ուղղաձիգ դիրքով միմյանց վրա գտնվող աշխարհի երեք գոտիները՝ Երկինք, Գետին, Ստորերկրայք առնչվում են պան/ծառի տեսքով արտահայտված առանցքով, որի կատարին է գտնվում աշխարհի կենտրոնը: Ենթադրվում է, որ այս պատկերն է արտահայտված վիշապաքարերի վրա (կենաց ծառ, թռչուններ, ցլի գոհաբերություն), որոնք տեղադրված են վերին գոտում՝ «երկրի պորտ» համարվող տեղերում (**Ս. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 18, 32-33):

կարդակներում, ինչն ապացուցվում է նաև նրանով, որ վիշապաքարերի տիպաբանությունն ըստ բարձրությունների առայժմ հնարավորություն չի տալիս առանձնացնել ժամանակագրական տարբեր խմբեր, որովհետև երկու մակարդակների միավորներն իրենց հատկանիշներով էապես համընկնում են:

Այսպիսով, հիշյալ երկու ոլորտների վիշապաքարերն էլ կարող են ընկալվել որպես խորհրդանշական «խարիսխներ»՝ տարբեր սոցիո-մշակութային խմբերի փոխառնչության համակարգում: Հետևապես, ճիշտ էին մեր դասականները (Ա. Քալանթար, Թ. Թորամանյան, Գ. Ղափանցյան), երբ նշում էին, թե այնպիսի արագածյան նախալեռնային հուշարձանախմբեր, ինչպիսիք են Շամիրամը, Արուճը, Կոշը, Աղավնատունը, Օշականը իրենց բնորոշ բազմապիսի հուշարձաններով (բնակավայրեր, դամբարաններ, սրբարաններ, մենաքարեր, «օղուզ/հսկանների տներ»³⁹⁰, աշտարակներ, ժայռապատկերներ) և ընդհանրապես նյութական ու հոգևոր մշակույթով պետք է անմիջական առնչություն ունենան վիշապաքարեր կերտողների հետ³⁹¹: Այս տեսանկյունից համաձայն ենք Գ. Ղափանցյանի հետ. «Սա առասպելամտաճողությունն է երկրագործ համայնքի մարդկանց և մասնակիորեն անասնապահների, որոնք ամռանը քշում էին անասուններին լեռներ»³⁹²:

Օտար հեղինակներից այս օրինաչափությունը առաջինը նկատել է Վ. Գուրկո-Կրյաժինը. վերջինս խոսում է «վիշապների և կիկլոպյան քաղաքների դարաշրջան»-ի մասին, որը ժամանակագրորեն նախորդել է խալդեի մշակույթին: Այս իմաստով, դեռևս 1920-ական թթ. նա պնդում էր, որ վիշապաքարերը անհրաժեշտ է դիտարկել անդրկովկասյան «մեզալիթյան կոմպլեքսի» (դոլմեններ, մենհիրներ, կրոմլեխներ, կիկլոպյան ամրոցներ) համատեքստում, որոնց հետ նրանք ընդհանուր առմամբ ժամանակակից են եղել³⁹³:

³⁹⁰ «Օղուզի տները» գլխավորապես դամբարանաբահներ են, որոնք Ք.ա. II հազ. առաջին կեսից հին չեն (Գ. Արեշյան, Կ. Ղափաղարյան, Կ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 70):

³⁹¹ Ա. Քալանթար, նշվ. աշխ.; Թ. Թորամանյան, նշվ. աշխ.; Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 154: Այսպիսին է նաև Հ. Մարտիրոսյանի ընկալումը. ըստ նրա, Շամիրամի, Քուչակի և Զիթիանքովի տիպի բրոնզ-երկաթեդարյան ամրոց-բնակավայրերը և դամբարանները առնչվում են բարձրադիր գոտիների ժայռապատկերներ կերտող բնակչության հետ: Հիշյալ դամբարանադաշտերի կրոմլեխների վրայի «դամբանագրերը» (կենդանիների, օձերի, երկնային նշանների պատկերներ) անմիջականորեն կապվում են ժայռապատկերների հետ: «Կասկածից դուրս է, որ Արագածի մերձակայան գոտիների վերը բնութագրած բնակատեղիներն ու դամբարանադաշտերը պատկանում էին բրոնզեդարյան շրջանի կիսաքոչվորական անասնապահությամբ ու որսորդությամբ զբաղվող ցեղերին, որոնք իրենց տնօրինած լեռնային մարգագետինների սահմաններում պաշտամունքի ու երկրագործության հիասքանչ կոթողներ էին ստեղծել... Ահա այս ամրոց-բնակատեղիների երկրագործ անասնապահներն էին, որ հալոյող ձյան տակից երևացող հյութեղ կանաչին և անասունների հոտերին հետևելով բարձրանում էին դեպի լեռները, շարժվելով տեղից-տեղ, պատսպարվելով թաղիքե վրաններում կամ ժամանակավոր այլ տիպի կացարաններում, որոնց հետքերը պարզապես չէին կարող պահպանվել» (Հ. Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 192-193):

Արագածի հարավային փեշերի մոտ 1000-2100 մ բարձրության վրա գտնվող բնակավայրերի ժամանակագրական պատկերի մասին ավելի մանրամասն տեղեկություններ են ի հայտ եկել համեմատաբար վերջին շրջանում: Հնագույն բնակավայրերը վերաբերում են վաղ բրոնզին (Չյանբերդ, Ախթամիր, Բազմակն): Բնակավայրերի քանակը պակասում է միջին բրոնզում (Ախթամիր, Բազմակն) և աննախադեպ աճ է ապրում ուշ բրոնզ-վաղ երկաթում՝ հանձին ամրոց-բնակավայրերի խիտ ցանցի (Տեղեր, Սահակաբերդ, Մոտկան, Վանք Խարաբա, Նազարավան, Շամիրամ, Չյանբերդ, Մուղնի, Ուշի, Զույգ աղբյուր, Ախթամիր, Բազմակն, Կոշ, Ավան, Օրգով) (Գ. Արեշյան, Կ. Ղափաղարյան, Հ. Սիմոնյան, Գ. Տիրացյան, Ա. Քալանթարյան, Հնագիտական հետազոտություններ Հայկական ՍՍՀ Աշտարակի և Նաիրիի շրջաններում, ԼՀԳ 4, 1977, էջ 77-93):

³⁹² Գ. Капанцян, О каменных стенах на горах Армении, Ереван, 1952, с. 51.

³⁹³ В. А. Гурко-Кряжин, նշվ. աշխ., էջ 217, 220; հմմտ. В. Н. Худадов, Мегалитические памятники Кавказа, ВДИ 1, 1937, с. 206-207: Այս իմաստով զարմանալի է, որ Ն. Մառն ու Յ. Սմիռնովը վիշապաքարերը չեն դիտարկում որևէ հնագիտական համատեքստում, թեև Մառը լավ ծանոթ պիտի լիներ Հայաստանի մեզալիթյան տիպի հուշարձաններին: Ավելին, մի տեղ Սմիռնովը գրում է, որ վիշապաքարերի շուրջ այլ կառույցներ նկատելի չեն (Н. Я. Марр, Я. И. Смирнов, նշվ. աշխ., էջ 65; այս միտքը կրկնում է՝ Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., 1939, էջ 31): Նույն տեղում խոսք է գնում այն մասին, որ Աժդահա Յուրտի ձկներից մեկի մոտ մի քուրդ հողի միջից գտել է XVII-XVIII դդ. թվագրվող պարսկական ոճի, թռչնապատկերով պղնձե գավաթ, որ վկայում է թերևս ուշ այցելությունների կամ գուցե ծեսերի մասին: Այնուամենայնիվ, մի դեպքում Մառը դիտարկում է բարձրադիր վիշապաքարերը դաշտավայրային բնա-

Ասվաճի համատեքստում լրացնենք, որ Արագածի, Գեղամա, Նեմրուժ լեռների ստորոտները, ինչպես նաև Թռեղք-Ջավախքյան և Ծովակն Հյուսիսային շրջանները, այսինքն այն տարածքները, որոնք հանդիսանում են վիշապաքարերի տարածման կենտրոնները, բնորոշվում են նույնատիպ/ազգակից մեգալիթյան համալիրների (և հատկապես «կիկլոպյան» ամրոցների) առկայությամբ, ինչն ավելորդ անգամ շեշտում է Հայկական լեռնաշխարհում մի յուրահատուկ մշակութային ոլորտի առկայության փաստը³⁹⁴: Սակայն մեծ հարց է, արդյոք այդ մեգալիթյան կոմպլեքսի տարածությունը համընկնում է վիշապաքարերի տարածության, թե՞ վիշապաքարերն ունեն հայտնության ավելի որոշակի և հազվադեպ գոտիներ. վերջին վարկածը, կարծում ենք առայժմ ավելի կենսունակ է:

Այսպիսով, վիշապաքարերի նախնական քարտեզագրումը ցույց է տալիս, որ վերջիններս հանդես են գալիս միայն Հայկական լեռնաշխարհում³⁹⁵, և նրանց ընդհանուր քանակը (վիշապանմանների հետ միասին) մոտ 150 է, որից մոտ 100-ը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում: Եթե փորձենք պատմական համատեքստի մեջ դնել այս տվյալները, ապա կպարզվի, որ վիշապաքարերն ի հայտ են գալիս հին Հայաստանի կենտրոնահյուսիսային շրջանների չորս նահանգներում և համապատասխան տասներկու գավառներում, որոնք են՝ Այրարատ (32 օրինակ՝ Արագածոտն - 28, Վանանդ - 2, Շիրակ - 1, Բասեն - 1), Սյունիք (70 օրինակ՝ Գեղարքունիք - 45, Վայոց Ձոր - 10, Սոթք - 6, Նախճավան - 2, Ծղուկ - 3), Գուգարք (19 օրինակ՝ Թռեղք - 13, Ջավախք - 4, Աշոցք - 2), Տայք (մոտ 35 օրինակ՝ Ագոռդաց Փոր - 25-30, Խաղտիք - 2+, Աղթիք - 1) և Տուրուբերան (1 օրինակ՝ Հարք)³⁹⁶:

Հիշյալ տարածքները համապատասխանում են մեր կողմից առանձնացված Հայկական լեռնաշխարհի երեք պատմամշակութային գոտիներից երրորդին՝ «կենտրոնական-հյուսիսարևելյանին» (Այրարատ, Սյունիք, Գուգարք, Տայք, Բարձր Հայք, Տուրուբերան, Վասպուրական, Մոկք, Ուտիք, Արցախ, Պարսկահայք), որին բնորոշ են պատմահնագիտական զարգացումների ընդհանուր միտումներ՝ բրոնզի ու երկաթի դարաշրջանում³⁹⁷:

կավայրերի հետ առնչության համատեքստում՝ կապված ջրամատակարարման հետ, սակայն ավելի ուշ ժամանակների օրինակով (**Н. Я. Марр, Я. И. Смирнов**, նշվ. աշխ., էջ 80-81):

³⁹⁴ Ուշագրավ է, որ հնագիտական տվյալներով վերականգնվող այս պատկերը, հաստատում են նաև ուրարտական գրավոր աղբյուրները, որոնցում Էթիունի (Արագածի շրջակայքը լայն իմաստով), Վեիքուխի և Ուդուրի Էթիունի (Գեղամա լեռների շրջանը լայն իմաստով) և Իգանի (Ծովակն Հյուսիսային կողմերը) երկրները հանդես են գալիս որպես «կիկլոպյան» ամրոցների խիտ ցանցի կենտրոններ (**И. И. Мещанинов**, Циклопические сооружения Закавказья, ИГАИМК XIII/4-7, 1932, էջ 70, 97):

³⁹⁵ Գրականության մեջ խոսք է գնում Հայկական լեռնաշխարհից դուրս գտնվող վիշապանման կոթողների մասին Հյուսիսային Կովկասում և հարակից շրջաններում, ինչպես նաև Մոնղոլիայում (**И. Мещанинов**, նշվ. աշխ., 1925; **Б. Д. Михайлов**, Скульптура головы вешапа в гроте Каменной Могины, Древности степного Причерноморья и Крыма - Сборник научных трудов III, Запорожье, 1992, с. 99-105): Սակայն վերջիններս միայն հազվագյուտ տարրերով են նույնանում հայկական վիշապաքարերին և քննարկելի չեն ընդհանուր համատեքստում:

³⁹⁶ Առաջարկվող բաժանումը ընդհանուր առմամբ արտահայտում է վիշապաքարերի տեղաբաշխման ճշմարտանման պատկերը, սակայն ունի նաև պայմանականություններ, քանի որ կան վիշապաքարերի տեղաբաշխման խաչվող գոտիներ: Օր.՝ Գեղարքունիքի տակ մենք հաշվել ենք Գեղամա լեռների բոլոր վիշապաքարերը, մինչդեռ դրանք հասանելի կարող էին լինել նաև Այրարատից (Կոտայք): Գեղարքունիքն ընտրվել է՝ հաշվի առնելով ոչ միայն աշխարհագրական առանձնահատկությունները, այլև պատմական ավանդույթը, որը Գեղամա լեռներն առավելապես առնչում է Գեղամի հետ (որից էլ գավառի անունն է): Աշոցքը հիմնականում համարվում է Գուգարքի գավառներից մեկը, բայց երբեմն՝ նաև Այրարատին. քանի որ աշխարհագրական նախալեռնային պայմանները առավելապես մոտեցնում են այս գոտին Թռեղք-Ջավախքյան (նշանակում է Գուգարքյան) աշխարհին, ապա Աշոցքը դիտարկում ենք Գուգարքի ոլորտում: Նմանապես Արտանիշը կարող էր լինել ինչպես Այրարատ (Վարաժնունիք), այնպես էլ Սոթք, սակայն, հաշվի առնելով աշխարհագրական պայմանները (Սևանա լճի առկայության պարագան), մենք ընտրում ենք Սոթքը, մանավանդ որ այստեղ ունենք մեկ այլ վիշապաքար: Նմանապես Տայքի սահմաններում ենք դիտարկում Ատրպետի Հովտակը, որն առավելապես գտնվում է Խաղտիքի հետ սահմանային գոտում:

³⁹⁷ Հմմտ. **Ա. Բոքոխյան**, Վասպուրականը Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան մշակութային զարգացումների համակարգում, Հայաստանի մայրաքաղաքները, Գիրք I - Վան, Երևան, 2013, էջ 34-36:

Թեև դեռևս վերջնականորեն պարզ չեն վիշապաքարերի տարածման կենտրոնների կարևորության և ժամանակագրական հարաբերության հետ առնչվող խնդիրները, սակայն այն հանգամանքը, որ, ըստ քարտեզագրման տվյալների, վիշապաքարերի պարզ/անզարդ ձևերը հանդիպում են առավելապես Արագածի լեռնազանգվածում, մինչդեռ բարդ/զարդարուն ձևերը՝ Գեղամա լեռներում և այլուր, խոսում է թերևս այն մասին, որ Արագածը պիտի եղած լինի վիշապաքարերի ձևավորման օրրանը, իսկ Գեղամա լեռները՝ «ծաղկման շրջանի» էպիկենտրոնը (պատահական չէ, որ եթե ցլակերպերը հանդիպում են ամենուրեք, ձկնակերպերը՝ գրեթե ամենուրեք, ապա բարձր վարպետությամբ արված հիբրիդները՝ միայն Գեղամա լեռներում): Այսպիսով, Այրարատ աշխարհը (և մասնավորապես Արագածոտնը) հավանաբար հանդիսանում է վիշապաքարերի առաջացման օրրանը³⁹⁸, Սյունիքը (և մասնավորապես Գեղարքունիքը)՝ ծաղկման շրջանի կենտրոնը, իսկ Գուգարքն ու Տայքը՝ տարածման ենթագոտիները: Չափազանց կարևոր է նաև վիշապաքարի ի հայտ գալը Տուրուբերանում, որտեղից պետք է սպասել նոր օրինակներ: Թերևս պատահական չէ նաև, որ ամենաբարձր վիշապաքարերը գտնվում են Արագածի և Գեղամա լեռների վրա, որտեղից նրանք աստիճանաբար կարող էին «իջնել» ցած:

Միևնույն ժամանակ հնարավոր է, որ վիշապաքարերի տարբեր էպիկենտրոնները կազմում են որոշակի խմբեր, որոնք բնորոշվում են յուրահատուկ տարրերով: Այդպիսի ակնհայտ խմբեր կարող են կազմել Արագածի, Գեղամա լեռների և Թոեղք-Ջավախքի օրինակները: Այս հարցի պատասխանը առայժմ միանշանակ չի կարող լինել. նշված շրջաններում ի հայտ եկող վիշապաքարերի միջև առկա ժամանակագրական տարբերության մակարդակը դեռևս պարզ չէ: Սակայն, ամենայն հավանականությամբ, այն մեծ չէ, քանի որ մեծ չէ վերջիններիս տարանջատող հատկանիշների քանակը:

Այսպիսով փորձ կատարվեց նախնական տիպաբանության ենթարկել Սյունիքի տարածքի պաշտամունքային օբյեկտները (հարթակներ և կոթողային հուշարձաններ՝ իրենց ենթատիպերով) և դրանք դիտարկել համալիր ծիսական լանդշաֆտի համատեքստում: Առկա տվյալները ցույց են տալիս, որ այդ հուշարձանները բնորոշվում են մեծ բազմազանությամբ, իսկ միասնական հատկանիշներով բնութագրվող ծիսական լանդշաֆտը ձևավորվել է բրոնզերկաթեդարյան բարդ հասարակական գործընթացների արդյունքում և իր մեջ պարունակում է ինչպես բնական, այնպես էլ մարդածին գործունեության տարրեր: Միևնույն ժամանակ այս հետազոտությունը, լինելով նախնական մի փորձ, նախ և առաջ բացահայտում է մի շարք խնդիրներ, որոնք ապագա պարզաբանման առարկա կարող են դառնալ:

Տվյալների սակավությունը հնարավորություն չի տալիս կատարել լիակատար գործառնության տիպաբանություն՝ խոսել պաշտամունքային հուշարձանների բուն նշանակության մասին, թեև վերը բերված օրինակները հիմնականում բացահայտում են այդ կոթողների առնչությունը նախնիների (գոհասեղաններ, արձաններ, մենհիրներ, վիշապներ) կամ պտղաբերության (ֆալիկ կուռքեր, պոքսաքարեր) պաշտամունքի հետ, թեև իրենց բնությամբ դրանց պետք է դիտարկել որպես սինկրետիկ արժեքներ: Միևնույն ժամանակ հնարավոր է նաև որոշ միավորների ոչ ծիսական գործառնություն (օրինակ՝ մենհիրները կարող են լինել սահմանաքարեր, կամ երկրորդականորեն օգտագործվել որպես այդպիսին):

³⁹⁸ Հակոբակ ասվածին, Արագածի վրա Ա. Քալանթարի հայտնաբերած վիշապաքարերի վրա տեսնելով մարդակերպության նշաններ, Ն. Մառը վերջիններիս համարում է վիշապաքարերի ավելի ուշ օրինակներ (**Н. Я. Марр, Я. И. Смирнов**, նշվ. աշխ., էջ 10): Իրականում արագածյան վիշապաքարերի վրա ոչ մի մարդակերպության նշան չկա:

Կարևոր է նաև հնագիտական համատեքստի պարզաբանման խնդիրը: Եթե մենհիրների և վիշապաքարերի առումով կրոմլեխի (= դամբարան կամ հարթակ) համատեքստը աստիճանաբար պարզ է դառնում, ապա ժայռային ելուստների և ժայռաբեկորների վրա տեղադրված հարթակների հարևանությամբ հաստատագրված են ժայռապատկերներ, ինչպես բնակատեղիի, այնպես էլ դամբարանային կառույցների հետքեր:

Առավել բարդ է հիշյալ հուշարձանների և դրանց միջավայրի թվագրության խնդիրը, քանի որ վերջիններս, որպես մշակութային կայուն տարրեր, երկար ժամանակահատվածի ընթացքում են հանդես գալիս և հաճախ կրում են երկրորդական օգտագործման հետքեր: Այս իմաստով, շատ հաճախ, հնարավոր է խոսել միայն ժամանակագրական սահմանների մասին: Այսպես, համատեքստի բացակայության դեպքում, ծիսական հարթակները կարող են ընդհանուր առմամբ դիտարկվել որպես բրոնզ-երկաթեդարյան (հատկապես երկաթեդարյան) երևույթ, թեև նրանց կիրառումը կարող է կայուն լինել նաև հետագայում (հմմտ. օր.՝ պորտաքարերը): Ինչ վերաբերում է քանդակներին և քանդակազարդ քարերին, ապա սկսած ուշ բրոնզի դարից և հատկապես վաղ/միջին երկաթի դարում նկատելի է վերջիններիս մարդակերպացման գործընթացը, ինչպես նաև՝ տարբեր պատկերների համադրումը մեկ կոթողում³⁹⁹: Մենհիրներն ու վիշապները, ամենայն հավանականությամբ, ժամանակակից են (այդ մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ երբեմն նրանք նույն միջավայրի բաղկացուցիչներ են հանդիսանում, հմմտ. օր.՝ Մելիմ 1-2-ը (աղ. 23, 24), թերևս նաև Քարեձի 1-4-ը (աղ. 25-28) և դրանց անհրաժեշտ է դիտարկել Հայաստանի և հարակից շրջանների մեզալիթյան համալիրի համատեքստում, որը տեսանելի է նախաուրարտական շրջանում, ավելի կոնկրետ՝ Ք.ա. II հազ. սահմաններում:

Տեխնիկական առումով հուշարձանների կերտման ժամանակ օգտագործվել է ինչպես ծավալային քանդակ կատարելու (Հարժիս, Արվական, Ծովագյուղ), այնպես էլ բարձրաքանդակի (Խնածախ), հարթաքանդակի (Հարժիս՝ պատահական գտածո, Շաղատ) և փորագրման (Արվականի կոտքեր, ժայռապատկերներ) տեխնիկան (աղ. 4): Հայտնաբերված հուշարձանների մեծ մասը (մենհիրներ, վիշապներ, Հարժիսի մարդակերպ կոտքը) նախատեսված էին ամբողջական ընկալման համար՝ տեղադրված լինելով բաց տարածքի, դամբարանաբլուրի կամ կառույցի կենտրոնական հատվածում: Մինևույն ժամանակ որոշ կոթողների կերտման առանձնահատկությունները հուշում են, որ դրանք նախատեսված էին դիմային ընկալման համար. այսպես, Արվականի կոթողի ետևի մասն անմշակ էր, իսկ գլխիկի կողային ելուստները, որոնք պետք է ունենային կտուցների իմաստ, պատկերված են թեք գծով, ինչը հուշում է, որ կոտքը ագուցված է եղել: Միայն ձախ կողմից էր մշակված նաև Ծովագյուղի կոտքը, հետևաբար այն նույնպես պետք է կամ ագուցված լիներ, կամ հենված լիներ պատին: Ետևի հարթ մասը հուշում է, որ ագուցված էին նաև Շաղատի և Հարժիսի (պատահական գտածո) կոտքերը:

³⁹⁹ Թվագրման առումով կարելի է օգտագործել նաև քարե կոթողներում և խեցեղենում զարդամոտիվների զուգահեռ համեմատության մեթոդը, որը կիրառվում է Հ. Մարտիրոսյանի կողմից ժայռապատկերները թվագրելիս (օր.՝ **Հ. Մարտիրոսյան, Հ. Իսրայելյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները, 48-49): Այսպես, Հարժիս գյուղի տարածքում գտնվող հ. 15 կոտքի ստորին հատվածում ռելիեֆ էղանակով պատկերված են համակենտրոն շրջաններ, ինչը բազմաթիվ զուգահեռներ ունի բրոնզեդարյան խեցեղեն նյութում:

ԳԼՈՒԽ III.

ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացվող գլխում քննարկվում են բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբավայրերի լանդշաֆտային առանձնահատկությունները, առաջարկվում է դրանց տեղագրական ու գործառության հատկանիշների նախնական տիպաբանություն: Այդ սրբավայրերը սահմանվում են որպես մի ուրույն հասարակական համակարգի բաղադրատարրեր:

1. Աշխարհագրական դիրքը

Սյունիքի սրբավայրերը, որպես կանոն, գտնվում են բնական բարձունքներին, դրանց լանջերին, սարահարթերում, ճանապարհներին և կիրճերին կից քարափներին, ջրային աղբյուրների շուրջ:

Բարձունք. Ընդհանուր բնական միջավայրից սրբատեղիի գատման հիմնական միջոցներից է բնական բարձունքների (բլուրների, լեռնաբազուկների, ջրբաժանների) օգտագործումը⁴⁰⁰: Այսպես, բնակավայրի բարձրադիր հատվածում է տեղադրված Գորիսի տարածաշրջանի Իշակ Մեղյան սրբատեղին: Այս համատեքստում պետք է հիշատակել ևս մեկ կառույց, որի գործառնական նշանակությունը լիովին պարզ չէ. խոսքը Սոնասար 1 ամրոցի բլրի գագաթին գտնվող կլոր հատակագծով շինության մասին է, որը լանդշաֆտի ամենաբարձր կետում արհեստականորեն հարթեցված հրապարակ է: Նման առանձնահատկություններ ունի նաև Հակ 1 բնակատեղիի և փարախների համալիրի կենտրոնական պարսպապատ բլրակի վրա տեղադրված թումբը⁴⁰¹:

Բնական բարձունքների օգտագործումն ավելի ցայտուն է երևում մեկուսի տեղադրված սրբավայրերում և դամբարանադաշտերում. ընդ որում, օգտագործվում են ինչպես լանդշաֆտի հնարավորությունները (տեղադրությունը բլրի գագաթին կամ հրվանդանին, գետերը), այնպես էլ արհեստական հնարքներ (գոհասեղաններ, պարիսպներ, պատնեշներ), կամ էլ՝ այս երկուսի զուգորդումը:

Այսպես, բլրի գագաթին է տեղադրված Ծովինարի Դիվա տանի տեղամասի դամբարանադաշտը⁴⁰²: Կոնաձև բլուրների գագաթին և հարակից սարահարթում են տեղադրված նաև Սպիտակաջուր 1 և Շրվականի դամբարանադաշտերը ԼՂՀ Քաշաթաղի շրջանում⁴⁰³: Ձգված բլրի վրա են տեղադրված նաև Այրք, Արծվանիստ դամբարանադաշտերը⁴⁰⁴: Երկարուկ հյուսիս-

⁴⁰⁰ Ղ. Ալիշան, Հին հուստք, էջ 37; Ն. Տաղավարյան, նշվ. աշխ., էջ 7-8:

⁴⁰¹ Նշված հուշարձանները ուսումնասիրվել են 2014 թ. ԼՂՀ ԿԱ Զբոսաշրջության վարչության արշավախմբի կողմից (Գ. Սարգսյան, Ա. Գևորգյան, Լ. Հովհաննիսյան, Զ. Հոբեյան):

⁴⁰² Ե. Լալայեան, Նոր Բայազետ կամ Գեղարքունիք, նախապատմական շրջան, ԱՀ XV, 1907, էջ 180:

⁴⁰³ 2014 թ. հուշարձանը ուսումնասիրվեց ԼՂՀ կառավարությանն առընթեր Զբոսաշրջության վարչության հուշարձանների անձնագրավորման արշավախումբը:

⁴⁰⁴ R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, նշվ. աշխ., էջ 116; Ե. Լալայեան, Դամբանների պեղումներ, էջ 107-108:

հարավ ուղղված բլրի վրա է տեղադրված Ծովակ 2 դամբարանադաշտը⁴⁰⁵: Ամրոցից հարավ, ներկայումս թերակղզի ներկայացնող հրվանդանաձև բլրի վրա է գտնվում Քանազեղի դամբարանադաշտը⁴⁰⁶: Թմբի վրա է տեղադրված նաև Մրթբի ձորի դամբարանադաշտը⁴⁰⁷: Նույն ձևի հարթեցված հրվանդանաձև բլրակների գագաթներին են գտնվում ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Կովսականի Վան գյուղի, Քաշաթաղի շրջանի Բերդիկի դամբարանադաշտերը⁴⁰⁸: Բարձրադիր վայրում է գտնվում Կապանի Բաղաբուրջի դամբարանադաշտը⁴⁰⁹: Բլրի գագաթին է տեղադրված Թանահատի (Սիսիանի) եկեղեցու մերձակայքի դամբարանը⁴¹⁰: Դամբարաններ են փաստագրված Ախլաթյանում՝ Ջախաչի գլուխ Բարձունքի վրա⁴¹¹: Շատ հաճախ մեծ դամբարանաբլուրներից կազմված դամբարանադաշտերը տեղադրվում են ռելիեֆի հստակ ընդգծվող ջրբաժանների գծերին: ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Կերենի դամբարանադաշտը տեղադրված է ջրբաժանի և կից բլուրների գագաթին⁴¹²: Գրեթե նմանատիպ տեղադրություն ունեն Նովուրի, ԼՂՀ Քաշաթաղի շրջանում (գրեթե կցվում է ԼՂՀ վարչական տարածքում գտնվող Շուռնուխի դամբարանադաշտին) և Ղալաջիկի դամբարանադաշտերը⁴¹³: Դամբարանները տեղադրված են ջրբաժանի երկայնքով հարթ կամ հարթեցված բլրակների գագաթներին⁴¹⁴. ջրբաժանի վերին գծով, մեկ շարքով և հաջորդաբար տեղադրված են Շոշ գյուղի «Շղասար 1» դամբարանադաշտի 12 դամբարանաբլուրները, դրանց կողքի ջրբաժանին՝ «Շղասար 2»-ի թվով 13 թաղումային կառույցները, դեպի Կարկառ գետը իջնող ջրբաժանին են տեղադրված «Խաչոտ 1» դամբարանադաշտի 8 դամբարանաբլուրները: Մեհմանա գյուղից մինչև մոտակա Վարդաձոր գյուղը ձգվող լեռնաբազկի ջրբաժանին մեկ գծով շարված են մինչև 4 մ բարձրությամբ ու 20 մ տրամագծով մոտ 40 մեծ դամբարանաբլուրներ⁴¹⁵: Այսպիսի դամբարանադաշտերի ցանկը կարելի է երկար շարունակել: Ակնհայտ է, որ նշանավոր անձանց դամբարանները բարձունքներին տեղադրելը թելադրված է ոչ միայն դրանց ազատ դիտարկումը ապահովելու հրամայականով:

Դամբարանը, որպես նախնյաց պաշտամունքի գլխավոր տարր իր շուրջը ձևավորում է սրբազործված ոլորտ, որը տարածքային առումով պետք է իշխող լինի շրջակայքի (= հասարակության) վրա: Եվ պատահական չէ, որ առաջին, բարձր կետում դրված դամբարանի մոտ հետագայում առաջանում են նույն տրամաբանությամբ թելադրված այլ թաղումների շարքեր,

⁴⁰⁵ **R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani**, նշվ. աշխ., էջ 88; **Ե. Լալայան**, Դամբարանների պեղումներ, էջ 70:

⁴⁰⁶ **Գ. Արեշյան**, Պահպանական պեղումներ Քանազեղի դամբարանադաշտում, էջ 2:

⁴⁰⁷ **Ա. Փիլիպոսյան**, Հետախուզական պեղումներ «Մրթբի ձոր» դամբարանադաշտում, էջ 32:

⁴⁰⁸ Բերդիկի դամբարանադաշտը մի շարք հրապարակումներում նշված է որպես Հակի դամբարանադաշտ: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ 1996 թ., երբ դամբարանադաշտը առաջին անգամ հաստատագրվեց ՀՀ մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գ/հ կենտրոնի արշավախմբի կողմից (Ա. Գնունի, Վ. Գալսեթյան, Գ. Խաչատրյան), Բերդիկ գյուղը, որի վարչական տարածքում գտնվում է դամբարանադաշտը, դեռևս բնակեցված չէր: **Ա. Գնունի, Գ. Խաչատրյան**, Նորահայտ հուշարձաններ Աղավն գետի վերնահոսանքում, էջ 55: 2014 թ. հուշարձանը կրկին ուսումնասիրվեց ԼՂՀ կառավարությանն առընթեր Զբոսաշրջության վարչության հուշարձանների անձնագրավորման արշավախումբը:

⁴⁰⁹ Հուշարձանների պետական ցուցակ, 8 Սյունիքի մարզ, 1. Կապան քաղաք, 6 բնակելի թաղամաս Բաղաբուրջ, 3 դամբարանադաշտ:

⁴¹⁰ Պետական ցուցակ 8. Սիսիան, 13 Արևիս, 2 Թանահատ գյուղատեղի, 1. Թանահատի վանք, 2, գերեզմանոց, 1, դամբարան:

⁴¹¹ **Մ. Հաարթյան**, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 168:

⁴¹² **Ա. Գնունի, Գ. Խաչատրյան**, Կերենի դամբարանադաշտը, էջ 139:

⁴¹³ **Գ. Սարգսյան, Ա. Գնունի, Ա. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 164-165:

⁴¹⁴ 2014 թ. հուշարձանը ուսումնասիրեց ԼՂՀ կառավարությանն առընթեր Զբոսաշրջության վարչության հուշարձանների անձնագրավորման արշավախումբը:

⁴¹⁵ Այստեղ գանձախույզների կողմից կողոպտված մի դամբարանից գտնվել են բրոնզե և ոսկյա զարդեր, սաղավարտ, դիմակ, կրծքի մեծ՝ պատկերազարդ վարդյակ և այլ եզակի գտածոներ. նյութերը վաճառված են, գանձախույզները՝ դատապարտված:

ինչը հանգեցնում է շղթայաձև, հաջորդական դասավորված դամբարանադաշտերի առկայությանը:

Լանջ. Տեղադրված լինելով բլուրների գագաթներին, դամբարանադաշտերը հաճախ տարածվում էին նաև վերջիններիս լանջերին: Կերենի դամբարանադաշտի պեղումները ցույց են տալիս, որ կառուցապատումը կարող էր իրականացվել վերից վար սկզբունքով: Այս պատկերն են բացահայտում 2010 թ. պեղած N 94 և 95 դամբարանների հետազոտության արդյունքները: N 94 դամբարանի ուղղանկյուն խուցը տեղադրված է արևելք-արևմուտք առանցքով: Թեպետ դամբարանը ոչ միայն թալանված էր, այլև հիմնահատակ ավերված (մասնակիորեն պահպանվել էր միայն հարավային պատը, մնացած երեքը միայն նշմարվում էին), պեղումները բացահայտեցին մի առանձնահատկություն. հարավային պատի վերին քարաշարի վրա կառուցված էր ևս մեկ քարաշար, որն ընդհանուր առմամբ ուներ նույն ուղղվածությունը: Ինչպես պարզվեց հետագա պեղումների ընթացքում, այս պատը պատկանում էր մեկ այլ՝ N 95 դամբարանին: Այն հանգամանքը, որ N 94 դամբարանի կառուցման ժամանակ մի քանի քար սեպվել էր վերին դամբարանի պատերի մեջ հուշում է, որ վերջինս կառուցված էր ավելի վաղ:

Բլրի լանջին բնակավայրի դեմ դիմաց է գտնվում նաև Վարդենիկ 2 դամբարանադաշտը⁴¹⁶: Դեպի բլրի լանջեր են տարածվում նաև Քանազեղի, Անգեղակոթի Գութանասարի դամբարանադաշտերը⁴¹⁷: Մշենիի դամբարանադաշտը զբաղեցնում է բլուրը և հարակից սարահարթը: Սարալանջին են գտնվում նաև Աղվանիի II և III, Խնածախի Խաչի խութ, Տանձավերի II դամբարանադաշտերը⁴¹⁸: Ե. Լալայանը նշում է, որ բլրի լանջին են տեղադրված նաև Գեստակ Բուլաղի և Խազախաչի դամբարանադաշտերը⁴¹⁹: Միաժամանակ բլրի գագաթին և լանջերին դամբարանադաշտերի տեղադրությունը կարող է բացատրվել ինչպես դամբարանադաշտի հետագա տարածման, այնպես էլ հասարակական զարգացումների համատեքստում: Համեմատության համար պետք է նշել Լոռի Բերդի Թափա կոչվող հատվածը, որտեղ տեղադրված էին առավել հարուստ դամբարանները⁴²⁰:

Դամբարանադաշտի լանջին կամ դարավանդին տեղադրությունը կարող է պայմանավորված լինել նաև բլուրի գագաթին ամրոցի առկայությամբ: Այս պարագայում բնակավայրի սահմանը միաժամանակ հանդիսանում էր դամբարանադաշտի խորհրդանշական սահման: Նման երևույթ փաստագրված է Ծովակի ամրոցին կից գտնվող դամբարանադաշտում, որը տեղադրված է բլրի լանջին՝ բնական ամֆիթատրոնի վրա⁴²¹: Ամրոցի պարիսպներից դուրս, բլրի լանջին է գտնվում նաև Հերիկի դամբարանադաշտը⁴²²: Ամրոցի և «ստորին քաղաքի» միջև էր գտնվում Ծովինարի դամբարանադաշտը⁴²³: Ամրոցի պարիսպներից դուրս է գտնվում նաև Քարե Դուռ ամրոցի ուրարտական դամբարանը: Պարսպից դուրս՝ բլուրների լանջերին են գտնվում Բալակի (ամրոցից հարավ՝ դարավանդի վրա), Խնձորեսկի, Շաղատի դամբարանադաշտերը⁴²⁴, իսկ Հացավանում դամբարանադաշտը տեղադրված է բլրի գագաթին գտնվող

⁴¹⁶ R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, նշվ. աշխ., էջ 147:

⁴¹⁷ Գ. Արեշյան, նշվ. աշխ., էջ 2, Պետական ցուցակ, 8,13, 12:

⁴¹⁸ Պետական ցուցակ, 8 Սյունիքի մարզ, 12 գ. Աղվանի, 2-3, 8. Սյունիքի մարզ, 44. Խնածախ, 10 դամբարանադաշտ, 8, Սյունիքի մարզ, 98, գ. Տանձավեր, 5 դամբարանադաշտ:

⁴¹⁹ Ե. Լալայան, Լոռի Բայազետ կամ Գեղարքունիք, էջ 184, 186:

⁴²⁰ Ս. Ղևեջյան, Լոռի Բերդ II, էջ 51:

⁴²¹ R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, նշվ. աշխ., էջ 98:

⁴²² Գ. Սարգսյան, Ա. Գևորգյան, Ա. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 159-160:

⁴²³ R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, նշվ. աշխ., էջ 147:

⁴²⁴ Պետական ցուցակ, 8 Սյունիքի մարզ, 20 Բալաք գյուղ, 1 ամրոց, 1. դամբարանադաշտ, 8 Սյունիքի մարզ, 45. Խնձորեսկ, 2. բնակատեղի, 1. դամբարանադաշտ, 8 Սյունիքի մարզ, 69. Շաղատ, 1, բնակատեղի, 2, դամբարանադաշտ:

Վասակաբերդի ստորոտում⁴²⁵: ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Հակ գյուղում դամբարանադաշտը ամրոցի հարավային ստորոտին է, իսկ Հակ 2 ամրոցում (ամրացված փարախներում) դամբարանները ամրոցի տարածքում են: Եզնագոմերի ամրոցում դամբարանադաշտը տարածվում է նրա շրջակայքում. բարձունքին է գտնվում մեծ դամբարանաբլուրը, որի շուրջ հավաքված են փոքր դամբարանաբլուրներ և կրոմլեխով թաղումներ⁴²⁶:

Նման դեպքերում դամբարանադաշտի և բնակավայրի համաժամանակեցման հարցը կարելի է լուծել միայն պեղումների միջոցով: Կան դեպքեր, երբ բնակավայրերում դամբարանադաշտերի և ամրոցների տարածքները մասնակիորեն համընկնում են, ինչը կարող է վկայել այս հուշարձանների տարածամասակյա լինելու, ինչպես նաև տարբեր ժամանակահատվածներում բնակավայրերի սահմանների փոփոխելիության մասին: Այսպես, ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Սպիտակաջրի ամրոցում դամբարանները տեղադրված են ամրոցի տարածքում⁴²⁷: Նմանատիպ երևույթ դիտարկվում է նաև ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Միրիկ 2 ամրոցում, որտեղ պարիսպներով ներփակված տարածքում պարզ երևում են 3-4 երբեմնի կեղծ թաղով ծածկված ուղղանկյուն, զգալիորեն ավելի մեծ քարերից շարված կիսագետնափոր կառույցներ, որոնք, ըստ ամենայնի, նախքան ամրոցի տեղադրումը, այստեղ եղած դամբարանների կողոպտված թաղումների խցերն են: Ղուշչի դալա բնակատեղիում դամբարանները, ամենայն հավանականությամբ, այստեղ եղել էին նախքան բնակատեղիի ձևավորումը և միայն վերջինիս ընդլայման արդյունքում է, որ հայտնվել են դրա տարածքում⁴²⁸: Նույնատիպ պատկեր է տեսանելի նաև Հարժիսում: Սակայն այստեղ, Հարժիս-Դարաբաս հատվածում գտնվող մշակութային մնացորդներն ակնհայտորեն ուշ են և ամենայն հավանականությամբ կառուցվել են Ք.ա. I հազ. կեսից ոչ շուտ⁴²⁹:

Սարահարթ. Սրբավայրերի հաջորդ խումբը կարող է տեղադրված լինել բնական սարահարթերում: Այս պարագայում սահմանի դերում կարող են հանդես գալ հարթավայրերի կամ սարահարթերի բնական եզրերը՝ այն օղակող լեռները, ձորակները և այլն: Այսպես, լեռներով օղակված սարահարթում է տեղադրված Արվականի ընդարձակ դամբարանադաշտը⁴³⁰: Սարահարթի վրա են գտնվում նաև Ծղուկի և Նորավանի դամբարանադաշտերը⁴³¹: Սևանա լճի ավազանում բլուրներով շրջապատված հարթավայրում է գտնվում Վիգոնի դամբարանադաշտը⁴³²: Նախիջևանում Ղարաբուլաղի դամբարանադաշտը տեղադրված է հարթավայրային շրջանում, որը հյուսիսից եզերվում է լեռներով⁴³³: Հարթ լանդշաֆտում է գտնվում Մոզի դամբարանադաշտը⁴³⁴: Սարահարթի վրա են տեղադրված նաև Սելիմի և Քարեձիի տարածքի կոթողային հուշարձանները և Հարժիսի դամբարանները, ինչպես նաև Ելփինի դամբարանա-

⁴²⁵ Պետական ցուցակ, 8, Սյունիքի մարզ, 57, Հացավան, 5. Դամբարանադաշտ:

⁴²⁶ Գ. Սարգսյան, Ա. Գևորգյան, Ա. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 157-158:

⁴²⁷ Գ. Սարգսյան, Ա. Գևորգյան, Ա. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 154:

⁴²⁸ Միրիկ 2 բնակատեղին և Ղուշչի դալա ամրոցը ուսումնասիրվել է 2014 թ. ԼՂՀ Զբոսաշրջության վարչության արշավախմբի կողմից:

⁴²⁹ Բարձունքի/լեռան սրբազործումն արտացոլված է տարբեր ժողովուրդների դիցաբանական համակարգերում (С. А. Токарев, նշվ. աշխ., էջ 603-608), այդ թվում՝ նաև հայերի (հմմտ. էպոսի «Բանձրիկ Մարաթուխ Աստվածածին», «Մարութա Բանձր Աստվածածին», «Մասմա սար», որի «գլուխ լուս կամար կանգնիր ի») (Մասունցի Դավիթ Դպատում, 27, 1570-1580, 2 պատում, 44, 1800-1810, է պատում 14, 644-645): Բացի վերին ուժերի բնակատեղի հանդիսանալուց՝ բարձունքները հաճախ կապվում են թաղման խորհրդի հետ (Апполодор, Мифологическая библиотека, 3, XIV, 7):

⁴³⁰ Ա. Գևորգյան, Գ. Խաչատրյան, Նորահայտ հուշարձաններ Աղավնո գետի վերնահոսանքում, էջ 55-56:

⁴³¹ Պետական ցուցակ, 8, Սյունիքի մարզ, 49 Ծղուկ, 1 դամբարանադաշտ: Օ. Ջոկիյան, նշվ. աշխ., էջ 58:

⁴³² Ս. Հմայակյան, Հ. Հակոբյան, Ն. Տիրացյան, Հ. Մանամյան, Ռ. Բիշոնե, Ն. Պարմեջիանի, Գեղարքունիքի հայ-իտալական շրջիկ արշավախմբի 2004-2005 թթ. աշխատանքների հիմնական արդյունքները, ՀՀՄ XIV, 2008, էջ 160:

⁴³³ С. Ашуров, Раннебронзовые курганы в Нахичевани, АЭФК, Тбилиси, 2004, с. 26.

⁴³⁴ Պետական ցուցակ, 9 Վայոց Ձոր, 32 Մալիշկա, 5 Մոզ, 1 դամբարանադաշտ:

դաշտը: Բերդիկի պաշտամունքային համալիր-դամբարանադաշտը գտնվում է Բերդիկ գյուղից 1.8 կմ արևմուտք, դեպի Հակ տանող հիմնական ու երկրորդական ավտոճանապարհների միջնամասում, փոքրիկ ձորակի ձախ կողմի հարթ դաշտում, դամբարանադաշտի արևմտյան եզրին:

Ուշագրավ է նաև վիշապաքարերի միջավայրը: Վերջիններիս մեծ մասը հանդես է գալիս խմբերով՝ հստակորեն սահմանված գոգավոր մարգագետինների միջավայրում, ինչը էապես քչացնում է դրանց տեսանելիության աստիճանը: Նմանատիպ տեղագրություն (քանուց պաշտպանված բնական գոգավորությունների վրա, ալպիական մարգագետիններում, կամ ոչ բարձր բլուրների լանջերին) ունեն հաճախ նաև ժայռապատկերները⁴³⁵: Ի տարբերություն խմբված վիշապաքարերի, կան փոքր քանակությամբ մեկուսի վիշապաքարեր: Այս «մենակ-յացները» կարող են տեղադրված լինել համեմատաբար գոգավոր մարգագետիններում, ինչպես նաև ավելի տեսանելի վայրերում: Վերջին շրջանի հետազոտությունները⁴³⁶ պարզել են, որ վիշապաքարերը գրեթե միշտ առնչվում են միջին չափսի կրոմլեխների և դրանց անմիջական միջավայրի հետ, որը կարող է բաղկացած լինել դամբարաններից, ժայռապատկերներից, «օղուզի/հսկայի տուն/քյալաֆա» (աշտարակաձև կառույց/դամբարան) հիշեցնող շինություններից, արհեստական քարակույտերից: Վիշապաքարով կրոմլեխները մարմնավորում են բարձր լեռնային մակարդակի վրա գտնվող յուրահատուկ մշակութային տարածքներ, ծիսական արարողությունների սրբազան միջավայրեր: Դրանց տարածումը ծովի մակերևույթից 2000-3000 մ բարձրության վրա տիպական պիտի լինե՞ր թերևս այն ժամանակահատվածների համար, երբ բարձր լեռնային շրջանները ձեռք էին բերել որոշակի իմաստային ու կիրառական բովանդակություն (Ք.ա. II հազ.)⁴³⁷:

Ճանապարհ և կիրճ. Սրբավայրերը երբեմն տեղադրված են լինում ճանապարհներին կամ կիրճերում: Սրանց թվին են պատկանում Սիսիանի լեռնանցքի մոտ գտնվող Մուցքի և Մելիմի քարավանատնից անմիջապես հյուսիս-արևելք գտնվող դամբարանադաշտերը⁴³⁸: Ձորակում է գտնվում Գեղարքունիքի մարզի Դարբանդ դամբարանադաշտը⁴³⁹: Նույն համատեքստում պետք է դիտարկել Խնածախից 3 կմ հյուսիս-արևելք՝ Վանքի ձոր տեղամասում գտնվող համալիրը, որի արևելյան հատվածում բնական քարայր է (նկ. 21): Այստեղ ձորակը լայնանում է՝ առաջացնելով յուրատեսակ բնական ամֆիթատրոն: Տարածքը միջնադարյան շրջանում օգտագործվել է որպես գերեզմանոց, իսկ քարայրը՝ որպես ժայռափոր մատուռ: Քարայրի ձևավորման մեջ մարդկային միջամտությունը չնչին է: Համալիրի կենտրոնական հատվածում տեղադրված է եռանկյունաձև զոհասեղան և բաժակատիպ փորվածքներով քար⁴⁴⁰: Որպես զուգահեռ պետք է հիշատակել նաև Բյուրականից վերև Արտավազդիկի ձորում գտնվող զոհասեղանը: Ձորի կենտրոնում կանգնած մոտ 80 մ բացվածքով և 5.0 մ. բարձրությամբ ժայռազանգվածի հետնամասից փորված քարե աստիճանավանդակը տանում է դեպի գագաթին վեր

⁴³⁵ **Հ. Մարտիրոսյան, Հ. Իսրայելյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները, էջ 7; **Ս. Սարգսյան**, Հայաստանի ժայռապատկերները՝ քարե դարից բրոնզե դար, Երևան, 2010, էջ 7-9:

⁴³⁶ **A. Gilibert, A. Bobokhyan, P. Hnila** 2012, Dragon Stones in Context, p. 144, 93-132.

⁴³⁷ Հարթավայրը սրբացվել է տարբեր՝ հատկապես հնդեվրոպական ժողովուրդների դիցաբանական համակարգերում և հաճախ կապվել անդրաշխարհի գաղափարի հետ. հմմտ. **J. Puhvel**, “Meadow of the Otherworld” in Indo-European Tradition, Zeitschrift für vergleichende Sprachforschung 83, 1969, p. 64-69: Ավագ Էդայում հիշատակվում է Էդայվոլ դաշտը, որտեղ աստվածները կառուցում էին իրենց բազիլիկները (**Старшая Эдда**, Прорицание Вьельвы 7): Երկնային աստվածություններ ասերի լեզվով Երկիրն անվանվում էր «հովիտ» (**Старшая Эдда**, Речи Альвиса 10): Իռլանդական սագաներում հիշատակվում են «դաշտավայրի ոգիները» (**Ирландские саги**, с. 93): Բրլանդիայում գոյություն ունեին այսպես կոչված «Երկրպագության հովիտը» (**Э. Росс**, Кельты-язычники, Москва, 2005, с. 176-177):

⁴³⁸ Պետական ցուցակ, 8, Սյունիքի մարզ, 62 Մուցք, 1. դամբարանադաշտ, 9 Վայոց ձոր, 7 Աղնջաձոր, 1 ամրոց, 1 դամբարանադաշտ:

⁴³⁹ **R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani**, նշվ. աշխ., էջ 144:

⁴⁴⁰ **Ի. Ղարիբջան, Հ. Միմոնյան, Ա. Գևորգյան, Է. Քամալյան**, Սյունիքյան նորահայտումներ, էջ 132:



Նկ. 21. *Խնածախի Վանքի ձոր, քարայր*

խոյացող խորանարտը՝ զոհասեղանը, որից առվակով միացած իջնում է բաժակատիպ փոսորակների շարք։ Զոհասեղանի դիմաց, ձորի արևելյան կողմում, բնական քարանձավից բխում է աղբյուր, իսկ ձորի ժայռային մերկացումներին նկատվում են տաշված հարթակ-նստարաններ⁴⁴¹։

Քննարկվող սրբավայրերի տեսակը հայտնի է պատմական և ազգագրական աղբյուրներից⁴⁴²։

Քարափ. Ուշագրավ են քարափներին տեղադրված զոհասեղանները, որոնց թվում կարելի է հիշատակել օր.՝ Բաշարաջուր գյուղատեղիից (Գորիսի տարածաշրջանի Բարձրավան գյուղ) 3 կմ արևելք, XV դ. եկեղեցուց հարավ, ձորակի քարափին գտնվող զոհասեղանը. տարածքում դիտարկվում են նաև կիկլոպյան շարվածքի հետքեր⁴⁴³։ Քարափներին տեղադրված զոհասեղանները պատահական երևույթ չեն Հայաստանում և հայտնի են այնպիսի հուշարձաններից, ինչպիսիք են Շամիրամը, Գառնին, Հոդմիկը, Ծիծեռնակաբերդը⁴⁴⁴։

Ջրային աղբյուր. Ծիսա-պաշտամունքային համալիրների տեղագրության կարևոր հատկանիշ է ջրի (գետ, աղբյուր, լիճ) առկայությունը։ Դեռևս Ա. Իվանովսկին նշում էր, որ դամբարանադաշտերը հաճախ տեղադրված են գետերի ափերին (բերում է Գետաբակի, ինչպես նաև Խաչենագետ ու Վարանդա գետերի ձախ ափերին տեղադրված դամբարանադաշտերի օրինակները)⁴⁴⁵։ Այս դամբարանները, այդ թվում նաև Ղարաբուլաղի դամբարանադաշտը, տեղադրված են Վարանդայի և Իշխանագետի միջագետքում՝ բազմաշերտ Ղարաքյուփակթե-

⁴⁴¹ Ա. Գևորգյան, Լ. Պետրոսյան, Բյուրականի պաշտամունքային հնագույն հուշարձանը, ՀԱՀՆ I, Երևան, 1993, էջ 20-26։

⁴⁴² С. Д. Лисициан, Святые у перевалов, с. 200-212.

⁴⁴³ Ի. Ղարիբյան, Հ. Միմոնյան, Ա. Գեռնի, Է. Այվազյան, Է. Քամալյան, նշվ. աշխ., էջ 138։

⁴⁴⁴ Հոդմիկի և Ծիծեռնակաբերդի զոհասեղանների մասին մեզ է հաղորդել Հ. Հակոբյանը, ում հայտնում ենք խորին շնորհակալություն, Գառնիի զոհասեղանի դիտարկումները կատարվել են Լ. Մկրտչյանի կողմից։

⁴⁴⁵ А. Ивановский, նշվ. աշխ., էջ 88, 146, 153։

փե, Շեքերջիկ թեփե, Շոմուլութեփե, Քյուլ-թեփե 3 և այլ բնակատեղիների շրջակայքում⁴⁴⁶: Արաքսի ափին է Կարմիր Վանքի դամբարանադաշտը⁴⁴⁷:

Երկու գետերի՝ Արծվանիստի և նրա ձախ վտակ Սառնաջուրի միջագետքում է գտնվում Երկու ջուր դամբարանադաշտը⁴⁴⁸: Գեղարքունիքում, Աստղաձոր գետի և Աշթիչի գետի աջ ափին են գտնվում Վանքի դուռ 2 և Լեռնակերտ դամբարանադաշտերը⁴⁴⁹: Որոտանի և նրա վտակ Այրիի աջ ափին են Սիսիանի և Ախլաթյանի դամբարանադաշտերը⁴⁵⁰: Գավառագետի աջ ափին է Սրթբի ձոր դամբարանադաշտը⁴⁵¹:

Սևանա լճի երկայնքով էին, ըստ Ե. Լալայանի, ձգված Աղիամանի դամբարանադաշտի առավել մեծ դամբարանները: Նույն օրինաչափությունն է նշվում նաև Ծովինարի⁴⁵², Վանքի դուռ 2, Վիգոն և Ծովակ⁴⁵³ դամբարանադաշտերի վերաբերյալ: Բազմաթիվ կրոնիկներ, դամբարանաբլուրներ և ժայռապատկերներ են հաստատագրված Ալլճերի շրջակայքում:

Ըստ Ե. Լալայանի՝ Գավառի դամբարանադաշտի տարածքում բխում էր հանքային ջրի աղբյուր⁴⁵⁴: Հանքային ջրերի շրջանում են տեղադրված նաև Ջերմաջուրի ժայռապատկերները⁴⁵⁵:

Աղբյուրը ևս կարող էր դիցաբանական ընկալումներում կապվել կյանք-մահ-վերածնունդ եռամիասնության հետ⁴⁵⁶:

Քարայր. քարայրը կարևոր նշանակություն ունի ծիսա-պաշտամունքային համակարգում⁴⁵⁷: Պաշտվող քարայրների մասին վկայում են և՛ հնագիտական, և՛ ազգագրական տվյալները: Այսպես, Հրազդանի կիրճում Երևանից ոչ հեռու գտնվող Համո 1 քարայրը վաղ երկաթի դարաշրջանում, ամենայն հավանականությամբ, հանդիսանում էր սրբատեղի, որտեղից գտնվել են մի քանի տասնյակ արձանիկ-կուռքեր⁴⁵⁸: Պաշտվող քարայրների մասին Շինուհայրում վկայում է Ե. Լալայանը⁴⁵⁹: Բնական քարայրների համատեքստում են հանդես գալիս Ջոջ դարի, Գավառի և Արփիի դամբարանադաշտերը⁴⁶⁰: Քարայրային պաշտամունքի դրսևորում-

⁴⁴⁶ Տե՛ս նաև Գ. Исмаилов, Древние поселения, с. 39-41, рис. 15; Զ. Միմոնյան, Ա. Գևուհի, Արցախի ազատագրված տարածքների հնագույն, նախաքրիստոնեական և միջնադարյան բնակավայրերի ուսումնասիրությունը 1993-1995 թթ, էջ 70:

⁴⁴⁷ Ե. Լալայան, Նախիջևանի ոստիկանական շրջան կամ Նախիջևան, ԱՀ XIII, էջ 205:

⁴⁴⁸ R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, նշվ. աշխ., էջ 138:

⁴⁴⁹ R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, նշվ. աշխ., էջ 157, 193:

⁴⁵⁰ Պ. Ավետիսյան, Ռ. Բադալյան, Ա. Գևորգյան, Օ. Խնկիկյան, Պեղումներ Սիսիանի դամբարանադաշտում, Հայկական քաղաքակրթությունը հնագույն ժամանակներից մինչև քրիստոնեության ընդունումը, Երևան, 2000, էջ 3:

⁴⁵¹ Ա. Փիլիպոսյան, նշվ. աշխ., էջ 31:

⁴⁵² Ե. Լալայան, Նոր Բայազետ կամ Գեղարքունիք, նախապատմական շրջան, ԱՀ XIV, 1906, էջ 32, 37: Թեպետ Սևանա լճի մակարդակի տատանումները ստիպում են որոշակի վերապահությամբ ընդունել Ե. Լալայանի այս դիտարկումը, սակայն օրինաչափության նշումն ինքնին շատ էական է:

⁴⁵³ R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, նշվ. աշխ., էջ 116, 157; Ս. Հմայակյան, Հ. Հակոբյան, Ն. Տիրացյան, Հ. Սանամյան, Ռ. Բիշունե, Ն. Պարմեջիանի, նշվ. աշխ., էջ 160; Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ, էջ 107-108:

⁴⁵⁴ Ե. Լալայան, Նոր Բայազետ կամ Գեղարքունիք, էջ 230:

⁴⁵⁵ Զ. Միմոնյան, Քարվաճառի շրջանի պատմական հուշարձանների քարտեզ:

⁴⁵⁶ Հմմտ. Եզնիկ Կողբացու մոտ հանդիպող ուշ գրադաշտական առասպելաբանության այս դրվագի քննումը. «Դարձեալ միւս եւս իմն ասեն, որ ամենեւին չէ հաւատալի, թե իբրեւ մեռանէր Որմիզդ՝ զսերմն իւր յաղբիւր մի արկ եւ մօտ ի վախճան յայն սերմանէ կոյս մի ծնանելոց է» (Եզնիկյան վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914, II, Ժ):

⁴⁵⁷ Ղ. Ալիշան, Հին հաւատք..., էջ 37, Այս մասին մանրամասն հմմտ. Ա. Ս. Փիլիպոսյան, Ռ. Ա. Մկրտչյան, Գեղիկոսի վանտոսայան (ուրարտական) քարայր-դամբարանը, ՀՀՃ 18/IV, Երևան, 2001:

⁴⁵⁸ Ա. Դեմիրխանյան, Հ. Ազիզյան, Կուռքեր Համո 1 քարայրից, ԴՀԱԹ, 1983-1985, Երևան, 1986, էջ 9:

⁴⁵⁹ Ե. Լալայան, Ձանգեզուր, էջ 42:

⁴⁶⁰ Տե՛ս, Ե. Լալայան, Նոր Բայազետ կամ Գեղարքունիք, էջ 230; Պետական ցուցակ 9 Վայոց Ձորի մարզ, 12 Արփի 2 դամբարանադաշտ:

ներից են արհեստական քարանձավներում գտնվող դամբարանները⁴⁶¹։ Դրանցից մեկը Աղավ-նաձոր գյուղում է և իրենից ներկայացնում է ժայռափոր մի խորշ՝ տեղադրված բլուրի զառի-վայր ժայռային հատվածի վերնամասում, ինչը տիպիկ է ուրարտական դարաշրջանի համար։ Խորշն ունի ոչ կանոնավոր քառակուսու տեսք՝ հյուսիսային կողմում կլորացված է, բոլոր կողմերից լավ մշակված, վերնամասում երևում են կրակի ներգործության հետքեր։ Այստեղ արժե հիշատակել նաև մարդկային չնչին միջամտությամբ բնորոշվող բնական քարայրները, որոնք կազմում են սրբավայրի կարևոր բաղադրատարր. այդպիսին է Խնածախի Վանքի ձորի սրբավայրի արևելյան կողմում գտնվող քարանձավը։

Քարանձավը առասպելաբանության մեջ հիմնականում կապվում է հանդերձյալ աշխար-հի հետ⁴⁶²։

2. Տեղագրական-գործառության նշանակությունը

Վերոհիշյալ տվյալները հնարավորություն են տալիս դիտարկել Սյունիքի սրբավայրերը տեղագրական և գործառության առանձնահատկությունների տեսանկյունից, պարզել ծիսական լանդշաֆտի հիմնական բաղադրատարրերը և ձևափոխման միտումները։ Ըստ այդմ, քննվող հուշարձանները ի հայտ են գալիս հասարակական ոլորտի կենտրոններում, սահմանային գոտիներում, ճանապարհներին կամ իրենք են խորհրդանշում կենտրոնը, սահմանը, ճանապարհը (տեքստ. աղ. 5)։ Հաճախ սրբավայրերը ձևավորվում են բնական օբյեկտների շուրջ։

Կենտրոն. Կենտրոնի գատնումը կարևորագույն դեր է կատարում ցանկացած ծիսա-պաշ-տամունքային համալիրի կազմակերպման գործում։ Կենտրոնը, լինելով տվյալ համալիրի յու-րատեսակ «սրբություն սրբոցը», հանդիսանում է նրա առանցքը։

Կենտրոնի ընդգծման պարզագույն տարբերակը՝ բնական օբյեկտների անփոփոխ օգ-տագործումն է, որոնք և կրում են «առանցքի» գործառությո՛ւնը։ Այսպես, Ե. Լալայանը նշում է, որ Միսիանի տարածաշրջանի Շաղատ գյուղում՝ Քեչաբերդ սարի գագաթին կա կլոր անցքով պրիզմայաձև ժայռ, որը սրբատեղի է և որի շուրջը հայտնաբերվել է առատ խեցեղեն⁴⁶³։ Նույն հեղինակը Վայոց Ձորի Տանձիկ գյուղից ոչ հեռու Օստեր դաշտում հիշատակում է մի ուխտատեղի՝ կրակից սևացած քարով, որը պաշտում են և՛ հայերը, և՛ թուրքերը⁴⁶⁴։ Այս համատեքստում կարող է դիտարկվել ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Աղվեսահաքիի ամրոցի միջնաբերդում գտնվող բնական ցից կանգնած ժայռազանգվածի բեկորը⁴⁶⁵։ Նման ժայռ կա նաև Գեղարքունիքի Տիկնաձորի դամբարանադաշտում⁴⁶⁶։ Աղվանիի դամբարանադաշտի կենտրոնական հատվածում տեղադրված են անմշակ քարեր⁴⁶⁷։ Գավառի Խազախաչ դամբարանադաշտում, դամբարանները տեղադրված էին անցքով ժայռի շուրջ, որն, ի դեպ, իր ծիսա-պաշտամունքային գործառությունները չէր կորցրել դեռևս XIX դարում⁴⁶⁸։ Եղեգնաձորի Ձոջ դար դամբարանադաշտում բլրի գագաթին քարայր է, որի շուրջն էլ խմբավորվում են դամբարանները։ Նույն պատկերն է նաև Գավառում, որտեղ դամբարանները տեղադրված են

⁴⁶¹ Օրինակների համար հմտ. Ե. Լալայեան, Դամբարանների պեղումներ, էջ 117։

⁴⁶² Հմտ. Античные гимны, Москва, 1988; Гомеровские гимны Гермесу, 1-5; Орфические гимны к Плутону, 15.

⁴⁶³ Ե. Լալայեան, Չանգեզուր, էջ 186։

⁴⁶⁴ Ե. Լալայեան, Շարուր Դարալագեազի գաւառ, էջ 261։

⁴⁶⁵ Գ. Մարգարյան, Ա. Գնունի, Ա. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 153, 156։

⁴⁶⁶ Ե. Լալայեան, Նոր Բայազետ կամ Գեղարքունիք, էջ 189։

⁴⁶⁷ Պետական ցուցակ, 8, Սյունիքի մարզ, 49 Աղվանի 3 դամբարանադաշտ։

⁴⁶⁸ Ե. Լալայեան, Նոր Բայազետ կամ Գեղարքունիք, էջ 186։

Աղյուսակ 5. Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբավայրերի
տեղագրական-գործառության լուսնային անշուշտությունները

Առնչություն	Գտնվելու վայրը	Սրբազան օբյեկտը	Հուշարձանները
Կենտրոն	Բնակավայր	Ժայռ (բնական)	Աղվեսահաքի (Քաշաթաղ)
		մշակված ժայռաբեկոր	Իշակ Մեյդան (Զանգեզուր)
		կառույց	Ալի Բայրամլի (Քարվաճառ), Սոնասար 1, Հակ 1 (Քաշաթաղ)
	դամբարանա-դաշտ	Ժայռ (բնական)	Աղվանի (Զանգեզուր), Խազախաչ, Տիկնաձոր (Գեղարքունիք)
		քարայր	Ջոջ դար (Վայոց Ձոր), Գավառ (Սբ. Հովհաննեսի քարայր) (Գեղարքունիք)
		ջրի աղբյուր	Ծովինար 2 (Գեղարքունիք)
		մշակված ժայռային ելուստ	Բազարխանա, Իշակ Մեյդան (Զանգեզուր)
		կուռք	Բազարխանա (Զանգեզուր)
		կառույց	Բերդիկ (Քաշաթաղ)
		դամբարան	Ջորաց քարեր (Զանգեզուր), Ջոջ դար, Մոզ (Վայոց Ձոր), Ն. Գետաշեն, Եղնագումեր (Գեղարքունիք)
		մեկուսի	Խնածախ (Վանքի ձոր) (Զանգեզուր)
		անհայտ	Շաղատ-Քեչաբերդ (Զանգեզուր)
		մշակված ժայռային ելուստ	Նորավանի «Պորտաքար» (Զանգեզուր)
	Բնակավայր		
	դամբարանադաշտ	ջրի աղբյուր	Վանքի դուռ, Վանքի դուռ 2, Երկու ջուր, Սրթբի Ձոր, Աստղաձոր, Աղիաման, Ծովինար, Վիգոն (Գեղարքունիք)
		բլրի բնական ուրվագիծ	Ծովակ 2, Այրք, Արծվանիստ, Ծովինար, Քանազեղ (Գեղարքունիք), Սպիտակաջուր, Շրվական (Քաշաթաղ)
		պարիսպ կամ ցանկապատ	Կապան-Շահումյան (Զանգեզուր), Խնածախ, Շաղատ (Զանգեզուր), Ծովակ, Հերիկ, Ծովինար, Քարե Դուռ (Գեղարքունիք), Բերդիկ դամբարանադաշտ և պաշտամունքային համալիր (Քաշաթաղ)
		ժայռային ելուստ	Օրծեռնավանք (Քաշաթաղ)
	մեկուսի		
	անհայտ		
Ճանապարհ	Բնակավայր		
	դամբարանադաշտ	ջրբաժանին և լեռնաբազուկներին տեղադրված դամբարաններ	Կերեն, Նովլու, Ղալաջիկ (Քաշաթաղ)
		դամբարանների շարքեր	Միսիան (Զանգեզուր), Ջոջ դար (Վայոց Ձոր), Պատշար, Ղշլաղ, Աղիաման, Սրթբի Ձոր, Փերեի Ձոր, Սանգար (Գեղարքունիք)
		քարաշեն ճանապարհ	Կուռի Խարաբա (Գեղարքունիք), Բերդիկ (Քաշաթաղ)
		լեռնանցքում և ձորերում տեղադրված դամբարանադաշտ	Մուցք (Վայոց Ձոր-Զանգեզուր), Սելիմ (Վայոց Ձոր-Գեղարքունիք) Դարբանդ (Գեղարքունիք)
	մեկուսի	քարափին գտնվող մշակված գոհասեղան	Բաշարաջուր (Զանգեզուր)
		ձորում գտնվող մշակված ժայռային համալիր	Խնածախ (Վանքի ձոր) (Զանգեզուր)
	անհայտ		

Մբ. Հովհաննես քարայրի շուրջ⁴⁶⁹: Արջի քարանձավի մերձակայքում է տեղադրված Արփիի դամբարանադաշտը⁴⁷⁰: Նկարագրելով Ծովինարի (Զաղալուի) դամբարանադաշտը Ե. Լալայանը նշում է, որ «դիտել է անցքեր, որտեղից գոլորշի էր դուրս գալիս, իսկ անցքերի կողքերը ամրացված էին հենապատերով», որոնք, ըստ հեղինակի հանդիսանում էին բազիլների մնացորդներ և դրանով իսկ՝ այդ միջավայրի կենտրոնը⁴⁷¹:

Ծիսական «առանցքի» ձևավորման հաջորդ եղանակը՝ որոշակիորեն մշակված բնական օբյեկտների օգտագործումն է: Հենց այդ համատեքստում պետք է դիտարկել Միսիանի Պորտաքարը կամ էլ Խնածախի Վանքի ձորի զոհասեղանը⁴⁷²: Բնակատեղիում կենտրոնական դիրք էր զբաղեցնում Իշակ Մեյդանի զոհասեղանը:

Հայկական լեռնաշխարհում դեռևս հնագույն ժամանակներից հանդես է գալիս արհեստական եղանակով կենտրոնի ձևավորման պրակտիկան: Այսպես, դեռևս Ք.ա. III հազ. Մոխրաբլուրի տաճարը գտնվում էր բնակավայրի կենտրոնական հատվածում՝ հրապարակում, ընդ որում պաշտամունքային կառույցի ծեփվածքի մեջ ավելացված էին փայլարի բեկորներ: Արդյունքում արևի տակ շողացող կառույցը առանձնանում էր հում աղյուսի գորշ ճարտարապետության ֆոնի վրա⁴⁷³:

Պետք է հիշել նաև Բագարխանայի (Գորիսի տարածաշրջանի Խոզնավար գյուղ) պարագան, որտեղ գուգորդվում են բնական օբյեկտը և ձեռակերտ կուռքը: Այստեղ բլրի լանջի դարավանդին տեղադրված է զոհասեղան: Այն 5 մ տրամագծով, կլոր հատակագծով մի հարթակ է, որի մի հատվածը բաղկացած է կիսակլոր սալաքարից, իսկ մյուս մասը շարված է քարերով, որի հարևանությամբ կանգնեցված է կուռք⁴⁷⁴:

Սյունիքյան բնակատեղիներում տեղադրված սրբատեղիների մասին տեղեկություններն առայժմ սահմանափակ են: Այս իմաստով հիշատակելի է Ալի Բայրամլիի (ԼՂՀ Շահումյանի շրջան), այսպես կոչված, «հասարակական կառույցը»: Այն իրենից ներկայացնում է համակենտրոն շրջաններից բաղկացած համալիր⁴⁷⁵: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ժայռապատկերների և «հասարակական կառույցի» համաժամանակյա լինելու փաստը հստակ չէ: Արհեստականորեն հարթեցված լանդշաֆտում է տեղադրված Խաչաղբյուրի համակենտրոն շրջաններով կառույցը⁴⁷⁶: Կենտրոնական դիրք էին զբաղեցնում վերը հիշատակված Սոնասար 1-ի և Հակ 1-ի կենտրոնական հատվածներում հաստատագրված թմբերը: Կենտրոնական ձեռակերտ շինությունների թվում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Ձորաց քարերի կենտրոնական համալիրը և Բերդիկի պաշտամունքային համալիր-դամբարանադաշտում տեղադրված բլուրը: Բերդիկի բլուրը գտնվում է դամբարանադաշտի շրջակայքի վրա իշխող փոքրիկ բարձունքի վրա և իրենից ներկայացնում է արհեստականորեն հարթեցված գազաթով քարահողային թուփ: Այն օղակված է հզոր կիկլոպյան պարսպով, որի հարավային կողմում պահպանվել է մեծ ժայռաբեկորներով եզերված մուտքի բացվածքը: Հարթ գազաթի կենտրոնական հատվածում տեսանելի են քարե շրջանակներ, որոնց կենտրոնում ցից քար է: Այս շինության իրական գործառնությունը կարող է պարզվել միայն պեղումների միջոցով:

Ձորաց քարերում կենտրոնական դիրք է զբաղեցնում կեղծ թաղով շինությունը, որը

⁴⁶⁹ Ե. Լալայան, Նոր Բայրազետ կամ Գեղարքունիք, էջ 230:

⁴⁷⁰ Պետական ցուցակ, 9, Վայոց Ձորի մարզ, 12 Արփի 2 դամբարանադաշտ:

⁴⁷¹ Ե. Լալայան, Նոր Բայրազետ կամ Գեղարքունիք, էջ 37:

⁴⁷² Ի. Ղարիբջան, Հ. Միմոնյան, Ա. Գևունի, Այվազյան Է., Քամայան Է., նշվ. աշխ., էջ 132:

⁴⁷³ Г. Е. Арешян, Искусство куро-аракской культуры, Материалы II международного симпозиума по армянскому искусству (отдельный оттиск), Ереван, 1978, с. 5.

⁴⁷⁴ Ի. Ղարիբջան, Հ. Միմոնյան, Ա. Գևունի, Է. Քամայան, Է. Այվազյան, Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 130:

⁴⁷⁵ Н. С. Ибрагимов, նշվ. աշխ., էջ 25-27: Հարկ է նշել, որ ժայռապատկերների և «հասարակական կառույցի» համաժամանակյա լինելու փաստը ամենևին էլ հստակ չէ:

⁴⁷⁶ R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, նշվ. աշխ., էջ 97:

օղակված է մենհիրներով: Թեպետ այս կառույցի պեղումների ժամանակ հայտնաբերվել է տարածամանակյա խեցեղեն, ընդհուպ մինչև միջնադար, այն թերևս կառուցվել է միջին բրոնզի դարում: Ս. Լիսիցյանի և Կ. Քուշնարյովայի նման, Օ. Խնկիկյանն այս շինությունը համարում է դամբարան, թեպետ Ս. Լիսիցյանն ու Կ. Քուշնարյովան⁴⁷⁷ չեն բացառում, որ այն հետագայում կարող էր ընկալվել որպես սրբատեղի:

Դամբարանադաշտի տրամաբանական կենտրոնը կարող է չհամընկնել իրական կենտրոնի հետ: Այսպես Ծովինար 2-ի դամբարանադաշտում մեծ դամբարանները կենտրոնացած են դամբարանադաշտի ծայրամասում, իսկ Վանքի ձոր 2 դամբարանադաշտում՝ գետի ձախ ափին⁴⁷⁸: Այս փաստը թույլ է տալիս ենթադրել, որ դամբարանադաշտի կենտրոնի որոշումը կարող էր ունենալ ոչ միայն ծիսա-պաշտամունքային, այլև սոցիալական իմաստ⁴⁷⁹:

Հասարակական զարգացումներին զուգընթաց համայնական կենտրոնի հետ մեկտեղ առաջանում են տոհմային, իսկ հետագայում՝ նաև տարածքային ենթակենտրոններ: Դեռևս Ք.ա. III հազ. Հայկական լեռնաշխարհի բնակավայրերում նկատվում է ոչ կենտրոնական դիրք ունեցող սրբատեղիների հանդես գալու հանգամանք⁴⁸⁰: Այս համատեքստում պետք է քննարկել նաև դամբարանների՝ հիմնական դամբարանի շուրջ կենտրոնանալու երևույթը (հմմտ. Եղեգնաձորի Ջոջ դարի⁴⁸¹, Մոզի⁴⁸², Ներքին Գետաշենի⁴⁸³, Եգնագոմերի⁴⁸⁴ օրինակները):

Սահման. Ծիսական տարածքի կազմակերպման ընթացքում կարևոր նշանակություն է ձեռք բերում սահման հասկացությունը: Սահմանն ընդգծվում է՝ ինչպես բնական, այնպես էլ մարդածին տարրերով: Բնական սահման են հանդիսանում բլրի ուրվագծերը, հրվանդանը, դրանք եզերող ձորակները և գետերը: Այսպես, Արծվանիստ և Սառնաջուր գետերը բնական սահման կարող էին հանդիսանալ Երկու ջուր և Աստղաձոր, Աշթիչի գետը՝ Վանքի դուռ 2, Գավառագետը՝ Մրթբի ձոր դամբարանադաշտերի համար⁴⁸⁵: Սահմանը կարող էր ընդգծվել

⁴⁷⁷ Օ. Хнкикян, նշվ. աշխ., էջ 27; С. Д. Лисициан, Кошун-Дашское мегалитическое городище в Сисиане, с. 709-721; К. Х. Кушнарева, Древнейшие памятники Двина, с. 48.

⁴⁷⁸ R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, նշվ. աշխ., էջ 137, 157:

⁴⁷⁹ Դիցաբանական համակարգերում հաճախ են հիշատակվում հարթավայրերում տեղադրված կենտրոնական ձեռակերտ համալիրներ: Մասնավորապես Սասունցի Դավթում հիշատակվում է «Էրկրթե տուն մընչ դաշտին տնկված» (**Սասունցի Դավիթ**, Զ պատում, 14, 390-400): Հարթավայրը կենտրոնական քարով հիշատակվում է մի շարք առասպելներում և հեքիաթներում (**Ирландские Саги**, с. 130; А. Н. Афанасьев, Народные русские сказки, N 168), այդ թվում հայկական էպոսում («Վիր կելնիս, ձին կը խեծնիս կերթաս // Կերթաս դաշտի մեջ // Պողվրտե տուն կիջնի երկնից գետին // Քո թուր կըզարկիս» (**Սասունցի Դավիթ**, է պատում, 730-740):

Դամբարանի ծիսա-պաշտամունքային կենտրոնական օրյեկտ դառնալը ևս ներկայացված է դիցաբանության մեջ: Դամբարանաբլուրը կարող էր հանդիսանալ երդումների վայր, ունենալ մաքրագործող ուժ (**Эсхил**, Жертва у гроба, 1-10, 100-130): Գերմանական դիցաբանության մեջ դամբարանաբլուրը յուրատեսակ կենտրոն է, կապված նոր կյանքի ծնունդի հետ (**Сага о Вьельсунгах**, XVI: Արդեն գոյություն ունեցող դամբարանի սրբատեղիի վերածման գործընթացը նկարագրվում է նաև հայկական էպոսում («Միեր ձիուց իջավ բախչի մեջ // Գերըզմնին երկրպագությիս էտու // Կելնի կերթաս - կո գերեզման մ'ա // Լուս վրեն կելնի կիջնի // Էն էլ կելնի քար կը շարա բուլուր») (**Սասունցի Դավիթ** Ը, 37, 238-240, Թ, 11, 410-415):

⁴⁸⁰ Ա. Գևունի, Շենգավթյան մշակույթի բնակավայրերում տեղադրված սրբավայրերը և պաշտամունքային կառույցները, ՊԲՀ 1, 2006, էջ 245-246:

⁴⁸¹ Տե՛ս Վ. Հովհաննիսյանի հոդվածն այս գրքի հավելվածում: Այստեղ դամբարանները տեղադրված են առանձին խմբերով, երբեմն իրարից որոշ հեռավորության վրա: Դրանց մի մասը խմբավորված է առավել մեծ դամբարանների շուրջ. երբեմն օգտագործվում են ընդհանուր պատեր:

⁴⁸² Օ. Խնկիկյան, Պեղումներ Եղեգնաձորի շրջանում, ՀԱՀՆ I, Երևան, 1993, էջ 77; Օ. Хнкикян, նշվ. աշխ., էջ 70:

⁴⁸³ Օ. Хнкикян, նշվ. աշխ., էջ 74:

⁴⁸⁴ Գ. Սարգսյան, Ա. Գևունի, Ա. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 157:

⁴⁸⁵ Տարբեր ժողովուրդների դիցաբանության մեջ գետը սահման է հանդիսանում այս և այն աշխարհների միջև (հմմտ. **Аполодор**, Мифологическая библиотека I, II, 4-5): Գետի (հետևաբար նաև կամրջի) սահմանային բնույթը երևան է գալիս նաև հայկական էպոսում. գետն այն սահմանն էր, որտեղ արդեն չէին գործում քաղաքի հետ կապված տաբուները, մասնավորապես՝ արյունահեղության տաբուն (տե՛ս, օր.՝ **Սասունցի Դավիթ**, է պատում, 5, 170, 220; Ը պատում, 17, 733): Գետը կապված էր գոհաբերության և հանդերձյալ աշխարհի գաղափարի հետ նաև

նաև լճի ափով: Ափի եզրով էին տեղադրված Ադիամանի, Ծովինարի, Վանքի դուռ, Վիգոն դամբարանադաշտերի առավել մեծ դամբարանները: Այս առումով հարկ է հիշատակել լճերի ափերին մենհիրների տեղադրված լինելու փաստը Եվրոպայում (մասնավորապես՝ Ժնևյան լճի ափին), ինչը հիշատակվում է նաև սագաներում⁴⁸⁶:

Միննույն ժամանակ բնական սահմանը հաճախ գուցորդվում էր պարիսպներով: Նմանատիպ պարիսպներ հաստատագրված են Բերդիկի դամբարանադաշտում և վերջինիս հարևանությամբ գտնվող պաշտամունքային համալիր-դամբարանադաշտում (նկ. 22): Նշված երկու համալիրներն էլ իրարից առանձնացված են ձորակով: Բերդիկի պաշտամունքային համալիր-դամբարանը եզերող ձորակի պռունկով գնում է պարսպաշար, որը փակվում է արևելքում՝ փոքր սելավատարի գծով դեպի վեր գնալով⁴⁸⁷: Դամբարանադաշտերի պարսպապատումը հայտնի էր Հին Արևելքում. այսպես, Խեթական պետության սահմաններում կիկլոպյան պարսպով էր օղակված Գյավուրկալա դամբարանադաշտը⁴⁸⁸: Ղ. Ալիշանը նշում է, որ թաղումները կարող էին իրականացվել պարիսպների վրա, ինչի պատճառով պարիսպների բուրգերը հաճախ անվանվում էին «մահարձաններ»⁴⁸⁹:



Նկ. 22. Բերդիկ, պաշտամունքային համալիրի պարիսպ-սահման

հնդկական դիցաբանության մեջ՝ զոհաբերության տիրակալ և խտոնիական որոշ գործառույթներ ունեցող Սումա աստվածության համատեքստում (**Ригведа**, I, 46, 3): Ռուսական բիլինաներում, որպես կյանքի և մահվան սահմանագիծ, հիշատակվում է Պաչույ գետը (**Добрыня Никитич и Алеша Попович**, Москва, 1974, 2, 38-40):

⁴⁸⁶ **A. D' Anna, F. Pinet**, Standing Stones from the Alps and the Mediterranean, ODM, 2002, p. 583-585; *Сара об Инглингах XXVII*: Հմմտ. նաև հետևյալ վկայությունները. մեդալների ավեր հիշատակվում է Ավագ Էդայում, իսկ ծովափնյա դամբարանաբլուրը՝ Բեովուլֆում (**Старшая Эдда**, Прорицание Вьельвы 38; Беовульф, III, 2241-2243): Սկանդինավյան դիցաբանությունում լճի ափին էր տեղադրված Օդինի տունը (*Сара об Инглингах*. V, в кн.: **С. Стурлусон**, Круг Земной, Москва, 1980):

⁴⁸⁷ Ինչպես Բերդիկի դամբարանադաշտի, այնպես էլ պաշտամունքային կառույց-դամբարանադաշտի պարիսպների և թաղումային համալիրների համաժամանակեցումը սկզբունքորեն վիճահարույց է, սակայն պետք է նշել, որ ոչ մեկում, ոչ մյուսում ուշ շրջանի խեցեղեն չի հայտնաբերվել, ինչպես նաև բացակայում են բնակավայրի առկայության մասին վկայող ճարտարապետական մնացորդները:


⁴⁸⁸ **Дж. Маккун**, Хетты и их современники в Малой Азии, Москва, 1983, с. 133.

⁴⁸⁹ **Ղ. Ալիշան**, Հին հալատք, էջ 444:

Սահմանի հաստատագրման յուրահատուկ եղանակ է օգտագործվել Ծիծեռնավանքի ամրոցում, որտեղ ամրոցի արևմտյան պարսպի արտաքին եզրին, դեպի դամբարանադաշտ տանող ճանապարհին կանգնած էր զոհասեղան: Այն բնական ժայռաբեկոր է, որի մակերեսը մշակվել է հաջորդաբար գնացող առվակներով միացող բաժակատիպ փորվածքներով, որոնք սկիզբ են առնում քարի ամենաբարձր կետում փորված ուղղանկյուն ավազանից: Ինչպես նշվեց, որպես սահման, առանձին դեպքերում կարող էր ընկալվել նաև բնակավայրի պարիսպը:

Այստեղ պետք է հիշատակել Զիրիկի պաշտամունքային կառույցը: Այն տեղադրված է ընդարձակ դամբարանադաշտի վերջում, ամենաբարձր կետում, դեպի ձորը կտրուկ իջնող լեզվակաձև դարավանդի եզրին և ստորոտից մինչև գագաթ օղակված է հաջորդաբար դրված 3-4 կիսաշրջան հենապատերով: Կառույցի ստորոտի տրամագիծը մոտ 15-20 մ է, կառուցապատված լանջի ուղղահայաց բարձրությունը՝ մոտ 7 մ: Գագաթին մեծադիր քարերով կազմակերպված է մոտ 3-4 մ տրամագծով կրկնապատով օղակված կլորավուն հարթակ:

Եթե թվարկված օրինակներում արհեստական սահմանը միայն ընդգծում էր բնականը, ապա Շահումյանի (Կապան) դամբարանադաշտում այն հանդես է գալիս որպես սկզբունք, երբ տարածքը գատվում է բնակատեղիից պատնեշով (նկ. 23): Ընդ որում, ի տարբերություն բերված օրինակների, երբ դամբարանադաշտը գտնվում էր բնակատեղիի պարսպից դուրս, իսկ բնակատեղիի սահմանը միաժամանակ հանդիսանում էր խորհրդանշական սահման դամբարանի համար, այս պարագայում պարիսպը պատկանում է հենց դամբարանադաշտին: Բացի այդ, միաշար պարիսպը հազիվ թե կարող էր ունենալ պաշտպանական նշանակություն:



Նկ. 23. Կապան, դամբարաններ N 2-3 և դամբարանադաշտը եզերող ցանկապատ

Սահմանի համատեքստում կարելի է դիտարկել նաև կրոմլեխները, կամ դրանց որոշ տարատեսակները⁴⁹⁰: Սովորաբար կրոմլեխն օղակում էր մեկ, երբեմն՝ մի քանի դամբարաններ⁴⁹¹: Դրանց տարատեսակներից պետք է նշել համակենտրոն շրջաններով կրոմլեխները, երբ առանձին կրոմլեխը անմիջականորեն շրջապատում էր խուցը (հմմտ. Բջնիի N 1 դամբարանը)⁴⁹²: Մի քանի դամբարան է օղակում կրոմլեխը Ներքին Գետաշենում⁴⁹³: Մի շարք դեպքերում կրոմլեխի շրջապատած տարածքը դամբարանաբլուր չի հանդիսանում. այսպիսի երևույթ դիտարկվում է Բերդիկի (կրոմլեխների տրամագիծը մինչև 10 մ է, վերգետնյա նյութը

⁴⁹⁰ Միննույն ժամանակ, բացառված չէ որ պարուրածև կրոմլեխը կարող էր ունենալ դեպի խուց տանող ճանապարհի իմաստ:

⁴⁹¹ Գ. Թումանյան, Հայաստանի ու շրջակայային դամբարանների կառուցվածքը, էջ 173:

⁴⁹² Բ. Ղարիբյան, Հ. Հակոբյան, Ա. Գևորգյան, Գ. Խաչատրյան, Տ. Վարթանեսովա, նշվ. աշխ., էջ 72:

⁴⁹³ Օ. Xnkikyan, նշվ. աշխ., էջ 43:

բնորոշ է ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններին), ինչպես նաև Եռաբլուր (Միսիան)-Հակ (ԼՂՀ Քաջաթաղի շրջան) ճանապարհի դամբարանադաշտերում⁴⁹⁴:

Ճանապարհ. կարևոր նշանակություն ունի դեպի սրբատեղի տանող ճանապարհը: Մի կողմից վերջինս խորհրդանշում է այն հոգևոր աշխատանքը, որը պետք է կատարեր հավատացյալը սրբատեղի այցելելիս, մյուս կողմից սրբատեղին ինքնին կարող էր ընկալվել որպես ճանապարհ, որը միավորում էր երևութական և աներևույթ աշխարհները: Վերջապես ճանապարհին ինքն էլ կարող էր սրբագործվել՝ այնտեղ ծիսա-պաշտամունքային կառույցի առկայությամբ:

Այս տեսանկյունից առանձին պետք է դիտարկվեն դամբարանների շարքերը: Այսպես Բողազքոյի դամբարանադաշտը տեղադրված էր քաղաքից դուրս՝ Յազիլիկայայի սրբատեղի տանող ճանապարհի երկայնքով, իսկ Իլիջայի դամբարանադաշտում (Գորդիոնից ոչ հեռու)՝ դամբարանները տեղադրված էին շարքերով⁴⁹⁵: Ուսումնասիրելով եվրոպական դոլմենները՝ Մ. Միդգլեյը ակնարկում է, որ հենց ճանապարհին էր նշվում դամբարաններով⁴⁹⁶: Մյունիքում դամբարանները շարքերով են տեղադրված Պատաշարի, Ղշլաղի, Ադիամանի և Մրթբի ձորի դամբարանադաշտերում⁴⁹⁷: Դամբարանների նմանատիպ շարքեր հաստատագրված են նաև Փերեի ձոր և Սանգար դամբարանադաշտերում⁴⁹⁸: Դամբարանները շարքերով են ձգվում նաև Միսիան II (Մյունի Բերդ) դամբարանադաշտում⁴⁹⁹: Արևելք-արևմուտք ուղղված շարքով է տեղադրված նաև Ջոջ դարի դամբարանների մի մասը⁵⁰⁰:

Բացառված չէ, որ ճանապարհի խորհրդի հետ են կապված նաև լեռնանցքներում տեղադրված դամբարանադաշտերը (Մուցք, Դարբանդ)⁵⁰¹: Հարկ է նշել, որ Եվրոպայում հայտնի են լեռնանցքներում (օր.՝ Սեն Գոտարդ) տեղադրված մեգալիթներ⁵⁰²:

Հայաստանում հաստատագրված են ծիսական ճանապարհներ դեռևս վաղ բրոնզի դարից: Դրանց հնագույն օրինակ կարելի է համարել Բջնիի պաշտամունքային կառույցը (դաշտային փաստաթղթերում և հրապարակումներում՝ N 2 դամբարան), որտեղ մաղած կավից արահետը այդ կառույցը օղակող կրոմլեխից տանում էր դեպի բացօթյա հարթակ⁵⁰³: Ամենայն հավանականությամբ, խորհրդանշական բնույթ էր կրում նաև Ջավախքում գտնվող Ամիրանիս Գորայի բնակատեղիից՝ դեպի բլրի գագաթին տեղադրված սրբավայր տանող ժայռափոր արահետը⁵⁰⁴: Մի քանի ժայռափոր արահետներ տանում են Գյուլիբուլաղ գյուղից (Շիրակի մարզ) 2 կմ արևելք գտնվող համալիրը⁵⁰⁵: Քարաշեն ճանապարհ է ընթանում դեպի Շաորի կիկլոպյան համալիրը (Փարվանա լճի ափ). ընդ որում, ճանապարհի երկայնքով կան բազմաթիվ հարթակներ, ժայռափոր աստիճաններ, մենհիրներ: Շաորիի կիկլոպյան համալիրը պիտանի չէր բնակեցման համար և ուներ զուտ ծիսա-պաշտամունքային բնույթ⁵⁰⁶:

⁴⁹⁴ **Ա. Գևունի, Գ. Խաչատրյան**, Նորահայտ հուշարձաններ, էջ 55:

⁴⁹⁵ **Дж. Г. Маккуин**, նշվ. աշխ., էջ 134:

⁴⁹⁶ **M. Midgley**, The Megalithic Tombs of the North European Plain, ODMM, p. 74.

⁴⁹⁷ **Ե. Լալայեան**, նշվ. աշխ., էջ 8-11, 31; **Ե. Լալայեան**, Պեղումներ Նոր Բայազետի շրջանում 1908 թվին, ԱՀ XIX, 1910, էջ 60:

⁴⁹⁸ **R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani**, նշվ. աշխ., էջ 141, 231:

⁴⁹⁹ **Պ. Ավետիսյան, Ռ. Բադալյան, Ա. Գևորգյան, Օ. Խնկիկյան**, նշվ. աշխ., էջ 3:

⁵⁰⁰ Հմմտ. Վ. Հովհաննիսյանի հոդվածն այս գրքի հավելվածում:

⁵⁰¹ Հմմտ. **С. А. Токарев**, նշվ. աշխ., էջ 603:

⁵⁰² **A. D' Anna, L. Pinet**, նշվ. աշխ., էջ 584:

⁵⁰³ **Բ. Ղարիբյան, Հ. Հակոբյան, Ա. Գևունի, Գ. Խաչատրյան, Տ. Վարթանեսովա**, Բջնի (պեղումների արդյունքներ), էջ 71-72; **Բ. Ղարիբյան, Հ. Հակոբյան, Ֆ. Մուրադյան, Ա. Գևունի**, Բջնիի 2011 թ. պեղումների հաշվետվություն (անտիպ):

⁵⁰⁴ **Т. Н. Чубинишвили**, К древней истории Южного Кавказа, с. 230.

⁵⁰⁵ Գյուլիբուլաղի սրբատեղին հայտնաբերվել է 1989 թ. Հ. Խաչատրյանի և Հ. Հակոբյանի կողմից: Տե՛ս, **Հ. Հակոբյան, Ա. Գևունի**, Դիտարկումներ, էջ 90:

⁵⁰⁶ **Г. Нариманашвили**, Новые открытия в Триалетской культуре, с. 103-104.



Նկ. 24. Բերդիկ, ծխական արահետներ պաշտամունքային համալիրում

Ճանապարհներ են հաստատագրված նաև Բերդիկի դամբարանադաշտ-պաշտամունքային համալիրում (նկ. 24): Օրթոստատ պատերով եզերված ճանապարհը ճյուղավորվում է դեպի առանձին դամբարանաբլուրներ և կենտրոնական կառույց: Մեկ այլ, ավելի հզոր, երկու կողմերից երկշերտ պատերով եզերվող ուղղաձիգ ճանապարհ բարձրանում է ձորակից մոտ 70 մ և ավարտվում երեք մեծ դամբարանաբլուրների մոտ, թողնելով «մեռյալների ճանապարհ»-ի տպավորություն: Նմանատիպ ճանապարհներ հայտնի են Սևանա լճի ավազանում՝ Կուռի Խարաբա դամբարանադաշտում, որտեղ դեպի դամբարաններ տանում են արևելք-արևմուտք ուղղվածությամբ քարերի շարքեր, յուրաքանչյուր շարքում 35-60 քար. ընդ որում շարքերը գնում են մեկ ուղղությամբ⁵⁰⁷:

Նման ճանապարհների ամենահայտնի օրինակը՝ Թոեղքի արարողակարգային ճանապարհներն են, որոնք, ինչպես և Կուռի Խարաբայում ուղղված են արևելք-արևմուտք առանցքով: Այդօրինակ ճանապարհներ հաստատագրված են Թոեղքում (III, VI, VIII, XV, XVII, XLVII դամբարաններ), Զուրտակետիում (N 3 և 6 դամբարաններ), ուր դրանք սալահատակված են, իսկ չափերը (այդ թվում նաև՝ դամբարանների) զգալիորեն գերազանցում են քաշաթաղյան օրինակները: Բացի այդ, ի տարբերություն Բերդիկի ճյուղավորվող արահետների, Թոեղքում յուրաքանչյուր ճանապարհ ուղղված է դեպի մեկ դամբարան: Թոեղքյան և Զուրտակետյան դամբարանները թվագրվում են Ք.ա. III հազ. երկրորդ - II հազ. առաջին կեսով: Ուշ բրոնզի դա-

⁵⁰⁷ А. Ивановский, նշվ. աշխ., էջ 20:

րում արարողակարգային ճանապարհներ այլևս չեն կառուցվել⁵⁰⁸: Այս առումով պետք է հիշատակել Բեդենիի դամբարանադաշտը, որտեղ հաստատագրված դամբարանաբլուրներն իրար հետ կապվում են նեղ քարե արահետներով⁵⁰⁹: Թեպետ Բերդիկի համալիրներում պեղումներ չեն իրականացվել, սակայն վերգետնյա նյութի գերակշռող մասը բնորոշ է ուշ բրոնզին:

Առավել հեռավոր գուգահեռներից պետք է նշել Սթոունհենջի՝ դեպի ծիսական կառույց տանող ճանապարհը⁵¹⁰: Դեպի դամբարաններ տանող արահետներ հայտնի են նաև եվրոպական դոլմենային դամբարանադաշտերում⁵¹¹: Ընդհանրապես մեգալիթյան շարքերը⁵¹² կարող են մեկնաբանվել որպես ճանապարհ՝ հաշվի առնելով դրանց «այս» և «այն» աշխարհները շաղկապելու⁵¹³ և դամբարանների հետ ունեցած առնչության հանգամանքը⁵¹⁴, թեև հնարավոր է դրանց գործառույթի այլ մեկնաբանումներ ևս⁵¹⁵: Սյունիքը հանդիսանում է մեգալիթյան շարքերի կարևոր կենտրոն, որոնցից ամենահայտնին Զորաց քարերն է, ուր մենհիրները տեղադրված են դամբարանադաշտի տարածքում՝ որոշ հատվածներում եզերելով այն⁵¹⁶: Մեգալիթյան շարքեր հայտնի են նաև Խնածախից (Բիավեր վանքից ոչ հեռու), որոնք տարբերվում են Զորաց քարերի օրինակներից նրանով, որ այս տարածքում դամբարանների հետքեր չեն երևում. մեգալիթները գտնվում են բնակատեղիից դուրս, բլրի ստորոտին և սարահարթում: Զորաց քարերի մեգալիթյան շարքերի համատեքստում պետք է դիտարկել նաև դոլմենային կառույցներով բնորոշվող Գյաուր Դամերի՝ դամբարանադաշտում տեղադրված ուղղանկյուն քարերի շարքը⁵¹⁷: Որպես գուգահեռ հիշատակելի է Աշոցքից արևելք, Զույգաղբյուր թաղամասի եզրին գտնվող և իրարից 1.5 մ հեռավորությամբ գուգահեռ, եռաշարք, ցից կանգնած մինչև 1.2 մ բարձրությամբ քարերից կազմված և մոտ 1.5 կմ. երկարությամբ շարքերը: Շրջակայքում բնակավայրի կամ դամբարանադաշտի հետքեր չեն նկատվում և կառույցի գործառույթը մնում է չբացահայտված: Նման շարքեր կան նաև Տավուշի Նավուր գյուղում⁵¹⁸: Մեգալիթյան շարքերի հաջորդ տարբերակը՝ կառույցը կամ դամբարանների խումբը օղակող մեգալիթներն են⁵¹⁹: Սյունիքում նման կերտվածք կա Կուռի Խարաբայում⁵²⁰:

Ճանապարհի համատեքստում պետք է քննարկել նաև դամբարանային դրոմոսները՝ նախամուտքերը, որոնք կարող էին թեք (Արվականի մեծ դամբարանը) կամ ուղիղ (Կապանի

⁵⁰⁸ Գ. Нариманишвили, նշվ. աշխ., էջ 97-100:

⁵⁰⁹ Գ. Гобеджишвили, Бедени - культура курганных погребений, Тбилиси, 1981, с. 8.

⁵¹⁰ Н. Широкова, Мифы кельтских народов, Москва, 2005, с. 100.

⁵¹¹ Т. Wilson, Megalithic Monuments in Brittany, American Naturalist 259, vol. XXII, 1888, p. 583.

⁵¹² Այդ շարքերը բնորոշելու համար՝ արևմտյան գրականության մեջ հաճախ օգտագործվում է անգլերեն alignment՝ «հավասար շարքով տեղադրված» բառը (Т. Wilson, նշվ. աշխ., էջ 585):

⁵¹³ М. Toussaint, Ch. Frebutte, S. Pirson, F. Hubert, Ph. Masy, Megalithic Monuments of Belgium, ODMM, vol. 1 p. 95, 105; R. Bradley, Prehistoric Stone Settings in Britain and Ireland an exception case, ODMM, vol. 2, p. 540, 542.

⁵¹⁴ N. Bayens, The Megalithic Remains of Anglesey, London, 1911, p. 31.

⁵¹⁵ Մեգալիթյան շարքերի ուսումնասիրության ավելի քան հարյուրամյա պատմության ընթացքում առաջ են քաշվել բազմաթիվ տեսություններ: Դրանք համարվել են և պարզագույն կոտքեր, և նախնիներին ձոնված արձաններ (Н. Широкова, նշվ. աշխ., էջ 104): Գ. Դանիելը մեկնաբանում է վերջիններս (հիմնականում շրջանաձև տեղադրված մեգալիթները) որպես տարբեր ցեղերի հավաքատեղիներ (= կենտրոն)՝ ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր արարողությունների համար (G. Daniel, Megalithic Monuments, Scientific American, 1980, p. 80): Զորաց քարերը և նմանատիպ մեգալիթները մեկնաբանվում են նաև որպես սահման (Գ. Արեշյան, Կ. Ղաֆաղարյան, Կ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 70):

⁵¹⁶ О. Хнкикян, նշվ. աշխ., էջ 27:

⁵¹⁷ Հուշարձանը հետազոտվել է 2014 թ. ԼՂՀ ԿԱ Զբոսաշրջության գործակալության արշավախմբի կողմից (Գ. Սարգսյան, Լ. Հովհաննիսյան, Զ. Ըռեթյան):

⁵¹⁸ Հ. Ա. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան բնակատեղիներ և դամբարանադաշտեր, էջ 23:

⁵¹⁹ Գրականության մեջ դրանք սովորաբար բնորոշվում են enclosed՝ «ներփակված» բառով (տե՛ս Т. Wilson, Megalithic Monuments in Brittany, p. 583):

⁵²⁰ А. Ивановский, նշվ. աշխ., էջ 20: Օրթոստատ դրված քարերով է օղակված նաև Կարմիր Բերդի N 28 դամբարանաբլուրը (К. Х. Кушнарева, Тазакендский могильник, СА I, 1960, с. 143):

Շահումյանի դամբարանադաշտի IV տեղամասի N 8 և V տեղամասի N 2 դամբարանները) գնալ դեպի խուցը:

Ճանապարհների սրբագործումը դիտարկվում է տարբեր ժողովուրդների դիցաբաններում⁵²¹:

Այսպիսով, Սյունիքի սրբավայրերի տեղագրական առանձնահատկությունների հետազոտությունը ցույց է տալիս, որ հիշյալ հուշարձանները գտնվում են տարբեր միջավայրերում, որոնք հիմնականում բնորոշվում են ժայռերով կամ ալպիական մարգագետիններով: Այդ սրբավայրերը հիմնականում տեղադրված են լինում բնական բարձունքների վրա, դրանց լանջերին, սարահարթերում, ճանապարհներին և կիրճերին կից, քարափներին, ջրային աղբյուրների, քարայրների շուրջ: Դրանք ի հայտ են գալիս հասարակական ոլորտի կենտրոններում, սահմանային գոտիներում, ճանապարհներին կամ իրենք են խորհրդանշում կենտրոնը, սահմանը, ճանապարհը: Հաճախ սրբավայրերը ձևավորվում են բնական օբյեկտների շուրջ, որոնք դառնում են սրբագործված միջավայրի կարևոր բաղադրատարրեր. ընդ որում, Սյունիքի հնագույն բնակիչները լայնորեն կիրառել են տեղանքի հնարավորությունները՝ վերափոխելով բնական օբյեկտների նախնական տեքստ: Սրբավայրերը, այլ հարակից հուշարձանների հետ մեկտեղ, կազմում են Սյունիքի բրոնզ-երկաթեդարյան հասարակական կարգի կարևորագույն բաղադրատարրեր:

⁵²¹ Սկանդինավյան ասքերում երկրային աստվածությունների՝ վաների լեզվով Երկիրն անվանվում էր «ճանապարհ» (*Տարшая Эдда*, Речи Альвиса, 10): Ավագ Էդդայում, ի հիշատակ ննջեցյալների, հիշատակվում են ճանապարհների երկայնքով տեղադրված քարեր (*Տարшая Эдда*, Прорицание Вьельвы, 72): Հունական դիցաբանության մեջ ճանապարհների տիրակալ էին համարվում Հադեսի թագավորություն հոգիներ ուղեկցող Հերմեսը և Ապոլոնը (*Эсхил*, Агамемнон, Орестея, Москва, 1958, 1065, 1070, *Античные гимны*, Орфические гимны, Гермесу Хтоническому 1-5): Հանդերձյալ աշխարհի աստվածուհիներից մեկը՝ Հեկատան ընկալվում էր որպես խաչմերուկների տիրակալ (*Античные гимны*, Орфические гимны к Гекате 1-5):

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՊԵՂՈՒՄՆԵՐ ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՋՈՋ ԴԱՐ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏՈՒՄ

Հովհաննիսյան Վահան

1983 թ. Եղեգնաձորի Ջոջ դար կոչվող վայրում, պանրի գործարանի նոր մասնաշենք տանող ճանապարհի շինարարության ընթացքում բացվել են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի դամբարաններ⁵²²: Շինարարության գոտում գտնվող դամբարանների հետազոտությունը և պեղումները իրականացվել են Երևանի հիմնադրման պատմության «Էրեբունի» թանգարանի հնագիտական ջոկատի կողմից:

Ջոջ դարն իրենից ներկայացնում է Եղեգնաձորի արևելյան ծայրամասում գտնվող կտրուկ լանջերով մեկուսացված մի բարձունք (նկ. 1): Ջոջ դարի լանջերից և գագաթից հավաքված վերգետնյա նյութը ներկայացված է միջնադարյան խեցեղենի բեկորներով: Ներկայումս Ջոջ դարի դամբարանադաշտը իրենից ներկայացնում է բլուրներին և ջրբաժաններին երբեմն



Նկ. 1. Ջոջ դար, լանդշաֆտ

իրարից նշանակալի (մինչև 1 կմ) հեռավորության վրա ցրված դամբարանների առանձին խմբեր, որոնք մերձենում են համանուն բարձունքին հյուսիսից, հյուսիս-արևելքից, հարավից: Ջոջ դարի արևմտյան ստորոտում նույնպես կային դամբարաններ, որոնց տարածքը ներկայումս ամբողջովին կառուցապատված է: Այստեղ, հարավային տեղամասում պահպանվել է դամբարանների միայն մեկ խումբ:

⁵²² Այս հաշվետվության ձեռագիրը (ռուսերեն և հայերեն) պահպանվում է ԵԵԹ-ում: Հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը թանգարանի աշխատակիցներին՝ այն հրատարակության տրամադրելու համար:

Հաշվետվության մեջ օգտագործված գծագրերը հեղինակին են, հուշարձանի և առանձին առարկաների նկարներն արված են 2013 թ. տեղում և ԵԵԹ-ում՝ ԵՊՀ արշավախմբի կողմից:

Նկարված առարկաների մի մասի հստակ աղբյուրը պարզ չէ: Բացի այդ, խնդիրը կայանում է նրանում, որ ներկայացվող հաշվետվության մեջ 1983 թ. պեղումների մասին խոսվում է ընդհանրացված (դամբարաններ N 1-20), իսկ 1986 թ. պեղումների մասին կոնկրետ (դամբարաններ 21-30), մինչդեռ առկա գծագրերը և թանգարանային նյութը վերաբերում են գլխավորապես 1983 թ. պեղումներին: Հաշվի առնելով այդ երկու պեղաշրջանների նյութի ըստ էության համաժամանակյա լինելու հանգամանքը, այն շրջանառելու նպատակով, ստորև ներկայացնում ենք հաշվետվությունը և նկարները/գծագրերը համատեղ (Ծանոթագրությունը՝ Հ. Ավետիսյան, Ա. Գևորգյան, Ա. Բորոխյան):



Նկ. 2. Ջոջ դար, պեղված դամբարաններից

շարքերով, ուղղահայաց դրված քարե սալերից կամ քարաբեկորներից: Դամբարանային կառույցներն ունեն ձվածիր, պայտաձև կամ ուղղանկյուն հատակագիծ: Դամբարանների չափերն են. երկարությունը՝ 2,0-4,7 մ, լայնությունը՝ 1,5-3,5 մ, բարձրությունը՝ 0,5-1,2 մ:

Ներկայումս պատերի քարերը տեղաշարժված են կամ էլ կողք են գցված, իսկ իբրև ծածկ ծառայող զանգվածեղ բազալտե սալերը մեծ մասամբ իրենց տեղերից հանվել էին: Դամբարանները լցված էին քարերի հետ խառնված հողով:

Պեղումների արդյունքում պարզվեց հետևյալ պատկերը. 15-20 սմ խորությունից սկսեցին ի հայտ գալ խեցեղենի առանձին բեկորներ: Խորանալուն զուգընթաց դրանց քանակությունը աճում էր, իսկ հատակները ամբողջությամբ ծածկված էին թաղման գույքի մնացորդներով, մասնավորապես կավանոթների բեկորներով, ընդ որում միևնույն անոթի բեկորները կարող էին տեղադրված լինել ինչպես կողք-կողքի, այնպես էլ դամբարանի տարբեր հատվածներում: Կմախքների սակավ մնացորդները շատ վատ են պահպանված և ցրված են դամբարանախցի տարածքով, զոհաբերված կենդանիների (մանր եղջերավոր), աշխատանքային գործիքների մնացորդների, զենքի և զարդերի հետ:

Դժվար է ենթադրել, որ նյութական մնացորդների այսօրինակ վիճակը բացատրվեր թաղման ծեսի առանձնահատկություններով, քանզի դամբարանների դժվարամատչելի անկյուններում և դեպի ներս փլված պատերի տակ գտնվում էին ամբողջական կամ քիչ վնասված իրեր:

Ակնհայտ է, որ դամբարանները թալանված էին դեռևս հնում, ինչի մասին վկայում է դամբարաններից մեկի (N 28բ)

Յուրաքանչյուր խմբում առկա են 3-ից 15 դամբարան, որոնք շարքերով ձգվում են արևմուտքից արևելք: Առանձին դեպքերում մեկ խոշոր դամբարանային կառույցի շուրջ խմբավորված են այլ՝ ավելի փոքր չափերի դամբարաններ (հմտ. նկ. 2): Դամբարաններն ուղղված են հյուսիսից հարավ, որոշ շեղումներով և իրենցից ներկայացնում են առանց դամբարանափոսի վերգետնյա կառույցներ, կառուցված մեկ, հազվադեպ երկու կամ երեք



Նկ. 3. Ջոջ դար, Դամբարաններ N 11, 21, խեցանոթներ



Նկ. 4. Ջոջ դար, պատահական գտածոներ, քարե մարդակերպ գլուխ, կավե կոշկաձև կախիկ, կավե արջի գլուխ

III. Ջարդեր. բրոնզե ապարանջաններ՝ ծայրերին թեք ակոսներով, պարուրաձև մատանիներ, շքասեղներ, լուսնաձև և արևի սկավառակի տեսքով կախիկներ, վզնոցներ, մանր կոճակներ, սարդիոնից, ագաթից, հասպիսից, մածուկից, ապակուց ուլունքներ և տարբեր ձևերի ու չափերի բաժանարարներ:

IV Խեցեղեն. նյութը ներկայացված է տարբեր տեսակի թասերով, ուղիղ, կորացող և պրոֆիլավորված պսակով, որոշ թասեր ունեն հորիզոնական կամ ուղղահայաց կանթեր: Հայտնաբերվել են նաև սեղանաձև կանթերով անոթներ, սափորներ, թաղարներ, պնակներ, սրվակներ, գավաթներ և ուղղահայաց պատերով անոթներ: Ջարդանախշման մեջ հաճախ օգտագործվում են գծային, կետային, կետագծային, զիգզագաձև, պարանաձև, սեպաձև, ստվերագծային, շրջանաձև, հատիկաձև, ներճկված տարրերը, կանթերը նմանակող ցից և, կենդանակերպ վերջավորությամբ ելուստներ: Մանավանդ հետաքրքիր են Հայաստանում հազվադեպ թեյնիկանման անոթները՝ կենդանակերպ ծորակներով:


1986 թ. օգոստոս-սեպտեմբերին շինարարական աշխատանքների վերսկսման հետ կապված, նույն ջոկատը շարունակեց Ջոջ դարի պեղումները: Պեղվեց 10 դամբարան (N 21-30): Դրանցից յոթը (N 21-27) տեղադրված էին Ջոջ դարից հյուսիս, իսկ երեքը (N 28-30)՝

ուշ անտիկ կամ միջնադարյան ժամանակաշրջանին բնորոշ կոտրված երկաթյա մատանու գտածոն:

1983 թ. Ջոջ դարից հյուսիս գտնվող բլուրների վրա պեղվել է 20 դամբարան: Թաղման գույքը ներկայացված է աշխատանքային գործիքներով, զենքով, զարդերով, խեցեղենով (նկ. 3-13):

I. Աշխատանքային գործիքներ. հայտնաբերվել են միասայր երկաթյա դանակներ, բրոնզե բիզեր, ասեղներ և ունեղիներ:

II. Ջենք և սպառազինություն. հայտնաբերվել են խողովակաձև կոթառով նիզակի ծայրապանակ, բրոնզե կոթառավոր և վանակատե նետալաքներ, զրահաշապիկի վահանակներ (մի մասը պարուրաձև զարդանախշով), սևան-արցախյան տիպի դաշույններին բնորոշ բրոնզե երախակալներ:




Նկ. 5. Ջոջ դար, Դամբարաններ N 11, 18-19, մետաղյա զարդեր

հարավ գտնվող բլուրներին: N 21-29 դամբարանների գույքը հարևան է 1983 թ. Ջոջ դարի պեղումների նյութերին և ունի բազմաթիվ զուգահեռներ Հայաստանի վաղ երկաթեդարյան հուշարձաններում: Մանավանդ սերտ կապեր են դիտարկվում Արարատյան դաշտի (Դվին, Մեծամորի «հրդեհված շերտ», Ծիծեռնակաբերդ), Ջանգեզուրի (Դավիթ Բեկ, Տանձավեր, Ախլաթյան), Նախիջևանի հուշարձաններում: Նկատելի է նաև հյուսիսարևմտյան Իրանի հուշարձանների (Դինկա III, Գեոյ-թեփե, Գիան I) հետ կապը: Թեպետ բավարար նյութ չկա հստակ ժամանակագրման համար, Ջոջ դարի վերոնշյալ (N 21-29) դամբարանները տեղավորվում են Ք.ա. X-VIII դդ. ժամանակագրական շրջանակներում: N 28 և 29 դամբարանները առավել մոտ են այդ ժամանակահատվածի սկզբին և նույնիսկ Ք.ա. II-I հազ. սահմանագլխին, այն ժամանակ, երբ մնացած թաղումները (N 21-27) կարելի է թվագրել նշված ժամանակաշրջանի ավարտական փուլով՝ Ք.ա. VIII դ.:




Նկ. 6. Ջոջ դար, Դամբարաններ N 18-19, քարից և ծովախեցուց զարդեր


N 30 դամբարանը պեղվել է Ջոջ դարից հարավ տեղադրված երկարուկ բլրի կենտրոնական հատվածում: Կառուցվածքով այն չէր տարբերվում վերոնշյալ թաղումային կառույցներից, սակայն պարունակում էր ուշ անտիկ ժամանակաշրջանին (Ք. հ. II-III դդ.) բնորոշ նյութեր՝ երկաթյա աշխատանքային գործիքներ, բազմաթիվ զարդեր, այդ թվում կնքադրոշմով մատանիներ, խեցանոթներ, ապակյա սրվակներ: Այս դամբարանների լցման վերին շերտում հայտնաբերվել են Ք.ա. I հազ. բնորոշ խեցեղենի բազմաթիվ բեկորներ: Բացառված չէ, որ ուշ անտիկ թաղումը իրականացվել է ավելի վաղ շրջանի թաղման կառույցում, որի գույքը նախապես հեռացվել էր:




Նկ. 7. Ջոջ դար, Դամբարան N 13




Նկ. 8. Ձոջ դար, Դամբարան N 17




Նկ. 9. Ձոջ դար, Դամբարան N 18




Նկ. 10. Ձոց դար, Դամբարան N 18



Նկ. 11. Ձոջ դար, Դամբարան N 18



Նկ. 12. Ձոց դար, Դամբարան N 19



Նկ. 13. Ջոջ դար, Դամբարան N 18-19

ԴԱՇՏԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ՄԱՐԴԱԿԵՐՊ ԿՈԹՈՂՆԵՐԸ

Երանյան Նժդեհ

Հայկական լեռնաշխարհի հնագույն ծիսական լանդշաֆտին վերաբերող սկզբնաղբյուրներն իրենց ձևով և բովանդակությամբ բազմազան են: Գրավոր աղբյուրների սակավության, հաճախ էլ բացակայության պատճառով առաջնակարգ նշանակություն են ձեռք բերում հնագիտական տվյալները: Ասվածը զգալի չափով վերաբերում է Արցախի ծիսական լանդշաֆտին, որի տարրերից մեկին՝ մարդակերպ կոթողներին է նվիրված այս աշխատանքը:

Արցախյան կոթողները կտրվածքում մոտավորապես ուղղանկյուն, տափակ, երկայնական սալեր են, որոնք երկու հորիզոնական գոտիների միջոցով բաժանվում են երեք մասի՝ ընդգծելով մարմնի մասերը՝ գլուխը, իրանը և գոտկատեղից ներքև ընկած հատվածը: Կոթողներն ունեն 30-40 սմ լայնություն, 120-140 սմ բարձրություն և մինչև 20 սմ հաստություն: Բոլոր կոթողները պատկերազրական առումով գրեթե միանման են: Դեմքի հատվածում պատկերված են քիթը, աչքերը և բերանը, իրանի դիմացի հատվածում՝ ձեռքերը, որոնք բոլոր



Նկ. 1. Մարտակերտի պատմա-երկրագիտական թանգարան, մարդակերպ կոթող

դեպքերում ծալված են կրծքին, իսկ դաստակները՝ պարզած դեպի վեր: Գոտկատեղից ներքև հատվածը, ուր ենթադրվում են ոտքերը, մշակված չէ, քանի որ այն նախատեսված է՝ հողի կամ քարե պատվանդանի մեջ ուղղաձիգ կանգնեցնելու համար: Հակառակ կողմից մեծ մասի մոտ պատկերված են մեջքին փռված մազերը, նկատվում են նաև գոտկատեղին «ամրացված» սուրը կամ դաշույնը: Ներկայումս հայտնի է 17 նման մարդակերպ կոթող, որոնց մեծ մասը գտնվում է Մարտակերտի, որոշները՝ Ստեփանակերտի պատմա-երկրագիտական թանգարանի բակում, իսկ մի քանիսը՝ դաշտում: Չնայած կոթողներից որևէ մեկը չի ֆիքսվել իր նախնական դիրքում, սակայն բոլորը գտնվել են Արցախի դաշտային-հարթավայրային հատվածներում, ներկայիս Մարտակերտի շրջանի շրջակայքում: Ուստի ակնհայտ է, որ դրանց սկզբնական կանգնեցման վայրը պետք է, որ շատ հեռու չլինի հայտնաբերման վայրերից (նկ. 1, 2):

Արցախյան կոթողների նշանակությունը վերականգնելու համար օգնության են գալիս տարածաշրջանում հայտնի նմանատիպ հուշարձաններ: Մասնավորապես արցախյան օրի-

նակներին հար և նման են սկյութական քարե մարդակերպ դամբարանային կոթողները, որոնք տարածված են Հյուսիսային Կովկասում, Մերձսևծովում, Ղրիմում և պատկերում են ռազմիկ սկյութին (թերևս՝ նախահորը)⁵²³: Արցախյան կոթողները զուգահեռներ են գտնում նաև Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան գոտում (Հաքարի) և հյուսիսարևմտյան Իրանում (Շահրյերի)⁵²⁴:



Նկ. 2. Մարտակերտի պատմա-երկրագիտական թանգարան, մարդակերպ կոթողներ

Հիշյալ կոթողները բազմաբնույթ են և իրենց պատմության ընթացքում ենթարկվել են ձևաբանական, հնարավոր է նաև գաղափարաբանական զարգացման: Պ. Շուլցի կարծիքով, այդ զարգացումն ընթացել է մենհիրներից և մարդակերպ ստելաներից դեպի այս կոթողները, ապա կիսարձանները, որոնց դեպքում էլ ավելի մեծ տեղ է հատկացվել գլխի պատկերմանը⁵²⁵: Վերջինս հավանական է համարում, որ սկյութական արձանները կապված են բրոնզի դարի մարդակերպ կոթողների հետ և առանձանցնում է սկյութական կոթողների ուր խումբ: Ըստ նրա՝ կոթողների ձևի զարգացման հարցում կարևոր դեր են խաղացել ինչպես սկյութների կողմից տափաստաններում նկատված նախասկյութական, այնպես և հի-

⁵²³ Ներկայումս հայտնի է նման մոտ 160 կոթող (В. Л. Янин, Археология, Москва, 2006, с. 307).

⁵²⁴ Sevin V., Who where the Naked Warriors of Hakkari? Archaeologische Mitteilungen aus Iran und Turan 37, 2005, p. 163-166; Azarnoush M., Helwing B., Recent Archaeological Research in Iran: Prehistory to Iron Age, Archaeologische Mitteilungen aus Iran und Turan 37, 2005, p. 189-246.

⁵²⁵ П. Н. Шульц, Скифские изваяния Причерноморья, Античное общество, Москва, 1967, с. 227.

նարևեյան հուշարձանները, որոնց սկյութները ծանոթացել են իրենց արշավանքների ընթացքում⁵²⁶:

Հայտնի է, որ ցանկացած հին արվեստ իրենից ներկայացնում է նախևառաջ գաղափարաբանորեն հագեցած նշանների համակարգ, որն ավելին է, քան պարզապես գեղագիտական պահանջմունքը բավարարելու միջոց: Վ. Օլիտովսկին և Գ. Եվդոկիմովը նշում են, որ արձանները իրենցից ներկայացնում են աշխարհաստեղծման ընդհանրացված խորհրդանիշ: Այնտեղ տեղակայված է առասպելական տիեզերքը՝ նրա ուղղահայաց առանցքը (կենաց ծառը, ֆալը և այլն): Ժամանակի ընթացքում այս խորհրդանիշի մարդակերպությունը ամրապնդվեց նրա անհատականացման հաշվին՝ իր մեջ կրելով նախահոր, ցեղի առաջնորդի, արևային հերոսի, նրա «երկրային ներկայացուցչի»՝ թագավորի կամ առաջնորդի կերպարը⁵²⁷: Համանման կոթողների հորինվածքային-իմաստաբանական մեկնաբանությունների համատեքստում կան նաև այլ տեսակետներ: Մասնավորաբար Դ. Ռանսկին սկյութական կոթողներում տեսնում է մահացած, սակայն հերոսացված մարդկանց՝ ռազմիկների, հնարավոր է նաև թագավորի պատկերում: Ըստ Մ. Արտամոնովի կոթողները նույնպես պատկերում են «հերոսացված ռազմիկների», ինչը կապված է սկյութական նախնու պաշտամունքի հետ: Նա ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ գրեթե բոլորի վրա բնորոշ ատրիբուտ է ակինակի (կեռ դաշույն) պատկերումը⁵²⁸: Հատկանշական է, որ արցախյան կոթողներից մի քանիսի վրա ևս առկա է սուր-դաշույն: Ուստի հավանական է, որ այս կոթողները կանգնեցվել են հասարակական բարձր դիրք գրավող մարդկանց պատվին:

Հետաքրքրական է, որ բոլոր կոթողների դեպքում ձևերը ծավալված են կրծքին, մատներն՝ ուղղված դեպի վեր: Ըստ Կ. Քուշնարյովայի՝ ձևերը վեր պարզած դիրքը ժառանգաբար անցել է ուշ բրոնզի դարից և այն պատկերում է աստվածություն՝ առասպելական աղոթքի դիրքում⁵²⁹:

Գործածական առումով սկյութական արձանները հանդիսանում էին ինչպես գերեզմանաքարեր, այնպես և պաշտամունքային խորհրդանիշներ, տեղակայված էին կուրգանների գագաթին կամ սրբարանի կենտրոնում: Պատահական չէ, որ Արցախի տափաստանային հատվածներում, որտեղից և հայտնաբերվել են քարե կոթողները, մասնավորապես Խաչենագետի ձախ հովտում, սփռված են մոտ 15 կուրգաններ, որոնց անդրադարձել է Սմբատ Տեր-Ավետիսյանը, ով 1924 թ. ամռանը Անդրկովկասի կենտրոնական կոմիտեին կից գտնվող Գիտական ասոցիացիայի կազմում լինելով Արցախում, շրջել է Խաչենում և Ջրաբերդում ու արժեքավոր տեղեկություններ է հաղորդել այդ տարածքների մշակութային ժառանգության վերաբերյալ: Ըստ նրա՝ Թարթառի և Խաչենագետի հովտում տարածված տարբեր չափսերի դամբարաններից մի քանիսը բնորոշ են հարավուսական տափաստաններին և պատկանում են սկյութական մշակույթին⁵³⁰:

⁵²⁶ В. С. Ольховский, Г. Л. Евдокимов, նշվ. աշխ., էջ 10; հմմտ. նաև П. Н. Шульц, նշվ. աշխ., էջ 329:

⁵²⁷ В. С. Ольховский, Г. Л. Евдокимов, նշվ. աշխ., էջ 6-7:

⁵²⁸ Д. С. Раевский, Скифские каменные изваяния в системе религиозно-мифологических представлений ираноязычных народов Евразийских степей, Средняя Азия, Кавказ и Зарубежный Восток в древности, Москва, 1983, с. 40-41.

⁵²⁹ Այս մասին հմմտ. М. Дж. Халилов, Каменные изваяния Азербайджана (IV в. до н. э. - VII в. н. э.), Автореф. канд. дисс., Ереван, 1987, с. 12.

⁵³⁰ Մ. Տեր-Ավետիսյան, Հայագիտական հետազոտություններ, էջ 193: Դամբարանների ծագման և էթնո-մշակութային պատկանելիության վերաբերյալ տվյալները թերի են. հարցը կարիք ունի առանձին ուսումնասիրության:



Նկ. 3. Մոֆուլու, մարդակերպ կոթող

Կոթողները հետազայում վերաօգտագործվել են շրջակայքում բնակվող ժողովուրդների կողմից, սակայն կարծես չեն կորցրել իրենց նախնական ծիսա-պաշտամունքային գործառույթը: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախմբի հետազոտությունների շրջանակում 2013 թ. հունիս-հուլիս ամիսներին, քարե մարդակերպ կոթողների ուսումնասիրության նպատակով, հետախուզական աշխատանքներ իրականացրեցինք դաշտային որոշ հատվածներում: Հետախուզական աշխատանքների արդյունքում հաջողվեց պարզել նախկինում հայտնի մի քանի կոթողների նախնական վայրը, ինչպես նաև՝ հայտնաբերել հինգ մարդակերպ կոթող: Աշխատանքների արդյունքում մեկ քարե մարդակերպ կոթողի հայտ եկավ նախկին Մուլլար գյուղի, ևս երկու մարդակերպ կոթող՝ Մոֆուլու գյուղի միջնադարյան գերեզմանոցում (նկ. 3)՝ Գյավուրկալա տեղավայրից հյուսիս-արևմուտք: Առավել հետաքրքիր է հաջորդ կոթողի բացահայտումը Գյավուրկալայի վաղքրիստոնեական եկեղեցուց մոտ 70 մ արևելք: Կոթողը հայտնաբերվել է Հ. Պետրոսյանի և Լ. Կիրակոսյանի կողմից՝ հետախուզական աշխատանքի ընթացքում, փորված զինվորական խրամատի հատակին: Իրականացված պեղումների արդյունքում պարզեցինք, որ այն տեղադրված էր վաղքրիստոնեական քարարկղային թաղման վրա, արևելք-արևմուտք ուղղվածությամբ, ինչը փաստում է, որ այն վերաօգտագործվել է և ծառայել զուտ որպես շինանյութ: Կոթողի վրա դիմացից պատկերված էր Ս-աձև քիթը և դեպի վեր պարզած մատները, իսկ դրանից ներքև այն կոտրված էր: Հակառակ կողմից կոթողը պատկերագրություն չունեւ (նկ. 4): Ելնելով կոթողների վերաօգտագործման դեպքերից՝ ենթադրում ենք, որ չնայած ժամանակի ընթացքում դրանք կորցրել են իրենց նախնական նշանակությունը, բայց շարունակել են կրել ծիսա-պաշտամունքային գործառույթ՝ վերաօգտագործվելով և մասամբ վերափոխվելով:



Այսպիսով, արցախյան կոթողների ուսումնասիրության արդյունքում կարողանում ենք նախնական պատկերացում կազմել այն կանգնեցնողների հավատալիքների, գաղափարաբանության, արվեստի և պատմական միջավայրի վերաբերյալ: Դրանք, թերևս, պատկերել են մահացած և հերոսացած մարդկանց, հնարավոր է՝ զինվորների կամ հասարակական այլ բարձր դիրք գրավող տղամարդկանց: Դրանք «հավերժացրել են» հանգուցյալի հիշատակը և ծառայել որպես վերջինիս նվիրված արարողությունների առարկա: Դատելով պատկերագրությունից և ձևաբանության որոշ առանձնահատկություններից, ինչպես նաև հարևան շրջաններից հայտնի իրենց զուգահեռներից, դրանք առայժմ կարելի է թվագրել Ք.ա. VII-VI դդ.⁵³¹: Հիշյալ կոթողների քննությունը ենթադրել է տալիս սկյութական ազդեցության որոշակի տարրեր Արցախում: Դրան հավանաբար նպաստել են Արցախի ռազմավարական դիրքը և բնակլիմայական նպաստավոր պայմանները. պատահական չէ, որ նշված բոլոր կոթողները գտնվել են Արցախի հարթավայրային հատվածներից, ինչը պետք է նպաստավոր լիներ կիսաքոչվոր կենսակերպ վարող ցեղերի համար⁵³²:

⁵³¹ В. С. Ольховский, Г. Л. Евдокимов, Скифские изваяния VII-III в.в. до н.э., Москва, 1994, с. 41-44.

⁵³² Հմմտ. Վ. Բելոզորի տեսակետը, ըստ որի «քարե արձան կանգնեցնելու ավանդույթը կապված է բացառապես քոչվոր միջավայրի հետ և փաստացի բացակայում է անտառային շրջաններում, ինչն առնչվում է քոչվորական աշխարհայացքի հետ» (В. П. Белозор, Скифская триада и каменные изваяния (проблема этнокультурной атрибуции), Древнейшие общности земледельцев и скотоводов Северного Причерноморья (V тыс. до н.э.-V в. н.э.), Материалы международной конференции, Киев, 1991, с. 171):

ՍՐԲԱԶԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՏԱՐՐԵՐԸ ՍՈԹՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Ամիրյան Մարիամ, Դանիելյան Հենրիկ, Միմոնյան Հասմիկ,
Վանյան Հարություն, Գրիգորյան Ավետիս

Վերջին տարիներին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Զաքսեն-Անհալթի (Գերմանիա) հուշարձանների պահպանության կոմիտեի համատեղ արշավախումբը իրականացնում է հնագիտական հետազոտություններ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սոթքի տարածաշրջանում (ղեկավար՝ Ա. Բոբոկյան)⁵³³: Արշավախմբի հիմնական նպատակն է ուսումնասիրել մետաղներով հարուստ այս շրջանի հնագիտական համատեքստը և պարզել վերջինիս դերը տեղական և տարածաշրջանային զարգացումներում: Ուսումնասիրությունների ընթացքում ի հայտ եկան նաև մի շարք հուշարձաններ (բնակավայր, դամբարանադաշտ, առանձին սրբավայր), որոնք վերաբերում էին սրբազան լանդշաֆտին և ներկայացվում են ստորև:

Սոթք 2 բնակավայրը

Ամրացված բնակավայր Սոթք 2-ը գտնվում է Սոթք գյուղի արևելյան հատվածում⁵³⁴: Խոսքը գնում է արևելքից արևմուտք ուղղված բնական, մոտ 10 մ բարձրություն ունեցող, ձվաձև բլրի մասին (նկ. 1): Բլուրը բաղկացած է հարթ վերնամասից, թեք և դարավանդաձև իջնող ստորոտներից, որոնք միայն հյուսիսային կողմից են համեմատաբար հեշտ հասանելի: Բլրի երկարությունը մոտ 90 մ է, լայնությունը 45 մ, ընդհանուր մակերեսը մոտ 4,5 հա (պաշտպանված վերնամասը մոտ 0,5 հա): Սոթք 2-ն ունի յուրահատուկ ռազմավարական դիրք՝ գտնվելով Սոթքի ոսկու հանքերը և հարավային ու արևելյան Կովկասը միացնող Սոթքի անցումը տանող ճանապարհի վրա:

Այն բլուրը, որի վրա գտնվում է Սոթք 2 բնակավայրը, տեղացիների կողմից անվանվում է «Դար» (*բլուր* իմաստով): Խորհրդային հին քարտեզների վրա բլուրն անվանված է «Հինգ քար», ինչը վերաբերում է բլրի հարավային մասում լավ տեսանելի պաշտպանական համակարգի հինգ ամենամեծ քարերին: Մինչև XX դ. վերջերը բլուրը փաստորեն հնագետներին անհայտ էր: Միայն 1990-ական թթ. վերջին հայ-իտալական արշավախումբը⁵³⁵, իսկ 2010 թ. մեր արշավախումբը այցելել է բնակավայր և մակերեսին հավաքել հիմնականում ՎԲ, բայց նաև ՄԲ, ՈԻԲ/ՎԵ խեցեղեն բեկորներ:

⁵³³ Նախնական հաշվետվությունների համար հմնտ. **R. Kunze, A. Bobokhyan, K. Meliksetian, E. Pernicka, D. Wolf**, Archäologische Untersuchungen zur Umgebung der Goldgruben in Armenien mit Schwerpunkt Sotk, Provinz Gegendharkunik, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen Anhalt - Landesmuseum für Vorgeschichte 64, Halle, 2011, 17-49; **R. Kunze, A. Bobokhyan, E. Pernicka, K. Meliksetian**, Projekt Ushkiani. Untersuchungen der Kulturlandschaft um das prähistorische Goldrevier von Sotk, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen Anhalt - Landesmuseum für Vorgeschichte 67, Halle, 2013, 49-88.

⁵³⁴ Տեքստում օգտագործվում են հետևյալ հապավումները. ՎԲ - վաղ բրոնզ, ՄԲ - միջին բրոնզ, ՈԻԲ - ուշ բրոնզ, ՎԵ - վաղ երկաթ:

⁵³⁵ **R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani**, նշվ. աշխ., էջ 69:



Նկ. 1. Սոթք 2, լանդշաֆտ

Սոթք 2 բնակավայրի 2011-2013 թթ. պեղումների արդյունքում կարելի է խոսել բազմաշերտ մի հուշարձանի մասին: Պարզ դարձավ, որ Սոթք 2-ը կարող է առաջին անգամ բնակեցված լինել պղնձի դարում, սակայն բնակության հիմնական շրջանը սկսում է ՎԲ-ից: Կուր-արաքսյան մշակույթի կրողների կողմից այն բնակեցվել է Ք.ա. մոտ 3500 թ. սկսած մինչ Ք.ա. 2500/2400 թթ.: ՎԲ բնակավայրի հիմնական շրջանն է Ք.ա. XXIX-XXVII դդ.: Հաջորդ կարևոր փուլը տարածաշրջանում ՄԲ է, մասնավորապես ՄԲ-ի վերջին շրջանը և անցումը ՈԻԲ (Ք.ա. մոտ 1700-1500 թթ.), երբ Սոթք 2 բնակավայրը, որը տեսանելի է սևան-արցախյան մշակույթի համատեքստում, ամրացվում է: Տարածաշրջանում կարևոր են ՈԻԲ-ի և ՎԵ-ի դարաշրջանները, որոնք վկայված են թե Սոթք 2-ում, և հատկապես հարակից Նորաբակի N 1-ում: Այս շրջանի նյութերը տեսանելի են լճաշեն-մեծամորյան մշակույթի համատեքստում:

Սոթք 2-ում վկայված են երեք տեսակի ճարտարապետական միջավայրեր.

1. Կավի ճարտարապետություն՝ բնորոշ ՎԲ-ին և վկայված Պեղավայրեր Գ, Դ և Զ-ում: Որպես կանոն, սրանք կավե հատակին տեսանելի քարե հիմքով փոքր կառույցներ են, ուր *in situ* հայտնաբերվել են տարբեր նյութեր (հմմտ. հատկապես Պեղավայր Գ-ն, որտեղ ի հայտ եկավ մի շարք քարե գործիքներով շրջապատված պատվանդան): Պեղավայր Զ-ում կավե հատակը տարբեր հատվածներում օրինաչափորեն փորվել է և բացառված չէ, որ այստեղ արհեստական ջրային առվի հետ գործ ունենք:

2. Քարե ճարտարապետություն՝ բնորոշ ՄԲ-ՈԻԲ, ՈԻԲ-ՎԵ-ին և վկայված Գ, Դ, Ե, Ը պեղավայրերում: Խոսքը գնում է կլոր-ուղղանկյուն, գրեթե տձև երկշար կամ եռաշար կառույցների մասին:

3. Ժայռի նպատակաուղղված մշակում՝ վկայված բոլոր պեղավայրերում հիմնականում ՄԲ, ՄԲ-ՈԻԲ անցումային միջավայրերում (նկ. 2, 3): Ընդ որում, ժայռահորերը ներկայացնում են բոլոր պեղավայրերի վերջնական իրավիճակը: Այս հատվածներում ժայռը կանոնավոր կերպով մշակվել է կլորավուն կամ ենթա-կլորավուն 20-200 սմ տրամագծով հորերի ձևով, որոնք ունեն մինչև 1,5 մ խորություն և օգտագործվել որպես ոսկրի և հացահատիկի շտեմարան (Պեղավայր Ա, Ե, Ը), կրակատեղ (հմմտ. մոխրի մնացորդները Պեղավայր Գ-ի հորերում), արհեստանոց (Պեղավայր Ա-ի հորերում գտնվեցին սիլիկատային խարամներ) կամ պահեստարան/կացարան (Պեղավայր Ե, Ը): Գրեթե բոլոր ժայռահորերը պարունակում էին մշակութային շերտ (սպիտակամոխրագույն կավաշերտ), իսկ որոշ դեպքերում սահմանազատված էին փոքր քարերով (Պեղավայրեր Ա, Գ, Դ, Ե, Ը): Պեղավայր Ա-ի հարավարևմտյան անկյան հորը աստիճանաձև փորված էր ժայռի մեջ: Որոշ փորվածքների հատակներ պատված էին կավով (Պեղավայր Դ): Որոշ հորերի հարակից մակերեսներին (Պեղավայր Ե) բացվել են կավե հատակներ, որոնք անմիջական առնչություն կարող են ունենալ այդ հորերի և դրանց անմիջական միջավայրի հետ: Պեղավայր Ե-ում պեղվեց գրեթե կլոր, 130 սմ խորությամբ և 200 սմ տրամագծով մի հոր, որը հարավ-արևմուտքում ուներ համարյա ուղղանկյուն կցահատված և մի հարթակ/նստարան հորի մեջ (հյուսիսարևմտյան հատվածում) ու կարող է սահմանվել որպես պահեստարան/կացարան: Մեծ հորերի շրջակայքի որոշ փոքր փորվածքները (հատկապես Պեղավայր Ա-ում և Ե-ում) կարող են մեկնաբանվել, որպես կացարանների տանիքը պահելու համար նախատեսված սյուների անցքեր: Այսպիսով, հիշյալ հորերը ունեն տնտեսական և մասամբ ծիսական (հատկապես տրամագծով փոքրերը, որոնք լի են մոխրով) նշանակություն և առաջին անգամ հնարավորություն են ստեղծում թվագրել բնակավայրերի միջավայրում ի հայտ եկած թասանման փոսիկները:



Նկ. 2. Սոթք 2, Պեղավայր Ա, ժայռային փորվածքներ



Նկ. 3. Սոթք 2, Պեղավայր Ա, մոխրով լի ժայռային փորվածք



Նկ. 4. Սոթք 15, լանդշաֆտ



Նկ. 5. Սոթք 15, կենտրոնական հատվածի քանդված դամբարանը

Սոթք 15 սրբավայրը

Սոթք գյուղի եզրին, Հասանսու կոչված հատվածում, Սոթք-Քարվաճառ ճանապարհից մոտ 1 կմ դեպի հյուսիս, փոքր բլուրի վրա գտնվում է 30x20 մ մակերեսով մի հուշարձան։ Այն բաղկացած է թալանված դամբարանից (բացված է վերնամասը, շրջակայքում կան մարդու ոսկորներ), որը սահմանագատված է մեծ քարերից կազմված կրոմլեխով, գերեզմանաքարի նմանվող երկարավուն քարերից, ինչպես նաև՝ թասանման փոսիկներով քարից (նկ. 4, 5, 6)։ Տեղադրությունը, հուշարձանի բնույթը անկասկած խոսում են այն մասին, որ գործ ունենք մի սրբավայրի հետ, որ հավանաբար թվագրվում է բրոնզ-երկաթի դարաշրջանով։

Սոթք 10 դամբարանադաշտը

Սոթք 10 դամբարանադաշտը գտնվում է Սոթքի ոսկու հանքից մոտ 1 կմ հարավ-արևմուտք, Սոթք գյուղից դեպի ոսկու հանքը տանող ճանապարհի աջ կողմում՝ գոգավորության մեջ։ Այն հայտնաբերվել է 2011 թ.՝ հայ-գերմանական արշավախմբի կողմից կատարված հետա-

խուզական աշխատանքների արդյունքում։ Դամբարանադաշտը բաղկացած է մոտ 15 միմյանցից հեռու գտվող դամբարաններից։ 2013 թ. պեղումներ իրականացվեցին N 1 դամբարանաբլուրում։ Հայտնաբերման պահին դամբարանաբլուրը կիսով չափ ոչնչացված էր՝ հավանաբար ոսկու որոնումների կամ հարակից երկաթուղու կառուցման ժամանակ կատարված պայթեցման կամ էքսկավատորով փորման արդյունքում (նկ. 7)։ Դամբարանաբլրի հյուսիսային կեսը լիովին բացակայում էր։ Կրոմլեխը գուրկ էր արտաքին զրահից, իսկ ներքին զրահը կազմված էր շատ խիտ դասավորված միջին մեծության քարերից՝ հիմնականում կրաքարերից և սակավաթիվ բազալտե քարերից (նկ. 8)։

Դամբարանը հետազոտվեց արևմտյան՝ 5 մ, արևելյան՝ 4 մ և հարավային 12 մ չափերի պեղավայրում։ Այն հիմնահողային է, փորված քարաժայռի մեջ, որի երկարությունը 300 սմ է,

պահպանված հատվածի լայնությունը՝ 140 սմ: Խցի խորությունը 0 կետից մոտ 160 սմ է (ծայրի մակերեսից՝ մոտ 60 սմ): Խուցը չունի ծածկասալեր և գտնվում էր անմիջապես զրահի տակ: Համապատասխան մասի զրահը հեռացնելուց հետո՝ խցի արևելյան հատվածում բացվեց հինգ մեծ և որոշ մանր քարերից կազմված հարթակ, որի վրա գտնվում էր մեկ հանգուցյալ՝ ոչ անատոմիական վիճակում, բացակայում էին որոշ ոսկորներ, իսկ գանգը գտնվում էր բեկորային վիճակում (Կմախք N 2): Ենթադրում ենք, որ հարթակի վրա, որը բուն խցի մաս չի կազմում, այլ վերջինիս եզրագիծն է ու տարանջատում է խուցը ներքին զրահից (ուր բացակայում է ուղեկցող նյութը), հնարավոր է, որ իրականացվել է դիամասնատման ծես:

Այսպիսով, մենք գործ ունենք մեկ հիմնական թաղման հետ խցի մեջ (Կմախք 1, 12-15 տարեկան աղջիկ⁵³⁶), որից վերև, հարթակի վրա եղել է երկրորդ դիամասնատված, չի բացառվում՝ զոհաբերված, թաղումը (Կմախք 2, 30-35 տարեկան տղամարդ): Թե ինչ իրավիճակ է եղել դամբարանի ավերված հատվածում, արդյոք եղել են այլ թաղումներ, անհնար է ասել:



Նկ. 6. Սոթք 15, թասաձև փորվածքով քար



Նկ. 7. Սոթք 10, լանդշաֆտ

Հայտնաբերված անոթների, բրոնզե դաշույնի ուսումնասիրությունը և ռադիոածխածնային անալիզների արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ քննվող դամբարանաբլուրը թվագրվում է ՄԲ-ի առաջին փուլով՝ Ք.ա. III-II հազ. սահմանագծով:

⁵³⁶ Մարդաբանական ուսումնասիրությունները Սոթք 10-ում և Նորաբակ 1-ում իրականացվել են Ռուզան Մկրտչյանի և Հասմիկ Միմոնյանի կողմից:



Նկ. 8. Սղթ 10, Դամբարան N 1, կառույցը

Նորաբակ 1 դամբարանադաշտը

Գեղարքունիքի մարզի Նորաբակ գյուղից արևելք, Նորաբակ 1 բնակավայրին կից է գտնվում 21 կրոնիկներով դամբարաններից բաղկացած դամբարանադաշտը, որի մասին առաջին անդրադարձը կատարվել է Սևանի ավազանի հայ-իտալական հետախուզական արշավախմբի կողմից⁵³⁷: 2012 թ. մեր արշավախումբը սկսեց N 1 դամբարանաբլրի պեղումները, որը գտնվում է գրեթե հարթ տարածքում և տարբեր հատվածներում ունի մակերեսի նկատմամբ մոտ 20-75 սմ բարձրություն: Այն իրենից ներկայացնում է շրջանաձև կրոնիկա, որի տրամագիծը 9 մ է, կրոնիկից դուրս ընկած զրահապատ տարածքով հանդերձ՝ մոտ 12 մ (նկ. 9, 10): Դամբարանաբլուրը հետազոտվեց 12x12 մ քառակուսի պեղավայրի համատեքստում: Դամբարանաբլրի արտաքին զրահը պահպանված էր միայն հյուսիսարևմտյան և հյուսիսարևելյան հատվածներում, որը բաղկացած էր միջին մեծության քարերից, ի տարբերություն հիմնական զրահի, որն իրենից ներկայացնում էր քարահողային լիցք: Զրահի մեջ բացվեց 4 դամբարանախուց՝ ուղղված հյուսիս-արևելք / հարավ-արևմուտք (N 1 և N 3) և արևելք-արևմուտք, մի փոքր հարավ շեղվածությամբ (N 2 և N 4):

Ռադիոածխածնային անալիզների արդյունքների համաձայն Նորաբակի N 1 դամբարանաբլուրն ընդգրկում է զարգացած ուշ բրոնզից մինչև միջին երկաթ (Ք.ա. XIV-VI դդ.) ընկած ժամանակահատվածը, գլխավորապես վերաբերելով վաղ երկաթին: Այսպես՝ ամենավաղը թվագրվում է դամբարանախուց N 2-ը՝ Ք.ա. XIV-XIII դդ., ապա N 3-ը՝ Ք.ա. XI-X դդ., N 4-ը՝ Ք.ա. X-IX դդ. և N 1-ը՝ Ք.ա. VIII-VI դդ.:

Առաջին հայացքից տարօրինակ է, որ N 2 դամբարանախուցը այդքան վաղ է թվագրվում և գերծ է գույքից: Մակայն, հաշվի առնելով բոլոր չորս խցերի դասավորվածության որոշակի համաչափությունը և N 2 դամբարանի կենտրոնական դիրքը ու վաղ թվագրության հանգամանքը, կարելի է ենթադրել, որ դամբարանաբլրի կենտրոնական խուցը հանդիսացել է N 2-ը, իսկ հետագայում, նրա շուրջ, ավելացվել են մնացած երեքը: Այսպիսով, հնարավոր է, որ մենք գործ ունենք տոհմական դամբարանի հետ, որը տրամաբանորեն զարգացել է կենտրոնական թաղման (կարևոր ինչ-որ անհատի) շուրջ:

⁵³⁷ R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani, նշվ. աշխ., էջ 72:



Նկ. 9. Նորաբակ 1, Դամբարան N 1, կառույցը մինչև խցերի բացելը



Նկ. 10. Նորաբակ 1, Դամբարան N 1, կառույցը խցերը բացելուց հետո

Փաստորեն բացի N 2 դամբարանախցից, մնացած երեքում խամբային թաղումներ են իրականացվել, մասնավորապես 7 (N 1 դամբարանախուց), 3 (N 3 դամբարանախուց) և 14 (N 4 դամբարանախուց) մարդկանց հետքերով, ինչը տիպիկ է Սևանի ավազանի բրոնզ-երկաթե-դարյան թաղման ծեսի համար: Հեշտ չէ հստակորեն ասել, թե դրանք միաժամանակյա, թե տարաժամանակյա թաղման ակտեր են: Դամբարանախուց N 1-ը թալանված է եղել, մինչդեռ N 3-ի և N 4-ի ծածկասալերն անխախտ էին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին երկու խցերում էլ մարդկային ոսկորները և համապատասխան գույքը նույն մակարդակի վրա են եղել և հնարավոր չէ խոսել մեկից ավելի շերտերի մասին, իսկ գույքը չի տալիս թվագրման համար մեծ տատանումներ, կարելի է եզրակացնել, որ մենք գործ ունենք համաժամանակյա կամ գրեթե համաժամանակյա թաղման ակտերի հետ: Խամբային թաղման երևույթը այս պարագայում թերևս կարելի է դիտարկել թաղման որոշակի ծեսերի համատեքստում՝ մարդկային զոհաբերություն, դիամասնատում (հատկանշական է, որ N 1 և N 4 դամբարանախցերում գանգեր չկային), դիահոշոտում (N 4 դամբարանախցի երիտասարդ կնոջ ոսկորներից մեկի վրա մարդաբանական հետազոտության ընթացքում նկատվել են կենդանու ատամների հետքեր):

Նորաբակի N 1 դամբարանաբլրի թաղման ծեսի և գույքի (մեծ քանակությամբ խեցեղեն, մետաղ, ուլունքներ, ևն) նախնական հետազոտությունը ցույց է տալիս, որ գործ ունենք Սևանի ավազանի հատկապես վաղ և միջին երկաթի դարերին բնորոշ մշակութային իրավիճակների հետ, որոնք փաստված են տարածաշրջանի այլ դամբարանադաշտերում (օր. Կարճաղ-

բյուր): Հիշարժան է այս համատեքստում երկաթի բավականին վաղ ի հայտ գալը (N 4 դամբարանախուց): Առկա տվյալները թույլ են տալիս դիտարկել Նորաբակ 1-ի դամբարանաթումբը լճաշեն-մեծամորյան մշակույթի տեղային զարգացումների համատեքստում:

Այսպիսով, հնագիտական հետազոտությունները պատմական Սյունիքի Սոթքի ենթաշրջանում ցույց են տալիս, որ մետաղահանքերով հարուստ այս տարածաշրջանը բնորոշվում է նաև ծիսական բնույթի հուշարձաններով: Մասնավորապես, այստեղ առկա են դամբարանադաշտեր, առանձին սրբավայրեր և բնակավայրեր, որոնք կազմում են տարածքի սրբազան լանդշաֆտի բաղադրատարրերը: Դրանց հետազոտումը մեկ անգամ ևս փաստում է, որ յուրաքանչյուր հասարակություն ընկալելու համար անհրաժեշտ է այն դիտարկել որպես կիրառական և ծիսական ոլորտների փոխազդեցության գոտի, դրանով իսկ՝ ուրույն հասարակական համակարգ:

ՄՅՈՒՆԻՔԻ ՍՐԲԱԶԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՑՆԵՐՈՒՄ

Մկրտչյան Լևոն

Աշխատանքում անդրադառնում ենք Սյունիքի սրբազան լանդշաֆտին վերաբերող հուշարձաններին, որոնք արձանագրվել և արխիվացվել են տարիների ընթացքում: Օգտվել ենք ՀՀ Սյունիքի մարզին վերաբերող Պատմության և մշակույթի պահպանության գործակալությունում պահվող հուշարձանների պահպանական գոտիներից և ՀՀ Մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական ՊՈԱԿ-ի վկայագրերի և նույն հաստատության չափագրությունների, սևանկարների և լուսանկարների պահոցներից⁵³⁸:

Պահոցներում որոնել ենք հիմնականում դամբարանադաշտեր, մեգալիթյան հուշարձաններ (կոթողներ/կուռքեր, մենհիրներ, վիշապ/վիշապոճիղներ), ժայռապատկերներ և ժայռային ուխտավայր/սրբավայրեր: Բացի վերջիններից, մնացած հուշարձաններն ընտրելիս առաջնորդվել ենք կազմողների կողմից համեմատական մեթոդով թվագրված քիչ թե շատ վստահելի այն հուշարձաններով, որոնք վերաբերում են բրոնզի և երկաթի դարաշրջաններին (Ք.ա. III-I հազ. կեսեր)⁵³⁹: Հուշարձանները դասակարգելիս և կատալոգ կազմելիս՝ պահպանել ենք կազմողների տեքստերը և մոտեցումները:

Սյունիքի սրբազան լանդշաֆտին վերաբերող պահոցներում պահպանվող նյութերը պայմանականորեն բաժանում ենք հետևյալ չորս խմբի:

I. Ժայռային հարթակներ

1. Միսիան, Պորտաքար, ինդեքս 8.6.29⁵⁴⁰

Գտնվում է Միսիանի խաչմերուկից դեպի Գորիս 12 կմ հարավ, ճանապարհի ձախ կողմում: Պորտաքար կոչվող սրբատեղին կլորավուն 3.5 մ տրամագծով, մոխրագույն բազալտե ժայռ է, կենտրոնում ուռուցիկ ելուստով, որի շուրջը քիչ խորադիր լավ հղկված քարե մակերեսն է: Շրջակա տարածքը դարավանդաձև հարթեցրած է, տեղ-տեղ նկատելի են խոշոր, մանր ու միջին քարերով շարված, երբեմն երկշար, երբեմն միաշար պատերի մնացորդներ: Կազմող՝ Ա. Ջուլֆալալյան 17.02.2006:

2. Միսիան, Ծակ քարեր

Որոտան գետի ձախ ափին է գտնվում Ծակ քարեր սրբատեղին⁵⁴¹:

⁵³⁸ Նյութերի տրամադրման համար շնորհակալություն ենք հայտնում Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության պահպանության բաժնի պետ Ս. Շաքարյանին, Պատմամշակութային ժառանգության արխիվի պետ Հ. Կարապետյանին, ինչպես նաև չափագրությունների, սևանկարների և լուսանկարների պահոցի պետ Վ. Գասպարյանին:

Ներկայացվող ցանկում «պահպանական գոտի» նշվում է, երբ արխիվային փաստաթուղթը պահվում է Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության արխիվում, իսկ ինդեքսը՝ Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արխիվից քաղված լինելու պարագայում:

⁵³⁹ Դրանք կարող են թվագրվել նաև ավելի վաղ, ինչպես օր. որոշ ժայռապատկերներ կամ մեգալիթյան կոթողներ, սակայն այստեղ մեր հիմնական նպատակը թվագրությունը չէ:

⁵⁴⁰ Հմմտ. Ս. Լիսիցյան, Ջանգեգորի հայերը, էջ 98, 107:

⁵⁴¹ Հմմտ. Ա. Ղանալանյան, Ավանդապատում, էջ 55:

3. Թասիկ, Ուխտեր, սրբատեղի, պետ. ցուցակ չի մտել

Ուխտեր սրբատեղին գտնվում է Թասիկ գյուղից 500 մ հյուսիս, գերեզմանոցի մոտ, սարալանջին: Սրբացված է հսկայական ժայռաբեկորը, որի վրա կան բազմաթիվ խոռոչներ (ծակեր): Այդ խոռոչներից մեկում այցելուն դնում է նվիրատվությունը և մոմ է վառում: Ժայռի այս մասը մոմից սևացած է: Կազմող՝ Է. Այվազյան, հունիս 1995 թ.:

4. Ագարակ, սրբատեղի-ուխտատեղի, պետ. ցուցակ չի մտել

Գտնվում է ավանից մոտ 3 կմ հարավ-արևմուտք, Խաչին ձորի ամենավերին մասում Խաչեր բնակատեղի տանող ճանապարհից քիչ հեռու: Ուխտատեղին մի մեծ ժայռաբեկոր է, որի հյուսիսային կողմում անմիջապես ժայռից աղբյուր է բխում, իսկ մյուս կողմերում հատկապես հարավայինում, մոմեր են վառում ժայռի մակերեսին և բնական խոռոչների մեջ: Ժայռից քիչ արևմուտք պահպանվել են խոշոր բազալտի քարերից՝ առանց շաղախի դարավանդաձև շարված մի շարք պատեր, որոնք այժմ ծառայում են որպես մանկապարտեզի ցանկապատ: Կազմող՝ Վ. Հարությունյան, մայիս 1991 թ.:

5. Կարճևան, Մամխաչ սրբատեղի, ինդեքս 8.51.14


Սրբատեղին բաղկացած է երկու ժայռաբեկորներից, որոնք զբաղեցնում են գյուղի հյուսիս-արևմտյան եզրին: Ժայռերը ուխտավորների վառած մոմերից մրոտվել են՝ ստանալով խորհրդավոր տեսք: Սրբացված ժայռը ունի 3 մ բարձրություն և կոնաձև ուրվագծեր: Կազմող՝ Է. Այվազյան, նոյեմբեր 1990 թ.:

6. Կարճևան, սրբատեղի արձանագրությամբ, ինդեքս 8.51.7

Գտնվում է գյուղից մոտ 500 մ հյուսիս, Քշնատափ կոչվող ձորակի աջ կողմում, գերեզմանոցից քիչ հյուսիս: Հսկայական ժայռաբեկորի դեպի հարավ դիրքորոշված բնական փոսորակի հարթ մակերեսին, տարբեր տեղերում հինգ խաչեր են փորագրված, որոնց շուրջն արձանագրություն է (ԹՎԻՍ ՈՂԳ (1244 թ.) Աստուած ողորմի // Ածելիս ծնողաց): Այս և շրջակայքի այլ ժայռաբեկորների վրա մոմեր են վառում: Կազմող՝ Վ. Հարությունյան, հունվար 1990 թ.:

7. Քարահունջ, Օխտը օրորոցի քար, ինդեքս 8.110.32 (նկ. 1)

Բնական ժայռաբեկորի (2.5 մ բարձրությամբ և 2 մ լայնությամբ) հարավում, բնականից հարթ մակերեսին փորագրված են տարբեր պատկերաքանդակներ: Քարի վերին մասում խաչաքանդակներով շրջապատված ձիավոր է, աջ ձեռքին՝ սուր, ով գերի է տանում առջևի մար-



Նկ. 1. Քարահունջ, «Օխտը օրորոցի քար»

դուն: Կենտրոնական մասում, ձախ ձեռքին խաչ բռնած ձիավոր է, որի առջև կանգնած է ձեռքերը կողք պարզած (աղոթող), գլխին լուսապսակով (վրան խաչապատկերով) մի մարդ: Վերջինիս գլխի աջ կողմից վեր է բարձրանում տիրոջ աջը: Այս պատկերախմբի չորս կողմում փոքր խաչապատկերներ և հայերեն ճ տառին նմանվող քանդակներ են: Կենտրոնի ներքևի աջ մասում փորագրված է տիրոջ երկու աջ (մեկը հորիզոնական, մյուսը՝ ուղղահայաց), որոնք ուղղված են աջ ձեռքին խաչ, իսկ ձախին՝ ավետարան բռնած մարդուն: Քարի աջ եզրին երկու փոքր խաչաքանդակներ են, աջ ձեռքին սուր բռնած ձիավոր (սուրը վեր պարզած), որի տակ անհասկանալի պատկերագրեր են: Գրեթե ներքև արևի ժամացույց է փորագրված, որի ներքին ձախ կողմում երկու ձեռքերը կողք պարզած մարդու պատկերներ են: Քարի ձախ ստորին անկյունում ուղղահայաց և հորիզոնական դիրքով փորագրված է տիրոջ աջը, որի մոտ աջ ձեռքին վեր պարզած՝ խաչով և ձախ ձեռքին հորիզոնական պահած ավետարանով մարդու պատկերն է: Այդ պատկերից աջ սկսվում է արձանագրությունը (հինգ տող), որի երեք տողն ընթերցանելի է: Կազմող՝ Վ. Գայսերյան, օգոստոս 1989 թ.:

II. Ժայռապատկերներ⁵⁴²

8. Միսիան, Քարեղարանի բակ, ինդեքս 8.6.31.1

Ժայռապատկերը տեղափոխվել է Քարեղարանի բակ 1986 թ. Ուղտասարից: Սև ժայռաբեկորի ուղղահայաց մակերեսին պատկերված է այծ (նոխազ, քաղ): Պատկերները փորագրված են 2-6 մմ խորությամբ և 2-20 մմ լայնությամբ խորագծերով: Կազմեց՝ Է. Այվազյան, նոյեմբեր 1995 թ.:

9. Միսիան, Քարեղարանի բակ, ինդեքս 8.6.32.2

Ժայռապատկերը տեղափոխվել է Քարեղարանի բակ 1986 թ. Ուղտասարից: Սև ժայռաբեկորի հորիզոնական մակերեսին պատկերված է բեզուարյան այծ/նոխազ և արև: Արևը արտահայտում է կյանքի հավերժությունը պատկերն ունի պաշտամունքային նշանակություն: Կազմեց՝ Է. Այվազյան, նոյեմբեր 1995 թ.:

10. Միսիան, Քարեղարանի բակ, ինդեքս 8.6.32.3

Ժայռապատկերը տեղափոխվել է Քարեղարանի բակ 1986 թ. Ուղտասարից: Սև ժայռաբեկորի հորիզոնական մակերեսին պատկերված է բեզուարյան այծ (նոխազ, քաղ): Պատկերը փորված է 2-6 մմ խորությամբ և 2-20 մմ լայնությամբ խորագծերով: Կազմեց՝ Է. Այվազյան, նոյեմբեր 1995 թ.:

11. Միսիան, Քարեղարանի բակ, ինդեքս 8.6.32.4

Ժայռապատկերը տեղափոխվել է Քարեղարանի բակ 1986 թ. Ուղտասարից: Սև ժայռաբեկորի հորիզոնական մակերեսին պատկերված է բեզուարյան այծ (նոխազ, քաղ): Պատկերը փորված է 2-6 մմ խորությամբ և 2-20 մմ լայնությամբ խորագծերով: Կազմեց՝ Է. Այվազյան, նոյեմբեր 1995 թ.:

12. Միսիան, Քարեղարանի բակ, ինդեքս 8.6.32.5

Ժայռապատկերը տեղափոխվել է Քարեղարանի բակ 1986 թ. Ուղտասարից: Սև ժայռաբեկորի հորիզոնական մակերեսին պատկերված են որսի այծեր և գործիքներ (նետ ու աղեղ, եռաժանի): Պատկերը փորված է 2-6 մմ խորությամբ և 2-20 մմ լայնությամբ խորագծերով: Կազմեց՝ Է. Այվազյան, նոյեմբեր 1995 թ.:

⁵⁴² Միսիան քաղաքի Քարեղարանի ժայռապատկերները տեղափոխված են Ուղտասարից 1986 թ.: Դրանք հայտնաբերվել են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից Գ. Կարախանյանի կողմից՝ 1968 թ.:

13. Միսիան, Քարեղարանի բակ, ինդեքս 8.6.32.6

Ժայռապատկերը տեղափոխվել է Քարեղարանի բակ 1986 թ. Ուղտասարից: Սև ժայռաբեկորի հորիզոնական մակերեսին պատկերված են որսի կենդանիներ: Պատկերը փորված է 2-6 մմ խորությամբ և 2-20 մմ լայնությամբ խորագծերով: Կազմեց՝ Է. Այվազյան, նոյեմբեր 1995 թ.:

14. Միսիան, Քարեղարանի բակ, ինդեքս 8.6.32.7

Ժայռապատկերը տեղափոխվել է Քարեղարանի բակ 1986 թ. Ուղտասարից: Սև ժայռաբեկորի հորիզոնական մակերեսին պատկերված են բեզուարյան այծեր (նոխազ, վիշապ): Պատկերը փորված է 2-6 մմ խորությամբ և 2-20 մմ լայնությամբ խորագծերով: Կազմեց՝ Է. Այվազյան, նոյեմբեր 1995 թ.:

III. Կոթողային հուշարձաններ⁵⁴³

15. Տեղ, Սյունիքի հուշարձանների հաշվառման թերթիկ⁵⁴⁴ (նկ. 2)

Սեպագիր քար: Մոնումենտալ արվեստի հուշարձան, 46x35x28 սմ: Տեղադրված է սբ Գևորգ եկեղեցին շրջափակող պարիսպի արևելյան կողմում: Կատարող՝ Գ. Գորոյան, նոյեմբեր 1986 թ., լուսանկար 357:

16. Կոռնիձոր, կուռք, ինդեքս 8.52.3.2 (նկ. 3)


Գտնվում է Կոռնիձոր գյուղից 2.5 կմ արևմուտք, Շուռնուխի խաչեր վայրում (ղամբարանաթմբի վրա): Այն գորշավուն, ծակոտկեն բազալտե քանդակ է՝ ընդգծված ուղղահայաց իրանով և հորիզոնական տարածած թևերով: Սահուն, կլորավուն անցումով մշակված է իրանը գլխին միացնող վզի հատվածը: Թիկունքը կոր է: Թևերը գտնվում են հորիզոնական բարձր ու ցածր հարթությունների վրա: Ուշագրավ է քանդակի գլխի մասը, որտեղ եռանկյան հարթ մակերեսի վրա նկատելի են աչքերի, քթի և բերանի բնորոշ նշանները, թեթև մշակված է ծնոտի շրջագիծը: Չափերը՝ 93x38x43 սմ: Կազմեց՝ Ա. Զուլֆալական, սեպտեմբեր 2005 թ.:



Նկ. 2. Տեղ, խաչքարացված կուռք

⁵⁴³ Պահպանական գոտիներում և վկայագրերում խաչքարերից բացի Հայաստանի պատմական/հնագիտական այլ կոթողային հուշարձաններ չեն առանձնացվում. դրանք ներկայացվում են ամրոց-բնակավայրերի հետ միասին: Անդրադարձ չի կատարվում հուշարձանի բնույթին կամ գործառույթին: Մենք փորձել ենք տեսակավորել և խմբավորել այս կատալոգում առկա նյութերը՝ փակագծերում ավելացնելով տեսակը:

⁵⁴⁴ ՊՄԺԳՀԿ-ի չափագրությունների, սևանկարների և լուսանկարների պահոցում՝ հանդիպեցինք այս հաշվառման թերթիկին, որտեղ հուշարձանը նշվում է որպես սեպագիր: Ցավոք, լուսանկարը անգույն է, արված է բավականին վատ, իսկ տեսանելի պատկերում ակնհայտորեն չի երևում ոչ մի սեպագիր: Հավանաբար գործ ունենք հնագույն մի կոթողի հետ, գուցե՝ կուռքի:



Նկ. 3. Կոռնիձոր, մարդակերպ արձան

**17. Խոզնավար, թևավոր խաչքար (կուռք),
ինդեքս 8.47.7 (նկ. 4)**

Գտնվում է Խոզնավար գյուղի Բազարխանա վայրում, Աշոտի աղբյուրից 300 մ հյուսիս-արևմուտք: Խաչքարն ունի անկանոն ճարտարապետական ուրվագծեր, մշակված է կոպիտ, հավանաբար կերտվել է վիշապ քարի վրա: Խաչաթևերի հատման կետում ունի շրջանաձև զարդ, որի մեջ փորագրված է խաչապատկեր: Խիստ մամռակալած է, թեքված: Խաչքարի շրջակայքում կա չորս դամբարան: Չափերը՝ 1.2x0.96x0.2 մ: Կազմեց՝ Է. Այվազյան, օգոստոս 2005 թ.:

18. Գորիս-Սյունիքի հուշարձանների հաշվառման թերթիկ

Ֆալյուս, ք.ա. VII-VI դդ.: Արվեստի հուշարձան, հնագիտական, 65x32x18 սմ: Գտնվում է Գորիսի թանգարանում: Կատարեցին՝ Գ. Գորոյան, Ն. Քեշիշյան, հոկտեմբեր, 1986 թ.:



Նկ. 4. Խոզնավար, խաչքարացված կուռք

19. Շինուհայր, խաչքար-կոթող (Փալոս), 8.73.2.1.3⁵⁴⁵

Խաչքարը գտնվում է գյուղամիջյան Խաչեր գերեզմանոցում: Մեծ ժայռաբեկորի վրա կանգնած է ձևով եզակի այս խաչքար-կոթողը: Այն նավակաձև է, մեջտեղը՝ լայն, թիկունքից՝ կիսաբոլոր մշակված: Դիմային երեսը գեղամշակված է պարանահյուս պատվանդանին (կենտրոնում ծաղկաքանդակ է) հենված եղնազարդ հիմնախաչով, որի թևերն ավարտվում են վարսանդապտղային զարդանախշերով: Ստորին խաչաթևի երկու կողմից վեր են ձգվում վեց աստիճան ակոսազարդ պատվանդաններին հենված ակոսավոր խաչաքանդակներ: Հորինվածքի ստորին մասում երկու կամարներով ներփակված մեկական փորագիր խաչեր են: Վերնամասում գծավոր գլխարկի վրա ագուցված է շրջանաձև գլխաքար, որի մեջտեղում փորագրված է փոքրիկ խաչ, վերջինս ավարտվում է խորանարդիկով: Տասը տող թվակիր արձանագրությունը փորագրված է կոթողի ստորին հատվածում: Կերտված է գորշ բազալտից: Չափերն են՝ 300x47 սմ:

20. Հարժիս, մենհիրներ, ինդեքս 8.56.2

Գտնվում են Հարժիս գյուղում՝ քարավանատնից 200 մ հարավ-արևելք սարալանջի վրա տարածվող Հարժիսի բնակավայրի հյուսիսով անցնող պարիսպների մոտ: Մենհիրներից մեկը կանգնած է, մյուսն՝ ընկած: Կանգուն մենհիրի չափերն են 1.9x0.55x0.30 մ: Կրոմլեխի տրամագիծը՝ 3.5 մ, անցքի տրամագիծը՝ 10 սմ: Այս մենհիրից 100 մ արևելք ընկած մենհիրի չափերն են՝ 2.4x0.5x0.3 մ, անցքի տրամագիծը՝ 10 սմ է: Կազմող՝ Է. Այվազյան, սեպտեմբեր 2005 թ.:

21. Հարժիս, մենհիրներ, Ք. ա. I հազ., պահպանական գոտի

Հնավայրը գտնվում է Քարթափա լեռան հարավային լանջի 1985.5 մ նիշով բարձունքի վրա: Հյուսիսարևելյան սահմաններով լանջն ի վեր ձգվում է 300 մ երկարությամբ պարիսպների հիմնապատը: Սարալանջի վրա պահպանվում են ուղղանկյուն հատակագծով կառույցների հիմնապատերի հետքեր և հիմնափոսեր: Պարիսպների մոտ կանգնած է *մեկ* մենհիր,

որից 100 մ հյուսիս-արևելք ընկած է *երկրորդ* մենհիրը: Բնակատեղին զբաղեցնում է 2.5 հա անօդատագործելի տարածք: Հուշարձանի պահպանության նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 3,0 հա տարածք: Կազմող՝ Է. Այվազյան:

22. Հարժիս, մենհիր, ինդեքս 8.56.13

Գտնվում է գյուղից շուրջ 6 կմ հյուսիս Երևան-Գորիս մայրուղուց դեպի Հարժիս թեքվող ճանապարհի սկզբին, Ջուխտակ գյուղ անվանումով հանդամասում: Աշխարհագրական կոորդինատներն են N 39°28'12.7" E 046°14'06.2", բարձրությունը ծովի մակարդակից 1798 մ: Մենհիրի չափերն են՝ 1.6x0.5մ, անցքը ջարդված է: Կանգնեցված է բազալտե խոշոր քարաբեկորներով շարված, ուղղանկյուն հատակագծով շինության կենտրոնում: Կազմող՝ Է. Այվազյան, սեպտեմբեր 2005 թ.:

23. Ավարանց, խաչքար (մենհիր?), ինդեքս 8.85.6 (նկ. 5)

Գտնվում է Ավարանց-Տաթև ճանապարհից ձախ՝ 800 մ արևելք: Միայնակ կանգնեցված է հերկված դաշտի մեջ: Սաստիկ մամռակալաձև և հողմահարված է: Սեպտեմբեր 2005 թ.:



Նկ. 5. Ավարանց, խաչքարացված մենհիր

⁵⁴⁵ Ս. Բարխուդարյան, Գորիսի, Միսիանի և Ղափանի շրջաններ, էջ 55:

24. Իշխանասար, խաչքար (մենհիր)⁵⁴⁶ (նկ. 6)

Այս խաչքարը հայտնաբերել է Իշխանասարի վերաբնակիչ, ազատամարտիկ Հակոբ Գյոդակյան առինջեցին: Խաչքարը սրբացված է: Գտնվում է Իշխանասարի (Ղզլժուղի) արևմտյան եզրին, ֆերմաներ տանող ճանապարհից ձախ: Կերտված է տեղական կապտավուն բազալտից: Ունի ճարտարապետական անկանոն ուրվագծեր, պարզ հորինվածք: Խաչքանդակի թևերը ավարտվում են գծային գալարներով և խաղողի զարդամոտիվներով: Կանգնեցված է եղել հողի մեջ: Չափերն են՝ 1.3x0.58, հաստությունը՝ 0.22 մ: Կազմող՝ Է. Այվազյան, հոկտեմբեր 1995 թ.:

25. Անգեղակոթ, հուշայուն (վիշապաքար), ինդեքս 8.13.4.28⁵⁴⁷

Հորինվածքը պսակող թևավոր խաչից ոչինչ չի պահպանվել: Հուշայուն կոթողը կանգնեցված է աստիճանաձև ստիլոբատից մի քանի մետր հեռու: Գտնվում է գյուղի հյուսիսային եզրին տարածվող ընդարձակ գերեզմանոցի հին թաղումների հատվածում: Հուշարձանը, որը կերտված է գորշ բազալտից, բաղկացած է աստիճանաձև ստիլոբատից, քառանիստ պատվանդանից և հուշայուն-կոթողից: Վերջինս գտնվում է աստիճանաձև ստիլոբատից մի քանի մետր հեռու (հավանաբար երկրաշարժի հետևանքով ընկել է և գյուղի բնակիչների կողմից կանգնեցվել է առանձին): Հուշայուն-կոթողի, ինչպես նաև ստիլոբատի վրա հարմարեցված քառանիստ պատվանդանին ներկայումս կանգնեցված է XVI-XVII դդ. թվագրվող մեկական խաչքար: Ստիլոբատի աստիճանները յոթն են, շարված մեծադիր ողորկ քարերով: Աստիճանների վերին շարքի համապատասխան փորվածքի վրա հարմարեցված է դեպի վեր քիչ նեղացող նիստերով քառակող պատվանդանը, որի արևմտյան նիստին պատկերված է մեծ շրջանակով ներփակված խաչքանդակ, հարավայինին և արևելյանին մեկական վարդյակ, հյուսիսայինին՝ շրջանակի մեջ առնված մարդու ֆիգուր և վերջինիս երկու կողմում՝ փոքր վարդյակներին հենված՝ թռչնաքանդակներ: Համապատասխան փորվածք կա նաև պատվանդանի վերին հարթության վրա արված կոթող-հուշայունը ագուցելու նպատակով: Կոթողը բոլորաձև է, ողորկ, բարձր, վերնամասում՝ քիչ լայնացող: Դիմային երեսին հետագայում քանդակվել են խաչեր: Կազմողներ՝ Է. Աբրահամյան, Ն. Հասրաթյան, մարտ 1996 թ.:

26. Բնունիս, գերեզմանոց (վիշապոիդ)⁵⁴⁸ (նկ. 7)

Գերեզմանոցը զբաղեցնում է եռանկյունաձև մի տարածք, գտնվում է «Գյավուր Դարա» ձորակի աջ ափին: Զբաղեցնում է մոտավորապես 6.0 հա մակերես: Խաչքարերը և սալաքարե-



Նկ. 6. Իշխանասար,
խաչքարացված մենհիր

⁵⁴⁶ Այս կոթողը վկայագրված է որպես խաչքար: Կարծում ենք այն նախապես եղել է մենհիր, այնուհետև վերածվել խաչքարի, ինչի ապացույցն է խաչքարների ոչ բնորոշ ձևը և վերնամասի փորվածքը:

⁵⁴⁷ Ա. Շահինյան, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները IX-XIII դդ., նկ. 13 (վերակազմություն) և 15:

⁵⁴⁸ Բնունիսի գերեզմանոցի վկայագրում պահպանվել են լուսանկարներ, որտեղ երևում է խոշոր քարաբեկոր, իսկ լուսանկարի հետևում այն անվանված է «վիշապ»:

րը կերտված են գրանիտից, ունեն պարզունակ հորինվածք: Զգալի թվով տապանաքարեր շրջված են գանձախույզների կողմից: Տարածքի հարավարևմտյան մասում գտնվում է «Հազարափրկիչ» նորաշեն մատուռը կառուցված նախկինում գոյություն չունեցող եկեղեցու արսիդի վրա: Կազմող՝ Հ. Սիմոնյան, Է. Այվազյան, հուլիս 2007 թ.:



Նկ. 7. *Բնունիս, վիշապանման մենհիր*



Նկ. 8. *Հարժիս, վիշապանման մենհիր*

27. Հարժիս, գերեզմանոց (վիշապոիդ, մենհիր), ինդեքս 8.56.⁵⁴⁹ (նկ. 8)

Գտնվում է գյուղի հարավային եզրին՝ Հին Հարժիս տանող ճանապարհից ձախ:

Կազմեց՝ Է. Այվազյան, 2005 թ.:

IV. Դամբարաններ⁵⁵⁰

Դոլմեններ

28. Սիսիան, դամբարանադաշտ, ինդեքս 8.6.13⁵⁵¹

Պեղումներ է կատարել Մ. Հասրաթյանը 1956 թ.: Նախնական տեսքը խաթարված է: Տարածվում է քաղաքի հյուսիսարևելյան եզրին, Որոտան գետի բարձրադիր քարափին, Սիսիանից Աղիտու տանող ճանապարհին գտնվող պատմական Սյունի բերդի շրջակայքում: Դամբարանները դոլմենաձև են և խիստ մաշված: Հատուկ ընդգծվում են միայն ճանապարհի շինարարության ընթացքում խճուղու ոլորապտույտ հատվածներում որոշ դամբարաններ: Պեղվել է երկու

⁵⁴⁹ Հուշարձանի մասին տեղեկություն չկա, վկայագրում խոսվում է միայն գերեզմանոցի մասին: Այն դասակարգվում է վիշապոիդների շարքում՝ ելնելով առկա լուսանկարից:

⁵⁵⁰ Սյունիքի մարզի պահպանական գոտիներում հանդիպեցինք 26 դամբարանադաշտերի, որոնք հիմնականում վերաբերում են Ք.ա. II-I հազ. (թվագրությունը կազմողներին է):

⁵⁵¹ Մ. Հասրաթյան, Պատմահնագիտական ուսումնասիրություններ, էջ 168-173:

դամբարան՝ մեկը Սյունի բերդի մոտ «Ծակ քար» կոչվող վայրում, մյուսը՝ բերդի ավերակների արևմտյան ստորոտին:

29. Միսիան, Սյունի վանքից 800 մ հյուսիս, ինդեքս 8.6.7

Հուշարձանի նախնական տեսքը ավերված է: Մենավոր դամբարանը (դոլմեն) գտնվում է Սյունի վանքից 800 մ հյուսիս՝ թեք սարալանջի վրա: Դամբարանի խուցը շարված է տեղական անմշակ որձաքարով, պատերը դեպի վեր մոտենում են միմյանց (բնորոշ է դոլմեններին): Դամբարանախուցը ծածկված է անմշակ մեծածավալ սալաքարով: Ունի արևելք-արևմուտք ուղղվածություն: Չափերն են՝ երկարությունը՝ 6 մ, լայնքը՝ 2.5 մ: Կազմեց՝ Է. Այվազյան 1985 թ. նոյեմբեր:

30. Ախլաթյան, դամբարանադաշտ, ինդեքս 8.10.5⁵⁵²

Պեղվել է 1950 և 1952 թթ. Մ. Հասրաթյանի կողմից: Տարածվում է գյուղից դուրս, Այրի գետի ձախ ափին, Ջաղացի գլուխ կոչվող բարձրադիր վայրում: Պահպանված դամբարանները դոլմենաձև են ժամանակին ունեցել են առանձին քարերից կրոմլեխաձև շար: Պեղվել է երեք դամբարան: Երեքն էլ դոլմենային սկզբունքով կառուցված խոշոր դամբարաններ են: Կազմող՝ Է. Աբրահամյան, Ն. Հասրաթյան 1995 թ. դեկտեմբեր:

31. Ախլաթյան, դամբարանադաշտ, Ք.ա. III-I հազ., ինդեքս 8.10.6⁵⁵³

Պեղվել է Մ. Հասրաթյանի կողմից: Տարածվում է գյուղի շրջակայքում, հիմնականում Ախլաթյան-Տոլորս ճանապարհի ուղղությամբ: Դոլայի կոչվող հանդում պեղվել է մեկ դոլմեն և մեկ կողոպտված դամբարան: Կազմող՝ Է. Աբրահամյան, Ն. Հասրաթյան 1995 թ. դեկտեմբեր:

Դամբարաններ՝ մենհիրներով կամ անմշակ քարերով

32. Զորաց քարեր, դամբարանատուն, ինդեքս 8.6.6.2.1

Հնայած դամբարանատան մուտքը ձեռք տված չէ, սակայն նրա ծածկը քանդված է. հավանաբար դամբարանատունը կողոպտվել է հնադարում, ծածկի միջով: Ղոշուն դաշի գլխավոր դամբարանատունը գտնվում է միջին բրոնզեդարյան դամբարանադաշտի ամենաբարձրադիր տեղում՝ նրա արևելյան եզրի մոտ: Գլխավոր դամբարանը շրջապատված է քարահողային ցածր լիցքով, որի վրա դրված են մի շարք մենհիրներ, որոնք ողջ կառույցի շուրջ կազմում են արտաքին կրոմլեխ: Մենհիրների բարձրությունը՝ լիցքաշարի ներկա մակերեսի համեմատ հասնում է 2.5 մ: Արտաքին մենհիրյան կրոմլեխի տրամագիծը 33 մ է: Նրա կենտրոնում պահպանվել է ներքին կրոմլեխը, որը խեցու հետ քարե լիցքի կրեպիդի հիմքն է, որը ծածկել է դամբարանախուցը: Այդ ներքին կրոմլեխը շինված է երկարավուն միջին չափերի բազալտե սալերով, որոնք դրված են երկար նեղ կողի վրա: Կրեպիդի տրամագիծը 18 մ է: Հնում այն շրջապատել է զաքարով շարված դամբարանախուցը: Կրեպիդի արևմտյան կողմում բացվում է մուտք դեպի դամբարանախցի դրոմոսը: Այդ մուտքը պինդ գմռսված է ուղղաձիգ տեղադրված բազալտե սալով: Դամբարանախուցը դրոմոսի հետ (ընդհանուր երկարությունը 12 մ) կառուցված է բազալտե անմշակ սալերով և ծածկված է կրկնակի դրված երկու շարք-սալերով, որոնց վրա հավանորեն դրված էր ևս մեկ շարք: Դամբարանախցի լայնությունը 2.80 մ է: Դամբարանադաշտը կազմված է մի շարք դամբարանային շինություններից: Դրանցից ամեն մեկն իրենից փոքր բակ է ներկայացնում, որից սկսվում են մեկ կամ մի քանի դամբարանների մուտքեր: Բակերի հատակագիծը ուղղանկյուն է, սեղանաձև, բազմանկյուն, կլոր կամ ձվաձիր: Գլխավոր դամբարանատունը հավանաբար եղել է այն հիմնական շինությունը, որի շուրջը ձևավորվել է Ղոշուն դաշ դամբարանադաշտը: Այն իր նմանօրինակը

⁵⁵² Մ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 173:

⁵⁵³ Նույն տեղում:

չունի Անդրկովկասի համաժամանակյա հուշարձաններում: Կազմող՝ Մ.Վ. Հակոբյան, 1981 թ. հուլիս:

33. Արծվանիկ, դամբարանադաշտ, Ք. ա. II-I հազ., ինդեքս 8.18.5 (միացված)

Դամբարանադաշտը գտնվում է Արծվանիկ գյուղից 2.5 կմ արևելք՝ «Հում հողերում», ավազահանքերի մոտ, Արծվանիկ-Կաղնուտ ճանապարհի եզրին: Արտաքուստ 0.5-1.0 մ բարձրությամբ թմբեր են, հիմնականում հողային լիցքով, որոնց կենտրոնում դրված են մեկական անմշակ բազալտե սալաքարեր: Դամբարանադաշտը զբաղեցնում է 4.5 հա տարածք: Կազմող՝ Է. Այվազյան, նոյեմբեր 1998:

34. Աղվանի, դամբարանադաշտ, ինդեքս 8.12.3

Գտնվում է Աղվանի գյուղի արևմտյան եզրին՝ սարալանջի վրա: Դամբարանադաշտը տարածվում է սարալանջն ի վեր: Հողաքարային բլուրներ են 0-ից մինչև 1.5 մ բարձրությամբ: Դամբարանների թիվը հասնում է 20-ի: Հյուսիսից հարավ 100 մ, արևելքից արևմուտք 50 մ է, զբաղեցնում է 5000 քմ կամ 0.5 հա տարածք: Բլուրների գագաթային մասերում տեղադրված են անմշակ ժայռաքեղոններ: Կազմող՝ Է. Այվազյան, սեպտեմբեր 2005 թ.:

35. Աղվանի, դամբարանադաշտ, Ք.ա. I հազ. սկիզբ, պահպանական գոտի

Դամբարանադաշտը տարածվում է արևմտյան եզրին, քարքարոտ սարալանջի վրա: Դամբարանները հողաքարային թմբեր են՝ 0-ից 1,5-2 մ բարձրությամբ: Դամբարանադաշտը ձգվում է դաշտամիջյան ճանապարհից ձախ, զբաղեցնում է հյուսիս-հարավ և արևելք-արևմուտք ուղղվածությամբ տարածք: Տարածքի արևելքով անցնում է դաշտամիջյան ճանապարհը: Հյուսիսային սահմանները սահմանափակվում են լեռնագագաթային հողմնահարված ժայռերով և դենուդացիոն նստվածքներով, արևմուտքով անցնում է սարալանջային հեղեղատ: Հուշարձանի պահպանության նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 0,95 հա տարածք: Կազմող՝ Է. Այվազյան:

Քարե շրջագծով (կրոմլեխով) դամբարաններ

36. Միսիան, դամբարանադաշտ, Ք.ա. I հազ., ինդեքս 8.6.11⁵⁵⁴

Պեղվել է 1982-83 թթ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Զանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները հետազոտող արշավախմբի կողմից: Սկզբնական տեսքը խաթարված է: Տարածվում է քաղաքից մոտ 4 կմ հյուսիս՝ Միսիան-Գորիս մայրուղու երկարությամբ: Բաղկացած է մի քանի տասնյակ դամբարանաթմբերից, որոնց մի մասը տարբեր մեծության քարերից պատրաստված լիցքով, 8-16 մ տրամագծով, 0.6-1 մ բարձրությամբ ցածր քարակույտերի տեսքով շրջաններ են, մյուս մասը՝ հող ու քարե լիցքով, 20-25 մ տրամագծով և 1.8-2.5 մ բարձրությամբ ցածր բլրակներ: Կազմողներ՝ Է. Աբրահամյան, Ն. Հասրաթյան:

37. Միսիան Քարաբերդ, դամբարանադաշտ, ինդեքս 8.6.4.1

Գտնվում է Միսիանի հարավարևմտյան եզրին, աշխարհագրական կոորդինատներն են՝ N 39°32'22.2" E 046°02'50.3", բարձրությունը ծովի մակարդակից 1750 մ: Դամբարանները հաճախ օղակված են երկշար կրոմլեխով: Ուղղանկյուն հատակագծով երկարավուն խցերը քարաշար են: Կազմող՝ Հ. Սիմոնյան, 2005 թ:

38. Տանձավեր, դամբարանադաշտ, Ք.ա. II-I հազ.

Ավերվել է մելորիացիայի հետևանքով: Դամբարանադաշտը գտնվում է Տանձավեր գյուղից 500 մ հյուսիս, ընդարձակ բացատում: Հնավայրի զգալի մասը հերքվել է և օգտագործվում է որպես մշակելի տարածք: Դամբարանադաշտի հարևանությամբ տարածվում է հին Տանձա-

⁵⁵⁴ Օ. Խնկիկյան, Դամբարանադաշտեր Միսիանի շրջանում, ԼՀԳ 9, 1984, էջ 59:

վեր գյուղատեղին: Արտաքուստ դամբարանները 1-2 մ բարձրությամբ հողաթմբեր են, որոնց մոզական շրջագծերը (կրոմլեխ) շարված են անմշակ բազալտով: Հնավայրը զբաղեցնում է 6 հա տարածք: Կազմող՝ Է. Այվազյան, նոյեմբեր 1992 թ.:

39. Աղվանի, դամբարանադաշտ, ինդեքս 8.12.1

Դամբարանադաշտը գտնվում է Աղվանի գյուղի հարավարևելյան եզրին, անասնագոմերի տարածքում: Մեծմասամբ ավերվել է, պահպանվում են հինգ դամբարանաթմբեր, որոնք ունեն մինչև 1 մ բարձրություն: Մոզական շրջագծերը (տրամագծերը 3-5 մ) շարված են անմշակ տեղական դեղնա-սպիտակավուն որձաքարով: Շրջագծերը հիմնականում չեն պահպանվել, աղավաղված են: Հնավայրը զբաղեցնում է 1.0 հա տարածք: Կազմող՝ Է. Այվազյան, նոյեմբեր 1992 թ.:

40. Աղվանի, դամբարանադաշտ, ինդեքս 8.12.2

Դամբարանադաշտը գտնվում է Աղվանի գետից 400 մ հյուսիս-արևելք՝ Երևան-Կապան մայրուղու երկու կողմերի թեք սարավանջի վրա: Դատելով ճանապարհի եզրի հողաշերտերում մնացած դամբարանների մնացորդներից՝ դրանք եղել են քարարկղեր, որոնց պատերը շարված են տեղական դեղնա-սպիտակավուն անմշակ քարով, խցերի երեսները ծածկված են 3-5 մ անմշակ բազալտե սալաքարերով: Արտաքուստ՝ կրոմլեխներ են, որոնց շրջագծերը շարված են անմշակ քարով, դամբարանաթմբերը ունեն մինչև 1 մ բարձրություն: Դամբարանադաշտը զբաղեցնում է 2 հա տարածք: Կազմող՝ Է. Այվազյան, նոյեմբեր 1992 թ.:

41. Շահարջիկ, դամբարանադաշտ, ինդեքս 8.1.9.4

Դամբարանադաշտը գտնվում է Վահանավանքի համալիրից 1 կմ հյուսիս-արևմուտք, անտառուտ տեղանքում: Կրոմլեխներ են, դամբարանաթմբերն ունեն 1-1.5 մ բարձրություն, սրանց վրա դրված են անտաշ տեղական բազալտի սալաքարեր: Շրջագծերը շարված են տեղական անմշակ բազալտ քարով, ունեն 1.5-3.0 մ տրամագիծ: Զբաղեցնում է 1 հա տարածք: Կազմող՝ Է. Այվազյան, ապրիլ 1993 թ.:

42. Գանձասաձ, դամբարանաբլուր, ինդեքս 8.1.21.4

Դամբարանաբլուրն ունի մոտ 30-35 մ տրամագիծ, շրջակայքից բարձր է 5-6 մ: Թեև կրոմլեխի քարերն ամբողջովին չեն պահպանվել, սակայն մնացած մի քանի քարերի դասավորությունը թույլ է տալիս ենթադրելու, որ բլուրը առնված է եղել արևի պաշտամունքը խորհրդանշող շրջագոտու մեջ: Կազմող՝ Վ. Գալսեթյան, հոկտեմբեր 1988 թ.:

43. Զորաց քարեր, առանձին դամբարանաբլուրներ

Դամբարանաբլուրները գտնվում են Ղոշուն դաշի շրջակայքում, Որոտան գետի ձախ ափին, Անգեղակոթից Սիսիան ընկած տարածքում: Փոքր դամբարանաբլուրները հավանաբար ոչնչացվել են հողային և մելիորատիվ աշխատանքների հետևանքով: Մեծ դամբարանաբլուրները իրարից հեռու են 50-200 մ և տեղադրված են տեղանքի տափարակ հատվածներում կամ բնական փոքր բլուրների գագաթներին: Դամբարանաբլուրների լիցքերը քարահողային են: Դամբարանաբլուրներից մեկի տրամագիծը 37 մ է (գտնվում է մենհիրներով շրջապատված դամբարանադաշտից ոչ հեռու). լվացված լիցքի մակերեսին դուրս են գցված կրոմլեխի գլաքարերը (տրամագիծը 24 մ): Այդ դամբարանաբլուրի վերին մասում դիտվում են թաղման խցերի բազալտե սալերը, որոնք դիրքորոշված են արևելք-արևմուտք: Անգեղակոթի և Սիսիանի միջև եղած դամբարանաբլուրների թիվը հասնում է մի քանի հարյուրի: Կազմեց՝ Մ. Վ. Հակոբյան, 1981 թ. սեպտեմբեր:

44. Սիսիան, դամբարանադաշտ, Զ.ա. I հազ.

Պեղվել է 1982-83 թթ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Զանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները հետազոտող արշավախմբի կողմից: Սկզբնական տեսքը խաթարված է: Տարածվում է քաղաքից մոտ 4 կմ հյուսիս՝ Սիսիան-Գորիս մայրուղու

երկարությամբ: Բաղկացած է մի քանի տասնյակ դամբարանաթմբերից, որոնց մի մասը տարբեր մեծության քարերից պատրաստված լիցքով, 8-16 մ տրամագծով, 0.6-1 մ բարձրությամբ ցածր քարակույտերի տեսքով, շրջաններ են, մյուս մասը՝ հող ու քարե լիցքով, 20-25 մ տրամագծով և 1.8-2.5 մ բարձրությամբ ցածր բլրակներ: Կազմող՝ Է. Աբրահամյան, Ն. Հասարայան:

45. Միսիան, դամբարանադաշտ փորձակայանի տարածքում

Հողաշինարարական աշխատանքների հետևանքով վերգետնյա նշանները զգալիորեն տուժել են: Կազմող՝ Է. Աբրահամյան, 1990 թ.:

46. «Միսիան 1» դամբարանադաշտ, Ք.ա. XIX-XVIII և VIII-VI դդ., պահպանական գոտի

Դամբարանադաշտը գտնվում է Միսիան քաղաքի հյուսիսարևմտյան եզրին, փորձակայանի տարածքում, ծովի մակերևույթից 1665 մ բարձրության վրա: Հուշարձանի բուն տարածքի և պահպանական գոտու սահմանները համընկնում են: Պահպանական գոտու սահմաններն անցնում են հյուսիս-արևելքից և հարավ-արևելքից՝ ճանապարհների եզրերով, հյուսիս-արևմուտքից՝ գերեզմանոցի սահմանագծով, հարավ և հարավ-արևմուտքից՝ դամբարանադաշտի սահմաններով: Հուշարձանի հետագա պահպանման նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 6,0 հա տարածք: Կազմող՝ Վ. Հովհաննիսյան:

47. Անգեղակոթ, դամբարանադաշտ, Ք.ա. IX-VIII դդ.

Սկզբնական տեսքը խաթարված է: Գտնվում է գյուղից մոտ 1 կմ արևմուտք: Միջին ու խոշոր քարերից պատրաստված լիցքով, 8-12 մ տրամագծով, 0.8-1.60 մ բարձրությամբ դամբարանաթմբեր են: Կազմող՝ Է. Աբրահամյան, Ն. Հասարայան, մարտ 1997 թ.:

48. Անգեղակոթ, դամբարանադաշտ, Ք.ա. XII-IX դդ., պահպանական գոտի

Հնավայրը գտնվում է գյուղից 1,5 կմ հյուսիս-արևմուտք: Դամբարանադաշտերն առանձին խմբերով ձգվում են Անգեղակոթ-Սպանդարյան ճանապարհի երկու կողմում սբ. Վարդան մատուռից հյուսիս տարածվող դաշտավայրից մինչև Գուրանասար/Գուրանաբլուր: Տարածքի զգալի մասը վերածվել է վարելահողերի: Դամբարանադաշտում հաշվվում է 100-ից ավելի դամբարան: Հուշարձանի հետագա պահպանման նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 100+5 հա տարածք: Կազմող՝ Վ. Հովհաննիսյան:

49. Անգեղակոթ, դամբարանադաշտ, Ք.ա. II հազ.

Դամբարանադաշտը գտնվում է Որոտանի կիրճում, նրա ձախ ափին, ուղղահայաց իջնող ժայռային մերկացումների ստորին հորիզոնին, «Որոտան» քարանձավների խմբի դիմաց ընկած թեք դարավանդի վրա: Քարակղային թաղումներ են, հիմնականում կողոպտված: Տեղտեղ նկատվում են դամբարանաբլուրի ու կրոմլեխի հետքեր: Վերգետնյա նյութը վերաբերում է Ք.ա. I հազ.: Հուշարձանի հետագա պահպանման նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 36.2 հա տարածք: Կազմող՝ Ֆ. Մուրադյան:

50. Լոռ, բնակատեղի-դամբարանադաշտ, Ք.ա. I հազ., պահպանական գոտի

Համալիրը գտնվում է գյուղի հյուսիսային եզրին, «Շլորուտ վայրում», բլրի վրա: Բլուրն ունի հարթեցված հյուսիս-հարավ ուղղությամբ ձգված օվալաձև գագաթ: Բլուրը հյուսիսից և արևելքից սահմանափակված է Շենաթաղ գետով, իսկ արևմուտքում անցնում է Միսիան տանող ավտոճանապարհը: Բլրի հարթ գագաթային մակերեսին նշմարելի են քարաշեն բնակելի կառույցների հետքեր: Բնակատեղին շրջապատված է եղել անմշակ բազալտե բեկորներից կառուցված պարսպով, որի առանձին հատվածները պահպանվել են բլրի արևելյան եզրագծում: Կրոմլեխներով շրջապատված կուրգանային դամբարանները պահպանվել են բլրի արևմտյան լանջերին: Հուշարձանի հետագա պահպանման նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 0.9 հա տարածք: Կազմող՝ Է. Այվազյան:

51. Քարահունջ, դամբարանադաշտ, Ք.ա. I հազ., պահպանական գոտի

Դամբարանադաշտը տարածվում է «Ենգիջի ձորի» ձախ ափի անօգտագործելի քարքա-

րոտ հողերի վրա, «Ենգիջա» գյուղատեղից հարավ: Դամբարանադաշտում կրոմլեիների մոգական շրջագծերի տրամագծերը տատանվում են 1.5-ից 3 մ-ի միջև, դամբարանախցերը ծածկված են հողաքարային թմբերով, որոնցից յուրաքանչյուրի վրա դրված են մեկական անմշակ ժայռաքեկոր: Հուշարձանի հետագա պահպանման նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 2.4 հա տարածք: Կազմող՝ Է. Այվազյան:

52. Քարահունջ, դամբարանադաշտ, Ք.ա. I հազ., պահպանական գոտի

Դամբարանադաշտը գտնվում է Սեդիգի լճից 1 կմ հարավ-արևմուտք, զբաղեցնում է 6.1 հա տարածք: Տարածվում է անօգտագործելի, քարքարոտ լեռնադաշտը կտրող հեղեղատի աջափնյա սարալանջին: Դամբարանների թիվը մոտ 15 է: Կրոմլեիներ են, որոնց մոգական շրջագծերի տրամագծերը տատանվում են 5-ից 10 մ միջև: Կրոմլեիները շարված են անմշակ բազալտե ժայռաքեկորներով, դամբարանաթմբերի վրա դրված է մեկական անմշակ ժայռաքեկոր: Հուշարձանի հետագա պահպանման նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 6.1 հա տարածք: Կազմող՝ Է. Այվազյան:

53. Տեղ, դամբարանադաշտ, Ք.ա. II հազ., պահպանական գոտի

Գտնվում է հյուսիսային մասում, «Կարմիր հող» կոչվող տարածքում, կամրջից քիչ հեռու, ճանապարհի արևելյան կողմում, քիչ ցած, տարածվում է դարավանդի վրա և ձգվում մինչև ձորեզրը: Թաղումները հզոր՝ 15-18 մ տրամագծով, խոշոր քարաքեկորներով կառուցված կրոմլեիներ են: Վերգետնյա առանձնահատկություններով ուշագրավ են թվով 6-8 դամբարանները, որոնց դասավորությունն ու դրանց միջև հեռավորությունները անկանոն են: Թաղումները վերգետնյա բարձրություն համարյա չունեն, կրոմլեիները թաղված են հողի մեջ: Հավանաբար ճանապարհի շինարարության ժամանակ դամբարանադաշտը տուժել է: Տարածքում վերգետնյա նյութեր չեն նկատվել: Ըստ թաղումների տիպաբանական վերլուծության՝ դամբարանադաշտը թվագրվում է Ք.ա. II հազ.: Հուշարձանի հետագա պահպանման նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 0.9 հա տարածք: Կազմող՝ Ա. Ջուլֆալալյան:

54. Տեղ, ամրոց-դամբարանադաշտ «Քարակալ», Ք.ա. II-I հազ., պահպանական գոտի

Գտնվում է գյուղից 4.85 կմ արևելք, երեք կողմից զառիկող բարձրադիր հրվանդանի վրա: Մոտեցումը արևմտյան կողմից քիչ թեք սարալանջով է: Ամրոցի հզոր քարերով, առանց շաղախի պատաշարը կառուցված է հատկապես այս տարածքում և ձգվում է հրվանդանի ողջ լայնքով: Պարիսպներից պահպանվել են 2 շարք, տեղ-տեղ՝ 3 շարք պատեր: Պարսպապատից ներքև նկատվում են մանր ու միջին չափի քարերով շարված կառույցների մնացորդներ: Տարածքն առատ է վերգետնյա հնագիտական նյութով, հատկապես խեցեղենի բազմապիսի բեկորներով: Ամրոցի հարավարևմտյան մասում տարածվում է դամբարանադաշտը, որը ձգվում է մինչև զառիկող ձորալանջը: Թաղումները կրոմլեխատիպ են: Կրոմլեիները գրեթե կիսագետնաթաղ են, տեղ-տեղ՝ աննկատելի: Որոշ տեղերում երևում են հզոր երկարուկ անմշակ սալերով ծածկված թաղումներ: Թաղումները վերգետնյա բարձրություն գրեթե չունեն: Հուշարձանի պահպանության նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 2.2 հա: Ա. Ջուլֆալալյան:

55. Գորայք, բնակատեղի-դամբարանադաշտ, Ք.ա. II-I հազ., պահպանական գոտի

Հնավայրը գտնվում է գյուղից 1 կմ դեպի հարավ-արևմուտք, Գորիս-Երևան խճուղու աջ կողմում, բլրի վրա, որի բնական սահմաններն են՝ արևմուտքից, հյուսիսից և արևելքից առվակները, որոնք սկիզբ են առնում աղբյուրներից: Հնավայրի հարավային սահմանը՝ Գորիս-Երևան խճուղին է: Բլրի հարթ գագաթին և դրան հարող սարահարթի մակերեսին նշմարելի են տարբեր քարաշեն բնակելի կառույցների հետքեր: Կրոմլեիներով շրջապատված կուրգանային դամբարանները, որոնց մի մասը թալանված է, տեղադրված են բլրի արևմտյան լանջերին: Հուշարձանի հետագա պահպանման նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 25.38 հա: Կազմող՝ Է. Այվազյան:

56. Գորայք, բնակատեղի դամբարանադաշտ, Ք.ա. III-I հազ., պահպանական գոտի

Հուշարձանը գյուղից 1 կմ հարավ-արևմուտք է, Միսիան-Վայք ճանապարհի աջ կողմում, բարձունքի վրա, ծովի մակարդակից 2220 մ բարձրության վրա: Դժվարամատչելի են բարձունքի հարավարևմտյան և հարավարևելյան լանջերը: Դեռևս խորհրդային տարիներին մեղիորացիայի հետևանքով տարածքը լրջորեն վնասվել է և վերածվել խոտհարքի: Բարձունքի գագաթը վերջերս հարթեցվել է, ուր տեղադրվել է «Օրանժ» ընկերության ձայնացիք կայան-ձող: Հարթակի արևելյան եզրին պահպանվում են պարիսպների հիմնապատերի երևակույմներ, որոնք շարված են անմշակ ժայռաբեկորներով: Նկատելի են նաև դամբարանների կրոմլեխներ: Մոզական շրջագծերը անմշակ բազալտով են, դամբարանաթմբերը՝ ցածր. դրանց գագաթներին տեղադրված են բազալտի ժայռաբեկորներ: Հուշարձանի հետագա պահպանման նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 2.2 հա: Կազմող՝ Է. Այվազյան:

57. Խնածախ, դամբարանադաշտ Բինա, Ք.ա. I հազ.

Դամբարանադաշտը զբաղեցնում է 3.4 հա տարածք, ամառային արոտավայր «Բինային» հարող տարածքում՝ հյուսիսարևելյան կողմում գտնվող բարձունքի լանջերին և ստորոտներին: Դամբարանները կրոմլեխներով են, որոնք շարված են անմշակ մանրաքարերով: Ոչ բարձր դամբարանաթմբերի կենտրոնում դրված են մեկական անմշակ ժայռաբեկորներ: Մոզական շրջագծերի տրամագծերը հասնում են 5-6 մ: Հուշարձանի պահպանության նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 4.6 հա տարածք: Կազմող՝ Է. Այվազյան:

Այսպիսով, ՀՀ պահոցների Սյունիքի սրբազան լանդշաֆտին վերաբերող տվյալները փաստում են, որ տարածաշրջանը բավական հարուստ է ծիսական բնույթի հուշարձաններով: Դրանք հիմնականում վկայագրված են, մի մասն էլ՝ գոտիավորված: Բացի դամբարանադաշտերից, որոնք քիչ թե շատ ուսումնասիրված են, մնացած հուշարձանները դեռ սպասում են իրենց հետազոտողներին: Այստեղ հատկապես կկարևորվենք մեզալիթյան հուշարձանները (մենհիրներ, դոլմեններ, կրոմլեխներ, ևն), նախ՝ քանի որ Սյունիքը հանդիսանում է վերջիններիս տարածման էպիկենտրոնը Հայաստանում (որտեղ ի հայտ են գալիս դրանց հիմնական տեսակները), ապա նաև այն պատճառով, որ մեզալիթներից շատերը գտնվում են բնակավայրերի կամ դամբարանադաշտերի տարածքում, ինչը կարող է հետազայում նպաստել թվագրության և գործառնության խնդիրները լուծելիս:

Առկա նյութը ցույց է տալիս, որ բնական միջավայրի հետ շփման ընթացքում հնագույն սյունիքցիները ձևավորել են իրենց յուրահատուկ ծիսա-պաշտամունքային պատկերացումները, որոնք ուղղակիորեն արտացոլվել են համապատասխան սրբազան լանդշաֆտի մեջ: Սյունիքյան լանդշաֆտի առանցքը քարն ու ժայռն է, ինչը ծառայել է ոչ միայն պաշտպանվելու և բնակվելու, այլև հոգևոր կարիքները բավարարելու համար: Պատահական չէ, որ սյունիքյան սրբազան լանդշաֆտի յուրահատուկ դրսևորում է հանդիսանում բնական, երբեմն անտաշ ժայռաբեկորների սրբացումը: Դարեր շարունակ հարատևած այս պաշտամունքն այսօր էլ իր հաստատուն տեղն ունի սյունիքցիների աշխարհայացքում: Ավանդության շարունակման մեկ այլ դրսևորում է նաև այն, որ այս ժայռաբեկորները հանդես են գալիս այնպիսի վայրերում, որոնք հարուստ են նշանավոր վանական համալիրներով, իսկ հավատացյալ-ուխտավորները իրենց ամենանվիրական իղձերի համար (չբերություն, մանկան հիվանդություն) շարունակում են դիմել նման սրբավայրերին: Սյունիքյան սրբավայրերի խտությունը մեկ անգամ ևս վկայում է, որ «Հայոց աշխարհը, ինչպես Հիմալայի ստորոտը և Հռոմեական բլուրները, գերեզանցապես կրոնական է: Աշխարհը խաչաձևող տնտեսական ճանապարհներից դուրս՝ դրանք հանդիսանում են իբրև խորհրդավոր կետեր, ուր երկրագունդը մի վայրկյան կանգ է առնում և երկար շնչում»⁵⁵⁵:

⁵⁵⁵ Կ. Զարյան, Հայության կոչումը, Գոյամարտ շաբաթաթերթ, 24 հուլիսի, թիվ 38, Բաղդադ, 1952:

ՎԵՐՋԱԲԱՆ

Վերջին տարիներին մասնագիտական գրականության էջերում մեծ տեղ է հատկացվում «ծիսական լանդշաֆտ» հասկացությանը, որպես «սոցիալական» լանդշաֆտի բաղադրատարրի⁵⁵⁶։ Խնդրի վերաբերյալ քննարկվում են միջմասնագիտական մոտեցումներ, որոնք միտված են վերականգնելու ուսումնասիրվող հասարակության պատկերը՝ ելնելով բնապատմական միջավայրի վերլուծության առանձնահատկություններից։ Այս աշխատանքը նպատակ ունի քննարկել Սյունիքի բրոնզ-երկաթեդարյան ծիսական միջավայրի առանձնահատկությունները, վերլուծել առկա տվյալները և առաջարկել սրբազան օբյեկտների նախնական դասակարգում։

Թեև նյութն ընդհանուր առմամբ բավարար չի ամբողջովին հասկանալու համար առաջ քաշված հարցադրումը խնդրո առարկա տարածաշրջանում, սակայն առկա տվյալներն այնուամենայնիվ հնարավորություն են տալիս նախնական եզրակացություններ անելու համար։ Այդ փաստերը ցույց են տալիս, որ Սյունիքի պաշտամունքային հուշարձանները բնորոշվում են մեծ բազմազանությամբ, իսկ միասնական հատկանիշներով բնութագրվող ծիսական լանդշաֆտը ձևավորվել է բրոնզ-երկաթեդարյան բարդ հասարակական գործընթացների արդյունքում և իր մեջ պարունակում է ինչպես բնական, այնպես էլ մարդածին գործունեության տարրեր։

Ըստ այդմ՝ Սյունիքի տարածքի պաշտամունքային հուշարձանները առաջարկում ենք պայմանականորեն բաժանել երկու խոշոր խմբերի՝ հարթակներ և կոթողային հուշարձաններ։ Հարթակները ստորաբաժանվում են հարթակ կառույցների և ժայռային ելուստների ու ժայռաբեկորների վրա տեղադրված հարթակների։ Կոթողային հուշարձանները ստորաբաժանվում են քանդակների և քանդակազարդ քարերի (սեղանաձև, ուղղանկյուն, գլանաձև, գմբեթաձև, խաչաձև՝ մարդակերպությամբ և ֆալիկ հատկանիշներով, ավելի քիչ՝ կենդանակերպությամբ բնորոշվող կոթողներ), մենհիրների (մարդու կողմից բնական քարաբեկորի նվազագույն մշակմամբ կերտված կանգուն մենաքարեր) և վիշապաքարերի (քառակող՝ դիմային հատվածում ցլի գլխի և վար ընկած ոտքերի պատկերով կամ ձկան տեսքով քանդակված, կամ նախորդ երկուսի հատկանիշները կրող կոթողներ)։

Հետազոտությունը լինելով նախնական մի փորձ՝ նախ և առաջ բացահայտում է մի շարք խնդիրներ, որոնք ապագա պարզաբանման առարկա կարող են դառնալ։ Դրանցից առաջինը կապվում է պաշտամունքային հուշարձանների տիպաբանության հետ։ Տվյալների սակավությունը հնարավորություն չի տալիս կատարել լիակատար գործառության տիպաբանություն՝ խոսել պաշտամունքային հուշարձանների բուն նշանակության մասին, թեև վերը բերված օրինակները հիմնականում բացահայտում են այդ կոթողների առնչությունը նախնիների (զոհասեղաններ, արձաններ, մենհիրներ, վիշապներ) կամ պտղաբերության (ֆալիկ կոտքեր, պորտաքարեր) պաշտամունքի հետ, այնուամենայնիվ իրենց բնույթով դրանց պետք է դիտարկել որպես սինկրետիկ արժեքներ։ Միննույն ժամանակ հնարավոր է նաև պարզել որոշ միավորների ոչ ծիսական գործառությոը (օր.՝ մենհիրները կարող են լինել սահմանաքարեր, կամ երկրորդականորեն օգտագործվել որպես այդպիսին)։

Կարևոր է նաև հնագիտական համատեքստի պարզաբանման խնդիրը։ Եթե մենհիրների և վիշապաքարերի առումով կրոնիկա (= դամբարան կամ հարթակ) համատեքստը աստիճանա-

⁵⁵⁶ Հայ հնագիտության համատեքստում հմմտ. Պ. Ավետիսյան, Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դարերում (սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), դոկտ. ատեն. գիտական զեկուցում, Երևան, 2014, էջ 8-18։

բար պարզ է դառնում, ապա ժայռային ելուստների և ժայռաբեկորների վրա տեղադրված հարթակների հարևանությամբ հաստատագրված են ժայռապատկերներ, բնակատեղիի և դամբանային կառույցների հետքեր: Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ ծիսական գործառույթների առումով, բնակավայր և դամբարանադաշտ հասկացությունները կարող են նույնականանալ:

Առավել բարդ է հիշյալ հուշարձանների և դրանց միջավայրի թվագրության խնդիրը, քանի որ վերջիններս, որպես մշակութային կայուն տարրեր, երկար ժամանակահատվածի ընթացքում են հանդես գալիս և հաճախ կրում են երկրորդական օգտագործման հետքեր: Այս իմաստով, շատ հաճախ, հնարավոր է խոսել միայն ժամանակագրական սահմանների մասին: Այսպես, համատեքստի բացակայության դեպքում, ծիսական հարթակները կարող են ընդհանուր առմամբ դիտարկվել որպես բրոնզ-երկաթեդարյան (հատկապես երկաթեդարյան) երևույթ, թեև դրանց կիրառումը կարող է կայուն լինել նաև հետագայում (հմմտ. օր.՝ պորտաքարերը): Ինչ վերաբերում է քանդակներին և քանդակագործ քարերին, ապա սկսած ուշ բրոնզի դարից և հատկապես վաղ/միջին երկաթի դարում նկատելի է վերջիններիս մարդակերպացման գործընթացը, ինչպես նաև՝ տարբեր պատկերների համադրումը մեկ կոթողում: Մենհիրներն ու վիշապները, ամենայն հավանականությամբ, ժամանակակից են (այդ մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ երբեմն դրանք նույն միջավայրի բաղկացուցիչներ են հանդիսանում, հմմտ. օր.՝ Մելիմ 1-2-ը, թերևս նաև Քարածի 1-3-ը) և նրանց անհրաժեշտ է դիտարկել Հայաստանի և հարակից շրջանների մեզալիթյան համալիրի համատեքստում, որը տեսանելի է նախաուրարտական շրջանում, ավելի կոնկրետ՝ Ք.ա. II հազ. վերջի - I հազ. սկզբի սահմաններում:

Սյունիքի սրբավայրերի տեղագրական առանձնահատկությունների հետազոտությունը մեզ բերում է այն եզրակացության, որ հիշյալ հուշարձանները աշխարհագրորեն գտնվում են տարբեր տիպի միջավայրերում, որոնք հիմնականում բնորոշվում են ժայռերով կամ ալպիական մարգագետիններով: Դրանք հիմնականում տեղադրված են լինում բնական բարձունքների վրա, դրանց լանջերին, սարահարթերում, ճանապարհներին և կիրճերին կից, քարափներին, ջրային աղբյուրների, քարայրների շուրջ: Ի հայտ են գալիս հասարակական ոլորտի կենտրոններում, սահմանային գոտիներում, ճանապարհներին կամ իրենք են խորհրդանշում կենտրոնը, սահմանը, ճանապարհը: Հաճախ սրբավայրերը ձևավորվում են բնական օբյեկտների շուրջ, որոնք դառնում են սրբագործված միջավայրի կարևոր բաղադրատարրեր. ընդ որում, Սյունիքի հնագույն բնակիչները լայնորեն կիրառել են տեղանքի հնարավորությունները՝ վերափոխելով բնական օբյեկտների նախնական տեսքը: Սրբավայրերը, այլ հարակից հուշարձանների հետ մեկտեղ, կազմում են Սյունիքի բրոնզ-երկաթեդարյան հասարակական կարգի կարևորագույն բաղադրատարրը:

Հնագիտական հետազոտությունները փաստում են, որ հնագույն Հայաստանում և մասնավորապես Սյունիքում գոյություն են ունեցել տարածքների մշակութայնացման երեք մակարդակներ՝ դաշտավայրային, նախալեռնային և բարձր լեռնային, որոնց պայմանականորեն կոչում ենք «ցածր», «միջին» և «բարձր»: Աշխարհագրական պայմանների թելադրած այս «ուղղահայաց գոտիականությունը» պայմանավորել է Հայկական լեռնաշխարհի մշակութային զարգացումների ողջ ուղին: Այս իմաստով կարելի է ասել, որ լեռնաշխարհի անցյալն ընդհանուր առմամբ այս երեք մակարդակների փոխազդեցության ընթացքն է, ինչի արդյունքում նրա կրողների կերտած մշակութային ներուժն ի հայտ է գալիս որպես համակարգ/շղթա, որի այս կամ այն օղակը որոշակի շրջափուլերի ընթացքում եղել է աշխույժ կամ կրավորական: Հետազոտությունները ցույց են տալիս, որ սրբազան լանդշաֆտի օբյեկտները գտնվում են այս երեք օջախների առանցքային կետերում (էպիկենտրոններում) և դրսևորում են աշխարհագրական ու մշակութային միջավայրերի համատեղ «կրկնօրինակման» միտումներ, ինչը հաստատում է հիշյալ երեք միջավայրերի մեկ հասարակական համակարգում դիտելու գաղափարը:

РЕЗЮМЕ

В последние годы в специальной литературе значительное место уделяется понятию «сакральное пространство». В этом контексте развиваются междисциплинарные подходы, которые нацелены на изучение общественной системы, исходя из анализа особенностей естественно-исторической среды. Предлагаемая работа нацелена на обсуждение особенностей сакрального пространства эпохи бронзы и железа Сюникского региона исторической Армении, проанализировать существующие данные и предложить предварительную классификацию сакральных объектов.

Хотя материалов в общем плане недостаточно для того чтобы полностью оценить постановку вопроса в исследуемом регионе, тем не менее, имеющиеся в наличии данные дают возможность сделать предварительные выводы. Эти данные говорят о том, что культовые памятники Сюникского региона отличаются большим разнообразием, а сакральное пространство, характеризующееся общими признаками, формировалось в результате сложных общественных процессов эпох бронзы и железа, и содержит в себе как естественные так и антропогенные элементы.

В соответствии с этим, предлагаем культовые памятники Сюникского региона условно разделить на две большие группы: культовые площадки и стеллы. Культовые площадки в свою очередь подразделяются на: площадки-сооружения, скальные выступы и площадки расположенные на скальных глыбах. Стеллы подразделяются на скульптуры и камни со скульптурными изображениями (трапециевидные, прямоугольные, овальные, куполовидные, крестообразные, с антропоморфными и фаллическими признаками, а иногда зооморфными), менгиры (минимально-обработанные монолитные камни) и вишапы (четырёхгранные стеллы, в передней части с изображением бычьей головы и нижних конечностей, или в виде рыбы, а иногда с совмещением обоих признаков).

Данное исследование будучи первым опытом анализа прежде всего выявляет ряд проблем, которые могут стать предметом дальнейшего изучения. Первый аспект связан с типологией культовых памятников. Малочисленность данных не позволяет провести полную функциональную типологию (речь идет об истинном значении культовых памятников), хотя вышеуказанные примеры в основном выявляют связь этих памятников с культом предков (жертвенники, статуи, менгиры, вишапы) или плодородия (фаллические идолы, пупковые камни-портакары): но тем не менее по своей сущности их нужно рассматривать как синкретические памятники. В то же время не исключена возможность некультового использования некоторых объектов (например: менгиры могли являться межевыми камнями, либо вторично использоваться в качестве таковых).

Важен также археологический контекст исследуемой проблемы. Так, если в контексте менгиров и вишапов кромлех является частым признаком символизирующим могилу или платформу, то на площадках, расположенных рядом со скальными выступами и скальными глыбами зафиксированы наскальные изображения (петроглифы) и следы поселений и могильных сооружений (кстати, с точки зрения ритуальных функций, понятия «поселение» и «могильник» могут идентифицироваться).

Наиболее сложна проблема датировки вышеуказанных памятников и их контекста, так как они как культурно-стабильные элементы выявляются в течении долгого промежутка времени и могут носить вторичный характер. С этой точки зрения часто можно говорить лишь о хронологических рамках исследуемого памятника. Так, в случае отсутствия контекста, ритуальные площадки могут, в общем плане, рассматриваться как явление присущее эпохам бронзы и железа (в особенности железа), хотя их употребление может продолжаться и в дальнейшем (ср. например пупковые камни). Что касается скульптур и камней со скульптурными изображениями, то, начиная с эпохи поздней бронзы и, в особенности, в эпоху раннего и среднего железа, замечен процесс антропоморфизации и сопоставления различных изображений на одном памятнике. Менгиры и вишапы, по всей вероятности, синхронны (об этом говорит тот факт, что, иногда они

являются составными элементами одного и того же ландшафта, например: Селим 1-2, а также Атташ 1-3), и их необходимо рассматривать в контексте мегалитического комплекса Армении и близлежащих регионов, который замечен в доурартском периоде – в пределах II - начала I тыс. до Р.Х.

